

Ա. Ա. ՀԱՆՔՅԱՆ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ԲԱՐԲԱՌԸ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

А. Н. АНЕЯН

ТИГРАНАКЕРТСКИЙ ДИАЛЕКТ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ն. ՀԱՆԵՅԱՆ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԲԱՐԲԱՌԸ

«Տիգրանակերտի բարբառը» աշխատության մեջ քննվում է հայերենի արևմտյան խմբակցության բարբառներից մեկը։ Ուսումնասիրվում են բարբառի հնչույթների համակարգը, շեշտափոխական, ընդհանուր պատմական և փոխազդեցական հնչյունափոխությունը, անվանական, դերանվանական, բայական համակարգերը՝ և՛ համաժամանակյա, և՛ տարժամանակյա հայեցակետերով։ Հավելվածում տրվում են նմուշներ բարբառով, գրաբար-բարբառ բառացանկ և բարբառային բառերի բառարան։

Խմբագիր՝ Մ. Հ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայ ավանդական և արդի բարբառագիտության մեջ «Տիգրանակերտի բարբառ» է կոչվում Արևմտյան Հայաստանի Դիարբեքի շահանգի հայախոս բնակչության խոսվածքը: Բարբառի կենտրոնը Դիարբեքի քաղաքն է, որը հայերը, հատկապես քաղաքի բնակիչները, անվանում են նաև Տիգրանակերտ: Սակայն պատմության և պատմագրության մեջ քաղաքը հայտնի է նախ Ամիդի, Ամեդու, Ամիդա, Ամիդ, Ամիթ, ապա Գարա-Ամիդ, Գարա-Համիդ անվանումներով¹: Ո՞րն է քաղաքի ճշմարիտ և նախնական անվանումը՝ Ամի՞դ, թե՞ Տիգրանակերտ (Տիգրանի կառուցած): Այս հարցը մի շարք անգամներ արծարծվել է վերջին յոթնասունամյակի հայ բանասիրության և պատմագրության մեջ, սակայն վերջնական լուծում է ստացել պատմաբան Երվանդ Հ. Քասունիի աշխատությունում: Հեղինակը մանրամասն ուսումնասիրելով հայ և օտար մատենագիրների հաղորդումները Ամիդ և Տիգրանակերտ քաղաքների մասին, ինչպես նաև քննելով հայ և օտար պատմագրության մեջ արտահայտված կարծիքները՝ վերջնականորեն ապացուցել է, որ պատմական Տիգրանակերտ և Ամիդ քաղաքները գտնվում են միմյանցից որոշակի հեռավորության վրա, չեն նույնանում, և արդի Դիարբեքի ճախկին Ամիդն է: Տիգրանակերտը գտնվում է պատմական Աղձնիքում, Բաթման գետի վտակ Ֆարդին-սուի գետաբերանից ոչ հեռու, Ֆարդին գյուղի մոտ, որտեղ պահպանված են քաղաքի ավերակները, և պատմության մեջ հայտնի է Տիգրանակերտ, Մարտիրապոլիս, Մարտիրոսաց քաղաք, Նիոնես, Նիրկերտ, Մայափերկատ, Մայափարկին, Մուֆարդին,

¹ Երուանդ Հ. Քասունի, Ամիդ (Տիարպեքի)—Տիգրանակերտ (Ֆարդին) շփոթը հայ պատմագրության մեջ, Պելրութ, 1968, էջ 22:

Ֆարդին կամ Սիլվան անուններով²։ Քասունիի կարծիքով, «Ամիդ—Տիգրանակերտ շփոթը հիմնականին ժողովրդական ավանդութենէ ծագում առած է և ապա՝ տեղ գտած նաև պատմագրութեան մէջ»³։ Իրոք, երկու քաղաքներն էլ կառուցված են եղել գետերի ափին և ունեցել են հզոր, բարձր պարիսպներ։ Քանի որ Ամիդի պարիսպները մինչև այժմ կանգուն են, ուստի դարերի ընթացքում տեղիք են տվել շփոթութեան, իբրև թե Տիգրանի կառուցած պարիսպներն են, և քաղաքը ժողովրդի կողմից սկսել է կոչվել Տիգրանակերտ, սակայն Ամիդ անվանումը պաշտոնապես երբեք չի դադարել գոյութիւն ունենալուց։

Ամիդ-Դիարբեքիր քաղաքը գտնվում է Հյուսիսային Միջագետքում, Արևմտյան Տիգրիսի աջ ափին և շատ ավելի հին է Տիգրանակերտից։ Ամիդի անվանումը մի քանի անգամ հիշատակվել է ասորական հին արձանագրութիւններում՝ սկսած մ. թ. ա. մոտ 2500-ական թվականներից⁴։ Հայ հին և միջնադարյան մատենագրութեան մէջ Ամիդը հիշատակվել է Ագաթանգեղոսի, Կորյունի, Քուզանդի, Փարպեցու, Շիրակացու, Սեբեոսի, Թովմա Արծրունու, Մ. Ուռհայեցու, Սմբատ Սպարապետի, Առաքել Դավրիժեցու, Կիրակոս Գանձակեցու⁵ և այլոց կողմից։

Դարերի ընթացքում Ամիդը ձեռքից-ձեռք է անցել, քանի որ եղել է սահմանային քաղաք և գտնվել ռազմական ու առևտրական բանուկ ճանապարհների վրա։ Այն հաջորդաբար եղել է ասորիների, հայերի, հռոմեացիների, պարսիկների, հույների, արաբների, սելջուկների, դարձյալ պարսիկների և վերջապես օսմանյան թուրքերի տիրապետութեան տակ։ Արաբական գերիշխանութեան տարիներին քաղաքը ստանում է Դիարբաք անվանումը՝ արաբների բաքր ցեղի՝ այդ կողմերում տիրապետելու հետևանքով (դիար—երկիր, տուն)։ «Բաքր ցեղի անվամբ այս կողմերը կոչվեցին Դիար Բաքր, որով մինչև այժմ կոչվում է Ամիդ քաղաքը (Դիար բեքիր)»⁶։ 1515 թ. Սուլթան Սելիմի՝ պարսիկների դեմ տարած վճռական հաղթանակով Ամիդը վերջնականորեն ընկավ թուրքական լծի

2 Նույն տեղում, էջ 9—10։

3 Նույն տեղում, էջ 69։

4 Նույն տեղում, էջ 23։

5 Նույն տեղում։

6 Ա. Տեր-Ղեմդյան, Արաբական ամիրայութիւնները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 52—53։

տակ՝ ստանալով ևս մեկ անվանում՝ Գարա-Ամիդ (Սև Ամիդ), պարիսպների սև գույնի համար:

Ամիդ-Դիարբեքիրը նշանավոր է հատկապես իր պարիսպներով, որոնք իրենց հաստությամբ, ամրությամբ, գեղեցկությամբ և հնույթյամբ բազմաթիվ օտար ճանապարհորդների հիացմունքի ու զարմանքի առարկան են եղել դարեր շարունակ: Հռոմեացի պատմագիր Ամմիանոս Մարկելիանոսի (IV դ.) վկայությամբ Ամիդը եղել է մի շատ փոքր քաղաք, բայց Հռոմի կայսր Կոստանդինոսը այն շրջապատել է գորավոր պարիսպներով և աշտարակներով, որպեսզի շրջակա բնակչությունը փախչելու և պատսպարվելու ապահով տեղ ունենա:

Քաղաքը հնուց հետե ունեցել է բազմազգ բնակչություն: XX դարի սկզբին այնտեղ ապրում էին հայեր, թուրքեր, քրդեր, հույներ, ասորիներ, հրեաներ և այլն, որոնք ունեին իրենց կրոնական օջախները՝ վանքեր, եկեղեցիներ, մզկիթներ: Հայերը, որոնց թիվը քաղաքում մոտ 45000 էր⁷, ունեին երկու եկեղեցի՝ Սուրբ Սարգիս և Սուրբ Կիրակոս անվանումներով, և բնակվում էին հիմնականում այդ եկեղեցիների շրջակա թաղերում: Դիարբեքիրցիները բնավորությամբ աշխույժ, գործունյա, սրախոս, զվարճասեր և ավանդապաշտ մարդիկ էին: Կրոնական տոները քաղաքում նշվում էին հատուկ նախապատրաստություններով և բարձր տրամադրությամբ (հատկապես Նոր տարին՝ լոլէն, բարիկենդանը և դատիկը):

Հայերի զբաղմունքներն էին արհեստագործությունը և առևտուրը: Զարգացած էին արհեստի բազմաթիվ ձևեր՝ ոսկերչություն, մետաքսագործություն, կոշկակարություն, դերձակություն, մետաղագործություն և այլն: Առևտուրը նույնպես ծաղկուն վիճակում էր և ընդգրկում էր ընդարձակ սահմաններ՝ մինչև Սիրիա, Իրաք, Պարսկաստան: Ընդհանրապես Դիարբեքիրը Թուրքիայի ամենահարուստ և տնտեսական ասպարեզում կարևոր նշանակություն ունեցող քաղաքներից էր: Նահանգում զարգացած էր գյուղատնտեսությունը՝ այգեգործությունը և բանջարաբուծությունը:

Քաղաքը ուներ և իր ազգային-քաղաքական, մտավոր կյանքը: XIX դ. երկրորդ կեսից սկսվում է քաղաքի հայ բնակչության քաղաքական և մտավոր զարթոնքը: 1865 թ. ազգային եռանդուն գործիչ Թովմաս Զավղավաթյանը ստեղծում է «Հայրենասիրաց

քնկերությունը» և Ս. Սարգիս եկեղեցու բակում հիմնում առաջին վարժարանը, ուր նաև կիրականօրյա դասեր է կազմակերպում շահահասանքի համար: 1876 թ. քաղաքում արդեն գործում էր երեք հայկական դպրոց⁸: XX դարի սկզբին հայերն արդեն ունեին քաղաքական կազմակերպություններ, ուսուցիչների, բժիշկների, փաստաբանների, երաժիշտների, անգամ ինքնուս դերասանների շրջանակ:

1915 թ. Ամիդ-Դիարբեքիրի հայությունը Մեծ եղեռնի գերագույն զոհերից մեկը դարձավ...

Այժմ Սփյուռքում ամիդ-դիարբեքիրցիները կամ, ինչպես ընդունված է ասել, տիգրանակերտցիները, ապրում են Սիրիայում, Ստամբուլում, Ամերիկայում, Եգիպտոսում: Նրանց գաղութները գոյություն են ունեցել դեռևս նախաեղեռնյան շրջանից, քանի որ XIX դ. վերջերից սկսած՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի տիրապետության դաժան տարիներին, Դիարբեքիրից արտահոսք էր սկսվել դեպի օտար երկրներ, հատկապես Ամերիկա: ԱՄՆ-ում դիարբեքիրցիների համեմատաբար հոծ գաղութ կա Նյու-Ջերզի քաղաքում:

Սիրիայում դիարբեքիրցիները հավաքված են Կամիշլի քաղաքում: Ստամբուլում նույնպես մեծ գաղութ կա, որը մինչև այժմ էլ համարվում է Դիարբեքիրից արտագաղթող հայերով: Թուրքիայում Դիարբեքիրը երևի միակ արևմտահայկական ֆաղաֆն է, որտեղ այժմ էլ դեռ գոյություն ունի հայ բնակչություն՝ մոտ 150 տուն⁹. դրանց մեջ կան և՛ բնիկ «քնդքրցի»-ներ, և՛ եղեռնից հետո գյուղերից, այս ու այն կողմից հավաքված հայեր: Նրանք ունեն գործող եկեղեցի՝ հայ քահանայով, որը սակայն ստիպված է կիրականօրյա քարոզը վարել թուրքերեն: Համենայն դեպս, բարձր իր ընդհանուր գծերով պահպանվում է, իբրև մի փոքր հասարակության մայրենի խոսակցական լեզու:

Սովետական Հայաստանում բնակություն հաստատած տիգրանակերտցիները քիչ են և ցրված: Նրանք հայրենադարձվել են զանազան վայրերից՝ տարբեր ժամանակներում և այժմ ապրում են Երևանում, Արևիկանում, Կիրովականում, Չարենցավանում և

8 Տիգրան Մկուռ, Ամիտայի արձագանգներ, Նյու-Ջերզի, 1950, էջ 163:

9 Դիարբեքիրի արդի վիճակի մասին մեզ տեղեկություններ է հաղորդել Ստամբուլում բնակվող Արտաշես Մարկոսյանը, որը հաճախ է լինում իր հայրենի քաղաքում:

այլուր: Երևանում մոտ 15 տուն տիգրանակերտցիներ են հաշվվում: Նրանցից քչերն են հարազատությամբ պահպանել բարբառը:

Տիգրանակերտի¹⁰ բարբառի նյութերը հավաքել ենք և՛ գրավոր, և՛ բանավոր աղբյուրներից: Գրավոր (տպագիր) նյութերը քաղել ենք «Բյուրակն» հանդեսի 1898—99 թվականների համարներից (առածներ, ասացվածքներ, հանելուկներ, աղոթքներ, անեծքներ, օրհնանքներ) և Տիգրան Մկունդի «Ամիտայի արձագանգներ» գրքից (բանաստեղծություններ, վիճակի խաղիկներ, առածներ, ասացվածքներ, հանելուկներ, քաղաքի հայ հասարակության կյանքը պատկերող արձակ նյութեր և բարբառային բառերի բառարան), Բանավոր նյութերը հավաքել ենք բնիկ դիար-բեքիրցիներ, Երևանում բնակվող՝ Կարապետ Տեր-Սարգսյանից (82 տարեկան), Մինա Մանուկյանից (68 տ.), Գրիգոր Նաչարյանից (66 տ.), Արշալույս Ղազանչյանից (63 տ.), Սաթենիկ և Վահան Շափշափյաններից (60, 65 տ.), Ազնիվ և Անժել Տերունյաններից (70, 40 տ.), Աբովյանում բնակվող Պողոս, Անժել և Մկրտիչ Հովհաննիսյաններից (56, 46, 32 տ.), Դիարբեքիրի նահանգի Իրինջ և Ղըթըրբըլ գյուղերի նախկին բնակիչներ Եվա և Հակոբ Աբրահամյաններից (65, 70 տ.), որոնց բոլորին հայտնում ենք խորին շնորհակալություն մեզ տրամադրած ժամանակի և եռանդագին օգնության համար: Գրավոր նյութեր, արդի Դիարբեքիրում կատարված ձայնագրություններ ենք ստացել տիգրանակերտցի Արտաշես Մարկոսյանից (20 տարեկան), որն իր խանդավառ նամակներով անչափ օգնել և խրախուսել է մեզ: Մեր խորին երախտագիտությունը հայրենասեր, խելացի և բազմաշնորհ պատանուն:

(Ի դեպ, գրական աղբյուրներից քաղված բոլոր նյութերը ստուգել ենք բարբառախոսների օգնությամբ և վերածել գիտական տառադարձության):

Տիգրանակերտ՝ բարբառի մասին որեւէ ուսումնասիրություն չի եղել հրատարակի վրա: Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ ներկայացված է (հինգ էջի սահմաններում) բարբառի շատ համառոտ նկարագիրը, որտեղ սակայն

¹⁰ Հարմար գտանք հայ բարբառագիտության մեջ ընդունված անվանումը թողնել նույնությամբ՝ նկատի առնելով բարբառի անվանման հարաբերական բնույթը:

ղարմանալի հմտությամբ երևան են հանված նրա հնչյունական և ձևաբանական էական հատկանիշները: Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ում ևս կան բարբառին վերաբերող նյութեր:

Տիգրանակերտի բարբառի տարածման սահմանները չենք կարողացել լիովին պարզել՝ անհրաժեշտ վայրերից բարբառախոսների բացակայության պատճառով: Հ. Աճառյանի նշած սահմաններից¹¹ այժմ առանձնացված են Եղեսիան, իբրև անկախ բարբառի ներկայացուցիչ, և Հազզոն, որի բնակչությունը Սասունի բարբառի կրող է: Մեր ուսումնասիրության համար հիմք ենք ընդունել բուն Տիգրանակերտ (Դիարբեքիր) քաղաքի խոսվածքը:

Հայ բարբառագիտության ավանդական միահատկանիշ դասակարգումների համաձայն (ձևաբանական, հնչյունական), Տիգրանակերտի բարբառը պատկանում է կը ճյուղին, պայթական բաղաձայնները ենթարկվում են տեղաշարժ-տեղափոխության և ներկայացնում են երկաստիճան խլազուրկ համակարգ: Ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման¹², բարբառը դասվում է արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտ բարբառախմբի մեջ՝ իբրև անկախ միավոր, առանձին բարբառ¹³:

11 Հ. Աճառեան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911, էջ 159:

12 Գ. Զանուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 134:

13 Տիգրանակերտի բարբառի բառապաշարի քննությունը, ինպես նաև փոխառյալ բառերի բառարանը սույն աշխատությունից դուրս են մնացել:

Հ Ն Զ Յ ՈՒ Ն Ա Ւ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՆԶՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Զ Ա Յ Ն Ա Վ Ո Ր Ն Ե Ր

Տիգրանակերտի բարբառում առկա են հետևյալ ձայնավոր հնչյունները՝ ա, օ, է, ք, ի, օ, ու:

Ա-ն ժամանակակից հայերենի ա ձայնավորի համեմատությամբ ունի առավել ստորին դիրք՝ աննշան շրթնայնացմամբ, որն ընդգծվում է հատկապես ո ձայնորդի հետ ունեցած կապակցություններում՝ ոա, առ: Ա-ն առաջնային շարքի ստորին դիրքի ձայնավոր է՝ քմային հնչմամբ: Մյուս ձայնավորները իրենց ֆիզիկական հատկանիշներով էական տարբերություններ չունեն ժամանակակից հայերենի համապատասխան ձայնավորներից:

Նշված հնչյուններն ունեն արդյոք հնչույթային արժեք և համակարգային ինչպիսի՞ հարաբերություններ են երևան բերում: Ընդհանուր հայերենի ձայնավորներին համապատասխանող ա, է, ք, ի, օ, ու հնչյունները բարբառում ևս հնչույթներ են: Մնում է պարզել օ-ի և ա-ի փոխհարաբերության հարցը: Սրանցից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ միավանկ և բազմավանկ բառերի բոլոր դիրքերում՝ թե՛ փակ, թե՛ բաց, թե՛ շեշտակիր, թե՛ շեշտազուրկ վանկերում, թե՛ բնիկ, թե՛ փոխառյալ բառերում՝ օղ, մօմ, փէսմ, օլիր, ձնդիգ, րանգ, փէրան, ղուրմբիմ, րսո՛ւրան, իրանցան, քոշան, ալ, մադ, հա, առնիլ, մաձուն, մէռա, ջառ, զադ, զանաչ, քուֆթա, նաթօռա, օրթալըղ, մաշա և այլն: Ըստ որում, սրանցից առավել հաճախականություն ցուցաբերում է օ-նը:

¹ Տե՛ս մեր «Տիգրանակերտի բարբառի ձայնավոր հնչույթների համակարգը» հոդվածը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, № 2, էջ 19:

Ան և ա-ն իմաստային հակադրության նվազագույն զույգեր² են կազմում մյուս ձայնավորների հետ՝ նրանց նկատմամբ ցուցաբերելով հնչույթային արժեք³, սակայն ան-ի և ա-ի տարբեր հնչույթներ լինելու հարցը վճռվում է իմաստային հակադրության հետևյալ նվազագույն զույգերով.

ան (այլևս) — ալ (կարմիր)

զան (զատ, հտ) — զաղ (ճաշ)

դան (տալ, ամուսնու քույր) — դալ (ճյուղ)

աման (աման) — աման (ձայնարկ.)

զրփանէնք (աշխատում էի) — զրփանէնք (բացում էի)

էրզան (ամուսնուն) — էրզան (երկար)

Այսպիսով, (Ան) և (Ա)–ն բարբառում միմյանցից անկախ հնչույթներ են, որոնց հիմնական տարբերակիչ հատկանիշն է լեզվաշարքի (ա-ն՝ ետին, ան՝ առաջնային) տարբերության հետևանքով առաջացած՝ քմայնություն (Ան) — ոչ քմայնություն (Ա):

Բարբառում ան չի կարող կապակցվել ու ձայնորդի հետ, բացառված են ան, ուն կապակցությունները: Այս դիրքում բարբառը ունի ա. համեմատել հետևյալ բառային զույգերը.

առին (առան) — անին (արյուն)

վառիլ (վառել) — վանիլ (վոնդել)

ձառիր (ծառեր) — ձանիր (ծարիր)

փէռան (բեռան) — փէրան (բերան)

ջառ (գոտի) — ջան (ճար) և այլն:

Շեշտահաշորդ դիրքում (բառավերջի բաց վանկ) հանդիպող ան ձայնավորը ունի խիստ նվազ հաճախականություն (որոշիչ հոդի արժեքով գործառում է մի շարք անձնական և ցուցական դերանունների հետ՝ իրանցան, ըստ՛ւրան, ընտնցան) և մի փոքր սուղ, ոչ

2 Փոխառյալ բառերի մի մասը նույնպես ընդգրկել ենք նվազագույն զույգերի կազմության մեջ՝ նկատի ունենալով, որ բարբառի տվյալ համաժամանակյա կտրվածքում դրանք ունեն բնիկ բառերին հավասարազոր կիրառություն:

3 Տե՛ս մեր նշված հոդվածը, էջ 19—20:

լիահոունը արտասանություն. այն (Ա) հնչույթի արտասանական տարբերակն է:

Այժմ քննենք մյուս ձայնավոր հնչույթների գործառնության ուղորտները:

Է ձայնավորը գործառնում է բառի բոլոր դիրքերում գրեթե առանց բացառության, օրինակ՝ էր, էշ, փէռ, քէլ, գէս, անէձք, ըէ, լօրէ, հրմմէ, խալէ, ըսսէ՛, էքի, էրաւղ, էրգինք, փէրան, թէղին, գէշի, մէյվա, ինչպես նաև շեշտահաջորդ վանկում, իբրև որոշիչ հոդ՝ ասդա՛ռէ, անի՛վէ, անըղնի՛րէ, նաև էական էմ բայի խոնարհ-ված ձևերում՝ հանիր է, հանիր էնք և այլն: Շեշտի տակ հանդի-պող է ձայնավորը նվազ հաճախականություն ունի այն դեպքում, երբ արմատական հնչյուն է: (Սա բացատրվում է այն հանգա-մանքով, որ հին հայերենի և ձայնավորին բարբառում շեշտի տակ համապատասխանում է ի ձայնավոր): Մեծ մասամբ շեշտակիր է-ն գործառնում է իբրև թեքույթ բայի եզակի հրամայականում և բացառական հոլովում, օրինակ՝ հանէ՛, ըսղբէ՛, ըսսօրվընէ՛, քախքէն և այլն:

Շեշտահաջորդ է-ն, որ հանդես է գալիս բարբառում իբրև որոշիչ հոդ, ունի մի փոքր ավելի թույլ, սուղ արտասանություն, քան նախաշեշտ վանկերի է ձայնավորը: Այն ավելի շուտ մոտե-նում է միջին շարքի ձայնավորի, քան թե առաջին, և բռնում է ը ու է ձայնավորների միջին դիրքը: Նույնանո՞ւմ է արդյոք այս սուղ է հնչյունը լիահոուն է-ին, թե՞ առանձին մի հնչույթ է: Կան շեշտված և շեշտահաջորդ է-երի իմաստային հակադրության հե-տևյալ նվազագույն զույգերը.

էփէ՛ (եփիր) — է՛փէ (եփը)

գանէ՛ (կարիր) — գան՛րէ (կարը)

թուրէ՛ (հարթիր) — թո՛ւր է (հարթ է)

վանէ՛ (վանդիր) — վանէ (ցածը)

քօվէ՛ (գովիր) — քօ՛վէ (կողքը, մոտը)

քօրձէ՛ (գործիր) — քօ՛րձէ (գործը) և այլն:

Այս դիրքում սուղ է-ն չի կարող հակադրվել այլ ձայնավոր-ների, քանի որ նման դիրքում բարբառի սուղ հնչող մյուս երկու ձայնավորներից ան-ն միայն դերանունների հետ է գործառնում՝ ըսո՛ւրա, ի-ն հանդես է գալիս ստացական հոդի առկայությամբ՝ փէրանսի, ֆուրուսի: Նշված զույգերում իմաստազատիչ դերը (մեր

կարծիքով) պետք է վերագրել շեշտին, իսկ սուղ է ձայնավորը համարել արտասանական և դիրքային տարբերակ: Այսպիսով բարբառում (է) հնչույթը ամբողջանում է արտասանական ու դիրքային մեկ տարբերակով:

Ը ձայնավորը ունի գործառության հետևյալ սահմանափակումները. բարբառում այն չի կարող գտնվել՝ միավանկ բառերի սկզբում (ի տարբերություն գրաբարի) և բառավերջի բաց վանկում (ինչպես գրաբարում):

Ը-ն հանդիպում է՝

ա) միավանկ և բազմավանկ բառերի շեշտակիր վանկում՝ յըղ, վըսբ, վըրթ, վըրփ, քընց, մըժ, քըրշ, դըփս, դըմմըք, գըրգըր, զընգզընգ, ջըռջըռ, թըլըմփ և այլն:

բ) նախաշեշտ վանկերում բարձր հաճախականությամբ՝ ըլու, ըսսօր, ըսգէսուր, ընքնավուր, ըսսիլ, ընգուզ, փըլլինք, թըթթու, էրըվնալ, դարդըղնիլ, խօսղըգօղիլ և այլն:

գ) Շեշտահաջորդ վանկում (մեկուկես վանկանի բառերում), օր.՝ քնխցըր, թանձըր, միղըր, անդըղ, սանդըր, թիթըվ, մանդըր և այլն:

Ի ձայնավորը ընդգրկում է գործառության հետևյալ ոլորտները.

ա) շեշտակիր վանկը՝ բարձր հաճախականությամբ, օր.՝ ինչ, իմ, ինէ, խիլք, գիղդ, հին, անիւր, անիս, անիղ, մի, քի, անլի, լէղի, քինի: (Այս դիրքում Ի-ն համապատասխանում է նաև հին հայերենի Ե ձայնավորին և իւ երկբարբառին):

բ) նախաշեշտ վանկը՝ իրգուն, իրանք, իրիցգին, հիվանդ, սիրիլ, հիյյալ և այլն:

գ) Շեշտահաջորդ վանկը, որտեղ Ի-ն հանդես է գալիս իբրև ստացական ս, դ հոգերին նախադաս (վակ վանկում) կամ վերջադաս (բաց վանկում) հավելադիր հենարան՝ սիրդիս կամ սիրդսի, դո՛ւնիթ կամ դո՛ւնթի (սիրտս, տունդ): Այս դիրքում Ի-ն ունի առավել սուղ արտասանություն, քան նախաշեշտ վանկերում, այստեղ առկա է (Ի) հնչույթը ամբողջացնող արտասանական և դիրքային մի տարբերակ:

Ի-ն բարբառում ունի դիրքային որոշ սահմանափակումներ. այն չի կարող նախորդել ռ ձայնորդին, ին կապակցությունը՝ բացառված է: (Հին հայերենի Ե ձայնավորը, որին շեշտի տակ բարբառում ի է համապատասխանում, ռ-ից առաջ անփոփոխ է մնում, օրինակ՝ ցէռք, սիսէռ, լէռ, փէռ, ցըմէռ):

Բառասկզբում ի-ն չի կարող հաջորդել յ ձայնորդին: (Հին հայերենի ե-ով սկսվող միավանկ բառերում ե-ն չի հնչյունափոխվել, քանի որ ունեցել է յէ հնչում, ըստ երևույթին, շատ վաղուց, և նախահունչ յ-ն խանգարիչ գործոն է եղել ե>ի օրինաչափ հնչյունափոխության համար, ինչպես օրինակ՝ եմ բայի իմ, իս (<եմ, ես) ձևերը, որոնցում ե-ն հնչվել է իբրև մաքուր է ձայնավոր, ենթարկվել են հնչյունափոխության, իսկ յէս (ես), յէզ (եզն), յէփ (երբ), յէփ (եփ), յէրք (երգ) բառերում ե>ի անցում տեղի չի ունեցել յ-ի առկայության պատճառով):

Օ ձայնավորը բարբառում կարող է լինել բառի բոլոր դիրքերում.

ա) շեշտի տակ նվազ հաճախականությամբ՝ օց, օղ, մօդ, քօրձ, ձօվ, ձօ՛ (կոշական), խէլօք, ըսսօր, շրբթօր, մըզլօր, փէղօվ, ունքօվ, ուզօղ, դրվօղ, Գիգօ, Լուսօ, էգօ՛:

Շեշտակիր դիրքում միայն սակավաթիվ բառեր ունեն արմատական օ հնչյուն, այն առավել շափով հանդիպում է գործիական հոլովի օվ և ենթակայական դերբայի օղ թեքույթներում (քանի որ հին հայերենի ո ձայնավորին բարբառում շեշտի տակ համապատասխանում է ու):

բ) Նախաշեշտ վանկերում՝ օլըրվիլ, օսգի, օղօրմի, փօբիզ, քօվիլ, թօնիր, չօրութին, մըրօղիլ, Ժանգօղիլ, չօբան և այլն:

Ու ձայնավորը հանդիպում է՝

ա) շեշտակիր վանկում՝ բարձր հաճախականությամբ (քանի որ հին հայերենի շեշտակիր ո ձայնավորը և ոյ երկբարբառը այս դիրքում փոխարինված են ու-ով), օր.՝ ուշ, ունք, ութթէ, թուք, ձունգ, խուդ, բուզ, քու, անրմունգ, անրնուդ, թըթթու, լէզու, անձրէվու, ուղելու, անդցո՛ւ, դաքցո՛ւ և այլն:

Բառավերջի բաց վանկում ու-ն ներկայանում է կամ իբրև արմատական հնչյուն, կամ էլ (մեծ մասամբ) իբրև թեքույթ՝ եզակի ու հոգնակի տրականում և պատճառական բայերի եզակի հրամայականում:

բ) Նախաշեշտ վանկերում՝ ուրիշ, ուշիզ, ունիմ, ուսգուրա, փուսիլ, փուվառ, լուսինգան, սըրփութին, շըրուգշաթի և այլն: Այս դիրքում ու-ի նվազ հաճախականությունը պայմանավորված է շեշտի հետ կապված հնչյունափոխության հարցերով:

Ու-ի համար բացառված դիրքեր են՝

ա) Վ-ին հաջորդող դիրքը միավանկ բառերի սկզբում. վու կապակցությունը բացառված է (միայն բառասկզբում): (Հին հա-

յերենի ուով սկսվող միավանկ բառերում ո ձայնավորը չի հնչյունափոխվել ու-ի այն պատճառով, որ ո-ից առաջ բարբառում արտասանվել է նախահունչ վ: Սրանցում վո-ն տեղաշարժվելով հանգել է վը-ի, օր.⁴ վըսբ (<ոսպ), վըրփ (<որբ), վըրթ (<որդ), իսկ վով (<ով), վօր (<որ բառերում ո-ն բոլորովին չի տեղաշարժվել):

բ) վ-ին նախորդող դիրքը բառավերջում: Այդ են վկայում ձով, գով, քով, հով միավանկ բառերը և գործիական հոլովի օվ վերջավորությունը, որոնցում սպասելի էր ու՝ օ-ի փոխարեն:

Այս բացառյալ կապակցությունները՝ վու, ուվ (ինչպես նաև՝ յի) խոսում են ու և վ, ի և յ հնչյունների նախնական առնչակցությունների մասին և բարբառում արտացոլում են նրանց նախկին փոխհարաբերությունների հետքերը⁴:

Այսպիսով՝ Տիգրանակերտի բարբառում առկա են հետևյալ յոթ ձայնավոր հնչյունները.

(յ)՝ անուղ տարբերակով, (Ա), (է)՝ է անուղ տարբերակով, (Ը), (Ի)՝ ի անուղ տարբերակով, (Օ), (Ու):

Ձայնավորների դասակարգման աղյուսակ

Շարքեր		Առաջին շարք	Միջին շարք	Ետին շարք
Գիրքեր	Վերին	Ի	—	Ու
	Միջին	Է	Ը	Օ
	Ստորին	Յ	—	Ա

Բ Ա Ղ Ա Ձ Ա Յ Ն Ե Ր

Տիգրանակերտի բարբառի բաղաձայն հնչյուններն են՝
Ձայնեղ պայթականներ և պայթաշփականներ—բ, գ, ք⁴, դ, ձ, շ

Շնչեղ խուլներ—փ, ք, ք⁴, թ, ց, չ
Ձայնեղ շփականներ—ղ, ժ, ղ, վ
Խուլ շփականներ—ս, շ, խ, ֆ, հ
Ձայնորդներ—լ, մ, յ, ն, ո, ր

Փոխառյալ հնչյուններ—հ, զ, ծ

⁴ Էդ. Աղայան, Գրաբարի քերականություն, Երևան, 1962:

2. Աճառայնը Տիգրանակերտի բարբառում դիտել է նաև լ՛, դ՛, ու, օ քմային հնչյուններ, որոնք մեր կարծիքով հատուկ չեն բարբառին⁵:

Բարբառի բաղաձայն հնչյունները իրենց հնչյունախոսական բնութագրով ընդհանուր առմամբ համապատասխանում են արդի գրական հայերենի բաղաձայններին, սակայն կան որոշ տարբերություններ և յուրահատկություններ:

Շնչեղ խուլերից փ, ֆ, ք-ն հատկապես բառակզբում ունեն արտաբերման թուլություն, որը հանգեցնում է շնչեղության թուլացմանը. դրա հետևանքով նշված հնչյունները արտասանվում են փափուկ, թույլ պայթյունով:

Գ և ֆ ետնալեզվային պայթականները (Ս) քմային հնչյութին նախորդելիս ստանում են քմային երանգ:

Երբեմն, հիմնականում երկվանկ բառերի մեջ, միջձայնավորային դիրքում բաղաձայնները ստանում են հնչման տեղական երանգ՝ բբ, դդ, փփ, քք, թթ, ձձ, ջջ, ցց, չչ, սս, զզ, ժժ, շշ, խխ, վվ, մմ, նն, լլ, յյ, ըր, ղղ և այլն: Սրանք արտաբերելիս (պայթականների դեպքում) բերանի խոռոչում կատարվելիք պայթյունից առաջ մի պահ արտասանական դադար է տեղի ունենում, որից հետո պայթյունը կատարվում է կրկնակի ուժգնությամբ, կամ էլ (շփականների և ձայնորդների դեպքում) հնչյունի արտաբերումը տեղական բնույթ է ստանում:

Յ ձայնորդը արտասանությամբ լիարժեք բաղաձայն ձայնորդ է, ունի արտաբերման հստակություն: Ուստի նրա տարբեր կապակցությունները ձայնավորների հետ բարբառում պարզապես բաղաձայնի և ձայնավորի կապակցություններ են:

Հ-ն արտասանությամբ համապատասխանում է արաբերենի հա (ح) հնչյունին. ֆիզիկական հատկանիշներով այն ստորին կոկորդային ձայնեղ շփական հնչյուն է. արտաբերելիս կատիկը ձգվում է դեպի ցած և կոկորդը խիստ լարվում է: Հ-ից տարբերվում է նրանով, որ կոկորդը ավելի ամբողջականորեն է մասնակցում հնչյունի ձևավորմանը:

Ղ-ն ետնալեզվային կիսաշփական է, արտաբերվում է կ-ի և դ-ի միացումով: Այն համապատասխանում է արաբերենի կղաֆ (ق) բաղաձայնին:

⁵ 2. Աճառայն, նշվ. աշխ., էջ 160:

Ճ-ն կոկորդային պայթական է, արտաբերվում է կոկորդի սեղմումով: Սա նույնպես փոխառված է արաբերենից և համապատասխանում է նրա այն (ع) բաղաձայնին:

Տիրանակերտի բարբառում պայթական և կիսաշփական բաղաձայնները ներկայացնում են երկանդամ համակարգ՝ ձայնեղներ—շնչեղ խուլեր, նույնը և շփականները՝ ձայնեղներ—խուլեր: Թե՛ պայթականների և կիսաշփականների, և թե՛ շփականների համար էական, տարբերակիչ հատկանիշ է ձայնեղություն—խուլություն հակադրությունը: Շնչեղությունը պայթականների համար էական հատկանիշ չէ: Պարզ խուլ պայթականներ ու կիսաշփականներ բարբառը ընդհանրապես չունի, այն դիրքերում, որտեղ հնարավոր է պարզ խուլի առկայություն (օրինակ՝ ս, շ-ին հաջորդող դիրքում), սպասելի պարզ խուլերը իրացվում են ձայնեղ պայթական հնչյուններով:

Պայթականները և կիսաշփականները գործառում են թե՛ բնիկ, թե՛ փոխառյալ բառերի գրեթե բոլոր դիրքերում՝ ցուցաբերելով հնչույթային արժեք, որն ապացուցվում է իմաստային հակադրություն նվազագույն զույգերի հետևյալ շարքերով (ինչ խոսք, որ այս հնչյունների համար հնչույթաբանական ուժեղ դիրք է բառասկիզբը).

բրդուզ (պտուկ)—փրդուզ (փտած)

բանիր (պանիր)—փանիր (բանել, վղկ.)

գօբիր (կոպեր)—գօփիր (տաշել, վղկ.)

գօվ (կով)—քօվ (մոտ)

գըրիլ (կրել)—քըրիլ (գրել)

գըդանվ (կտավ)—քըդանվ (գրտավ)

դանգ (տակ)—թանգ (թակ)

դիղ (տեղ)—թիղ (դեղ)

դուն (տուն)—թուն (դու)

հինձիր (հինել, վղկ.)—հինցիր (հնացել)

ձուձ (ծուծ)—ձուց (ծոց)

իգան (կա)—իքան (գա, ըղձ.)

քիրգ (գիրկ)—քիրք (գիրք)

զանդիգ (զատիկ)—զանդիք (զատել, ըղձ.)

փրդիլ (փտել)—փրթիլ (փաթաթել)

զըդվիլ (զտվել)—զըթվիլ (հալառակվել)

գուդ (կուտ)—գութ (կոթ)

շան (ճար)—շան (շար)

շութ (ճոթ)—շութ (զույգ)

փըջիլ (փձել)—փըշիլ (փշել)³

6 Գտնված զույգերը բերված են ոչ լրիվ քանակով:

Ս և Ղ խուլ շփականներին հաջորդող դիրքում (հին և արդի գրական հայերենի սպ, սկ, ստ, շկ, շտ կապակցություններում) բարբառը երևան է հանում ձայնեղ հնչյուններ (ի տարբերություն այլ բարբառների, որոնք այս դիրքում ունեն պարզ խուլեր):

Օրինակներ՝ ըսբըղնգ (ապիտակ), վըսբ (ոսպ), օսգուռ (ոսկր), անսղը (աստղ), հնսդ (հաստ), հըրըշղնգ (հրեշտակ), գուշդ (կուշտ), անգիրդ (աշակերտ) և այլն⁷:

Շնչեղ խուլերի, հատկապես ք-ի և փ-ի շնչեղազերկման դեպքում, որը երբեմն կատարվում է շնչեղ խուլ+շնչեղ խուլ կամ այլ կապակցություններում և ընդհանրացած երևույթ է, շնչեղազերկված պայթական բաղաձայնը իրացվում է ձայնեղներով, օրինակներ՝ փք>քք—շբթօր (շնփնթ+օր), շբրուզնթի. սգ>սգ—անգ, վասփէն. ցգ>ցգ—վըլնցգ, զբրուցգ, սըղուցգ, փըռնուցգ և այլն:

Քմայնացած ետնալեզվայինները (զ', ք') կարող են լինել միայն բառասկզբում և բառամիջում. բառավերջը բացառված դիրք է, քանի որ դրանք հանդիպում են միայն ն ձայնավորին նախորդող դիրքում՝ ք'նրի, ք'նդիլ, ք'նր, ք'նթ, թնք'նվուր, ք'նք'նվ, շուք'ն, էրք'նթ, շնք'նր և այլն: Այս հնչյունները զուրկ են իմաստազատիչ դերից, ուստի և (Գ), (Ք) հնչույթներն ամբողջացնող դիրքային տարբերակներ են բարբառում:

Պայթական և կիսաշփական տեական երանգ ունեցող հնչյունները գործառում են միջձայնավորային դիրքում, օրինակ՝ շաբբիլ, շրդդիլ, լըփփիլ, հօքքի, դըքքնլ, թըթթու, դրծծու, հնցցիդ, խըջջուդ, շըշշնլ: Սակայն կան բազմաթիվ օրինակներ, որոնցում միևնույն հնչյունները նույն դիրքում տեականություն չեն ստանում՝ հնքիր, հնդիդ, թնփիլ, հնքիր, թնթիդ, գէծնգ, մածուն, խօջն և այլն: Չնայած այս հանգամանքին՝ տեական հնչյունները իմաստազատիչ հատկանիշ չունեն: Դրանք պարզապես արտասանական տարատեսակներ են:

Այսպիսով՝ Տիգրանակերտի բարբառը ունի պայթական և կիսաշփական բաղաձայն հնչույթների երկանդամ համակարգ՝ հետևյալ կազմով՝

ձայնեղներ՝ (Բ), (Գ), (Դ), (Ձ), (Ջ)

շնչեղ խուլեր՝ (Փ), (Ք), (Թ), (Յ), (Չ)

⁷ Ի դեպ, Չ. Աճառյանն էլ այս դիրքերում ձայնեղներ է դիտել բարբառում:

Սրանք ունեն տեական հնչման արտասանական տարատեսակ միջձայնավորային դիրքում. (Գ)-ն և (Ք)-ն ունեն նաև քմային տարբերակ:

Շփականները ընդհանուր առմամբ գործառում են բառի բոլոր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում, բառավերջում, սակայն՝

Ղ ետնալեզվային շփականի համար բացառված դիրքեր են՝

ա) բառասկիզբը, նույնիսկ փոխառյալ բառերում Ղ-ի դիմաց բառասկզբում առկա է ղ կիսաշփական:

բ) Ղ+շնչնղ խուլ կապակցությունը. այս դիրքում Ղ-ի փոխարեն առկա է խ, օրինակ՝ քնիսցըր, թուխթ, ջիխք, անխքնդ, անխիզ, թանխ, քնխքըցի և այլն: Բացառություն են կազմում այն պատճառական բայերը, որոնցում ցն ածանցյին Ղ է նախորդում, օրինակ՝ անղցընիլ, թողցընիլ և այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչը Ղ-ով վերջացող բառ է, որին հաջորդում է շնչնղ խուլով սկսվող այլ բաղադրիչ, օրինակ՝ թեղթիր, անղշուր, մեղթըրիլ: Այս երևույթի պատճառն այն է, որ շարունակվում է գիտակցվել արմատը ածանցավոր և բարդ բառերում:

Ֆ-ն հանդիպում է հիմնականում փոխառյալ և բարբառային բառերում և ընդհանրապես բարձր հաճախականություն չունի, օրինակ՝ ֆանս, ֆնջան, ֆիդաի, ֆիթիլ, մաջրաֆա, շանֆթանլի, սիֆանր, ղըֆըլ, նանֆանս, քեֆ, թառաֆ, ֆուռիլ, ֆընդիլ, ֆըթֆըթուն, օֆ և այլն:

Հ կոորդդային շփականը հազվադեպ է պատահում բառավերջում՝ մնհ, անքմհ. բառամիջում բարբառը և ունի հիմնականում այն դեպքերում, երբ հ-ով սկսվող կամ ավարտվող բառը հանդես է գալիս բաղադրված ձևով, օր.՝ անհուն, անհամ, քնթանհան, շանհանիլ և այլն: Հ-ն սովորաբար չի հանդիպում Ե-ին հաջորդող դիրքում. Են կապակցությունը բացառված է հին հայերենի հետ ընդհանրություն կազմող բառերում, օրինակ՝ անխանք, շընուրք, շընօրնազնլ, խօրուրթ:

Հնչույթաբանական մակարդակում շփականները միմյանց հակադրվում են ըստ ձայնեղություն-խուլություն հատկանշի, ա, շ, գ, ժ-ն՝ նաև սուլականություն-շշականություն հատկանիշով: Օրինակներ՝

սուղ (սուտ) — զուղ (զուտ)

սանդգի (սատկի) — զանդգի (զատկի)

խօսիր (խոսել, վղկ.) — խօզիր (խոզեր)

յէս (ես) — յէզ (եզ)

Շամ (Դամասկոս քաղաքը) — ժամ (եկեղեցի)

անժուր (յուզը քիշ) — անշուր (առանց շորի)

ուշ — ուժ

Ըստ սուլականություն-շչականություն հատկանիշի՝

սուն (սյուն) — շուն

սուր — շուր (շոր)

ժանգ (ժանգ) — զանգ (զանգ)

վըժժան (աղմկել) — վըզզան

փէսի (փեսայի) — փէշի (փեշի)

փուս (փոս) — փուշ

Ետնախզվային շփականների համար կան հակադրության հետեւյալ զույգերը, որոնք ընդգրկում են միայն բառամեջն ու բառավերջը (ուժեղ դիրք)․

սուղ (թանկ) — սոսիս (սոխ)

վանդ (վաղը) — վանի (վախը)

թանդիմ (թաղեմ) — թանիմ (մի խումբ)

Շրթնատամնային շփականների համար հակադրությունների զույգերը հազվադեպ են, քանի որ Ֆ-ն հանդիպում է փոխառյալ բառերում. բացառությամբ մեկ-երկու ձայնարկությունների, հակադրվող այլ դեպքեր չկան, օրինակ՝

վըշշ (արհամարհական) — ֆըշշ (բնաձայնական)

օվ (կոշական) — օֆ (ձայն.)

Կոկորդային շփական ե-ն իմաստային հակադրության նվազագույն զույգեր կարող է կազմել բոլոր մյուս շփականների հետ։ Օրինակներ՝

հօվ (քամի) — վօվ (ով)

հանդ (հատ) — զանդ (զատ, ետ)

հուղ (հոտ) — խոսղ (խոտ)

մահ (մահ) — մաս (մասունք) — մանղ (մաղ)

անհ (ուխտ) — անիդ (հանգույց)

համ (համ) — ժամ (եկեղեցի)

հուր (հոր) — շուր (շոր)

Միջձայնավորային դիրքում տեական հնչում ստանում են հիմնականում սուլականները, շչականները, հազվադեպ նաև խ-ն, վ-ն, օրինակ՝ քսօօր, հանգզան, էժժան, փըշշուդ, ջըխխան, ջըվվան և այլն։ Միևնույն դիրքում հանդիպում են նաև սովորական հնչյուններ, ինչպես՝ քըսան, փուսիլ, մազիր, մազուդ, մըժիգ, փօ-

շի, գնշի և այլն։ Սակայն տեական հնչյունները բարբառի հնչույթաբանական մակարդակում զուրկ են իմաստազատիչ դեր կատարելու հատկանիշից, որի ապացույցներն են։

ա) միևնույն արմատի մեջ, եթե բառի ուղիղ ձևում ունենք ոչ տեական հնչյուն, ապա բառի աճման ժամանակ այն, միջձայնավորային դիրք ընկնելով, ստանում է տեական երանգ, սակայն արմատի իմաստը դրանից չի փոխվում։ թիգ-թրգգուգ, փուշ-փըշ-շուդ, էշ-իշշու, գէս-գրսսօր, էս-ըսսիգի, ինչպես նաև՝ բուն-բննէս, հնց-հնցցիգ և այլն։

բ) եթե վանկատենք տեական հնչյուն ունեցող բառերը, ապա տեականները կկիսվեն տարբեր վանկերի միջև, ինչպես՝ գըս-աօր, իշ-շու և այլն։ Իսկ եթե ուղիղ ձևում ունենք տեական հնչյուն, բառի աճման ժամանակ այդ հնչյունին որևէ բաղաձայն հաջորդելիս՝ այն զրկվում է տեական հնչերանգից՝ դարձյալ փոփոխություն չառաջացնելով արմատի իմաստի մեջ՝ դասսէ-դըսնըմէգ, փըզզիլ-փըզվիլ և այլն։

Քանի որ նշված դեպքերում իմաստափոխությունները պայմանավորված չեն հնչյունի տեականության հատկանիշի ձեռք բերումով կամ կորստով, ուստի պարզ է, որ հնչյունների տեականությունը էական, տարբերակիչ հատկանիշ չէ։ Տեական հնչյունները դիրքային տարբերակի աստիճանի չեն կարող բարձրանալ, որովհետև ամբողջապես չեն ընդգրկում այն ոլորտը, որում հանդիպում են (միջձայնավորային դիրքը), և ունեն չպատճառաբանված գործառություն, այսինքն՝ հնարավոր չէ բացատրել, թե ինչու միևնույն հնչյունը նույն դիրքում մի բառի մեջ տեական է հնչում, մյուսում ոչ (գըծծիգ-գէծնգ, ըսսօր-ըսուր, ըսուր-ըսսունք-ըսսունց)։ Ուստի բոլոր տեական հնչյունները արտասանական տարատեսակներ են։

Այսպիսով՝ բարբառի ջիական հնչույթներն են՝ (Ձ), (Ժ), (Ղ), (Վ), (Ս), (Շ), (Խ), (Ֆ), (Հ), որոնք, բացառությամբ (Ղ), (Ֆ), (Հ)-ի, ունեն արտասանական տարատեսակ միջձայնավորային դիրքում՝ զզ, ԺԺ, վվ, սս, շշ, փփ։

Ձայնորդները գործառում են բառի գրեթե բոլոր դիրքերում։

Բ և ռ ձայնորդների համար բացառված է բառասկզբի դիրքը հայերեն բառերում։ Դրանք հանդիպում են միայն մի շարք փոխառյալ բառերի սկզբում՝ րանգ, րուշվանթ, րանչիար, րութթօ, ռադբանթ, ռազի, ռահին, Ռօզին, ռըսվայ. կան նաև ռ-ին նախդրող ը ձայնավորով սկսվող՝ ըոհան, ըոհանթ, ըոզագ, ըոաչալ բա-

ները, սակայն այս երևութը ընդհանրացած չէ: Բարբառը ունի Ե-ի և Ո-ի ստեղծած այնպիսի հնչյունակապակցություններ, որոնք խորթ են եղել հին հայերենին, օրինակ՝ ԵՆ—ՎԷՐՆԱՆ, ՆՕՐՆԱՆ (հին հայերենը ն-ից առաջ միշտ ու է ունեցել), ՈՎ—ՀՕՄՈՒՆԹՕՈՒ, ՀՕՈՒՄՐՆՈՅ, ԹՕՈՒԻԼ, ԹՕՈՒՐԶԻԼ, ԸՈՏ—ԸՈՏԱՆ (ռեհան), ՈՆ—ՆՈՆԻ, էՈՆԱԳ, առչ:

Յ-ն իբրև լիափունջ բաղաձայն կարող է լինել միավանկ բառերի սկզբում՝ յէս, յէզ, յէփ, յօթթէ, յրդ:

Յ-ի հանդես գալը բացառված է հայերեն բազմավանկ բառերի սկզբում, բացառությամբ այն դեպքերի, երբ յ-ով սկսվող միավանկ բառը աճում է վանկերով, ինչպես՝ յուր-յուրցէն, յրդ-յրդուդ, յէզ-յէզնիր և այլն: Բայց քանի որ բարբառը ունի յ-ով սկսվող փոխառյալ բազմավանկ բառեր՝ յարա, յէսիր, յամանի, յախութ և այլն, կարելի է ընդունել, որ բարբառում յ-ն հանդիպում է նաև բազմավանկ բառերի սկզբում: Բառամիջում ու բառավերջում յ ձայնորդ բաղաձայնը հանդիպում է միջձայնավորային և ետձայնավորային դիրքերում՝ բիյիլ, լէյմոն, ղալայ, հայ, սօյ, բօյ և այլն:

Որպես ձայնակապ յ-ն գործառում է հազվադեպ, շատ թույլ հնչմամբ, գրեթե անզգալի: Ուստի հարկ չենք համարել այն գրությանմբ արտահայտել:

Նշված բոլոր ձայնորդ հնչյունները ունեն հնչույթային արժեք:

Լ-ն հակադրվում է ղ շփականին, որի հետ արդեն հնչույթաբանական մակարդակում ոչ մի առնչություն չունի.

խուլ — խուլ (հող), խալի (գորգ) — խաղի (խաղի)

քուլ (գու) — քուլ (գող), քէլիր (գայլեր) — քէղիր (գյուղեր)

Ր-ի և ռ-ի հակադրության համար կան հետևյալ նվազագույն զույգերը, որոնք ընդգրկում են բառավերջի ետձայնավորային դիրքը (ուժեղ դիրք).

նուր (նոր) — նուռ (նուռ)

թէր (կողմ) — թէռ (դեռ)

Յ-ն հակադրվում է և շփականին՝ յուր (ուր) — հուր (հոր):

Փոխառյալ հնչյուներ — Հ-ն հանդիպում է գերազանցապես արաբական փոխառություններում, օրինակ՝ հաննան, հանսն, հանսիր, հանքիմ, հանսան, հանջի, հանյրան, ահբաբ, ղանդան, ջառուհ և այլն:

Հ-ն և Խ-ն հակադրվում են միմյանց ձայնեղություն-խլություն հատկանիշով՝

Հասսս (քաղցրավենիք) — հասս (հասնել)

Հաննիլ (հինայել) — հանիլ (հանել)

Հասսիր (խսիր) — հասիր (հասնել)

(Այս օրինակները բերում ենք որոշ վերապահությամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակադրության առաջին եզրում ունենք տևական հնչյուններ, չնայած դրանք հնչույթային արժեք չեն ներկայացնում)։ Կան նաև՝

Հանգէն (իգ. անձնանուն) — հանգէն (շնչից)

Հայվան (անասուն) — հայվա(ն) (սերկևիլ)

զույգերը։ Այսպիսով՝ Խ-ն հնչույթ է և Խ խուլ շփականի ձայնեղ զույգն է, սակայն գործառում չէ միայն փոխառյալ և դրանցով կազմված բարբառային բառերում։

Ղ-ն հանդիպում է բառի բոլոր դիրքերում՝ ղուրանիս, ղօժմա, ղասսաբ, ղանկան, ղափղափ, աղղօ, ղուղղու, ղարաղօլ, ղար-ղա, անղ, հաղ և այլն։

Ղ-ն հանդես է գալիս ոչ միայն արաբական և թուրքական փոխառություններում, այլև բարբառային բառերում, ինչպես՝ ղըժժան, ղըշղիլ, ղըռռալ, ղըլղըլան, ղըլղըլուց, ղըլուլիգ և այլն։

Ղ-ի հնչույթային արժեքը որոշելու համար բերենք իմաստային հակադրության հետևյալ նվազագույն զույգերը, որոնք ընդգրկում են բառակիզբը՝ ղ-ի համար հնչույթաբանական ուժեղ դիրքը. այստեղ Ղ-ն հակադրվում է խ շփականին՝ կիսապայթականություն-ոչ կիսապայթականություն հատկանիշով և ետևալեզվային պայթականներին՝ ֆ, գ-ին, կիսաշփականություն-ոչ կիսաշփականություն հատկանիշով։

ղուլ (ծառա) — խուլ — քուլ (մոխիր)

ղաթըր (ջորի) — խաթըր

ղո՛ւմէ (ավազը) — քո՛ւմէ (քոնը)

ղուզի(ն) (դառը) — խուզին (խուզեն) — գուզին (ուզում են)

ղաթ (շերտ) — խաթ (ակոս)

Ղ-ին հակադրվել չի կարող, քանի որ բառակիզբը Ղ-ի համար բացառված դիրք է: Բառամիջում և վերջում Ղ-ն և ղ-ն կարող են հանդես գալ միևնույն դիրքերում, ինչպես՝ թանղ-թաղ, անղիւ-մըղիւ, սիջօղ-սիրօղ, չըղըլ-մըղըլ, հաղ-խանղ, սակայն հակադրվող միավորներ չեն հանդիպել: Այսպիսով ղ-ն բարբառում ինքնուրույն հնչույթի արժեք ունի:

Ճ հնչյունը հանդիպում է արաբական փոխառություններում՝ յայբ, յաջէբ, յազդիաթ, յադաթ, շաճարա, մաճալմէ, մաճէշ, սանաճաթ, շամճադա, նաճիդ, մաճճալ և այլն: Եւ հնչյունապես իր մերձավոր զույգը չունի հայերենում: Այն պետք է համարել օտար հնչույթ՝ փոխառյալ բառերում: Այսպիսով՝ բարբառում առկա է ընդամենը քսանութ բաղաձայն հնչույթ:

ՇԵՇՏ ԵՎ ՆՐԱ. ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՆԶՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Տիգրանակերտի բարբառում սովորաբար շեշտվում է բառի վերջնավանկը. բառի հիմնական շեշտը ունի կայուն-շարժական բնույթ: Զգալի ուժգնություն ունի նաև երկրորդական՝ առաջնավանկի շեշտը. հաճախ դժվար է լինում որոշել, թե ո՞ր վանկն է առավել շեշտվածը՝ առաջի՞նը, թե՞ վերջի՞նը:

Շեշտն առաջնավանկի ձայնավորն է կրում՝

մեկուկես վանկանի բառերում՝ մա՛նդըր, ձա՛նդըր, մի՛ղըր, ան՛դըր, սա՛նդըր և այլն:

Մի շարք դերանուններում՝ է՛սղըդըր, է՛նղըդըր, ի՛նչղըդըր, ի՛նչիւրս, յո՛ւրցէն:

Մի քանի եղանակավորող բառերում, շաղկապներում, ձայնարկություններում՝ մա՛րէվուն, մա՛րէմընէն, թէ՛յզի, հա՛դէ, հա՛մա, ի՛լլա, նա՛խսա:

Ժխտական խոնարհման որոշ բայաձևերում՝ չէ՛լլա (չի ելնում), չո՛ւզի (չի ուտում), չի՛մնա (չի լսում), մէ՛լլա (մի՛ ելնիր), մը՛սի (մի՛ ասա), մէ՛նի (մի՛ անիր), չը՛մն իլլա՛մ (չպիտի լամ), չը՛մն իբլա՛մ (չպիտի գամ): Վերջին օրինակներում շեշտվում է մըն-չըմն մասնիկը:

Թեթև > թի՛թըվ, սամոյր > սա՛մըր բառերում:

Կրկնակի շեշտ են կրում անձնական դերանունների հայցական հոլովաձևերը՝ յէսի, քէզի, ինքի, մէզի, ցէզի, իրանքի, քէ-

զիզի, մէզիզի, ինքըզի. էսթէն, էնթէն, հօսդիդ, հօնդիդ ցուցական-ները:

Շեշտափոխական հնչյունափոխություն

Ա. և ան ձայնավորները միավանկ և մեկուկես վանկանի բաների ածման դեպքում չեն հնչյունափոխվում՝ ան-անդի, անք-անքի, անվրնիր, բար-բարու, ան-անգի, անդ-անդիր, մարթ-մարթու, ցանք-ցանքուգ, ցանքի, ջառ-ջառուգ, ձառ-ձառիր, շաղ-շաղունց, դաք-դաքէն, փանցըր-փանցըռնալ, մանդըր-մանդըրուք, ձանդըր-ձանդըրնալ, անդըղ-անդղօգ:

Բացառություններ են՝ ցանք բառի դիք մասնիկով կազմվող հոգնակին՝ ցրքդիք, և դասուէ բաղադրիչով կազմված թվականները՝ դրսնըմէգ, դրսվէրգուք, դրսնըշուրս, դրսնըհինգ և այլն, որոնցում առկա է ա||ան|ը հերթափոխական լծորդությունը:

Բաղմավանկ բառերի շեշտակիր փակ վանկի ա||ան-ն շեշտադրկվելիս ենթարկվում է հետևյալ փոփոխություններին. հերթափոխվում է ը ձայնավորով՝ անշանք-անշարքի, անգանք-անգըքի, դըխանք-դըխմըրգէր, թըխմընիր, փամբանք-փամբըգի, վանդանք-վանդըգիլ, հարփանք-հարփըծի, շանվանք-շըվըրնիր, ամառ-ամըռվա, ամըռնագ, Ասղվաձ-Ասղըձու:

Սղվում է՝ փերան-փերնի, փերենն, քանք-քանքի, քանքըքի, վիշնագ-վիշգի, ըսքըդանգ-ըսքըդուց, բանգան-բանգսիլ, թանախ-թանխօգիլ, դավար-դավրի, չօբան-չօբնի, անան-աննիլ և այլն:

Զի հնչյունափոխվում այն բարդ բառերում, որոնց վերջին բաղադրիչը ա վանկարարով միավանկ բառ է՝ բանընբանք-բանընբանուչ, ձանդանքանթ-ձանդանքանթի, անլեջան-անլեջանի, չանդըլքանք-չանդըլքանքի, ինչպես նաև շատ ալլ դեպքերում՝ բանանք-բանանքի, թանգանք-թանգանքի, թըրանդ-թըրանդի, ձըրանք-ձըրանքի, գըրանք-գըրանքի, գրանգուլին, բըսանք-բըսանքի, բըսանգիլ, անդանք-անդանքի, բառար-բառարի, ձիձընագ-ձիձըռնագիր, ժանգանք-ժանգանքի, ցիան-ցիաննիր, քինառ-քինաննիր, ղըրանգ—ղըրանգի (նաև փոխառյալ բառերում):

Բառավերջի բաց վանկի ա||ան ձայնավորը շեշտադրկվելիս կրում է հետևյալ փոփոխությունները. սղվում է ի հոլովանիչից առանց՝ ա||ան|Օ, օր.՝ դըլան-դըլի, փէսան-փէսի, քանման-քամփի, սահանա-սահանի, բանգլան-բանգլի, քասա-քասի, քուլան-քուլի, խօջա-

խօջի, բացառությամբ որոշ փոխառյալ բառերի՝ ուշնիմ-ուշնիմի, մէջվա-մէջվաի, մըլլա-մըլլաի, դանդան-դանդանի:

Ձի հնչյունափոխվում բարդութունների մեջ՝ փէսնի-փէսնիմ-դիվ, դըղն-դըղնցզան, ագոա-ագոահադիգ, ագոաժաժիգ, մըլլա-մըլլարա. բացառություն է քուշնի-քուշթօն (դարբաս) բառը, և նիւ հոգնակերտից առաջ՝ ագոա-ագոանիր, փէսնի-փէսնանիր, բախշա-բախշանիր, սադանա-սադանանիր, դըղն-դըղնանիր և այլն:

Այսպիսով՝ փակ վանկի շեշտագրկված ա||նի ձայնավորի համար բարբառը ունի ա||նի/ը և ա||նի/Օ հերթափոխական լծորդություններ, իսկ բաց վանկի ա||նի-ի համար միայն ա|| Օ տիպի լծորդություն՝ ի հոլովանիշին նախորդող դիրքում: Բարբառը մի կողմից պահպանելով հին հայերենի ա ձայնավորի շնչյունափոխվելու հատկությունը՝ մյուս կողմից ձեռք է բերել միջին հայերենում արդեն գործող, բազմավանկ բառերում ա-ի հնչյունափոխվելու նոր հատկություն, որ հատուկ է բազմաթիվ բարբառների:

Է—Հին հայերենի է երկբարբառակերպին համապատասխանող է-ն շեշտագրկվելիս կամ շի հնչյունափոխվում, կամ հնչյունափոխվում է՝ ավանդաբար: Այս երկակի բնույթը պատճառ է դարձել տարբերակների ստեղծման, օրինակներ՝ փէջ-փէջին, շէն-շէննալ, քէշ-քէշութին, քէր-քէրնալ-քէրգիգ, մէշք-մէշքի, էշ-էշիր, էշշուն||թշշուն, մէշ-մէշի||միշուն-միշուգ, նէր-նէրուշ-նիրվըդիք, գէր-գիրուշ-գիրվըդանք-գիրութին, դէրդէր-դէրգրրու, դանդէր-դանդէրուշ, գէս-գիսիլ, գըսսօր (այստեղ է>>ը հնչյունափոխությունը կատարվել է ըստօր (այսօր) բառի համաբանությամբ):

Աղէգ-անդգիգ բառում է-ն սղվել է: Այսպիսով է-ի հնչյունափոխությունը իրացվում է է/ի, մասամբ՝ է/ը, է/ Օ հերթափոխական լծորդություններով:

Հին հայերենի այ երկբարբառին համապատասխանող է-ն միավանկ բառերի սկզբում շեշտագրկվելիս հնչյունափոխվում է ք-ի, օրինակ՝ էս-քսի-քսսիգի, ըսսօր, էն-քնի-քնիգի. բացառություն են էսթէն, էնթէն դերանունները, սակայն սրանք կրկնակի շեշտ ունեն, և է-ի պահպանումը բացատրվում է շեշտվածությամբ:

Է-ն շի հնչյունափոխվում հետևյալ դեպքերում.

երբ համապատասխանում է նին հայերենի Ե ձայնավորին, օր.՝ յէգ-յէգնիր-յէգան, փէռ-փէռան-փէռնիր, ցէռք-ցէռքի-ցէռաց, ցըմէռ-ցըմէռվա, ցուն-ցըմէռնօցուն, խէվ-խէվութին, խէվնալ, բառավերջի բաց վանկում՝ լօլէ-լօլէի, մօշէ-մօշէի, խալէ-խալէի, մըքըքէ-մըքըքէի և այլն:

Երբ համապատասխանում է հին հայերենի այ, եա, իա երկ-
բարբառներին կամ ա ձայնավորին (մասամբ), օր.՝ քէլ-քէլու-
քէլիւր, լէո-լէոսոն-լէոնիր, փէդ-փէդնալ-փէդվուր, դէքըր-դէքրուշ-
դէքըրդիք, դէքէրնաք, մէգ-մէգութին, էրթ (յարդ)-էրթաման, ցէն-
ցէնի-ցէնիր, լէնք-լէնքի և այլն. բացառությոն է նախփէր-նախփըր-
դիք բառը՝ է > ը հնչյունափոխությամբ:

Այսպիսով՝ է ձայնավորը բարբառում, իբրև հնչմամբ հին
հայերենի ե-ին համապատասխանող հնչյուն, շարունակում է զըր-
սևորել ե-ին հատուկ՝ շեշտազրկվելիս հնչյունափոխվելու օրինա-
չափությունը. հնչյունափոխական դեպքերը կապվում են հիմնա-
կանում հին հայերենի է երկբարբառակերպի հնչյունափոխության
ավանդական մնացուկների հետ և ներկայացնում են է/ի, է/ը, է/Օ
տիպի հերթափոխական լծորդություններ:

Ի—Հին հայերենի ի (մասամբ ե) ձայնավորին և իւ, եա երկ-
բարբառներին համապատասխանող ի-ն շեշտազրկվելիս ենթարկ-
վում է հետևյալ փոփոխություններին. հերթափոխվում է ը ձայնա-
վորով՝ միավանկ և բազմավանկ բառերի փակ վանկում, օր.՝ վիդ-
վըդի, քինձ-քընձիդ, միդք-մըդքի, սիրդ-սըրդի, սըրդանցում, թիդ-
թըդուդ, ջիվ-ջըվի-ջըվիր, բըղինձ-բըղընձի-բըղընձգամբ, վարդիդ-
վարդըգնիր, օգնիդ-օգնըգի, խըլինք-խըլընքուդ, գիդդ-գըդդի,
ջիխք-ջըխքիլ, էրիս-էրըսնիր, նլիր-նըլրի. բառավերջի բաց վան-
կում՝ նիւ հոգնակերտին և աղանձ ածանցին նախորդող դիրքերում,
օր.՝ օսգի-օսգընիր, դարի-դարընիր, մըննի-մաննընիր, քախքըցի-
քախքըցընիր, գէշի-գէշընիր, էքի-էքըսդանք, օսգի-օսգըսդանք,
խալի-խալըսդանք:

Սղվում է՝ ի/Օ, փակ վանկում՝ շամիշ-շամշի, էրիդ-էրգան,
զըռիվ-զըռվի, գընիդ-գընգան-գընգդիք, մըժիդ-մըժգուդ, դէնիր-
դէնդրի, դէնդրէն, բանիր-բանդրի, նսիդ-նսդի, բըջիդ-բըջդիլ, ցօ-
րին-ցօրնի, նրին-նընի. բառավերջի բաց վանկում՝ ու, ուշ հոլո-
վանիշներից և դիք հոգնակերտից առաջ՝ էքի-էքու, հօքքի-հօքքու,
քէնի-քէնուշ, քուրսի-քուրսու, խընամի-խընամդիք և այլն:

Անփոփոխ է մնում՝ միավանկ բառերի վերջում, միակ օրի-
նակն է՝ թի-թիուն (նի բառը ունի ցիաճ ձևը, որում իա-ն, որ քա-
րացած և չգիտակցվող հոգնանիշ է, հերթափոխվում է ըյ-ով՝
ցըյնի, կամ մնում է անփոփոխ՝ ցիաննիր): Ի-ով հանգող ածա-
կանների թեք ձևերում՝ նղի-նղիին, նլի-նլիին, և մի շարք այլ
օրինակներում՝ հին-հիննալ, քըրդինք-քըրդինքնէրու, ուրիշ-ուրի-
շի/ուրըշի, բըրգիշ-բըրգիշի, ինշ-ինշիր-ինշու, ինք-ինքի/ընքի-

ինքրզի, որոնք կապվում են ի-ի բառասկզբի դիրքի կամ այլ բար-բառների և արևմտահայ գրական լեզվի հնչյունափոխական երե-վույթների ներթափանցման հետ:

Իս>է՝ բարդ կամ ածանցավոր բառերի մեջ՝ ա ձայնավորին միանալով՝ լէղի-լէղէնալ, դարի-դարէզնագ, փարի-փարէզնալ, քէ-րի-քէրէզնալ (<գերիականալ):

Հին հայերենի ե ձայնավորին շեշտի տակ համապատասխա-նող ի-ն շեշտազրկվելիս վերականգնում է իր հին հնչումը՝ ի/է, օր.՝ թիզ-թէղի-թէղթիր, թիլ-թէլիր, վիր-վէրի, խիւք-խէլաց, թիվ-թէվի, թիփ-թէփի, արդիր-արդէրու, անձրիվ-անձրէվու, քըշիր-քը-շէրվա, արիվ-արէվի-արէվուդ, բայց՝ արիվթէմ, էվիլ-էվէլդունք, ջինջ-ջէնջիգ, շիրդ-շէրդիլ, անթիզ-անթէղիլ, նաև՝ քիզ-քէզի, քէզ-րանք (եւ>է>ի):

Այսպիսով՝ ի ձայնավորին հատուկ են հետևյալ հերթափոխա-կան լծորդությունները՝ ի/ը, ի/Օ, ի/է, իա/է, իա/ը՝ մեկ օրինա-կում:

Ի ձայնավորի՝ շեշտազրկված վանկում հնչյունափոխվելու կամ սղվելու օրինաչափությամբ բարբառը շարունակում է հին հա-յերենի ավանդույթների պահպանումը՝ նոր երևույթներ դրսևորե-լու հետ միասին, որոնք կամ պայմանավորված են բարբառի պատ-մական հնչյունափոխության գործոններով (ե>ի, իւ, եւ>ի, եա>ե>ի) կամ ազդեցությունների արդյունք են (հնչյունափոխ-վելու դեպքեր):

Ու—Հին հայերենի ու ձայնավորին համապատասխանող շեշ-տակիր ու-ն շեշտազրկվելիս հերթափոխվում է ր-ով՝ միավանկ և բազմավանկ բառերի փակ վանկում, օրինակ՝ թուփ-թըփիր, բուդ-բըդիգ, շուր-շըրիգ, գունդ-գընդիգ, մուգ-մըգան-մըգնիր, շուն-շը-նիր, թուզ-թըզի, փուշ-փըշշուդ, բընդուգ-բընդըզի, գըննուխ-գըն-նըխվա-գըննըխքըմանց, խօսողուգ-խօսղըգողիլ, էրթում-էրթըվնալ, բաղոում-բաղըման և այլն:

Որոշ բառեր ունեն հնչյունափոխ և անհնչյունափոխ զուգա-ձևեր, օր.՝ ցուգ-ցըգան/ցուգի, ցուգիր, գուդ-գըդի/գուդի, սըղիլ/սուղնալ, նուռ-նուռն/նուռի, նուշ-նըշի/նուշի, կամ միայն անհըն-չյունափոխ բառաձևեր, օր.՝ շուք-շուքի, ուշ-ուշանալ, սմբուլ-սմբուլին, հըլուն-հլունի, գըննուխ-գըննուխնիրէ, անշունք-ան-շունքվա, էրգու-էրգուհօքքօվ, ցաքուգ-ցաքուգի և այլն:

Սղվում է՝ ու/Օ, բըլուխ-բըլխու, քարուն-քարնան, մաձուն-մաձնաբուր, գըղուց-գըղցիլ, սգէսուր-սգէսրուշ-սգէսրանք, ցըմէ-

րուզ-ցըմէրգին, խըթում-խըթման, ջընջըղուզ-ջընջըղզի, զըբուն-զըբնի և այլն:

Բազմավանկ բառերի բառավերջի բաց վանկի ու-ն շեշտազրկվելիս ձայնավորին նախորդող դիրքում հերթափոխվում է Վ ձայնավորով, օր.[՝] լէզու-լէզվի-լէզվընիր, գանդու-գանդվի-գանդվընիր (հոգնակիները կազմված են տրականի հիմքով), հէրու-հէրվան, գըծու-գըծվիլ, մէղու-մէղվի և այլն:

Հին հայերենի շեշտակիր ու-ին համապատասխանող ու ձայնավորը շեշտազրկվելիս ստանում է հնչման իր նախկին որակը՝ ու/օ, օր.[՝] սուխ-սօխիր, խուզ-խօզիր, ձուց-ձօցի, հուզ-հօղուզ, մում-մօմիր, հուր-հօրիր, փուս-փօսիր, փուր-փօրխուց, թուղ-թօղցընիլ, հանվուր-հանվօրիլ, լանդուղ-լանդօղնիր, բըղդուր-բըղդօրիլ, շուր-շօրցուզ, շօրութին, լինում են բացառություններ, երբ օ-ն չի վերականգնվում՝ խօշուր-խօշուրանղ, ըղուրթ-ըղուրթմանց, ցուցական դերանունների թեք ձևերում՝ ըսուր, ընուր-ըսուրնէն, ըսուր-մօվ-ընուրմօվ և այլն:

Հին հայերենի ոյ, իւ, աւ երկբարբառներին համապատասխանող ու ձայնավորը շեշտազրկվելիս չի հնչյունափոխվում, օր.[՝] լուս-լուսու-լուսւր, սուն-սունի, ընգուղ-ընգուղի, թուր (դիր)-թուրիլ, թուլ-թուլնալ, ցուն-ցունի, գուզ-գուզի, քուր-քուրուլ, քուր-վըղիք, ունք-ունքօվ, բայց հոգնակին՝ ընքվընիր, զըբուցգ-զըբուցքի. բացառություն է փուն (բոյն) բառը, որում ու-ն հերթափոխվում է ք լծորդով՝ փընի-փընիր-փընիք:

Այսպիսով՝ ու ձայնավորը ունենում է ու/ը, ու/Օ, ու/Վ (ձայնավորին նախորդող դիրքում), ու/օ հերթափոխական լծորդություններ:

Ու-ի չհնչյունափոխվելու երևույթով Տիգրանակերտը, իբրև արևմտյան խմբակցության բարբառ, շփվում է Պոլսի և նրան հարող շրջանների բարբառներին և արևմտահայ գրական լեզվին: Ակնհայտ է, որ ու-ի շեշտափոխական հնչյունափոխությունը պարզապես հին ավանդույթների շարունակությունն է և բավական վաղուց բնույթ ունի բարբառում, չնայած որ նրան զուգահեռ արմատացել է նաև երկբարբառներից առաջացած ու-ի անտարբերությունը շեշտի փոփոխության նկատմամբ:

Օ—Հին հայերենի աւ երկբարբառին և ո ձայնավորին համապատասխանող օ-ն բարբառում շեշտազրկվելիս ընդհանրապես չի հնչյունափոխվում, օր.[՝] օր-օրվան, խօսք-խօսքիր, օց-օցիր, մօդ-

մօդիզ-մօդզըննի, թօռ-թօռնիզ, ձօվ-ձօվի, հօվ-հօվի, քօխք-քօխքի, մօռ-մօռմէնի, ախօռ-ախօռնիր, ուզօղ-ուզօղի, Հայգօ-Հայգօի:

Միակ բացառությունը թօռ (դուռ) բառն է, որի թեք ձևում առկա է օ/ը լծորդություն՝ թրռա՛ն. սա էլ բացատրվում է նրանով, որ օ-ն այստեղ փոխարինում է ու-ին:

Մի խոսքով՝ բարբառը այստեղ էլ հարազատ է մնում հին հայերենի ու ձայնավորի անհնչյունափոխ լինելու հատկությամբ:

Ը-ն նույնպես ընդհանուր առմամբ անհնչյունափոխ ձայնավոր է, օր.՝ նըխշ-նըխշըման, յըղ-յըղուդ, վըրթ-վըրթուդ, դընդ-դընգօվ, վըրփ-վըրփիր, ըմմըն-ըմմընու, ձանդըր-ձանդըրնալ. փանցըր-փանցըռնալ, շնայած վերջին օրինակներում Ը-ն շեշտված չէ:

Երբեմն մեկուկես վանկանի բառերում Ը-ն սղվում է բառի աճման ժամանակ, օր.՝ անդըղ-անդղի-անդղօվ-անդղիր, դէքըր-դէքրուլ. դէքէրանք ձևում Ը/է լծորդությունը նախկին է հոլովիչի վերականգնման արդյունք է: Ը-ի համար ուրեմն կարելի է նշել Ը/Յ հերթափոխական լծորդությունը:

Այսպիսով՝ Տիգրանակերտի բարբառը ձայնավորների շեշտափոխական հնչյունափոխության բնագավառում ընդհանուր առմամբ հարազատ մնալով՝ հին հայերենի ավանդույթներին՝ դրսևորում է մի շարք նոր երևույթներ, որոնք բարբառի անցած պատմական ուղու արգասիքն են, մասամբ էլ պայմանավորված են արևմտահայ գրական վեզվի և նրան հարող բարբառների լեզվական երևույթների ներթափանցմամբ:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Տիգրանակերտի բարբառի հնչույթների համակարգը հին հայերենի համեմատությամբ երևան է հանում որոշ անհամապատասխանություններ, որոնք հիմնականում պատմական փոփոխությունների արդյունք են:

Հնչյունաբանական մակարդակում կատարված փոփոխությունները հանգում են հետևյալին.

հնչյունափոխություն շեշտակիր վանկում (արտասանության ուժգնացման հետևանքով).

հնչյունափոխություն առաջնավանկերում (արտասանության թուլացման հետևանքով).

հնչյունափոխություն միջնաձևանկերում՝ միջձայնավորային կամ միջբաղաձայնային դիրքում (առաջնաձևանկի շեշտի ուժգնացման հետևանքով)։

հնչյունափոխություն՝ պայմանավորված հնչյունի բառասկզբային, բառավերջային դիրքերով կամ հնչյունակապակցությամբ։

հնչյունափոխություն՝ պայմանավորված պատմական գործոններով, լեզվի մեջ գործող զանազան տենդենցներով, միտումներով։

հնչյունափոխություն՝ կապված այլ բարբառների հնչյունական երևույթների ներթափանցման հետ, այսինքն՝ հետևանք բարբառների փոխադրեցության կամ բարբառային խառնուրդի։

Հնչույթաբանական մակարդակում կատարված տեղաշարժերը բաշխվում են հետևյալ երևույթների մեջ։

հնչույթացում (фонологизация)⁸, նոր հնչույթի կազմավորում։

ապահնչույթացում (дефонологизация), հնչույթի համաձուլում այլ հնչույթի հետ։

վերահնչույթացում (рефонологизация), հնչույթների հակադրության հարաբերակցական գույգերի որակային փոփոխություն՝ հակադրության պահպանմամբ։

Ձայնավորների հնչյունափոխությունը

Ձայնավորների փոփոխությունը բարբառում մեծ չափեր չի ընդգրկում և տարածվում է հիմնականում ա, է, մասամբ ե, ը, ո ձայնավորների գործառության ոլորտների վրա։ Ի և ու հնչույթները ընդհանուր առմամբ անփոփոխ են։

Ա.—Հին հայերենի ա ձայնավորը Տիգրանակերտի բարբառում մեծ մասամբ ներկայանում է քմայնացումով։ Բավական ընդհանրացած երևույթ լինելով՝ ա-ի քմայնացումը բարբառում գրեթե չի ճանաչում որոշակի սահմաններ և չի ենթարկվում որևէ կայուն օրինաչափության։ Ի տարբերություն վանի բարբառի, որտեղ գրաբարյան պարզ խուլերի շարքը չի տեղաշարժված, և նրան հաջորդող ա-ն չի քմայնանում, Տիգր.-ում գրաբարի պայթականների երկու շարքերը՝ ձայնեղներն ու խուլերը, ենթարկված են տեղա-

⁸ Ю. Степанов, Основы языкознания, М., 1966, стр. 233.

շարժի (պատ>բնդ, բան >փան): Ա.-ն քմայնանում է նաև ան տեղաշարժ շարքին՝ շնչեղ խուլերին հաջորդելիս: Բաղաձայնների որակի երկշարքյան փոփոխությունները բարբառում ըստ երևույթին պայմանավորել են ա-ի քմայնացման հետագա ծավալումը: Ինչ խոսք, որ դեր են խաղացել նաև համաբանությունը և ձայնավորների ներդաշնակության օրենքը, որոնց ներգործությամբ ա ձայնավորի քմայնացումը դադարել է միայն պայթական բաղաձայնների, հատկապես ձայնեղների⁹ քմայնացման հետ առնչակցության գործոն լինելուց և ընդհանրացած երևույթի է վերածվել: Բերենք ա-ի քմայնացման օրինակներ՝ տարբեր դիրքերում. աղ>անդ, աման>անման, բան>փան, բարակ>փնրակ, գարի>քնրի, դանակ>թանակ, երկաթ>էրզնթ, զարդարել>զնրթըրիլ, թան>թան, ժանգ>ժանգ, իմանալ>իմնալ, լակոտ>լնգուդ, խաչ>խնչ, խոնջան>խոնջան, ծաղիկ>ձնդիգ, կարաս>զնրնս, հագալ>հնգզնլ, ձագ>ցնք, ճակատ>ջնգնդ, մակարդ>մնգնրթ, շալակ>շնլնգ, շար>շնր, պաղ>բնդ, վարդ>վնրթ, տարի>դնրի, ցամաք>ցնմնք, փախչեմ>փնխնիմ, քար>քնր և այլն:

Ա-ի՝ քմայնացումից ազատ մնացած օրինակներում միակ կայուն ու կանոնավոր օրինաչափությունն այն է, որ ռ ձայնորդին հաջորդելիս կամ նախորդելիս ա-ն չի քմայնանում, օրինակ՝ ամառն>ամառ, աստառ>ասդառ, առնուլ >առնիլ, պառաւ>բառաբ, վառել>վառիլ, քառասուն>քառսուն և այլն: Մյուս օրինակներում չկան որոշակի օրինաչափություններ՝ անցանել>անցնիլ, բարձր>փանցըր, ծանր>ձանդըր, կանաչ>զանանչ, սատանայ>սադանա, տասն>դասսէ, ծալել>ձալլիլ, ծակ>ձագ, ծալ>ձալ և այլն:

Ա-ի քմայնացման կամ պահպանման հարցում գործուն նշանակություն է ցուցաբերում ձայնավորների ներդաշնակության օրենքը: Եթե բազմավանկ բառում առկա է մի քանի ա -վանկարար, ապա բոլորն էլ կամ քմայնացած են լինում, կամ ոչ, օրինակ՝ ամբարտաւան>անմարդնվան, համբարձումն>հանմիւնցում, բարակցաւ>փնրնգնվ, ապառաժուտ >աբառաժուդ, աժդահա>աժդահար, հատիկ>հնդիգ, բայց ազոահադիգ, աշ-

⁹ Г. Джаукян, К вопросу о происхождении консонантизма армянских диалектов, ВЯ, 1960, № 6. էդ. Աղայան, Գրաբարի քերականություն, 1962, էջ 147, 215—16:

խարհ>անշխարհ, բայց՝ աշխարհացում, մածուն>մաձուն, բայց՝ մածնաբուր և այլն:

Բացի քմայնացումից, ա-ն որոշ փոփոխություններ է կրել բառի տարբեր դիրքերում, այսպես՝ ա>է—բառասկզբում՝ առաջ>էռաջ, առաջնեակ>էռչինագ, առաջին>էռչի, էռչեվանց (առջևից), արժան>էժժան, աեռ(ի)>էվիլ, էվէլի, աեռանալ>էվէլնալ, էվէլդունք (ավելցուկ), նաև շեշտի տակ մեկ օրինակ՝ յարդ>էրթ և նրանից կազմված էրթաման (հարդաման) բառերում, բառամիջում՝ վարդավառ>վարթէվար բառում:

Ա>ի (ը)— պահել>բիյիլ/բըյիլ բառում:

Ա>ը—շեշտանախորդ վանկերում (բառասկզբ, առաջնավանկ և միջնավանկ)՝ ասել>ըսսիլ, ամեն>ըմմըն, անկողին>ընգողին, ճախարակ>ջըխընգ, մատանի>մըննի, քամել>քըմմիլ, կանուխ>գըննուխ, կարկատան>գմարգըմն, գանգատել>գանգըդիլ, աեռարան>անվըրմն, անարգել>անըրքիլ, ապսպարել>աբըսբըրիլ և այլն:

Ա>Ø (սղվում է) բազմավանկ բառերի միջնավանկերում՝ ագանիմ>հմքնիմ, անցանել>անցնիլ, արածել>արծիլ, աշակերտ>անշգիրդ, բաղանիք>փանիք, գողանալ>քողնալ, ամանել>անմնիլ և այլն: Հատկապես միջնավանկերում կատարվող ա>ը և ա>Ø(զրո) հնչյունափոխությունները արդյունք են բառի առաջնավանկի ձայնավորի շեշտվածության¹⁰, որը հանգեցնում է միջնավանկի ձայնավորի արտասանության թուլացմանը: Այս երևույթը հատուկ է նաև նման դիրքում հանդիպող մյուս ձայնավորներին:

Բավական ստվար խումբ են կազմում այն բազմավանկ բառերը, որոնց միջնավանկերում ա-ն չի սղվում կամ փոխարինվում ը-ով, կամ պահպանվում է, կամ միայն քմայնանում: Դրա մեջ մտնում են հիմնականում բարդություններ ու ածանցումներ, օրինակ՝ բարդություններ՝ խնկաման>խընգաման, աշխարհանցում>աշխարհացում, գիշերահալ(ուկ)>քշերամուգ, թանաքուր¹¹, մածնաբուր, փէսմբաղիվ, ագռահագիգ, սըրդանցում, քընթանան և այլն:

¹⁰ Հմմտ. Հ. Մուրադյան, Հնչյունաբանություն, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», 1972, էջ 74:

¹¹ Համեմատության համար գրաբարյան եզր չունեցող բառերը գրավոր ավանդված չեն հին հայերենից:

Ածանցումներ՝ աճ նախածանցով և ավուր//նւլուր, անգան, անուց, ութին վերջածանցներով՝ անդադար>անթանթար, անա-րատ>անանար, անհանքի, թագաւոր>թանթուր, ճգնաւոր>ջրթնավոր, կնքաւոր>ընթանավոր, տնական>դընանգան, արժանա-կան>անժանգան, ցանխանուց, սըրդանուց, աղատութիւն>անգանու-թիւն, արքայութիւն>անթանութիւն, խառնակութիւն>խառնագու-թիւն, բացառություններ են՝ անապակ>անթանգ, որտեղ և>մ հնչյունափոխությամբ բառը դադարել է գիտակցվել իբրև ածան-ցավոր, բախտաւոր>փանթըրվուր:

Ձանազան կարգի այլ բառեր՝ ուշանալ>ուշաննալ, աւանակ>անվաննգ, ապառաժ>աբառաժ, ապառաժոտ>աբառաժուդ, Աս-տուածածին>Անվաճաճին, ծաղկազարդ>ճանդանգանթ, վարդա-պետ>վանթանթիդ, պատարագ>բանդանթ, սատանայ>սադանա, դատաստան>թանդանն, վարժապետ>վանթանթիդ և այլն:

Հնչույթաբանական մակարդակում քմային (մ)-ի առաջացու-մը և ձևավորումը որպէս հնչույթ պետք է համարել հնչույթացման երևույթ, նոր հնչույթի գոյացում՝ զրաբարի ձայնավոր հնչույթ-ների համակարգի համեմատությամբ: Իսկ ա-ի մասնակի հնչյու-նափոխությունները՝ ա>ը, ա>է, որոնք տեղի են ունեցել հնչյու-նական մակարդակում, չեն բարձրանում դեպի հնչույթաբանական մակարդակ. պարզապէս (Ա) հնչույթը բառերի որոշ դիրքերում (ա-ի կամ ան-ի համար չբացառված) փոխարինվել է (Ը), (Է) հնչ-ույթներով:

Ե-ն ձայնավորի փոփոխությունները նախաշեշտ վանկերում դրսևորվում են հետևյալ կերպ:

Բազմավանկ բառերի սկզբում և բառամիջում, հատկապես առաջնավանկում ե-ն հնչմամբ համապատասխանում է հին հա-յերենի ե ձայնավորին (արդի հայերենի է-ին), օրինակ՝ բառա-սկզբում՝ երագ>էրանձ, երթալ>էրթնալ, եւա>էվան, եղանիմ>էղնալ, երես>էրիս, բառամիջում՝ լեզու>լէզու, թեղանիք>թէգ-նիդ, բերան>փէրան, հերու>հէրու, քենի>քէնի, փեթակ>փէ-թանգ, հանելուկ>հանէլուկ, ձմերուկ>ցըմէրուկ, արբենալ>հար-փէնալ, գերեզման>քէրէզման, սկեսուր>ըսգէսուր և այլն: Նըշ-ված դիրքերում կան մասնակի փոփոխություններ: Նղբայր>անա-փէր բառի նախաձևն է աղբայր: Ե>ի—երեկոյ>երեկուն>իր-զուն, երեք>իրէք, երիցակին>իրիցգին:

Ե>Օ—հեռու>խօռու, հեռանալ>խօռօնալ, խօռօվանց (հեռ-վից), ցերեկ/ցերեակ>ցօրիդ. այս հնչյունափոխությունը բացա-

տրվում է առաջին երկու բառերում $\text{հ} > \text{խ}$ անցման հետևանքով հեռ և խոր արմատների համադրմամբ, իսկ ցօրիգ բառում երեկ-ի փոխարեն հավանաբար օր բառն է գիտակցվել:

$\text{ե} > \text{ը}$ —եղունգն $>$ ըղունգ, թեփոտել $>$ թըփօղիլ, տեսանել $>$ դըսնալ, հերետիկոս $>$ հըրդըգուց, քերթել $>$ քըրթիլ, վերայ $>$ վըրան, ածելի $>$ անըլի, հրեշտակ $>$ հըրըշդանգ, ծիծեռն(ակ) $>$ ձիձըռնաղ և այլն:

$\text{ե} > \text{օ}$ (զրո)—աւետարան $>$ ավդըրան, աւերել $>$ ավըրիլ, ալետոր $>$ օնլվուր, գիտենալ $>$ քինանլ, կեղեւել $>$ քէղվիլ և այլն:

Շեշտակիր վանկում ե-ն ընդհանուր առմամբ փոխարինված է ի հնչույթով, օրինակ՝ դեղ $>$ թիղ, թել $>$ թիլ, մեծ $>$ մինձ, շերտ $>$ շիրդ, ասեղն $>$ ասիղ, փերփեր $>$ փէրփիր, գիշեր $>$ քըշիր, մեղր $>$ միղր, անձրեւ $>$ անձրիվ, կեղեւ $>$ քէվիղ և այլն:

Այս օրինաչափությունը չեն ենթարկվում.

1) գրաբարում ե-ով սկսվող միավանկ բառերը, որոնք բարբառում ունեն նախահոնը յ՝ ես $>$ յէս, եզն $>$ յէզ, երբ $>$ յէփ, եփ $>$ յէփ, երգ $>$ լէրք: Յ-ի առկայությունը սրանցում արգելք է հանդիսացել ե $>$ ի հնչյունափոխությանը:

2) Բեռն $>$ փէռ, ձեռն $>$ ցէռք, ձմեռն $>$ ցըմէռ, սիսեռն $>$ սիսէռ բառերը, որոնց մեջ ո ձայնորդին նախորդող դիրքում ե-ն չի հնչյունափոխվում ի-ի:

Մասնակի դեպքեր են՝ թեթել $>$ թիի՛թըվ, որում ե $>$ ի և ե $>$ ը հնչյունափոխությունները հավանաբար կատարվել են հետևյալ ուղիով՝ թեթել $>$ թէթիվ $>$ թի՛թիվ $>$ թի՛թըվ. ամեն $>$ լըմմը՛ն, որում ե $>$ ը՛ շեշտի տակ:

Այսպիսով՝ ե ձայնավոր հնչույթի կրած փոփոխությունները մնում են հնչյունական մակարդակի սահմաններում, չեն բարձրանում մինչև հնչույթաբանական մակարդակ: Դրանց արդյունքը (հատկապես ե $>$ ի հնչյունափոխության) ե հնչույթի գործառույթյան ոլորտների սահմանափակումը՝ նեղացումն է:

Է—գրաբարի է երկբարբառակերպը, ինչպես ընդհանուր հայերենում, այնպես էլ Տիգրանակերտի բարբառում, բառի բոլոր դիրքերում վերածված է պարզ ձայնավորի: Տեղի է ունեցել (է) հնչույթի ապահնչույթացում, այսինքն՝ է-ն համընկել, նույնացել է ե-ին: Այս երևույթը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով՝ (է ← → ե) → (է > ե), այսինքն՝ գրաբարում միմյանց հակադրվող երկու հնչույթների միջև վերացել է հակադրությունը՝ մեկի հանգումով մյուսին: Բերենք օրինակներ. էշ $>$ էշ, է՞ր $>$ է՞ր, է $>$ է,

բէճ>փէջ, նէր>նէր, գէր>քէր, քէրնալ (գիրանալ), քէրգիգ (գերկիկ), գէշ>քէշ, մէջ>մէշ, շէն>շէն, շէնշընուրք, մէշք>մէշք, տէր>դէր, դէրդէր, շրէզ/շրէշ>շրէզ, անէծք>անէծք, աղէկ>անղէկ, կիրակէ>գիրանգէ և այլն:

Կէսօր>գրսօր բառում կա է>ը հնչյունափոխութիւն (ըստ երևույթին այսօր>ըսսօր բառի համաբանութեամբ):

Ը—հին հայերենի ը ձայնավորով սկսվող բառերից մեկ-երկու օրինակ է պահպանված Տիգրանակերտի բարբառում, դրանք են՝ ընկոյզ>ընգուզ, ընտրել>հընդրիլ (ե-ի հավելմամբ): Բառասկզբում սպ, ստ, սկ կապակցութիւններից առաջ ը-ն բարբառում հնչվում է որոշակի, իբրև լիահունչ ձայնավոր, օր.՝ սպիտակ>ըս-բըղափ, սպիտակուց>ըսբըղգուց, սպիտակիմ>ըսբըղգիլ, յստակել>ըսդըգիլ (յ-ի անկմամբ), սկեսուր>ըսգէսուր, ստեղծանել>ըսդէղծիլ և այլն: Բացառութիւն է սպանանել>սբընիլ բայը, որտեղ սբ կապակցութիւնը հնչվում է միասնաբար, առանց նախահունչ ը-ի, բայց կապակցութեան մեջ բաղաձայնի հաջորդելիս ը հնչում է ձեռք բերում, օր.՝ մըն ըսբընիմ, գըսբընիմ և այլն: Սկիհ>սըգիհ բառում ը-ն հաջորդում է ս-ին:

Բառամիջում իբրև գաղտնավանկ սովորաբար ը-ն է հանդես գալիս, ինչպես՝ գրել>քըրիլ, դնել>թընիլ, բարձր>փանցըր, ծանր>ձանդըր և այլն: Հատկապես բառի առաջնավանկում ը գաղտնավանկը առավել լիահունչ է արտասանվում, մի երևույթ, որը կապվում է միջին հայերենում առաջնավանկի շեշտի ուժգնացման հետ. յղում>թըթթում, թթու>թըթթու, կծու>գըծու, կթել>գըթթիլ, կծիկ>գըծձիկ, պսակ>բըսսակ և այլ օրինակներում, որոնք ունեն տեական բաղաձայններ, առաջնավանկի ը ձայնավորը ունի մի փոքր շեշտված արտաբերում:

Ստացական ս, դ հոգերին նախորդելու դեպքում ը գաղտնավանկին փոխարինում է ի ձայնավորը, որ կարող է դրվել ինչպես նախադաս, այնպես էլ ետադաս, օր.՝ սի՛րդիս, քո՛ւրիս, դո՛ւնիթ, կամ սի՛րդսի, քո՛ւրսի, դո՛ւնիթ:

Բառավերջի բաց վանկում բարբառը ը չունի, քանի որ իբրև որոշիչ հոգ այստեղ հանդես է գալիս է ձայնավորը, օրինակ՝ սի՛րդէ, դո՛ւն, փէրա՛նէ և այլն:

Ստացական հոգերին նախորդող գիրքում ը>ի և բառավերջի բաց վանկում ը>է հնչյունափոխութիւնները, կատարված հնչյունական մակարդակում, առաջացրել են սոսկ ը հնչույթի գործառու-թեան ոլորտների սահմանափակում:

Ի—Հին հայերենի Ի հնչույթը իր գործառության ոլորտներով
պրեքս անփոփոխ վիճակ է ներկայացնում Տիգրանակերտի բար-
բառում, օրինակ՝ ինչ>ինչ, իմանալ>իմնալ, սիրել>սիրիլ,
գինձ>քինձ, գատիկ>գանդիգ, լեղի>լէղի, փոշի>փօշի և այլն:

Ի>ը շեշտի տակ՝ դինգ>դընգ, սիտղ>սըթըլ (դուլլ),
ճիպո>ջըբըռ, նախիր>նախըր. նախաշեշտ վանկերում՝ իսկի>
ըսգի, գիշեր>քըշիր, հըմմա (հիմա), մընգուգ (մինակուկ), ծի-
ծաղանք>ձըձանք, ձըձանման (ծիծաղման), անիծել>անըձիլ,
Մարտիրոս>Մարդըրուս, սպիտակ>ըսբըղանգ, սպիտակիմ>ըս-
բըղգիլ և այլն:

Ի>Օ—բարիկենդան>փնրգէնդանք, անձուդ (անիծոտ),
թնրվնր (դարիվայր), թնրվիր (դարիվեր), փօբգընալ (բորիկա-
նալ) և այլն:

Ո—Հին հայերենի ո ձայնավորը իր հնչման հարազատությամբ
կամ փոփոխություններով բարբառում ներկայացնում է հետևյալ
պատկերը:

Շեշտանախորդ վանկերում (բազմավանկ բառերի սկիզբ,
առաջնավանկ և միջնավանկ) ո-ն հարազատ է իր հին և ընդհա-
նուր հայերենյան արտասանությանը, իբրև մաքուր օ ձայնավոր,
օրինակ՝ ոսկի>օսգի, ոզնի>օզնիգ, որոտալ>օրօղալ, ոռնալ>
օռնալ, ոլորտանալ>օլլրդիլ, որքին>օքի, գովել>քովիլ, թո-
նիր>թօնիր, խոպան>խօբան, պղտորել>քըղդօրիլ, խոովիմ>
խըռօվիլ, ժանգոտիմ>ժանգօդիլ, մրոտել>մըրօդիլ, թնրխօդիլ,
թըփօդիլ, փօրփըսօդիլ և այլն:

Բացառություներ են՝ 1) ողջոյն>վօխշուն, ողորմութիւն>
վօղօրմութին բառերը՝ ո>վօ հնչմամբ (ի դեպ սրանք ունեն կրո-
նական իմաստով գործածություն). 2) այն բազմավանկ բառերը
կամ բառաձևերը, որոնց արմատները կամ հիմքերը բարբառում
վը-ով սկսվող միավանկ բառեր են, օր.՝ վըրթուդ (որդնոտ), վըր-
թօդիլ (որդնոտել), վըսքօվ, վըսբի (ոսպով, ոսպի), վըրփիր (ոո-
բեր) և այլն՝ ո>վը հնչմամբ: Յդանց (ոտաց) բառի ուղիղ ռա(ֆ)
ձևը չի պահպանված բարբառում, ուստի այն, իբրև զրաբարից
ավանդված քարացած հոլովաձև, օրինաչափորեն պահպանել է ո-ի
օ հնչումը:

Մասնակի փոփոխություններ՝

ո>ու—որիշ>ուրիշ բառում (թերևս հնագույն տարբերակ-
ներ են):

ն>ը — ճոխալ>ջըխիսնլ, մողէզ>մըգլէզ, շորեքշաբաթի>
շըրուզնթի, ոլորել>օլըրիլ, կորկոտ(իկ)>գորգըդիգ, հոտո-
տալ>հօնթըթնլ, խոստովանիմ>խօսդըվնիլ և այլն:

ն>թ — փեճոկել>փէջգիլ, խորովել>խօրվիլ, ժողովել>
ժօղվիլ, կոտորել>գօդրիլ, սովորիմ>սօրվիլ և այլն:

Շեշտակիր վանկերում ու-ին ընդհանուր առմամբ համապա-
տասխանում է ու ձայնավոր՝ միավանկ և բազմավանկ բառերում,
փակ և բաց վանկերում, օրինակ՝ հոտ>հուդ, խոնջ>խունջ, մոմ>
մում, ցոփ>ցուփ, խոշոր>խօշուր, բոլոր>փօլուր, արիւնոտ>
անրնուդ, ճգնաւոր>ջըքննվուր, պիտոյ>բիդու, քոյ>քու, մար-
դոյ>մարթու և այլն: Բացառություններ են ու-ով սկսվող միա-
վանկ բառերը՝ ո>վը հնչյունափոխությամբ՝ ոսպն>վըսը, որդն>
վըրթ, որբ>վըրփ, ոռ>վըռ, որ>վըր: Ով>վօվ դերանունը
պահել է ո-ի օ հնչումը. իբրև կոչական կիրառվելիս այն հնչում է
առանց վ-ի՝ օվ: Որք (վազ) բառը ունի օրթօդ ձևը՝ օդ մասնիկի
հավելմամբ՝ հավանաբար շփոթելու համար վըրք (որդ) բառի
հետ: Միավանկ բառերի սկզբում հին հայերենի (Ո) և (Ը) հնչւյթ-
ները հակադրվում էին միմյանց, օր.՝ ըստ-ոստ¹²: Տիրաւնա-
կերտի բարբառում այդ հակադրությունը բացառված է նախ այն
պատճառով, որ ը-ով սկսվող միավանկ բառ չկա, և ապա ու-ն
հանգել է ը-ի, որը հանդես է գալիս անպայման վ նախահավել-
վածով (այս վ-ն, որ բարբառների մի մասում գոյություն ունի,
մյուսում՝ ոչ, ըստ երևութի՛ն նախապես եղել է ո-ին նախորդող
ւ-ատիպ մի հնչյուն հին բարբառների մի մասում, հետագայում
այն, որոշ բարբառներում հնչմամբ թանձրանալով, վերածվել է
վ-ի, այլ բարբառներում պահպանել է թույլ հնչումը (օր.՝ Շա-
տախում՝ ոխ>տխ, ոտն>տոտ, որդն>տրթ և այլն)¹³:

Ո-ն չի հնչյունափոխվում ու-ի՝

վ շփականին նախորդող դիրքում՝ ծով>ձօվ, կով>գօվ,
հով>հօվ, կողով>գօղօվ, քօվ (քով, մոտ):

Ռ ձայնորդին նախորդելիս՝ թոռն>թօռ, ախոռ>ախօռ,
մոր>մօռ:

Ենթակայական դերբայի ող վերջավորության մեջ, սակայն
սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ գրաբարում էլ
դրա նախաձևը եղել է աղ, որից՝ օղ:

¹² Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 84:

¹³ Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962, էջ 38:

նաև հետևյալ բառերում՝ պոլ>բօլ, բող>բօղ, թող>թօղ, գործ>քօրծ, քարոզ>քնրօզ, կլոր>զլօր, խոթ>խօթ-խօթ, շրջմուխիկ>սըրշմօլ, քող>քօխք: Սրանց մի մասը ավանդված է ոչ թե հին, այլ միջին հայերենից: Քօխք բառի համար վկայված է նաև քօղ նախաձևը՝ քօղ-ին զուգահեռ:

Այսպիսով՝ հին հայերենի (Ո) հնչույթը իր հիմնական դրսևորումներով պահպանվելով բարբառում, ենթարկվել է գործառության ոլորտների նեղացման, սահմանափակման, հաճախականության նվազման:

Ու—Հին հայերենի ու ձայնավորին բարբառում բոլոր դիրքերում համապատասխանում է ու՝ ուշ>ուշ, ուրբաթ>ուրփաթ, լուսարար>լուսրար, թուլակի>թուլընգի, շորութին>չօրութին, սրբութին>սըրփութին, անուն>անուն, խնդում>խընդում, բուռն>փուռ, սուղ>սուղ, լեզու>լէզու, լու>ըլու և այլն: Հին հայերենի ու+ձայնավոր կապակցություններում ու-ն ունի վ հնչում՝ Աստուած>Ասդված, շուան>շըվան, նուարդ>նըվարթ, կծուել>զըձվիլ, ցրուել>ցըրվիլ, քթուել>քըթվիլ, նուալ>նըվլլ և այլն:

Մասնակի հնչյունափոխություններ են՝

Ու>ը կամ Ø պատճառական բայերի ուցան ածանցում՝ գողացուցանել>քօղցընիլ, դարձուցանել>թարցընիլ, փախուցանել>փախցընիլ, իջեցուցանել>իչըցնիլ և այլն, նաև քուրջ>քըրջ բառում. սուրբ բառը կապակցությունների մեջ ունի սրփ անշեշտ ձևը՝ Սրփ Սնրքիս:

Ու>օ — դուռն>թօռ, գլուխ>քըլօխ (նաև քըլուխ):

Ամփոփման կարգով ստորև տալիս ենք հին հայերենի ձայնավոր հնչույթների համակարգի՝ Տիգրանակերտի բարբառում կրած փոփոխությունների աղյուսակը:

Ձայնավորների հնչյունափոխության նշված դեպքերով Տիգրանակերտի բարբառը զուգաբանություններ ունի հայերենի և՛ արևմտյան, և՛ արևելյան խմբակցության բարբառների հետ:

Զուգաբանությունների ընդարձակ ցանց են ներկայացնում նշված երկու խմբակցությունների բարբառների զգալի մասն ընդգրկող ա>ան, շեշտակիր վանկում ե>ի և ո>ու հնչյունափոխությունները:

Տարածական առավել նեղ ընդգրկում ունեն և հիմնականում արևմտյան խմբակցության բարբառների սահմաններում են հանդիպում ստացական հոդերի առկայությամբ ը>ի և միավանկ

բառերի սկզբում $n > p$ (վր) հնչյունափոխությունները. առաջինով Տիգրանակերտի բարբառը հարում է Մուշի, Վանի, Եդեսիայի և Անտիոքի բարբառախմբի բարբառներին, վերջինով ղուգաբանություն ունի դարձյալ Անտիոքի բարբառներին հետ:

Հին հայերենի նի ձայնա- վորները	Հնչյունական մակարդակ Հին հայերենի ձայնավորների կրած փոփոխությունները Տիգրանակերտի բարբառում	Հնչույթաբանական մակարդակ	
		հնչույթա- ցում	պահպանու- թյուն
Ա	$Ա = Ա$	—	—
	$Ա > Ա$	+	—
Ե	$Ե = Է$ (նախաշնչա վանկ)	—	—
	$Ե > Ի$ (շնչաակիր վանկ)	—	—
Է	$Է > Է$	—	+
Ը	$Ը = Ը$	—	—
	$Ը > Ի$ (ստաց. հոդի հենարան)	—	—
	$Ը > Է$ (որոշիչ հոդ)	—	—
Ի	$Ի = Ի$	—	—
	$Ո = Ո$	—	—
Ո	$Ո > Ո$ (շնչաակիր վանկ)	—	—
	$Ո > Վ$ (միավանկ բ. սկիզբ)	—	—
Ու	$Ու = Ու$	—	—

Ձայնավորների հնչյունափոխությամբ բարբառը Մուշ—Տիգրանակերտի բարբառախմբում առավել սերտ առնչակցություն ունի Սասունի, քան թե Մուշի բարբառի հետ, որից հեռանում է հատկապես քմային և հնչույթի առկայությամբ և գործառնության մեծ հաճախականությամբ:

Երկարբառների հնչյունափոխությունը

Ինչպես հայերենի գրեթե բոլոր բարբառները, այնպես էլ Տիգրանակերտը հին հայերենի երկբարբառների դիմաց երևան է հանում պարզ ձայնավորներ՝ հարազատ մնալով դրանց՝ ընդհանուր հայերենում կրած փոփոխությունների ընթացքին:

ԵՍ (եաւ, եայ) — Տիգրանակերտի բարբառում առկա է եա>ի հնչյունափոխություն, որին նախորդել է եա>ե-ն. բարբառի հնչյունափոխական կանոնների համաձայն ե-ն վերածվել է ի-ի: Այսպիսով, տեղի է ունեցել գրաբարի ե ձայնավորի և ե-ի վերածված եա երկբարբառի անցած պատմական ուղիների նույնացում (սրա լավագույն ապացույցն այն է, որ նախաշեշտ վանկերում, իբրև ի-ի լծորդ, հանդես է գալիս է ձայնավորը), օրինակ՝ ցորեան>ցօրին, կորեակ>գօրիգ, ատեան>անդին, մեռեալ>մէ-ռիլ, աղանեակ>անվրնիգ, երանեակ>էրնիգ, վառեակ>վառիգ:

Եա>ե>ի հնչյունափոխություն կա նաև՝ եառ հոգնակերտում, որը իր է շեշտի տակ, էր՝ շեշտանախորդ վանկում՝ ձօվիր (ծով + հար), տրական ձօվէրու, և խոնարհման բայերի անցյալ կատարյալում՝ գօրծեաց>քօրծից (քօրծէցի, քօրծէցիր), վաղակատար դերբայի եալ>իր վերջավորության մեջ՝ գրեալ>քրրիր, հին հայերենի հոգնակի եաճ հոլովման պատկանող բառերում՝ բաղանիք>փանդնիք, բաղանեաց>փանդնից, հարսանեաց>հանրանից:

Եաւ եռաբարբառը, որի բաղադրիչները՝ եա և Վ, ենթարկվել են առանձին հնչյունափոխությունների, եա>ե>ի փոփոխությունմբ նույնացել է եա երկբարբառին՝ սեաւ>սիվ, բայց սեագունգ>սէվագընդիգ, սէվսիթ (սև ձիւթ), բարեաւ>փարիվ, բայց՝ գրփարէվէ:

Քառավերջի բաց վանկում (և խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականում) եա-ն մնում է է, չի հնչյունափոխվում ի-ի, օր.՝ գրեա՝>քրրէ՝, գովեա՝>քօվէ՝, գործեա՝>քօրծէ, հրամայեա՝>հրամէ՝. ըստ երևույթին հրամայականի շեշտը դեր ունի այս հարցում, քանի որ ողորմեա>օղօրմի բառը իբրև բացառություն ի ունի վերջում և բարբառում չի դիտվում որպես հրամայականի ձև, այլ գործածվում է գոյականական նշանակությամբ (օղօրմի իղալ—ողորմի տալ): Ի դեպ, բառավերջի բաց վանկում եա>է հնչյունափոխությունը նույնն է եայ եռաբարբառի հնչյունափոխության հետ, որը նույնպես հանգում է է-ի, օր.՝ քարեայ>քարէ, փայտեայ>փեէ, արծաթեայ>արծրթէ:

Նշված ընդհանուր օրինաչափություններից շեղվում են հետևյալ բառերը. լեառն>լէռ — շեշտի տակ եա>է և ոչ՝ ի. բարբառում ո ձայնորդին նախորդող ե-ն չի հնչյունափոխվում ի-ի. հիշենք՝ ցըմէռ, ցէռք, փէռ, սիսէռ և այլ օրինակները՝ թեալ>թիլ-ի, վեր>վիր-ի համեմատությամբ (այս օրինակը ևս ապացուցում է

եա > է հնչյունափոխության՝ եա > ի փոփոխությանը նախորդած լինելը)։

Եա > ն — իւրեանք > իրանք, իւրեանց > իրանց դերանուններում (սա պետք է համարել հարեան, հատկապես Մշո, բարբառների ազդեցության արդյունք) և ուրիշ վերջածանց ունեցող գոյականների տրականի ուրեան-ի դիմաց առկա ուրան/ուրան ձևերում՝ արքայութիւն-արքայութեան > արքանութիւն-արքանութան։

Ա3—Այ երկբարբառին ընդհանրապես (թե՛ շեշտակիր, թե՛ նախաշեշտ վանկերում կամ բառասկզբում) համապատասխանում է է պարզ ձայնավոր (ի տարբերություն այլ բարբառների, որոնցում այ-ը տարբեր դիրքերում տարբեր որակներ է տվել), այսպես օրինակ՝ բառասկզբում՝ այս > էս, այն > էն, այգի > էքի, այր(իկ) > էրիգ, առնել > ալնել (միջ. հայ.) > էնիլ, այրել > էրվիլ, էնթէն (այնդեհ), էսթէն (այս դեհ), էրիզզընիգ (այրի կին), էսղըզըր (այսչափ), էնղըզըր (այնչափ), բառամիջում՝ լայն > էն, փայտ > փէդ, գալլ > քէլ, տայգր > դէքըր, աղբայր > անփէր, կալ-ժակ > գէձմգ, քալլել > քէլմլ, փայլել > փէլմլ, ցայթել > ցէթիլ, խայթել > խէթիլ և այլն։

Այս օրինաչափությունից շեղվում են երկայն > էրգան, վայր > վան, թանրվան (դարիվայր) բառերը, որոնցում առկա է այ > ա/ան հնչյունափոխություն։ Սա պետք է վերագրել հարեան (հատկապես Եղեւսիայի, Մալաթիայի) բարբառների լեզվական երևույթներին ազդեցությանը։

Այ > է > ը կամ Օ — բառասկզբում՝ ըսի, ընի, ըսսիգի, ընիգի, այսօր > ըսսօր/սսօր, բառամիջում՝ էրզըննալ (երկայնանալ), մըզօր (մեկայլօր)։

Այլ բառը ունի երկու ձև՝ լէ (դրափոխությամբ) և ան, որը մեր կարծիքով փոխառյալ է արեւմտյան բարբառներից։ Սրանք իմաստներով էլ տարբեր են, լէ-էլ, ան-այլևս։

Աւ — Հին հայերենի աւ երկբարբառին Տիգրանակերտի բարբառում այնպես, ինչպես ողջ հայերենում, համապատասխանում է օ պարզ ձայնավոր¹⁴, օրինակ՝ օր > օր, օղ > օղիր, օծ > օց, օգուտ > օքուդ, օրինակ > օրինակ, օծանել > օձիլ, մօրուք > մօ-

¹⁴ Հին հայերենի երկբարբառների հնչյունափոխությունը քննել ենք միայն այն դիրքերում, որոնցում դրանք իրոք երկբարբառ են եղել, լուել ենք այն դիրքերի մասին, որոնցում դրանք եղել են ձայնավորի ու ձայնորդի կապակցություններ (բառավերջում և ձայնավորին նախորդող դիրքերում)։

րութ, մօտենալ > մօզգրնալ (մոտիկանալ), յօրանջել > օրըջգրդալ, այսօր > ըսսօր, խելօք > խէլօք, աղօթք > աղօթք, խօսք > խօսք, եօթն > յօթթէ, կարօտել > գաւօղնալ և այլն:

Յունք//յունք զուգահեռ գրչություն ունեցող ձևերի դիմաց բարբառը ունի ունք՝ ու-օվ ձև, որը ընդհանուր է հայերենի շատ բարբառների համար, և դժվար է ասել, այստեղ օ > ու հնչյունափոխություն է կատարվել, թե՞ այս զուգահեռ ձևերը ավանդվել են հնագույն բարբառներից: Ունք բառի հոգնակին ունի ընքլվնիր ձևը՝ ու > ը հնչյունափոխությամբ, որը հատուկ է ու ձայնավորին (աւից առաջացած օ-ն բարբառում շեշտադրվելիս չի հնչյունափոխվում): Պետք է նշել նաև, որ ունք-ը միակ օրինակն է օ-ի դիմաց ու ձայնավորով, բարբառում օ > ու փոխանցումը օրինաչափ երևույթ չէ:

Իւ (եւ) — Հին հայերենի իւ երկբարբառը Տիգրանակերտի բարբառում ներկայանում է հիմնականում ի ձայնավորով՝ բառի բոլոր դիրքերում՝ իւր > իր, իւրեանք > իրանք, կիւրակէ > գիրանգէ, ալիւր > ալիր, արիւն > արին, հարիւր > հարիր, որքիւն > օռքի, կարողութիւն > գարօղութին, Յարութիւն > Արութին, չորութիւն > չորութին, սրբութիւն > սըրփութին և այլն:

Իւ > ու — մի շարք միավանկ բառերում և նրանցով կազմված բայերում՝ սիւն > սուն, ձիւն > ցուն, դիւր > թուր, դիւրել > թուրիլ, հիւսել > հուսգիլ: Բարբառում ու-ի հնչյունափոխվում է ոչ երկբարբառը՝ լոյս > լուս, քոյր > բուր և այլն: Նշված միավանկ բառերը՝ սուն, ցուն, թուր, իրենց հնչյունափոխությամբ նույնանում են ոչ > ու հնչյունափոխության ենթարկված բառերին: (Ի դեպ, այս նույն միավանկ բառերը նմանօրինակ շեղում են ցուցաբերում իւ երկբարբառի օրինաչափ հնչյունափոխությունից նաև Անտիոքի (Քեսաբ, Սվեդիա, Արամո), Եդեսիայի, Խարբերդի, Մալաթիայի բարբառներում, օրինակ՝ Քեսաբ՝ իւ > է՝ հարիւր > հէրէր, բայց՝ ձիւն > ծուօն, սիւն > սուօն, ինչպես և՝ լոյս > լուօյս, քոյր > քուօյր, Սվեդիա՝ իւ > է, բայց՝ ձիւն > ծայն, սիւն > սայն, ինչպես և՝ լոյս > լայս, քոյր > քայր, Եդեսիա—իւ > ի, բայց՝ ձիւն > ծօն, դիւր > տօր, նաև՝ քոյր > քօր, լոյս > լօս:

Կարելի է ենթադրել, որ պատմականորեն բարբառի լեզվական ներկա վիճակին նախորդող շրջանում նշված միավանկ բառերում ոչ և իւ երկբարբառների արտասանությունը նույնացել է հետևյալ կերպ՝ ոչ > ույ և իւ > ույ, և այս վիճակից հետագա փոփոխությունը ընթացել է նույն ուղիով, հանգեցրել միևնույն արդ-

յունքին, կամ էլ դրանք հնագույն բարբառային ձևեր են՝ իւ-ի դիմաց ոչ երկբարբառով՝ *ձոյն, *սոյն, *դոյր:

Տիգրանակերտի, ինչպես և գրեթե բոլոր բարբառներում պահպանված են եւ երկբարբառի հետքերը. այն իր հնչյունափոխությամբ չի նույնանում իւ երկբարբառի անցած ուղուն. այսպես օրինակ՝ գեղ>ֆիղ: Թվում է, թե ունենք ի՝ իւ-ի և ոչ եւ-ի դիմաց: Սակայն բառի ածած ձևերում այդ իւ-ն, որ օրինաչափորեն առաջացել է ե ձայնավորից, շեշտադրկվելով կրկին հանգում է է-ի՝ քէղի, քէղիր, այսպիսով՝ գեղ>քէղ>քիղ: Իսկ>յըղ բառում կա ը՝ յըղ և ոչ յիղ: Բանն այն է, որ բարբառում միավանկ բառերի սկզբում յ-ին ի հաջորդել չի կարող (հմմտ.՝ ես>յէս, եզն>յէզ, երբ>յէփ, այն դեպքում, երբ ե>ի, օրինակ՝ մեր>միր, բերդ>փիրթ և այլն): Այդ պատճառով ի-ին փոխարինել է ը ձայնավորը: Հետաքրքիր է այն փաստը, որ գաւաւթիղ (կարագ + իւղ) բարդության մեջ ի ձայնավորը, չունենալով նախահունչ յ, պահպանել է իր որակը:

ՈՅ — բարբառը ունի ոչ>ու միօրինակ հնչյունափոխություն թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերում՝ բոյն>փուն, լոյս>լուս, թոյլ>թուլ, քոյր>քուր, ողկոյզ>գուզ, կոյս>գուս, ոյժ>ուժ, ընկոյզ>ընգուզ, անոյշ>անուշ, ողջոյն>վոխշուն, ցոյցք>ցուցք, զրոյց>զըրուցք, յոյժ>հուժ, յոյս>հուս և այլն:

Սամոյբ բառը գործածական է երկու ձևով՝ սամուր և սա՛մբ: Երկրորդ ձևը առաջինից է առաջացել՝ շեշտի տեղափոխությամբ դեպի առաջնավանկ և ու>ը հնչյունափոխությամբ:

Չըքթիգ (ճկոյթ + իկ) բառում ոչ-ը սղվել է՝ *ճկթիկ>ըթթիկ:

Իրգուն (երեկոյ) բառը կապվում է միջին հայերենի երիկուն ձևին:

Այսպիսով՝ հնչույթաբանական մակարդակում երկբարբառների փոխարինումը պարզ ձայնավորներով ներկայանում է իբրև ապահնչույթացման երևույթ. անհետացել են հին հայերենի երկբարբառ և եռաբարբառ հնչույթները: Ստորև տալիս ենք հին հայերենի երկբարբառների՝ Տիգրանակերտի բարբառում կրած հնչյունափոխությունների ամփոփիչ աղյուսակը:

Երկբարբառների պարզեցման արդյունքով Տիգրանակերտի բարբառը միջին տեղ է գրավում արևմտյան և արևելյան խմբակցությունների բարբառների միջև, այսպես՝ այ>է հնչյունափոխությամբ բարբառը զուգաբանություն ունի իր բարբառախմբի

Մուշի, Սասունի, առավել ևս արևելյան խմբակցության բարբառների հետ:

Իւ>ի հնչյունափոխությամբ Տիգրանակերտը հեռանում է Մուշի, Սասունի բարբառներից և հարում է մի կողմից Անտիոքի,

Հին հայերենի երկբարբառներ	Երկբարբառների աղահնչությամբ Տիգրանակերտի բարբառում
եա (եաւ, եայ)	եա>ի (եա>ե. ի) (փակ վանկ)
Այ	եա, եայ>է (բաց վանկ)
Աւ	Այ>է
Իւ (եւ)	Աւ>Օ
Ոյ	Իւ>ի, (եւ>ե>ի)
	Իւ>ու (մի քանի միավանկ բառերում)
	Ոյ>ու

Կիլիկիայի, Եդեսիայի, Խարբերդի, Մալաթիայի, մյուս կողմից Արարատյան խմբի բարբառներին:

Բաղաձայնների հնչյունափոխությունը

Ձ ա յ ն ե ղ պ ա յ թ ա կ ա ն ն ե ռ և կ ի ս ա շ փ ա կ ա ն ն ե ռ

Հին հայերենի ձայնեղ պայթականներին ու կիսաշփականներին Տիգրանակերտի բարբառում համապատասխանում են շնչեղ խուլեր, այսինքն՝ բ, գ, դ, ձ, ջ = փ, ք, թ, ց, չ՝ բառի բոլոր դիրքերում, օրինակ՝ բ = փ — բան>փան, բանել>փանիլ, բարակ>փարակ, բանալ>փանալ, բարձ>փարց, բոլոր>փօլուր, բոյն>փուն, եղբայր>ախփէր, ուրբաթ>ուրփաթ, սրբել>սըրփիլ, արբենալ>հարփէնալ, երբ>լէփ, որբ>վըրփ, սուրբ>սուրփ/սըփ և այլն:

Բ-ն ձայնեղի իր որակը պահպանում է բող>բօղ (բանջար), բակլայ>բազլա, բաշխել>բաշխիլ, բիր>բիբիզ, բեղ>բէխիր բառերում. սրանցից բակլայ-ը հին արաբական փոխառություն է, բաշխել-ը՝ պահլավական, բեղ-ը՝ թաթարական. սրանք շրջակա լեզուներում՝ թուրքերենում, քրդերենում, պարսկերենում, բառակազմում ձայնեղ հնչում ունեն, որի ազդեցությամբ և Տիգ.-ի բարբառը պահպանել է ձայնեղը: Բիր բառը նույնպես թուրքերենի

նույնիմաստ բնօրինակի ազդեցությամբ ձայնեղ հնչումը չի կորցրել: Բոլ բառը ավանդված է միջին հայերենից՝ ձայնեղ հնչմամբ:

Պ = ֆ — գայլ > քէլ, գետին > քէղին, գինի > քինի, գող > քող, գրել > քըրիլ, գինձ > քինձ, գէր > քէր, յագի > էքի, ագանիմ > հանքնիլ, կարգել > գնարքիլ, պագաննել > քանքնիլ, թագունհի > թանքունհի, կարագ > գնարանք, ձագ > ցանք, ճրագ > ջըրանք և այլն:

Պ > ք' — քմալին և ձայնավորին նախորդելիս՝ գարի > ք'արի, գարուն > ք'արուն, գալ > իք'ալ, տարգալ > թըրք'ալ, հոգալ > հօք'ալ և այլն:

Պ-ն իր որակը չի փոխել գունդ > գընդիգ, սևագունդ > սէվագընդիգ, լոգանալ > լօփնալ, շողգամ > շօխգամ, գոռոզ > գոռէջ բառերում:

Պ = ք — դանակ > թաննակ, դեղին > թէղին, դէմ > թէմ, դրմակ > թըմմակ, դող > թուղ, դուռն > թօռ, դրացի > թըրնացի, արդար > արթար, բրդել > փըրթիլ, խեղդել > խէխթիլ, երդում > էրթում, բուրդ > փուրթ, ծաղկազարդ > ձանդանդարթ, մարդ > մարթ, որդ > վըրթ և այլն:

Պեւ > դել, դբբնդուն բառերում Պ-ն չի հնչյունափոխվում. վերջինը գրական լեզվից հետին շրջանի փոխառություն է: Դարման > դարման բառը միջին հայերենից է ավանդված:

Ջ = շ — ջուր > շուր, ջրել > ջըրիլ, ջուխտակ > շութ/շըխանակ, ջրաղաց > շանղաց, աղջիկ > անխիգ, շրջել > շըրջիլ, ոջիլ > օշիլ, թուջ > թուլ, մէջ > մէլ, քուրջ > քըրջ, առաջ > էռալ, արջ > առլ և այլն:

Ջ = ց — ձայն > ցէն, ձի > ցիան, ձիւն > ցուն, ձուկն > ցուգ, բարձր > փանցր, համբարձումն > համփանցում, բարձ > փանց, օձ > օց, դաղձն > թնից, վարձ > վանց և այլն:

Ռնգայիններին հաջորդելիս՝ բ, գ, դ, ձ, ջ հնչյունները պահպանում են ձայնեղության որակը, օրինակ՝ ամբար > ամբար, բամբակ > փամբակ, սմբուլ > սըմբուլ, ժանգ > ժանդ, եղունգ > ըղունգ, գանգատել > քանգըղիլ, խնդալ > խընդալ, հիանդ > հիվանդ, բարիկենդան > փարգէնդանք, խանձել > խանձիլ, անձրել > անձրիվ, թանձր > թանձր, բանջար > փանջար, խոնջ > խունջ. բացառություններ են՝ համբարձումն > համփանցում, համբերել > համփելիլ, անհամբեր > անհամփելիլ, անդադար > անթանթար, ըստ երևույթին գիտակցվում է նախ նախածանց լինելը, հանդարտ > հանթարդ, հանդերձ > հանթէրց, հնազանդ > հընազանթ, հնձել > հընջիլ, գանձանակ > քանցանակ, նախանձ > նանթանձ, նախան-

ցութին, տանջել>դանչիլ, տրտունջ>դըրդունչ, Սրանց մի մասը հավանաբար ուշ շրջանում արևմտահայ գրական լեզվից բարբառի բառապաշարը մուտք գործած բառեր են:

Հին հայերենի ձայնեղների շնչեղ խլացման հատկանիշով Տիգրանակերտի բարբառը զուգաբանություն ունի Մալաթիայի, Ասլանբեկի, մասամբ Պոլսի միջբարբառի (Ռոդոսթո, Ջմյունհիա, Օրդու) հետ: Այս տարածքից դուրս է մնում Եդեսիայի բարբառը, որում նույնպես մինչև այժմ դիտված էր ձայնեղ>շնչեղ խուլ հնչյունափոխություն, սակայն իրականում այդ բարբառում ձայնեղներին համապատասխանում են պարզ խուլեր:

Խ ու լ պ ա յ թ ա կ ա ն ն եր և կ ի ս ա շ փ ա կ ա ն ն եր

Հին հայերենի խուլ պայթականներն ու կիսաշփականները Տիգրանակերտի բարբառում ներկայանում են ձայնեղ հնչյուններով (արևմտահայ գրական լեզվին և արևմտյան բարբառների մեծ մասին համահունչ), այսինքն՝ պ=բ, կ=գ, տ=դ, ծ=ձ, ճ=ջ ընդհանրապես, բառի բոլոր դիրքերում: Օրինակներ՝

պ=բ — պատ>բադ, պապ>բաբ, պանիր>բանիր, պատարագ>բադարաբ, պոռկն>բրռոնգ, ապուր>թաննբուր, ապրուտ>աբրուտ, ազապ>ազգաբ, սպանանել>սբընիլ, ոսպ>վըսբ. պինչ բառը վիճում է փինչ (քինթ—փինչ):

կ=գ — կայծակ>գէձագ, կէս>գէս, կին>գընիգ, կուտ>գուդ, կոփել>գօփիլ, քակել>քազիլ, գրկել>քըրգիլ, երկին>էրգինթ, ակն>ագ, բողկ>փուղգ, խակ>խագ, ոսկի>օսգի, ոսկր>օսգուռ և այլն:

կ>գ' — քմալին ձախավորից առաջ՝ կաթ>գաթ, կարաս>գարաս, կապել>գաբիլ, կարճ>գարջ, երկաթ>էրգաթ և այլն:

կ>ֆ (կ>գ>ֆ) — կեղեւ>քէվիդ, կեղեւել>քէղվիլ, կանկար>քանգար:

կ>հ^ա — կիլու>հուհիու, կապալ>հաբա, կոտոշ>հօդօշ բառերում:

Տ=դ — տամ>իդալ, տանեմ>դանիլ, տասն>դասսէ, տըխմար>դըխմար, տղայ>դղամ, ատեան>անդին, աւետարան>անվդըրան, հատիկ>հագիգ, արտ>արդ, հոտ>հուդ, սուտ>սուդ, հաստ>հասդ, աստառ>ասդառ, յստակել>ըսդրգիլ, կուշտ>գուշդ և այլն:

S > ք (տ > դ > ք) — տանձ > թանձ, տախտակ > թախտակ, տարգալ > թրրքալ, տաշտ > թաշղ/||թէշղ, հոտոտալ > հօնթրթալ, թրխմըննիր (տխմարններ), ցայտել > ցէթիլ բառերում:

Մ = ձ — ծալիլ > ձալլիլ, ծամիլ > ձամմիլ, ծունկն > ձունգ, ծոմ > ձում, ծուծ > ձուծ, անէծք > անէձք, արածիլ > արծիլ, ածել > անծիլ, գործիլ > քօրծիլ, անիծ > անիձ, մեծ > մինձ, խած > խանձ, ծիծաղանք > ձրձղանք և այլն:

Ճ = ջ — ճակատ > ջագաճ, ճանճ > ջանջ, ճանաչել > ջանչնալ, ճոխալ > ջրխիսալ, ճենճ > ջինջ, վախճանել > վախջանիլ, փեճոկիլ > փէջգիլ, արճիճ > արջիջ, բէճ > փէջ, կտրիճ > գըղրիջ և այլն: Ճ > ջ > շ — ճկոյթ(իկ) > շրթթիգ բառում:

Շ ն չ ն ղ խ ու լ պ ա յ թ ա կ ա ն ն Ե Ր

Տիգրանակերտի բարբառում հին հայերենի շնչեղ խուլերն ընդհանրապես անփոփոխ են մնացել բառի բոլոր դիրքերում (համապատասխան հայոց լեզվի զարգացման ընդհանուր ընթացքին), օրինակներ՝ փախչել > փախնիլ, փայտ > փէդ, կոփել > գօփիլ, շերեփ > շէրիփ, քամել > քամմիլ, քիթ > քինթ, մաքի > մաքի, աչք > աչք, թան > թան, արթուն > արթուն, անթեղ > անթիղ, մութ > մութ, ցիւ > ցըվիգ, ցուցանել > ցըցընիլ, զրուցել > զըրուցիլ, խուց > խուց, շամիշ > շամիշ, կանչել > գանչիլ, խաշ > խաշ և այլն:

Ք > ք՝ — քմալին ձայնավորի նախորդելիս՝ քաղել > քաղիլ, քաղցր > քախցըր, աղքատ > ախքաճ, կաքաւ > գաճքաճ և այլն:

Ք > գ — թեղանիք > թէգնիգ, վարտիք > վարդիգ, պարտատէր (պարտք) > բարգընդէր բառերում (Բ-ն շնչեղազրկվելով հնչյունափոխվել է պարզ ձայնավորի, որը իրացվել է ձայնեղով):

Այսպիսով՝ հնչույթաբանական մակարդակում գրաբարի պալթական բաղաձայնների համակարգի համեմատությամբ բարբառում հին հայերենի պարզ խուլերի տեղաշարժը դեպի ձայնեղությունը հանգեցրել է նրանց ապահնչույթացմանը:

Ձայնեղների վերածումը շնչեղ խուլերի նույնպես կհանգեցնե՛ր նրանց ապահնչույթացմանը, սակայն խուլերի ձայնեղացմամբ փրկվել է դրությունը, ձայնեղությամբ որակը պահպանվել է վերահնչույթացմամբ (պ > ք), այսպիսով՝ բարբառում մնացել է պայթական բաղաձայնների մեկ հակադրությունը ք ← → փ, որտեղ ք-ն ներկայացնում է հին հայերենի խուլը, իսկ փ-ն՝ ձայնեղն ու

շնչեղ խուլը (եթե իրոք բարբառի բաղաձայնական համակարգը՝
գրաբարյան համակարգի հետագա ձևափոխությունն է և ոչ թե այդ
համակարգին զուգահեռ հին բարբառներից եկող լեզվական իրո-
ղություն)։

Այս երևույթները կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևե-
րով.

հին հայ. $(բ \leftarrow \rightarrow փ)$ Տիգ. բարբ. $(բ > փ)$ — ձայնեղի ապահանջույ-
թացման վտանգ

$(պ \leftarrow \rightarrow բ)$ » » » $(պ > բ)$ — խուլի ապահանջութա-
ցում և ձայնեղի պահպանում

$(պ \leftarrow \rightarrow փ)$ » » » $(բ \leftarrow \rightarrow փ)$ — վերահանջութացում։

Շ փ ա կ ա ն ն ե ր

Ձայնեղ շփականներից գ, ժ, վ-ն Տիգրանակերտի բարբառում
ընդհանրապես անփոփոխ են (ինչպես ընդհանուր հայերենում),
օրինակներ՝ զաակ > զանակ, ազատ > անան, թուզ > թուզ, ժամ >
ժամ, արժեկ > անժիկ, պատիժ > անդիժ, վառել > վառիկ, խռովել >
խրոփիկ, կով > փով և այլն։

Ղ-ն իր ետնալեզվային շփականի որակով բարբառում անփո-
փոխ է միջձայնավորային, ետձայնավորային, ձայնեղ ու ձայնորդ
բաղաձայններին նախորդող դիրքերում, օրինակներ՝ աղալ > անան, ծաղիկ >
անդիկ, աղ > ան, կակուղ > անգուղ, սաղմոս > անսաղմոս,
եղանիմ > անան, բողկ > անդիկ, կեղտ > անդիկ, աղանեակ > ան-
վանիկ, պղտոր > անդուր և այլն։ Բացառություններ են՝ բէղ > բէ-
խի (փոխառյալ է), բասդիխ (պաստեղ), կեղեւ > քէվիխ/քէվիդ,
շողգամ > շփանակ/շփանակ բառերը։

Ղ > խ — շնչեղ խուլերին նախորդելիս՝ քաղցր > անխցր,
քրիցան (քաղցած), թուղթ > թուխթ, ճեղք > չիխք, մեղք > միխք,
քող(ք) > քօխք, քաղաքացի > անխքացի, աղբատ > անխքան, խեղ-
դել > անխիկ, աղջիկ > անխիկ և այլն։ Այսպիսով՝ շնչեղ խուլերին
նախորդող դիրքում ղ-ն ենթարկվել է առնմանական հնչյունափո-
խության։

Ղ-ն չի խլանում պատճառական բայերի ցրն ածանցին նա-
խորդելիս՝ անցընիկ, քողցընիկ, թողցընիկ, և այն բարբառներն
ուրում, որոնց առաջին բաղադրիչը ղ-ով ավարտվող բառ է, իսկ
երկրորդը՝ շնչեղ խուլով սկսվող, օրինակ՝ աղաջուր > անջուր, դե-
ղադիր > անդիկ, մեղադրել > անդիկ և այլն։ Ըստ երևույթին,
գիտակցվում է նրանց առանձին արմատ լինելը։

Ա, շ, խ, և խուլ շփակաճները Տիգրանակերտի բարբառում համապատասխանում են ընդհանուր հայերենի համանուն բաղաձայններին՝ բառի բոլոր դիրքերում, օրինակներ՝ սատակել > սաձգիլ, երեսուն > էրսուն, միս > միս, շատ > շադ, գիշեր > քըշիր, նուշ > նուշ, խիստ > խիսդ, կախել > գաձիլ, գլուխ > քըլուխ, հաց > հաց, անհամ > անհամ, մահ > մահ և այլն:

Մի քանի բառերում առկա է հ > խ հնչյունափոխություն, որը բարբառի համար օրինաչափ չէ, ըստ երևույթին արևելյան հարեփանների (Վան, Ողմ) ազդեցությունն է (բարբառային խառնուրդի հետևանք), օր.՝ հող > խուղ, խիղ (հեղ), հեռու > խոռու և սրանից կազմված խոսոճալ բայում:

Հ > յ — պահել > բիլիլ, բըյունի (պահունի) բառերում:

Որպես օրինաչափություն, հ-ն ընկնում է ր ձայնորդին հաջորդող դիրքում, օրինակ՝ շնորհ > շընուրք, աղխարհ > աշխարք, խոնարհ > խոնար, շնորհակալ > շընօրնգալ, օրհնել > օրշնիլ և այլն:

Չ ա յ ն ո ր դ ն ե ր

Լ, մ, ն, ր, ո ձայնորդները բառի տարբեր դիրքերում ընդհանուր առմամբ մնացել են անփոփոխ, օրինակ՝ լայն > լէն, հալել > հալիլ, խելք > խիլք, թել > թիլ, մատն > մադ, ամառն > ամառ, մոմ > մում, հում > հում, նուռն > նուռ, խունկ > խունգ, անցանել > անցնիլ, հին > հին, բերան > փէրան, վերանալ > վէրնալ, պորտ > բուրդ, ժիր > ժիր, մոռանալ > մօռնալ, առաջին > էռչի, բառնալ > փառնալ, ծուռ > ձուռ և այլն:

Գրաբարի ն վերջնահանգ ունեցող բառերը բարբառում ն-ի կորուստ ունեն՝ մուկն > մուգ, լեռն > լէռ, բեռն > փէռ և այլն:

Ր > ո — մի քանի բառերում՝ արջ > առչ, մոր > մօռ, որքին > օռքի, ոսկր > օագուռ, մարտ > մառդ, բարձրանալ > փանցըռնալ, ծարավանալ > ձառվըռնալ, փարչ > փառչ, կրժել > գըռժիլ, ձագար > զաքառ և այլն:

Ռ > ր — ժանգառ > ժանգար, աճուկ > աջրիլ բառերում:

Յ ձայնորդը բառասկզբում (իբրև բաղաձայն-ձայնորդ) ընդհանուր առմամբ կորստի է մատնվել, օր.՝ յիսուն > իսսուն, յարդ > էրթ, էրթաման, յանք > ունք, յատակել > քսդդգիլ, յարանջել > օրըզըղալ, յարգ > արք, յարութին > Արութին և այլն: Բացառություներ են՝ յետ > հիդ, յարդագող > հարթքուղ, Յիսուս > Հիսուս,

Գրաբարի բաղաձայն հնչյունների շարքերը		Հնչյունական մակարդակ	Հնչյութաբանական մակարդակ		
		Գրաբարի բաղաձայնների ներկայացրած համապատասխանությունները Տիգրանակերտի բարբառում	հնչույթացում	ապահնչույթացում	վերահնչույթացում
Խուլ պայթականներ և կիսաշփականներ	պ, կ, տ, ծ, ճ	≡ բ, գ, դ, ձ, ջ	—	+	+
	բ, գ, դ, ձ, ջ	≡ փ, ք, թ, ց, չ	—	—	—
	փ, ք, թ, ց, չ	≡ փ, ք, թ, ց, չ	—	—	—
	դ, ժ, լ	≡ դ, ժ, լ	—	—	—
Ջայնդ շփականներ	դ	≡ դ դ > խ (շնչեղ խուլերին նախորդող դերբում)	—	—	—
	ս, շ, խ, հ	≡ ս, շ, խ, հ	—	—	—
Խուլ շփականներ	լ, մ, ն, բ, ո	≡ լ, մ, ն, բ, ո	—	—	—
	յ	≡ յ յ > ջ (բառասկիզբ) յ > ջ (երբև երկբարբառի բաղադրել)	—	—	—
	ւ	ւ = վ (ձայնավորին հաջորդող դերբում) ւ > ջ (երբև երկբարբառի բաղադրել)	—	+	—
	—	(շ) ^հ (փոխառյալ հնչույթ)	+	—	—
Այլ կարգի հնչույթներ	—	(ց) ^դ (փոխառյալ հնչույթ)	+	—	—
	—	(բ) ^չ (փոխառյալ հնչույթ)	+	—	—
	—	(ք) ^չ (փոխառյալ հնչույթ)	+	—	—
	—	Ֆ (նաև փոխառյալ հնչույթ)	+	—	—

ոյս>հուս, յոյժ>հուժ (վերջիններս խիստ նվազ գործածությամբ) բառերը՝ յ>հ հնչյունափոխությամբ: Յ-ն իր հնչումը պահել է չրաբարի յո և ոյջ դերանունների համադրմամբ կազմված յուր (ուր իմաստով) դերանվան սկզբում: Բառամիջում ու բառավերջում հազվադեպ օրինակներով պահպանված է, օր.՝ հայ>հայ, հա-իմ>հիյմ, ուր յ-ն կրկնակ հնչում ունի: Բազմապատկեր բառերի վերջից ընկել է, օր.՝ տղայ>ղղայ, սատանայ>սադանա և այլն: Հայելի>հիլի բառում այ-ը սղվել է: Այսպիսով՝ յ-ն կորցրել է իր գործառնության ոլորտների մի մասը և վերածվել է զուտ բաղա-ձայն-ձայնորդի:

Ի ձայնորդը, իբրև բաղաձայն, նույնացել է վ շփականին, իսկ ընդհանրապես իբրև ձայնորդ անհետացել է բարբառից, օր.՝ հի-ւանդ>հիվանդ, ձիւ>ջիվ, թեւ>թիվ, ալեւոր>հիւվոր, աւել>անվիլ, աւերել>անվրիլ, աղանի>անվրնիգ, կտաւ>գրգանվ, ցաւ>ցանվ, կաւ>գանվ և այլն:

Ի>վ>ֆ — շնորհաւոր>շրնօֆոր, ազնիւ>անգնիվ/անգնիֆ, թեթեւ>թիթըվ/թիթըֆ: Թաւալիմ>թամբըվիլ բառում Ի>բ ան-ցումը թերևս արդյունք է տապալել բառի համադրության:

Այսպիսով՝ Ի-ը ձուլվելով վ-ին՝ բարբառում հանդես է գալիս իբրև միօրինակ (վ) հնչույթ, այսինքն՝ իբրև ձայնորդ, Ի-ը ապա-հնչույթացել է:

ՓՈԽԱԶԴԵՑԱԿԱՆ ԵՎ ԴԻՐՔԱՅԻՆ ՀԱՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բաղաձայնների առնամանություն

Լիակատար առնամանության դեպքեր՝

Նլ>լլ — անալի>անլի, բանալի>փըլլինք, ելանեմ>էլլանլ, չնում>ըլլանլ:

Տն>նն — գտանել>քըննանլ, մատանի>մըննի, մատնոց>մըննոց, մտանել>մըննանլ, գնորդըննիլ (կարկատնել):

Դն>նն — հիւանդանալ>հիվըննանլ:

Րն>նն — թըխմըննիր (տխմարներ):

Այս օրինակներում առնամանության հետևանքով ստացվել են տևական բաղաձայններ: Ի (վ)>բ — արմաւ>անբրմբ — սրանում նախ կատարվել է բմ/մր հնչյունների դրափոխություն, որի հետևանքով մր հնչյունակապակցության մեջ ի հայտ է եկել բ ձայ-նեղը, որը առաջընթաց լիակատար առնամանության է ենթարկել

ւ (վ) շփականին: Պառաւ > քառաք — նախ տեղի է ունեցել բա-
ռասկզբի խուլի օրինաչափ ձայնեղացումը, ապա նրա առաջընթաց
առնմանությամբ ւ (վ)-ի հնչյունափոխությունը ք-ի (հոգնակիում
այդ երևույթը կատարված չէ՝ բառվրնիր): Վարպետ > բարբիդ —
բառամիջի ձայնեղացած խուլը ետընթաց առնմանությամբ իրեն
է նույնացրել վ-ին:

Շ > ժ — շարժեմ > ժանձմ, շարժեցուցանեմ > ժանժցընիլ,
շարժ(ք) > ժանժք բառերում առկա է շ-ի ետընթաց առնմանություն
ժ ձայնեղի կողմից:

Ն > մ — բան մի > փամ մի, բրդոն մի > փրթում մի կապակ-
ցություններում՝ ետընթաց առնմանությամբ:

Ց > չ — ջրաղացապան > չմխչրբան բառում ջ > չ օրինաչափ
հնչյունափոխությունից հետո տեղի է ունեցել ց-ի առաջընթաց
առնմանություն շ-ի կողմից:

Մասնակի առնմանության դեպքեր.

Ն > մ — ճանապարհ > ջանմիւն, ջանմիւլ, անապակ > անմբնդ,
անպէտ > անմբեդք բառերում փ, ք շրթնայինների ետընթաց առ-
նմանությամբ ն-ն փոխարինվել է մ շրթնայինով:

Ձգ > սգ — ազգ > անսգ, Վազգեն > Վասգէն բառերում նախ
կատարվել է գ > ք օրինաչափ հնչյունափոխություն, ապա ք-ի
ետընթաց առնմանությամբ գ-ն խլացել է՝ աւք, սրան հաջորդել է
ս-ի փոխադարձ առաջընթաց առնմանությունը, որը ք-ին զրկել է
շնչեղության հատկանիշից. պարզ խուլի բացակայության պատ-
ճառով կրկին ձայնեղ է երևան եկել ք-ի փոխարեն:

Յտ > գդ — պստիկ > քրդդիդ բառում ձայնեղացած պայթա-
կանների երկկողմանի ազդեցությամբ տեղի է ունեցել ս-ի ձայնե-
ղացում:

Բաղաձայնների տարմանություն

Բ > ն — բարձր > փանցրր և բարձրանալ > փանցըռնալ՝ բա-
ռավերջի ր-ի տարմանությամբ:

Բ > լ — բուրոսառ > փուվառ՝ ու-ի տարմանությամբ:

Ն > լ — նմանեմ > գըմընի (կնմանի)՝ մ-ի տարմանությամբ:

Ք > խ — դախդիդ (տաքտեղ) բառում՝ պայթականի ետընթաց
տարմանությամբ:

Ղ > վ — խաղող > խանվուղ բառում:

Շ>ս — շրջմովիկ>արջըմօլ բառում (շահականների տարնամանությանմբ շ-ն վերածվել է սուլականի):

Մ (ծ)>ց — ծանծաղ>ցանձաղ, ծնծղալ>ցընձըղմ բառերում:

Բաղաձայնների տեականություն

Բաղաձայնների տեականությունը, իբրև ոչ պատահական, այլ բավական տարածված երևույթ, հատուկ է Տիգրանակերտի, Եդեսիայի, Մալաթիայի, Անտիոքի և Կիլիկյան բարբառներին: Այն առկա է երկու խմբի բառերում.

ա) բառեր, որոնց միջձայնավորային դիրքում բաղաձայնը տեական հնչում է ստացել:

բ) Բառեր, որոնցում բաղաձայնի տեական հնչումը պայմանավորված է փոխադրեցական հնչյունափոխության գործոններով (բաղաձայններից մեկի անկում կամ առնամանություն և այլն):

Տեական հնչում ունեն առավել մեծ հաճախականությամբ ձայնորդներն ու շփականները, փոքր հաճախականությամբ՝ պայթականները, կիսաշփականները և շնչեղ խուլերը:

Ձայնորդներ — լի>բլլիք, ծել>ձրլլի, ծարել>ձարլլի, հօլլուգ, հրլլբալ, քամել>քըմմիլ, դմակ>թըմմագ, ծամել>ձամմիլ, թըմմիլ, անոչ>աննուշ, կանուխ>զըննուխ, հնանալ>հիննալ, քնանալ>քըննիլ, հիանդանալ>հիվըննալ, քուռակ>քուռուռակ, զըռռակ, զըռռուցգ, մըրրիլ, վըրրըբվիլ, հայիմ>հիյյալ և այլն:

Ձայնեղ շփականներ — հազալ>հազզալ, վաղել>վազզիլ, թզոկ<թզզոկ, արժան>էժժան, արժանական<աժժագան, վըժժալ, նուալ>նըվվալ, ջըվվալ և այլն:

Խուլ շփականներ — ախօր>բսսօր/սսօր, ասել>բսսիլ, յիսուն>խսսուն, պսակ>բըսսագ, փշոտ>փըշշուդ, մշակ>մըշշագ, խըշշալ, ճոխալ>ջըխխալ, ձըխխալ և այլն:

Ձայնեղ պայթականներ և կիսաշփականներ — շաբբիլ, սըբբադ էրիս, շազզըվիլ, ջըզզիլ, ջըզզըվիլ, կծու>զըձձու, կծիկ>զըձձիկ, խղճուկ>խըջջուգ և այլն:

Շնչեղ խուլեր — լափել>լըփփիլ, չըփփալ, հոգի>հօքքի, տքալ>դըքքալ, թքել>թըքքալ, դդում>թըթթում, կթել>զըթթիլ, թթու>թըթթու, հացցի (հացի), հացցիգ, հաջել>հաշշալ, չըշշալ, բըշշիլ և այլն:

Բաղաձայնների տեական հնչման երևույթը, որ ընդհանուր առմամբ հարադատ չի եղել հին հայերենին (հանդիպում է երբեմն բնաձայնություններում, օր.[՝] բզզամ, բզզումն), հայերենի բարբառներում ըստ երևույթին սկզբնավորվել է դեռևս միջին դարերում:

Որո՞նք են այն դրդապատճառները, որ առաջ են բերել այս երևույթը հայերենի բարբառների մի մասում: Մեր կարծիքով, առաջին գործոնը պետք է համարել միջին դարերում հայերենի բառային երկրորդական (առաջնավանկի) շեշտի ուժգնացումը, որի հետևանքով տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

ա) բազմավանկ բառերի միջնավանկերի ձայնավորները մեծ մասամբ սղվեցին, և գերակշռող դարձավ բառերի երկվանկայնությունը (հաքնիլ, էլլալ): Սրա հետևանքով բառամիջում բազմացան բաղաձայնների կուտակումները:

բ) Միջձայնավորային դիրքում դանդաղ բաղաձայնական կապակցություններում սկսեցին տեղի ունենալ փոխադեցական հնչյունափոխության զանազան երևույթներ, որոնցից մեկն էր մի բաղաձայնի լիակատար առնմանությունը մյուսի կողմից (տն > նն, նլ > լլ): Այս երևույթը հանգեցնում էր բառամիջում տեական բաղաձայնի գոյացմանը (մտանել > մրննալ, ելանել > էլլալ):

գ) Բառի երկրորդական շեշտի ուժգնացման հետևանքով փոփոխվում է նաև առաջնավանկի արտասանության տեղությունը. այն համեմատաբար դանդաղում է՝ առաջին և երկրորդ վանկերի միջև առաջացնելով արտասանական նկատելի դադար. այս դադարը վերացնելու, լցնելու լեզվական միտումով միջձայնավորային դիրքում բաղաձայնը սկսում է տեական հնչվել՝ հազվադեպ, ձամմիլ, աննուշ: Այսպիսով՝ առաջնավանկի շեշտի ուժգնացումը հանգեցնում է բաղաձայնի տեական հնչմանը՝ ձայնավորների միջև:

Տեական հնչումը որոշ դեպքերում պայմանավորված է նաև այլ գործոններով. բնաձայնական, իրականում, բնության մեջ գոյություն ունեցող ձայնի տեղություն արտացոլմամբ՝ բառաձևում, օր.[՝] խըշշալ, խըռռալ, զըռռալ և այլն. ձևաբանական, հոգնակիի ներ > նիւ մասնիկի՝ ն-ով հանգող բառերին կցվելիս կրկնակ նն-ի հնչումը՝ անընթեր: Այս հարցում որոշ դեր է կատարում նաև համաբանությունը, որի գործունեությամբ բազմանում է տեական հնչյուն ունեցող օրինակների քանակը: Որոշ չափով առկա է նաև

աւարբերենի ազդեցութիւնը փոխառութիւնների միջոցով, որոնցում տեական հնչյունները հաճախադեպ են:

Իսկ թե ինչո՞ւ բաղաձայնների տեական հնչման երևույթը լիովին չի ընդհանրացել, չի ընդգրկել բոլոր այն օրինակները, որոնցում կարող էր գործել, պետք է բացատրել լեզվի մեջ արտասանական (հնչողական) տեսանկյունից ավելորդ ծանրաբեռնվածութիւնից խուսափելու միտումով:

Բաղաձայնների անկում

Բաղաձայնների անկումը հիմնականում պայմանավորված է երկու գործոնով՝ հնչյունի արտասանութեան թուլացմամբ՝ բառի որոշ դիրքերում. արտասանութեան դյուրացման և բարեհնչունութեան միտումով (բաղաձայնական կապակցութիւններում): Շատ հաճախ սրանք միասնաբար են գործում:

Շանորթություն — Այս բաժնից դուրս նն մնում բաղաձայնների անկման այն դեպքերը, որոնք խիստ օրինաչափ լինելով՝ ընդհանուր պատմական հնչյունափոխութեանն են վերաբերում և քննված են այդ բաժնում, օրինակ՝ ն-ի անկումը բառավերջում՝ նուռ, մադ, յ-ի անկումը բառասկզբում՝ իսսուն, օրըջգրդալ:

Բարբառում կան բաղաձայնների անկման մի շարք դեպքեր: Հ-ի անկում — հաւատալ > անդրնալ, պահք > բաք, ջուհակ > ջուաք. դեհ > էսթէն, էնթէն, սկիհ > սրգին բառերը ն-ի հափելում ունեն, որից առաջ հ-ն ընկնում է:

Ր-ի անկում՝ բժ, բշ, բխ, բփ (բք), բբ կապակցութիւններում — արժել > անժիլ, շարժել > ժանժալ, շարժեցուցանել > ժանժցընիլ, շարժ > ժանժք, ազոաժաժիգ, արժանական > անժանան, արժանի > անժնիգ, կարժ > գանջ, գանջիլ, գանջօրան, խարշել > խանշիլ, քարշել > քանշիլ, խանխուգ, ջրաղաց > ջանղարց բառի հոգնակիում՝ ջանղընիլ, երբ > յէփ, սուրբ > սըփ, որորան > օրան (< օրրան), արորել > օրիլ (< օրրիլ):

Ն-ի անկում արտասանութեան թուլացմամբ՝ բառավերջում — առաջին > էռշի, որքին > օռքի, հանգաման(ք) > հանգանման: Նկն կապակցութեան մեջ՝ արտասանութեան դյուրացման միտումով — անկանիմ > րգնիլ (ընկնել), ցնկնել > ցըգնիլ, նգ-ի անկում՝ կանգնել > գանիլ (գործածական է նաև գայնիլ):

Տ-ի անկում — Աստուած > Ասված/Ասղված, Աստուածածին >

Ասվաձաձին, պարտք>բարք, բարգընդէր (պարտքատեր), գիտե-
նալ>քինալ:

Ղ-ի անկում — խղճատանք>խըջմըղանք, խըջջուզ (խղճուկ),
ուղղորդ>ըղուրթ, ըղուրթմանց:

Ձ-ի անկում — կորնչել>գորնիլ:

Խ-ի անկում — ջուխտ>չութ:

Կ-ի անկում — կնքաւոր>ընքանվոր, Հնդկաստան>Հընդըս-
դան:

Ք-ի անկում — ուլոնք>հըլուն, հանգամանք>հանդան:

Վ-ի անկում — սիփնիսդ (սևաբախտ), սիփըխդըվիլ, Յովհան>
Օհան:

Մ-ի անկում — լումլումել>լումիլ:

Թ-ի անկում — փրթուցանեմ>փըրցընիլ և այլն:

Ձայնավորների անկում

Այստեղ խոսքը վերաբերում է ձայնավորների մասնակի անկ-
մանը. ա-ի անկում — ահա>հա, ապա>բա, անօսը>նօսըր:
Ի-ի անկում — մա՛րէվուն (իմ արևուն):

Բաղաձայնների հավելում

Հ-ի հավելում բառասկզբում — ագանիմ>հանքնիլ, արբենալ>
հարփէնալ, ընտրել>հընդրիլ, հընդըրդիլ, ուլունք>հըլուն, ալե-
ւոր>հանվոր, հանվօրիլ:

Ն-ի հավելում բաղաձայններից առաջ — թուլակի>թուլընգի,
ղոքանչ>գօնքանչ, չեչ>չինչ, մեծ>մինծ, արտասուք>արդը-
սունք, պուռլ>բըռունգ, քիթ>քինթ, կանաչ>գանանչ, շատոց>
շադունց, արմուկն>արմուգ/լարմունգ, հոտոտալ>հօնթըթալ, բա-
նալի>փըլլինք: Բառավերջում՝ սկիհ>սըգին/սիգին, գեհ>թէն
(էսթէն):

Դ-ի հավելում նր հնչյունակապակցության միջև — ծանր>
ձանդըր, մանր>մանդըր, մանրուք>մանդըրուք, թոնրի>թօնդրի,
թօնդըրդուն, տանիք>դէնիր-դէնդրի, դէնդրէ-դէնիր, պանիր>բա-
նիր-բանդրի:

Բ-ի հավելում մե հնչյունակապակցության միջև — արմալ>
ամբըրա, համարել>համբրիլ, թմրել>թըմբըրիլ, համբըրանք,
անհամբըրանք:

Շ-ի հավելում — օրհնել > օրշնիլ:

Գ(<կ)-ի հավելում — ողնի > օղնիգ:

Ձայնավորների հավելում

Ի-ի հավելում միավանկ բայերի սկզբում — լալ > իլլալ, տալ > իդալ, գալ > իքալ, կալ > իգալ:

Ը-ի հավելում ու-ով և լ-ով սկսվող մի քանի բառերից առաջ —
նահան > ընհան, ռահաթ > ըռհաթ, լու > ըլու, ըլունիք, լի > ըլի-
լինք, լնուլ > ըլլալ, նահ՝ ձգել > ըսգիլ)

Ա-ի հավելում — տուար > դավար:

Դրափոխություն

Բարբառում առկա են դրափոխության հետևյալ ձևերը.

ա) դրափոխվում են երկու բաղաձայններ

կն/նգ — ալանջ > անգանջ

առ/ռդ — դատարկ > թարդաթ

ռլ/լռ — ռեռլվեր (փոխ.) > լէլօռ

լվ/վլ — վրանալ (լվանալ), վրանց (լվացք)

շխ/խշ — նշխար > նրխշարք

խս/սխ — խստոր > սրխուր

դվ/վդ — կեղեւ > քէվիդ

պր/րպ — կապերտ > գարբիդ

կտ/դգ — ջադգրնուց (ճակատանոց)

լն/վլ — ջուհակ > ջուվակ > չուվլակ

բ) դրափոխվում են ձայնավորն ու բաղաձայնը

աղ/ղա — ծիծաղ > ձրձղա, ձրձղաման (ծիծաղման)

րա/ար — ջրաղաց > շաղարց

րի/իր — Գրիգոր > Քիրքուր

ուն/նու — թնկի > նուգի

աւ/ըս/սը — գարնա-գարնուր (կապված հոգնակիի կազմու-
թյան հետ)

ակ > — գավակ-գավգրնիր, ցըմէրուգ-ցըմէրգրնիր,

ուկ > րգ/գր

իկ > մրժիգ—մրժգրնիր, բըլնգուգ—բըլնգգրնիր

աչ > բչ > չը — ամաչկոտ > ամչըգուգ

գ) դրափոխվում են երկու ձայնավորներ

աի/իա — հայիմ > հիյիմլ
աու/ը (<ու) ււ — պատուհան > բրդւհան
ոա/ը (<ա) օ — ջրորդան > շրթօն

Հնչյունի բարդացում

Հնչյունի բարդացումը տեղի է ունենում երկու եղանակով.

ա) հնչյունակապակցության մեջ մտնող երկու բաղաձայնների ձուլում են՝ վերածվելով մեկի, օր.՝ աւ/ց — արտասուք > արտսուք > արցունք (գործածական է նաև անդրսունք ձևը), քւ/ց — վաթսուն > վացցուն:

բ) Որևէ շփական հնչյուն ձեռք է բերում պայթական բաղադրիչ և բարդանում. օրինակ՝ գ > ձ — ազոխ > անուխ, երազ > էրանգ/էրանձ, գ > ց — քանզ > քնց, ս > ց — հերետիկոս > հրդրգուց, ժ > ջ — կարժ > անջ, գնջիլ, գ > ջ — գոռոզ > գոռէջ, շ > շ — շատրուան > շաղրովան:

Հնչյունի պարզեցում

Մ > ձ > գ — խածանել > խանել, ծծեցցո՛ւ > ձրծցո՛ւ > ձրսցո՛ւ

Ձ > ց > ս — ձգել > ցսգիլ — նախ ավելացել է բառասկզբում ը՛՝ րցիլ, ապա տարնամանությանը ց-ն կորցրել է պայթական բաղադրիչը՝ ց > ս, րսիլ, և ս-ի առնամանությանը ք-ն նույնպես պարզվել է՝ իրացվելով գ ձայնեղով: Սև ձիւթ > սէվսիթ (սէվցիթ), ապա տարնամանությանը ց > ս-ի՝ սէվսիթ:

Ձ > գ — ձագար > գաքառ

Ձ > շ > շ — իջանել > իշնալ > իշնալ

Ձ > շ — կոշնակ > գոշնագ

Ց > ս — խօսդուգ (խոցտուկ), խօսղբգօղիլ

Ընդհանրապես հնչյունի պարզեցումը Տիգրանակերտի բարբառին հատուկ չէ, պատահում է հազվադեպ օրինակներով:

Ամփոփում

Ամփոփման տակ հասկանում ենք ոչ միայն հապտոլոգիայի երևույթը (միանման վանկերից մեկի կրճատումը), այլ ընդհանրապես վանկասղումը բազմավանկ բառերում:

ա) Ամփոփում բազմավանկ բառերում.

գիշերահաւ(ուկ) > քշէրավուգ

* քախցածանալ > քրխձէնալ

շնորհաւոր > շընօֆուր

* ջրհորդան > ջորդան > չըրթօն

փաթաթել > փըթիլ

* մեկացլօր > մըգլօր

* ինչու համար > ինչու մայր

* բերանվինի > փերվընի (բերան բառի հոգնակին)

բ) Բարբառային և փոխառյալ բառերում (իբրև կոչական գործածվող) .

* խաթուն բաջի > խաթմաջի (ն > մ)

* խաթուն մամա > խըթումմա կամ խանթմամմա

* աղա դադա > աղադդա

* աղա ախիար > աղափար:

Ժողովրդական ստուգաբանություն

Կան օրինակներ, որոնցում հնչյունների փոփոխությունները պայմանավորված են ժողովրդական ստուգաբանությամբ, օրինակ՝ Երիզգընիգ — այրի կին, Երի գընիգ բառում ավելացել է գ այն մտածողությամբ, որ այրի կինը ընտանիքում և՛ տղամարդ է, և՛ կին¹⁵:

* * *

Անհրաժեշտ ենք համարում ի մի բերել այն օրինակները, որոնցում առկա գրաբարից շեղվող հնչյունական երևույթները չեն բացատրվում բարբառի հնչյունափոխական օրինաչափություններով, ուստի և արժանի են ուշադրության. հնարավոր է, որ դրանց մի մասը հնաբանության կամ հին բարբառային տարբերակի արժեք ունենա: Այդ օրինակներին մենք անդրադարձել ենք «Պատմական հնչյունափոխություն» բաժնում՝ որոշ երևույթներ պատճառաբանելով փոխազդեցական հնչյունափոխության գործոններով, սակայն օգտակար ենք համարում դրանց դիտարկումը նաև այլ տեսանկյունից¹⁶:

15 Տե՛ս Հ. Անադյան, Արմատական բառարան, հատ. I, Երևան, 1971, էջ 176:

16 Ի դեպ, օրինակների մի մասը նշել է Գ. Զահուկյանը իր «Հայ բարբառագիտության ներածություն» գրքում:

Բաղաձայններ — Խուլ պայթականների դիմաց շնչեղ խուլ, որ օրինաչափ չէ բարբառի համար, օր.՝ գրաբար՝ տանձ-բրբ.՝ թանձ, տաշտ-թաշղ||թէշդ, տախտակ-թնխդնգ, տապալեմ-թնթլիլ (զցեւ), տարգալ-թըրքնլ, ցայտել-ցէթիլ, պինչ-փինչ, կանկար||կանգաւ-քանգան, կեղեւ-քէվիդ, ծանծաղ-ցանձանդ, ծնծղայ-ցընծղան:

Կիսաշփականների փոխանցում՝ գր.՝ նոխալ-բրբ.՝ ջըխխնլ||ձըխխնլ, *կոնծել (ավանդված չէ)-գոնջիլ (նույնիմաստ):

Շփականների փոխանցում՝ ա-շ — սեամ-շէմիգ, գ-ս — գու-գել-սուքիլ. շփականների դիմաց կիսաշփականներ՝ գ-ջ՝ գոռոզ-գօռէջ, գ-ծ՝ երազ-էրանձ, ազոխ-անձուխ, ժ-ջ՝ կարծ-գանջ, շ-շ՝ շատ-րուան-շադրըվան:

Գրաբարի համեմատությամբ բառասկզբում հավելավոր և ունեցող բառեր և հակառակը՝ ալեւոր-հանվուր, ալեւորիմ-հանվօրիլ, արբենամ-հանրփէնանլ, ագանիմ-հանքնիլ, ընտրել-հընդրիլ||հընդրդիլ, ուլունք-հըլուն, հաւատալ-անվդընանլ:

Ղ-ի դիմաց լ ունեցող բառեր — հող-հօլլուգ (կավահող, որ հնում փռել են նորածինների տակ), լող-լօլօխ (գուցե և լող+լող ձկից), լօլիգ էղնանլ (թրջվել), դանդաղ-դանդալօշ (դանդաղկոտ, ծանրաշարժ), մողէզ-մըզէզ:

Ղ-ի դիմաց ր կամ ռ և հակառակը՝ ռ-ի դիմաց ղ ունեցող բառեր — շողիք (լորձունք)-շօրունգ (նույնիմաստ), մղեղ (մոխիր, փոշի, կայծ)-մըռիդ (մանր, դեռ չմայրացած ոջիլ), թիթեռն-թէթէ-ղիգ:

Ր-ն՝ մորի||մոր-մօռ:

Լ-ն՝ ճմլեմ-ջըմուիլ:

ւ (վ)-բ համապատասխանություն — թաւալիմ-թնթըվիլ:

Գրաբարի բառասկզբի յ-ի դիմաց զրո ունեցող բառեր՝ յարդ-էրթ, յիսուն-իսսուն, Յարութին-Յիրութին, յոնք-ունք, յուշիկ-ուշիգ, յօրանջեմ-օրըջգըրանլ, յստակեմ-ըսդըգիլ: Այս երևույթը մեր կողմից դիտված է իբրև յ-ի օրինաչափ անկում (ինչպես ընդունված է ասել): Սակայն, գուցե և եղել է հին բարբառների երկու տարածք, որոնք հակադրվել են բառասկզբի յ-ի առկայություն-բացակայություն հատկանիշով: Յ ունեցողները հարել են գրաբարին. դրանցում ավելի ուշ կատարվել է յ>հ, չ (ձայնեղ և) հնչյունափոխություն, կամ յ-ն պահպանվել է: Իսկ այն բարբառները, որոնք այժմ բառասկզբի յ-ի դիմաց զրո ունեն, հավանաբար ի սկզբանե չեն ունեցել յ:

Ձայնավորներ — ա-է՝ յարդ-էրթ, ե-ա՝ եղբայր-նիսիէր, ե-օ՝
ցերեկ-ցօրիգ, ո-է՝ գոռոզ-գօռէջ, ու-օ՝ դուռ-թօռ, գլուխ-քըլօխ,
օ-ու՝ յօնք-ունք, ր-ու (<n) — ոսկր-օսգուռ:

Երկբարբառներ — իւ-ու՝ ձիւն-ցուն, սիւն-սուն, դիւր-թուր,
որ օրինաչափ չէ բարբառի համար: Ենթադրելի է ոյ երկբարբառով
հին բարբառային տարբերակների գոյություն՝ *ձոյն, *սոյն, *դոյր,
որից ոյ > ու օրինաչափ հնչյունափոխությամբ՝ վերոբերյալ ձևերը
(այս երևույթը առկա է նաև մի քանի այլ բարբառներում, որոնց
մասին խոսվել է «Երկբարբառների հնչյունափոխությունը» ենթա-
բաժնում):

Ձ Ե Վ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

ԳՈՅԱԿԱՆ

Գոյականը Տիգրանականերտի բարբառում ունի թվի, հոլովի և առկայացման¹ քերականական կարգեր:

Թվի կարգը

Թվի քերականական կարգը արտահայտվում է եզակի և հոգնակի թվերի հակադրությամբ: Հոգնակին ձևավորվում է հետևյալ թվանիշ թեքույթներով¹՝ իր, նիր, վրնիր, դիք, վրդիք, վրդանք, իգ, ինք, ունք, անք, նի (-ս, -թ, -ն), վրնի (-ս, -թ, -ն), էրնի (-ս, -թ, -ն): Սրանց նախորդող հիմքերի համար ընդհանուր հատկանիշ է շեշտափոխությունը, որի հետ կապված՝ հիմքերը լինում են անհնչյունափոխ և հնչյունափոխված²:

Հոգնակիի հիմքերի տեսակներ են նաև՝ մասնիկավոր հիմքը՝ և մասնիկով (պատմականորեն պատճառաբանվող), օր.³ լէռ-լէռն+իր, փէռ-փէռն+իր, մուդ-մըգն+իր. փոխազդեցական հընչյունափոխության երևույթներով ուղեկցվող հիմքը³ (հնչյունի տևականություն, համաբանություն), օր.³ հաց-հացց+իր. լէզու-լեզվը+նիր, գանդու-գանդվը+նիր ձևերում ու-ին փոխարինող վր կապակցությունը բացատրվում է սրանց եզակի տրականի ու/վ հերթափոխությամբ՝ լէզվ+ի, գանդվ+ի, որոնցից համաբանությամբ անցել է հոգնակի հիմքին:

¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 142:

² Տե՛ս սույն աշխատության «Շեշտափոխական հնչյունափոխություն» բաժինը:

³ Բաց ենթ թողնում այն դեպքերը, որոնք արդեն հիշատակված են «Փոխազդեցական հնչյունափոխություն» բաժնում:

Վերջալորությունների և հիմքերի զուգորդության հարցում կարևոր նշանակություն ունեն հիմքերի ձևային (վանկաքանակություն) և իմաստային գործոնները: Այսպես, բարբառում իր վերջավորություն ստանում են՝ միավանկ հիմքերը՝ խնդ+իր, բնդ+իր, օր+իր. այն բարդ բառերը, որոնց վերջին միավանկ բաղադրիչը պահպանում է իր իմաստային ինքնուրույնությունը՝ վերնահուն-վերնադրնիր, անդուր-անդրրիր. մեկուկես վանկանի բառերը՝ անդդդ-անդդիր:

Նիւ վերջավորություն ստանում են բազմավանկ բառերը՝ մըժիգ-մըժգընիր, գըննուկ-գըննուկնիր և այլն:

Վրնիւ թեքույթը ստանում են մարդու զույգանդամ օրգանների անունները՝ մաղ-մաղվընիր, ունք-ընքվընիր, ձունգ-ձընգվընիր, ձիձ-ձըձվընիր, անք-անչվընիր, նույնիսկ՝ փէրան-փէրվընիր՝ նկատի ունենալով շուրթերի զույգ լինելը, և քանի որ այս թեքույթը միավանկ հիմքերի հետ է զուգորդվում, փէրան բառի վերջին վանկը սղվել է, հոգնակին միավանկ հիմքով է կազմվել՝ փէր:

Դիք, վրդիք, վրդանք վերջավորությունների համար իբրև հիմք են հանդես գալիս ազգակցական հարաբերություններ արտահայտող գոյականները՝ գընիգ-գընգդիք, էրիգգընիգ-էրիգգընգդիք, խնամի-խընամդիք, դէքրր-դէքրրդիք, անփէր-անփրրդիք և բացառությամբ՝ ցնք (ձագ)-ցըքդիք. քուր-քուրվըդիք, նէր-նէրվըդիք, դէր-դիրվըանք. նշված ձևերի հիմքերը լինում են միավանկ, բազմավանկ, մեկուկես վանկանի:

Իգ թեքույթով հոգնակի է կազմում միայն մանք բառը և նրանով բարդված այլ բառեր՝ մանթիգ, իրգըմանթ-իրգըմանթիգ և այլն:

Ինք, ունք, անք վերջավորություններ ստանում են ազգակցություն և կողմնակցություն արտահայտող հավաքական, անձի հատուկ և հասարակ անունները՝ Սամօինք, Փէթլէմինք, Չալաբունք, բարբըրինք, բնբունք, Հընանք, սգէսրանք, ընքնվօրանք և այլն:

Նի (-ս, -թ, -ն), վրնի (-ս, -թ, -ն), էրնի (-ս, -թ, -ն) վերջավորությունները կազմում են ստացական հատկացալի հոգնակին, ըստ որում նի ստանում են բազմավանկ բառերը՝ բըսսնգ-նիս, խըմաննիթ, փօլըրնիս, վրնի՝ հիմնականում զույգանդամ օրգանների անունները՝ անչվընին, մաղվընին, փէրվընիս, էրնի՝ միավանկ բառերը՝ ցէռքէրնիս, քէֆէրնիս, սըրդէրնին, հանցցէրնիս, դընէրնին և այլն:

Բարբառում հանդիպում են հոգնակիի մի շարք բառաձևեր, որոնք շունեն եզակիի Օ վերջավորությամբ հակադիր եզրը, այսինքն անեզական են՝ լընդիր, օղիր, գօբիր, բէխիր, հմբիր, բօբրանդիր (երիկամներ):

Կան նաև հոգնակիի տարբերակներ ունեցող բառեր՝ գընգդիթ|| գընիգնիր, քուրվըդիթ||քուրիր, անլընիր||անլքիր, մանրթիգ||մանրթիր և այլն. երկրորդ ձևերը նորակազմություններ են:

Հոլովի կառուց

Անվանական հոլովման համակարգում գործում են չորս հոլով՝ ուղղական (ուղղական-հայցական), տրական (սեռական-տրական), բացառական և գործիական:

Ուղղականը մյուս հոլովաձևերին հակադրվում է հոլովական գրո վերջավորությամբ (հոգնակի ուղղականի կառուցվածքը ներկայացված է նախորդ ենթաբաժնում):

Տրականը աչքի է ընկնում կառուցվածքային բաղմազանությամբ. հոլովանիշ թեքությունները, որոնք հանդես են գալիս իբրև հոլովական միևնույն անփոփոխակի փոփոխականներ և նույնանիշ են, իրացվում են վերջավորություններով և հնչյունական հերթագայություններով⁴, դրանք են՝

ա) վերջավորություններ՝ ի (գնթ-ի, դըդ-ի), ու (մանթ-ու, չօքք-ու, դընէր-ու), ուշ (քուր-ուշ), վն/վա (օր-վն), ան/աե (քանն-ան, թըռ-ան), ան (գընգ-ան).

բ) հերթագայություններ, որոնք լինում են ներքին և արտաքին. ներքին՝ ու/ան (շուն-ան), ի/ան (անթանթին-անթանթան), է/օ (անիէր-անիօր), օ/անու⁵ (օր-անուր. պատմականորեն այստեղ առկա է միայն ու հոլովանիշը, քանի որ ավ կապակցությունը նույն ինքը օ-ն է). արտաքին՝ ֆ/ց (փանդիթ-փանդից, սգէսրանթ-սգէսրանց), ֆ/անց/աց (ցէռք-ցէռաց, խիլք-խէլաց), իգ/ուց (մանրթիգ-մանրթուց), իֆ/ուց (գընգդիթ-գընգդուց). այսպիսով՝ արտաքին հերթագայությունների արդյունքը տրականում հանգեցնում է ց և ձայնավոր+ց թեքությունների խմբին:

4 Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 159:

5 Л. Овсепян, Система именного склонения среднеармянского литературного языка (автореферат), 1969, стр. 6.

Տրականի նշված թեքույթների հիմքերը լինում են շեշտափոխված (մա՛րթ-մա՛րթո՛ւ) և անշեշտափոխ (փա՛ղնի՛ք-փա՛ղնի՛ց), հնչյունափոխված⁶ և անհնչյունափոխ:

Տրականի թեքույթներից յուրաքանչյուրը կարող է ընդգրկել գործառության հետևյալ ոլորտները:

Ի-ն եզակի տրականի հիմքերի ամենալայն ընդգրկումն ունեցող հոլովանիշն է բարբառում և գործառում է բոլոր այն հիմքերի ոլորտներում, որոնք դուրս են մնում մյուս հոլովանիշ թեքույթների գործառության սահմաններից: Ի-ն ընդգրկում է փոխառյալ բառերի մեծամասնության, փոխանվանաբար գործածվող մյուս խոսքի մասերի հիմքերի ոլորտները: Ի-ով թեքվող հիմքերը ընդհանրապես չեն բնորոշվում ձևական ընդհանրություններով, սակայն կարելի է առանձնացնել ուղղականում է-ով, օ-ով, ու-ով և ան/ա-ով վերջացող հիմքերի խմբերը (ան/ա-ն տրականում կամ պահպանվում է, կամ սղվում, ու-ն հնչյունափոխվում է վ-ի), օրինակ՝ մօշէ-մօշէի, լօլէ-լօլէի, խնլէ-խնլէի, ֆօզօ-ֆօզօի, աղիզօ-աղիզօի, ֆօռօ-ֆօռօի, լէզու-լէզվի, գանդու-գանդվի, մէղու-մէղվի, մըլլա-մըլլաի, մէյվա-մէյվաի, դըղն-դըղի, փէսն-փէսի, սադանա-սադանի, քուշն-քուշի, խօջա-խօջի, բանգլն-բանգլի և այլն:

Ու հոլովանիշը հիմքերի ընդգրկման ծավալով ի-ից հետո երկրորդն է բարբառում: Ու-ի առավելությունն այն է, որ նա կարող է զուգորդվել ոչ միայն մաքուր (եզակի) հիմքի, այլև թվանիշ թեքույթներով ձևավորված հիմքերի (հոգնակի) հետ: Այսպիսով՝ ու-ն գործառում է թե՛ եզակի, թե՛ հոգնակի տրականի հաջույցում:

Հոգնակի տրականի հիմքերը (ու-ին նախորդող) հանդիպում են թվանիշ՝ իր, նիր, վընիր թեքույթներով, ըստ որում սրանց հնչյունափոխված տարբերակներով՝ էր, նէր, վընէր, օրինակ՝ ուղղ.— դընիր, գանգընիր, անգընիր, տր.— դընէր-ու, գանգընէր-ու, անգընէր-ու, ինչպես նաև նի, վընի, էրնի (-ս, -թ, -ն) թվանիշ թեքույթներով, որոնց վերջին ի-ն ու-ից առաջ սղվում է՝ մագվընի(ն)-մագվընու(ն), քըլխընի(ս)-քըլխընու(ս), մէֆէրնի(թ)-մէֆէրնու(թ), իրէքնի(թ)-իրէքնու(թ) և այլն:

Եզակի տրականի հիմքերի մի մասը ուղղականում հանգում է ի-ով, որը նույնպես ու հոլովանիշից առաջ անխտիր սղվում է,

6 Տե՛ս «Շեշտափոխական հնչյունափոխություն» բաժինը:

օր.՝ հօքքի-հօքքու, էքի-էքու, օսգի-օսգու, մըննի-մըննու, խըննի-խըննամու, քնխքըցի-քնխքըցու, անմանի-անմանու, դիշի-դիշու և այլն: Բայի անորոշ ձևը (իլ և անլալ վերջավորություններով) տրականում ու հոլովանիշ է ստանում՝ բառգիլ-բառգէլու, գըղրիլ-գըղրէլու, էրթալ-էրթալու: Մյուս հիմքերը չունեն իմաստային կամ ձևական որոշակի ընդհանրություն (մեծ մասամբ համընկնում են հին հայերենի սեռական-տրականում ու և ոչ վերջավորություններ ստացող հիմքերին)՝ մարթ-մարթու, մամ-մամու, բար-բարու, անիլ-անիլու, ձառ-ձառու, էշ-էշու, քըշիլ-քըշիլու, հուր-հօրու, փուր-փօրու, մէլ-միլու, ձօվ-ձօվու, ժամ-ժամու, անձրիվ-անձրէվու, քըլօխ-քըլխու, քէլ-քէլու, քուղ-քօղու, լուս-լուսու, Ասդլաձ-Ասդրձու:

Սէ բառը ուղիղ ձևով բարբառում պահպանված չէ (փոխարինված է թուրք. սավդա բառով), սակայն թեք ձևերը գործածական են՝ սիրու(ն):

Ուշ վերջավորությամբ թեքվում են ազգակցական հարաբերություններ արտահայտող հիմքերը (բացառությամբ մամ, բար (մայր, հայր), անիլ-հիմքերի), օրինակ՝ քուր-քուրուշ, քէնի-քէնուշ, դէքըր-դէքուշ, դալ-դալուշ, ըսգէսուր-սգէսուրուշ, բարընբար (սկեսրայր)-բարընբարուշ (հետաքրքիր է, որ բար բաղադրիչը այստեղ ուշ-ով է թեքվում, իսկ առանձին հայր իմաստով գործածվելիս՝ ու-ով), նէր-նէրուշ, դէր-դիրուշ, ընքանվուր-ընքանվորուշ:

Վանվա վերջավորությունը իր ոլորտում ընդգրկում է ժամանակի իմաստ արտահայտող հիմքերը, նույնիսկ եթե այդ իմաստը հիմնականը չէ տվյալ բառի համար, օրինակ՝ օր-օրվան, խիղ-խիղվան, վանդէ-վանդվան, հէրու-հէրվան, գըննուխ-գըննըխվան, հրմամ-հրմամգվան, իրգուն-իրգըվան, ամառ-ամըռվա, քըշիլ-քըշիլվան, անշունք-անշունքվան, անիս-անըսվան, ցըմէռ-ցըմըռվա, դարի-դարվան, գըս-սօր-գըսսօրվան, անդին-անդվան և այլն:

Բաճ, գանդիգ բառերը ժամանակի իմաստով գործածվելիս վան-ով են թեքվում՝ բաճվան, գանգըրվան:

Ան/ան վերջավորությունն ընդգրկում է.

ա) մի շարք միավանկ, հոգնակի ուղղականում և մասնիկով ձևավորվող հիմքերի ոլորտը (գրաբարում և վերջնահնչյուն ունեցող բառերը, որոնց և-ն ուղիղ ձևում չի պահպանված), օրինակ՝ յէզ-յէզան, նուռ-նըռան, լէռ-լէռան, փուռ-փըռան, ցուգ-ցըգան, փէռ-փէռան, մուգ-մըգան, թօռ-թըռան (դուռ), թօռ-թօռան (թոռ) և այլն: Ուն բառը բարբառում կորած է, սակայն իբրև քարացած

հոլոված և պահպանվել է տրականի ձևը՝ օդան, օդաց (օդան ջնմ֊
փն, օդաց մի՝ գանի արտահայտություններում):

բ) Ում վերջածանցով և բայարմատով բնորոշվող մի քանի
(քիչ գործածական) հիմքերի ոլորտը՝ խըթում-խըթման, բադում-
բադուման, հաննում-հաննուման (վերջին երկուսի ուղղականի
ձևերը ավանդված չեն, մենք ենք վերականգնում), թանդում-թանդ-
ման և այլն:

գ) Քնրուն, անուն հիմքերի ոլորտը՝ քնրնան, աննան:

Այս վերջավորություններ են թեքվում իզ ածանցով ձևավորված
անիշիգ, գրնիգ, էրիգ (վերջինս գրնիգ բառի համաբանություններ)
հիմքերը՝ անիշգան, գրնգան, էրգան, նաև էրիգգրնգան (այլու):

Այս վերջավորությամբ հանդիպում են նաև որոշ տեղանուն-
ների տրականի ձևեր՝ Ըսդամբուլ, Շաման, Խնրփութա, Չէրմու-
գան, Ինչպես նաև անձնանուններ, որոնք եկեղեցիների կամ սրբերի
անվանումներ են (աղոթքներում)՝ Ս. Գիրանգոսան ժամէ, Ս. Սանքըսան
ժամէ, Հ. Ափրանան, իսկ առօրյա կյանքում անձնանունները
թեքվում են ի վերջավորությամբ՝ Գիրանգոսի, Սանքոի. ուրեմն
անով ձևերը համաբանություններ են:

Ույն հերթագայությամբ են հանդես գալիս միայն ուն-ով
հանդող շուն և դուն հիմքերը՝ շան, դան:

Ին հերթագայությամբ՝ ութին ածանցով ձևավորված վերա-
ցական իմաստով հիմքերը՝ սըրփութին-սըրփութան, փանցրու-
թին-փանցրութան, արքանութին-արքանութան, խէվութին-խէվու-
թան, նախանցութին-նախանցութան:

Էօ հերթագայությունը հատուկ է միայն անիշի հիմքին՝
անիշիօր:

օ/անու թեքություն ընդգրկում է միայն օր հիմքը՝ օր-անուր:

Ք/ց հերթագայությամբ են թեքվում.

ա) փանդիք, հանդիք եզակի իմաստով հիմքերը՝ փանդիք,
հանդիք, որ բնորոշվում են վերջահանգ ճիշտ-ով.

բ) ինք, ունք, անք թվանիշ թեքություններ ունեցող հոգնակի
իմաստով հիմքերը՝ ֆըլանինք-ֆըլանինց, դանդէրանք-դանդէ-
րանց, բանունք-բանունց:

Ք/անց/աց հերթագայությունն ընդգրկում է ք-ով հանդող մի
քանի եզակի իմաստով հիմքեր՝ խիլք-խէլանց, միլք-մէլանց, ցէնք-
ցէնաց, թըթուլք-թըթուլանց (ոչ բոլորը):

Իգ/ուց հերթագայությամբ թեքվում է միայն մանրիկ հիմքը՝
մանրուց:

ԻՖ/ուց-ով թեքվում են դիֆ, վրդիֆ թվանիշ թեքույթներով
 ձևավորված ազգակցություն ցույց տվող հիմքերը՝ զընգդիք-զընգ-
 դուց, քուրվրդիք-քուրվրդուց, անիվրդիք-անիվրդուց:

Այսպիսով՝ նշված թեքույթներից հոգնանիշ են ու վերջավոր-
 ությունը, ֆ/ց, իգ/ուց, իֆ/ուց հերթագայությունները (վերջին եր-
 կուսը զուտ հոգնանիշ):

Տրականի թեքույթների գործառությունը պայմանավորված է
 ձևական, իմաստային և պատմական⁷ գործոններով:

Զուտ ձևականով է բնորոշվում ու/ան (շուն-շան), ֆ/անց/աց
 (խիլք-խէլաց), իգ/ուց (մարթիգ-մարթուց) հերթագայությունների
 գործառությունը:

Զուտ իմաստային հատկանշով՝

ուշ (քուր-ուշ), վան (օր-վան) վերջավորությունների գործառու-
 թյունը:

Զուտ պատմականով է/օ (անիվիք-անիվօր), օ/անլու (օր-անլուր)
 հերթագայությունների գործառությունը:

Մյուս թեքույթների պայմանները ներկայացնում են խառը
 վիճակ (ի վերջավորությունը ընդհանրական է, ուստի այն բա-
 ցառում ենք):

Ու — անիվ-ու, սիր-ու	— պատմական
մադվրնի(ն)-մադվրնու(ն), բառգէլ-ու,	— ձևական և իմաստային
իլան-ու	
թի-ու, հօքթի-հօքթու	— ձևական
Ան/ան — անրան, մըգան	— պատմական
— խըթման, հաննրման	— ձևական, իմաստային
— քաննան, աննան	
Ա/ա — զընգան, էրգան	— ձևական
— Սարքըսան, Ըսդամբօլա	— իմաստային
Ի/ան — մէնձութին-մէնձութան	— ձևական և իմաստային
Ք/ց — փանդիք-փանդից, հանրսիք-	— ձևական
հանրսից	
— բանրունք-բանրուց, սգէսրանք-	— ձևական և իմաստային
սգէսրանց	
Իֆ/ուց — քուրվրդիք-քուրվրդուց	— ձևական և իմաստային

7 Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 162:

Նշենք նաև, որ տրականի թեքույթների գործառությունը որոշակի հիմքերի հետ խիստ կայուն բնույթ չունի, քանի որ «մրցույթ» է գնում ընդհանրական ի և ու (մասամբ) վերջավորությունների միջև գերիշխելու առումով՝ մի կողմից, ի-ի և մյուս թեքույթների միջև՝ մյուս կողմից. բոլոր դեպքերում հաղթող է ի-ն, գերակշռությունը նրա կողմն է. բերենք տարբերակների օրինակներ.

Ի//ու — քնրի//քնրու, հոդի//հոդու, գովի//գովու, քրթի//քրթու, քոզի//քոզու, միշի//միշու և այլն:

Ի//այլ թեքույթներ — թրոան//թոռի, ցրգան//ցոգի, ցեռաց//ցեռի, խելաց//խէլի, թրծոխաց//թրծոխի, փանդից//փանդի, հարանից//հարանի, զանգրվան (ժամ առ.)//զանգր, բանքվան//բանքի:

Այլ թեքույթներով տարբերակներ — անվոր//օրվան, քրշերով//քրշերվան, անշան//անշանքվան, Գիրանգոսան//Գիրանգոսի, շանթով//շանթվան և այլն:

Ինչ խոսք, որ այս տարբերակներից մի քանիսը պայմանավորված են ոճական տարբեր կիրառություններով և միշտ չէ, որ կարող են փոխարինել միմյանց:

Բացառական հոլովը բնորոշվում է տարբեր կառուցվածքներով՝ համադրական, վերլուծական:

Համադրական բացառականի թեքույթներն են՝ է (-ն, ս, թ), ց վերջավորությունները և ն ս, ք, է հոգերը (որոշ վերապահությամբ): Սրանց իբրև հիմք կարող են նախորդել՝

ա) եզակի և հոգնակի ուղղականը՝ անհնչյունափոխ կամ հնչյունափոխված ձևով, մաքուր կամ թվանիշ իր, նիր (էր, ներ), վրնի, նի, էրնի (-ս, -թ, -ն) թեքույթներով ձևավորված, օր.՝ օց-օցեն, բանդ-բանդեն, փերան-փերեն, ցրվիգ-ցրվիքեն, ուղիլ-ուղիլեն, դենիր-դենդրեն, անրիվ-անրեվեն, խօսքիր-խօսքերեն, անգրջնիր-անգրջներեն, քուշան-քուշեն, սաղանա-սաղանեն, ցեռքերնիս-ցեռքերեն, դրենդին-դրենդեն և այլն (վերջին օրինակներում հիմքի նախադասությունը ձևավորված է վերջահանգ ձայնավորները սղվում են է հոլովանիշից առաջ):

բ) եզակի տրականը, որը կարող է նաև ձևավորված լինել և մասնիկով՝ վան հոլովանիշից հետո, օր.՝ օրվան-օրվանէ, վանդվան-վանդվանէ, քրշերվան-քրշերվանէ՝ ն/ը հնչյունափոխությամբ: Այս դեպքում է վերջավորությունը հանդես է գալիս առանց հոգի: Տրականի նախադասությունը բացառականի հիմքում սղվում է՝ թոռ-թրոան-թրոանէ, լեռ-լեռան-լեռանէ:

(Գարուն և աշուն — քննուն, անունք բառերի հիմքերը ուղղականի անհնչյունափոխ ձևերն են՝ քննուն-էն, անունք-էն):

է (-ն, -ս, -թ) թեքույթով բացառական են կազմում տրականում ի, մասամբ ու հոլովանիշ ունեցող բառերը (և՛ եզակի, և՛ հոգնակի), օրինակներ՝ անան-ամնի-ամնէն, անգ-անգի-անգէն, քուշ-քուշէն, փամբանգ-փամբոգի-փամբոգէն, քուղ-քոզի-քոզէն, խօսան-խօսանլու-խօսանլէն, հուղ-հօդու-հօդէն, անձրիվ-անձրէվու-անձրէվէն, քել-քէլու-քէլէն, արդիր-արդէրու-արդէրէն, ցէոքէրնի(ս)-ցէոքէրնու(ս)-ցէոքէրնէ(ս) և այլն:

Սրանց վրա կարելի է ավելացնել այն բազմաթիվ տարբերակները, որ ունի բացառականը այլ թեքույթների համար:

Յ վերջավորությամբ երկու բառաձև է մեզ հանդիպել՝ ընդամենը՝ էրգնուց և էֆուց(է) (երկնքից, այգուց), առաջինի համար ենթադրելի է տրական հիմքը՝ էրգնու, որը սակայն պահպանված չէ (էրգընֆի ձևն է գործածական), երկրորդը տրական հիմքով՝ էֆու-էֆուց(է) (էֆի բառը բացառականի համար ունի նաև այլ տարբերակներ էֆուց(է) էֆիէն): Սրանք ըստ երևույթին ց-ով բացառականի հազվագյուտ նմուշներ են բարբառում:

Ն, ս, թ, է հոդերով բացառական է ձևավորվում տրական հիմքով: Քանի որ հոդերով հանդես գալը բացառված չէ տրական հոլովի համար, ուստի չի կարելի բացարձակորեն սրանք համարել բացառականի հոլովանիշ թեքույթներ: Այսպիսի բացառականը ճիշտ կլինի անվանել տրականաձև, օրինակ՝ սիրուն (սիրուց), սիրուք (սիրուցդ), քըշէրվանէ, յէփվանէ: Վերջին օրինակներում է հոդին նախորդում է ն մասնիկը, որը նախկին վան հոլովանիշի ն վերջնահնչյունի վերականգնումն է բացառական հոլովաձևում: Տրականաձև բացառական ունենում են՝ տրականում ու վերջավորություն ունեցող բառերի մի մասը՝ բանգ-բանդու-բանդուն (ցրտից), թանգ-թանդու-թանդուն (թաղից), քօք-քօքու-քօքուն, հուղ-հօդու-հօդուն, սիրու-սիրուն (թ, ս), ջօթ-ջօթուն (ծալից), մէշ-միշու-միշուն (միջից), ժամ-ժամու-ժամուն, վախ-վախու-վախուն⁸, էքի-էքու-էքուն և այլն:

Ան/ւան հոլովանիշ ունեցող հիմքերի մեծ մասը՝ նուռ-նրդան-նրդանէ, լէռ-լէռան-լէռանէ, փուռ-փրդան-փրդանէ(սի), փէռ-փէռան-փէռանէ, թօռ-թրդան-թրդանէ և այլն:

⁸ Բերված օրինակների մի մասը տրականում ունի նաև այլ տարբերակ:

Վն/վա հոլովանիշ ունեցող հիմքերի մի մասը՝ գրննուխ-գրննըխվան(ն)-գրննըխվանէ, իրգուն-իրգըվան(ն)-իրգըվանէ, վն-դէ-վնդվան-վնդվանէ և այլն:

Ի/ն//ա, ու/ն հերթագայությամբ հիմքեր՝ փանցրութին-փանց-րութան-փանցրութանէ, քրխցըծութին-քրխցըծութան-քրխցըծութանէ, շուն-շան-շանէ, դուն-դան—դանէ:

Ք/ց հերթագայություն ունեցող հիմքերը՝ ցէռք-ցէռաց-ցէռա՛-ցէ(իս, թի), խիւք-խէլանց-խէլանցէ, փանդնիք-փանդնից-փանդնի՛ցէ:

Նշված բոլոր կազմություններից բացակայում են անձանիշ (մասամբ կենդանիների անունների) հիմքերը, քանի որ դրանք բացառականում վերլուծական կառուցվածք ունեն:

Բացառականի վերլուծական կառուցվածքը հատուկ է շնչա-վորենի դասին (անձեր և կենդանիներ), շնայած կենդանիների անունները ունեն նաև համադրական կառուցվածքի տարբերակ-ներ: Այսպիսի բացառականը բաղադրված է տրական հոլովա-ձևից, որը կարող է հանդես գալ առանց հոդերի կամ ս, թ, ն, է հոգերով ձևավորված, և մէնէ//մընէն մասնիկից: Այս կառուց-վածքը ընդհանուր է թե՛ եզակիի, և թե՛ հոգնակիի համար:

Բացառականն այսպես են կազմում տրականում ուշ, ա, է/օ, հոգնակի ք/ց, իգ/ուց, իէ/ուց թեքություններով հանդես եկող բառերը, որոնք անձանիշ են, և մյուս հոլովանիշներով թեքվող անձերի և կենդանիների անունները, օրինակներ՝ քուրո՛ւշիս մընէ՛ն//քուրո՛ւշ մէնէ՛, գընգա՛ մէնէ՛, էրգա՛ն մընէ՛ն, անիսո՛ւր մէնէ՛, բաբո՛ւնց մէնէ՛, սգէսըա՛նց մէնէ՛, մարթո՛ւց մէնէ՛, գընգըո՛ւց մէնէ՛, խը-նանդո՛ւց մէնէ՛, քուրվըդո՛ւց մէնէ՛, մանո՛ւ մէնէ՛, մարթո՛ւ մը-նէ՛ն, բըրթու մէնէ՛, էշշու մէնէ՛, քելու մէնէ՛, ցըգան մէնէ՛, մըգան մէնէ՛, ցըյնիս մընէ՛ն, շա՛ն մէնէ՛, յէզո՛ւ մէնէ՛:

Ասղված բառը ունի համադրական բացառական մ մասնիկով՝ Ասղըծմէ/ն, հանդիպում է նաև դէր բառի դէրուշմէն ձևը: Անձի հատուկ անունները հավասարապես կարող են երկու ձևով հանդես գալ, օր.՝ Արութին Արութինէն//Արութին(ն) մընէ՛ն, Աննօ-Ան-նօէ՛ն//Աննօի(ն) մընէ՛ն:

Բացառականի տարբերակային ձևերը այնքան շատ են, որ կարելի է նույնիսկ որոշ դեպքերէ համար ընդունել կրկնաձևությամբ հատկանիշը, այսպես օրինակ՝ առականաձև բացառականը գրեթե ընդհանուր ձևով ուղեկցվում է այլ վերջավորություն ունեցող կազ-մությունների տարբերակներով՝ թըռա՛նէ//թըռնէ՛ն, լէռա՛նէ//լէռ-

նէ՛ն, փէռա՛նէ//փէռէ՛ն, ժամո՛ւն//ժամէ՛ն, բանդո՛ւն//բանդէ՛ն, ցէ-
ռա՛ցէ//ցէռքէ՛ն, խէլա՛ցէ//խէլքէ՛ն, դա՛նէ//դրնէ՛ն//դանէ՛ն, փա՛ղ-
նի՛ցէ//փանդնքէ՛ն, էքո՛ւն//էքիէ՛ն//էքուցէ, փանցրովա՛նէ//փանց-
րովթէնէ՛ն, քըշէրվա՛նէ//քըշէրվընէ՛, իրգըվա՛նէ//իրգըվընէ՛, վա՛ղ-
վա՛նէ//վաղվընէ՛, ըսսօրվա՛նէ//ըսսօրվընէ՛//ըսսաւլուրէ՛ն և այլն:

Կան տարբերականներ տարբեր կառուցվածքներով, օր.՝ էշշո՛ւ
մէնէ՛//էշշէ՛ն, քէլո՛ւ մէնէ՛//քէլէ՛ն, շա՛ն մէնէ՛//շընէ՛ն//շա՛նէ,
ցըգա՛ն մէնէ՛//ցըգէ՛ն, յէզո՛ւ մէնէ՛//յէգէ՛ն, մըգա՛ն մէնէ՛//մըգէ՛ն,
էրգընքէ՛ն//էրգնուց, դէրուլմէ՛ն//դէրո՛ւլ մէնէ՛, դէրդըրո՛ւ մէնէ՛//
դէրդըրէ՛ն: Այսպիսով՝ հոլովական ձևերի համանիշությունը բա-
ցառականի համար ընդգծվող հատկանիշ է:

Գործիական հոլովը բարբառում ձևավորվում է օվ ընդհանուր
վերջավորությամբ՝ թե՛ եզակիի, թե՛ հոգնակիի համար: Մի քանի
օրինակներում հանդիպել է նաև օբ վերջավորությունը՝ մօրվօք,
բա՛րդօք, ցեռօք(է), դեղօք(է), սակայն միայն տույզի նյութե-
րում՝ առածների, հանելուկների կամ խաղիկների մեջ, և օրինա-
չափ չէ բարբառի համար, ըստ երևույթին մնացուկային երևույթ
է: Օվ վերջավորության համար իբրև հիմք հիմնականում գործած-
վում է ուղղականի հնչյունափոխվող կամ անհնչյունափոխ (մեծ
մասամբ) ձևը. այն հանդես է գալիս առանց մասնիկների (և կա՛մ
մ): Անձնանիշ գոյականների հոգնակի գործիականը գրեթե գոր-
ծածական չէ (բարբառախոսները դժվարությամբ են այդ ձևերը
վերականգնում իրենց հիշողության մեջ): Բերենք տրականում
տարբեր թեքություններ ունեցող բառերի գործիականի օրինակներ:

Փէրա՛ն-փէրնի-փէրնօվ, անձրիվ-անձրէվու-անձրէվօվ, խօս-
քիր-խօսքէրու-խօսքէրօվ, քըշիր-քըշէրվա՛ն-քըշէրօվ, օր-օրվա՛ն-օրօվ,
քուր-քուրուլ-քուրօվ, նուռ-նրուան-նրուաօվ, փէռ-փէռա՛ն-փէռօվ,
բայց՝ թօռ-թըռա՛ն-թըռնօվ (տրական հիմքով), գընիգ-գընգա՛ն-գըն-
գօվ, էրիգ-էրգա՛ն-էրգօվ, հօքքի-հօքքու-հօքքօվ, էքի-էքու-էքիօվ,
քինի-քինու-քինիօվ⁹, դուն-դընօվ, սաղութին-սաղութա՛ն-սաղութ-
նօվ, բա՛ղա՛ն-բա՛ղի-բա՛ղիօվ, ա՛խփէր-ա՛խփօր-ա՛խփէրօվ, փա՛ղնիք-
փա՛ղնից-փա՛ղնքօվ, սգէսրա՛նք-սգէսրա՛նց-սգէսրա՛նցօվ կամ սգէս-
րա՛նքօվ (հազվադեպ գործածվող), խիլք-խէլա՛ց-խէլքօվ, մա՛րթիգ-
մա՛րթուց-մա՛րթիգօվ կամ մա՛րթօցօվ (հազվադեպ գործածվող),

⁹ Ուղղականում ի-ով հանգող գոյականները գործիականում ի-ն չեն կորց-
նում, բացառությամբ մի երկու բառի՝ հօքքի, հօքքու-հօքքօվ և այլն:

Հոլովներ	Հոլովանիշ թեքույթ- ներ	Որոշիչ հոդե- րի հետ զու- գորդելիու- թյուն	Ստացական հոդերի հետ զուգորդե- լիություն	Օրինակներ	
Ուղղ.	Ø	+	+	փերան'նէ, գահուն'ն, փե- րան'սի, փերան'նթի, գա- հուն'սի և այլն	
Տ ր ա կ ա ն	վերջավորություններ	ի	+	+	փերնի'ն, փերնի'սի, փեր- նի'թի, զըղի'ն, զըղի'ս
		Ու	+- (նի)	+	ձառուն'ն, մարթուն'սի, մարթուն'թի, խօսքե- րուն'թի, հօքքուն'ն, հօք- քուն'սի, անվընուն'սի
		Ուչ	+	+	քուրուն'չէ, քուրուն'չսի, քուրուն'չիթ
		վան/վա	+	-	իրգըվան, քըշերվան (հազվադեպ է զուգորդ- վում)
		ան/ան	+	+	թըռան'նէ, փէռան'սի
		ան/ա	+- տեղ. անձ.	+- տեղ. անձ.	էրգան, գընգան, էրգա՛ն- թի, գընգանի
	միջավորություններ	ու/ան	+	+	դա'նէ, դա'նսի
		ի/ան/ա	+	+	դաքութա'նէ, դաքու- թա'նսի
		է/օ	+	+	անփօ'ւլէ, անփօ'ւրսի
		օ/անվու	-	-	
		ք/ց	-	+	բանքուն'ցիս, դանդերա'ն- ցիթ
		ք/անց/ա	+	+	ցեռա'ցէ, ցեռա'ցսի
		իգ/ուց	+	-	մարթուն'ցէ
		իք/ուց	+	+	գընդդուն'ցէ, քուրվը- դուն'ցսի
Բացառական	է(ն, ս, թ)	+	+	փերնէ'ն, փերնէ'սի, սըը- դէ'թի	
		-(նի)	+	բըսսանգնէ'սի, ցեռքերնէ'թ	
	ն, ս, թ, է	+	+	սիրուն'ն, սիրուն'թ	
	ց	+	+	էրգնուն'ցի, էքուն'ցէ	
Գործիա- կան	օվ	-	+	անքօ'վիս, անքօ'վիթ, ան- քօ'վէ	

զընգդիք-զընգդուց-զընգդիքօվ, անփըրդիք-անփըրդուց-անփըրդիքօվ:

Հետաքրքիր կազմություն ունի ստացական հատկացյալի հոգնակիի գործիականը. օվ թեքույթը երեան է գալիս նի հոգնակերտից առաջ, ըստ որում միավանկ բառերը ունենում են մաքուր հիմք՝ առանց էր հոգնանիշի, օր.՝ ուղղ. — անքէրնիս, տր. — անքէրնուս, բաց. — անքէրնէս, գործ. — անքօվնիս, ցէքօվնիս:

Բարբառում որոշյալության ձևաբանական դրսևորում կարող են ունենալ ուղղական, տրական և բացառական հոլովները ընդհանուր առմամբ, բացառությամբ որոշ թեքույթների: Ստացական հոգերի հետ առնչվում են բոլոր շորս հոլովներն էլ, դարձյալ որոշ թեքույթների բացառությամբ. ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են հոլովանիշ թեքույթների հնարավոր զուգորդությունները որոշիչ և ստացական հոգերի հետ:

Տիգրանակերտի բարբառի հոլովման հարացույցները

1) Թեքում տրականում ի հոլովանիշով

Ու. անթ(է)	անթիր(է)	փէրան(է)	փէրվընիր
Տ. անթի(ն)	անթէրու(ն)	փէրնի(ն)	փէրվընէրու(ն)
Բ. անթէ(ն)	անթէրէ(ն)	փէրնէ(ն)	փէրվընէրէ(ն)
Գ. անթօվ	անթէրօվ	փէրնօվ	փէրվընէրօվ
Ու. դըղան(ն)	դըղանիր(է)	սիրդիս	սըրդէրնի՛սի
Տ. դըղի(ն)	դըղանէրու(ն)	սըրդի՛սի	սըրդէրնո՛ւսի
Բ. դըղի(ն)	դըղանէրու	սըրդէ՛սի	սըրդէրնէ՛սի
մընէ(ն)	մէնէ(ն)		
Գ. դըղօվ	դըղանէրօվ	սըրդօ՛վսի	սըրդօվնի՛սի

2) ու հոլովանիշով

Ու. ձառ(է)	ձառիր(է)	ման(է)	մանիր(է)
Տ. ձառու(ն)	ձառէրու(ն)	մանու(ն)	մանէրու(ն)
Բ. ձառէ(ն)	ձառէրէ(ն)	մանու մէնէ(ն)	մանէրու մէնէ(ն)
Գ. ձառօվ	ձառէրօվ	մանօվ	մանէրօվ

Ու. էքի(ն)	էքընիր(է)	մարթ(է)
Տ. էքու(ն)	էքընէրու(ն)	մարթու(ն)
Բ. էքո՛ւն//էքիէ՛ն//էքո՛ւց(է)	էքընէրէ(ն)	մարթու մէնէ(ն)
Գ. էքիօվ	էքընէրօվ	մարթօվ

3) ուչ հոլովանիշով

Ու. քուր(է)
Տ. քուրուչ(է)
Բ. քուրուչ մէնէ(ն)
Գ. քուրօվ

4) վն//վա հոլովանիշով

Ու. քըշիր
Տ. քըշէրվն(ն)//քըշէրու(ն)
Բ. քըշէրվընէ՛//քըշէրվն՛նէ
Գ. քըշէրօվ

5) նն//աւ հոլովանիշով

Ու. փէպ(է)	փէպնիր(է)	մուպ(է)	մըգնիր(է)
Տ. փէպան(է)	փէպնէրու(ն)	մըգան(է)	մըգնէրու(ն)
Բ. փէպէ(ն)//փէպանէ	փէպնէրէ(ն)	մըգանէ//մըգան	մըգնէրու մէնէ(ն)
Գ. փէպօվ	փէպնէրօվ	—	մըգնէրօվ

6) ն/ա հոլովանիշով

Ու. գընիգ(է)	Ըսդամբօլ	Ս. Սնրքիս
Տ. գընգան(ն)	Ըսդամբօլա	Ս. Սնրքըսն//Սնրքըսի
Բ. գընգան(ն) մէնէ(ն)	Ըսդամբօլա	Ս. Սնրքըսն//Սնրքըսի մընէն
Գ. գընգօվ	Ըսդամբօլօվ	Ս. Սնրքըսօվ

7) Թեքում տրականում ու/ն հերթագայությամբ

Ու. շուն(է)	շընիր(է)
Տ. շան(է)	շընէրու(ն)
Բ. շան(է)//շան մէնէ(ն)//շընէ՛ն	շընէրէ(ն)
Գ. շընօվ	շընէրօվ

8) ի/ւ հերթագայությամբ

9) է/օ հերթագայությամբ

Ու. փանցրութիւն(է)	ւ/սիւիւր(է)
Տ. փանցրութան(է)	ւ/սիւօր(է)
Բ. փանցրութանէ/փանցրու թէնէ(ն)	ւ/սիւօր մէնէ (մընէն)
Գ. փանցրութընօվ (գործ. շէ)	ւ/սիւիւրօվ

10) օ/ւսվու հերթագայությամբ 11) ք/ւ հերթագայությամբ

Ու. օր(է)	օրիւր(է)	խիւք(է)
Տ. ւսվուր/օրվււ(ն)	օրէրու(ն)	խէլւց/խէլքի
Բ. ւսվուրէն/օրվընէ/օրվււ(ն)	օրէրէ(ն)	խէլւցէ/խէլքէն
Գ. ւսվուրօվ/օրօվ	օրէրօվ	խէլքօվ

12) Թեքում հոգնակի տրականում իգ/ուց հերթագայությամբ

Ու. մարթիգ(է)
Տ. մարթուց(է)
Բ. մարթուց մէնէ (մընէն)
Գ. մարթիգօվ/մարթուցօվ

13) իք/ուց հերթագայությամբ

Ու. գընգդիք(է)	քուրվըդիք(է)/քուրիւր(է)
Տ. գընգդուց(է)	քուրվըդուց(է)/քուրէրու(ն)
Բ. գընգդուց մէնէ (մընէն)	քուրվըդուց մէնէ(ն)/քուրէրու մէնէ(ն)
Գ. գընգդիքօվ	քուրվըդիքօվ/քուրէրօվ

14) Թեքում ք/ց հերթագայությամբ՝ և՛ եզակի,
և՛ հոգնակի տրականում

Ու. փանդիք(է)	փանդըքնիւր(է)	բանբունք
Տ. փանդից/փանդըքի	փանդըքնէրու(ն)	բանբունց
Բ. փանդիցէ/փանդըքէն	փանդըքնէրէ(ն)	բանբունց մէնէ(ն)
Գ. փանդըքօվ	փանդըքնէրօվ	գործ. շէ

Առկայացման կարգը

Տիրականակերտի բարբառում հոգերի արժեքով գործառում են
ն, է, ս, ք, ւ մասնիկները և մի անորոշ դերանունը: Սրանցից

ն, է, ան, մի-ն ձևավորում են որոշյալ-անորոշի կարգը, իսկ ս, ը, ն, է-ն՝ ստացականության կարգը: Որոշիչ հոդերն են՝ ն, է, ան, որոնք ունեն գործառնության իրենց հատուկ ոլորտները: Ն-ն զուգորդվում է ձայնավորահանգ հիմքերի հետ, իսկ է-ն՝ բաղաձայնահանգ, շնայած երբեմն այս օրինաչափությունը խախտվում է շարադասության մեջ, երբ բաղաձայնով հանգող բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, օրինակ՝ դունն ըսբընագ է. էրթանն էղնն: Կարելի է նշել, որ է-ն իբրև հոդ բարբառում առավել ուժգին է գիտակցվում, քանի որ երբեմն հանդիպում են կրկնահոդության երևույթներ՝ ն-ի մթաղնման հետևանքով, օր.՝ փոշինէ քըլխուս փէէէցիր. Ռօզինէ նըսդիր էյվանէ: Ա հոդը ունի գործառնության խիստ սահմանափակ ոլորտ, այն զուգորդվում է միայն մի քանի դերանվանական հիմքերի հետ՝ ըսուրն, ընուրն, իրանցն, ըսսունցն, ընունցն: Քանի որ ան-ն իբրև հոդ ընդհանուր ձևով գործածական է նդեսիայի բարբառում, ուստի այս սահմանափակ կիրառությունը Տիգրանակերտի բարբառում պետք է համարել հարևան բարբառների ազդեցության արդյունք (բարբառային խառնուրդ):

Անորոշությունը արտահայտվում է զրո վերջավորության և որոշիչ հոդերի հակադրությամբ՝ դուն-դունէ: Բացի սրանից անորոշության ձևական դրսևորում է մի/մը մասնիկի հտադաս կիրառությունը, որը ընդգծում է անորոշության իմաստը, օր.՝ օո մի մարթու մի դունէ ճօնախ մի գիրքն:

Ստացականության կարգը արտահայտվում է ս, թ, ն, է հոդերով, ըստ որում ս և թ հոդերը հանդես են գալիս ի ձայնավոր հենարանով, որը դրվում է նրանցից նախադաս կամ հտադաս՝ իս, իթ կամ սի, թի, օրինակ՝ քուրո՛ւլխս/քուրո՛ւլսի, դո՛ւնիթ/դո՛ւնիթի: Ձայնավորահանգ բառերի վերջում ի-ն միայն հտադաս կարող է գործառնել՝ հօքթի՛սի, լեզո՛ւթի՝ երկու ձայնավորների՝ միմյանց հաջորդելուց խուսափելու միտումով: Հաճախ ի հենարանը պահպանվում է նաև թեք հոլովաձևերում, ինչպես՝ դո՛ւնիսդանսի, դրնէ՛սի, դրնօ՛վսի:

Ստացական հատկացյալի հոգնակին կազմվում է նի վերջավորությամբ¹⁰: Նի-ն ուղեկցվում է ս, թ, ն հոդերով և հաճախ ի վերջադասով՝ անլընի՛սի, անլընո՛ւսի և այլն:

Ստացական հոդերը միաժամանակ որոշյալության իմաստ են

¹⁰ Տե՛ս սույն աշխատության «Թվի կարգը» բաժինը:

արտահայտում, իսկ որոշիչ հոգերը ստացականության իմաստ բնավ չեն կարող արտահայտել:

Ինչպես պարզվեց վերոբերյալ աղյուսակի արդյունքներից, ստացական հոգերի համար իբրև հիմք կարող են գործառել չորս հոլովների եզակի և հոգնակի ձևերը, իսկ որոշիչ հոգերի համար բացառվում է գործիական հոլովածը, որում հանդես եկող ա, թ, է հոգերը ստացականության իմաստ են արտահայտում, օր.[՝] անքօ՛վէ դէսիր է, ցէքօ՛վէ էրանց, խանիթ խօղօ՛վէ յէսի թանդէ, մանքին իր ջրվօ՛վէ, զուզին իր ջրվօ՛վէ գրգախին նախադասություններում ստացականության իմաստը ակներև է, նշանակում է դրանք որոշիչ հոգեր չեն, չնայած որ որոշյալության երանգ էլ ունեն:

Հարկ է նշել, որ բարբառում ստացական հոգերի առկայությունը չի արգելակում միաժամանակ դերանուն-հատկացուցչի գործառելուն, օրինակ՝ իմ մամիս, քու բաբիթ, իմ գըղիս, իր փանդըքօվէ, իր ջրվօ՛վէ և այլն:

Ուղղական հոլովը հիմնականում ունի որոշյալ առումով գործառելու հնարավորություն, որը բացառված է միայն գոյական որոշչի և կոշականի համար. սրանք (ինչպես արդի հայերենում) միշտ ռոնորոշ ձևով են հանդես գալիս, օր.[՝] սըմա մազիր, սըմբու հավա, քընծիգ ձըրանիգ, մամի՛գ, թուն էրէ ընծի հալալ և այլն:

Տրական հոլովի կիրառություններից մշտապես անորոշ ձև ունի հատկացուցիչը (ի տարբերություն արևմտահայ գրական լեզվի, արևելահայ գրականի նման), օր.[՝] դըղի անունէ, մըղքի մէշէ, անմըսվան մէշէ, բառգէլու դիղ և այլն: Անորոշ է լինում ձևով նաև նպատակի պարագան, օր.[՝] էլան էրթանու, կողմնակի ենթական, օր.[՝] Նօնօի գանրըվիլէ ի՞նչ եղանակ:

Պարտադիր ձևով որոշիչ հոգով են գործառում՝

ա) տրականաձև բացառականը (ըստ որում, ստացական հոգով հանդես գալիս որոշիչ հոգը դուրս է մնում), օր.[՝] մէռա բանդուն (ցրտից), յո՞ւրցէն գիքբաս,— վէրի էֆուն (այգուց):

բ) Մի շարք խնդիրներ ու պարագաներ, որոնք արդի արևելահայ գրականում կապական կապակցություններով են արտահայտվում, օր.[՝] Ազնրվին քանցինք (Ազնիվի մոտ), ղավուն-ցըմէրգին խանրչիր էք փառա (ձմերուկի համար), հօն էրթանուն, հօս իքիր (երթալու փոխարեն) և այլն:

Բացառական հոլովի է վերջավորությունը մեծ մասամբ միանում է ն հոդը (ստացական հոդ ընդունելիս որոշիչ հոդը չի պահպանվում, օր.՝ փրնէն, փրնէս, դնրդէթ): Է-ն առանց հոդի է կիրառվում կապակցությունների մեջ՝ շնքթէ-շնփնթ, դէնդրէ-դէնիր, փէրէ-փէրան, դուֆնէ-դուֆան, բնդէ գնխուզ, և վն//վա հոլովանիչ ունեցող հիմքերի բացառականում, օր.՝ քըշէրվընէ՛, ամըռվընէ՛, ըսսօրվընէ՛ և այլն:

Այսպիսով՝ Տիգրանակերտի բարբառում իբրև հոդ գործառող մասնիկներից ս, ք-ն հանդես են գալիս ստացականության հիմնական և որոշյալության հավելյալ իմաստներով, իսկ ն, է, ն-ն՝ կամ իբրև զուտ որոշիչ, կամ իբրև ստացական հոդեր՝ որոշյալության երանգով (վերջին կետը չի վերաբերում ն-ին): Այս դեպքում առկա է ֆեռականական բազմիմաստություն և ն է հոդերի համար, որոնք միևնույն ձևով կարող են տարբերակներ հանդիսացող քերականական իմաստներ արտահայտել բովանդակության պլանում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պատմական ակնառկ)

Ա. Հոգնակիի կազմությամբ Տիգրանակերտի բարբառը երեւոթապես հեռացել է հին հայերենից, սակայն նրանում գործառող թվանիշ թեքությունների մեծ մասը ամբողջությամբ կամ բաղադրամասերով այս կամ այն չափով գործառել է նաև հին հայերենում: Գրաբարի հոգնակիի ոչ շատ բազմազան արտահայտությունը և հոգնակեւթների պարզ կազմությունը ժամանակի ընթացքում վերափոխվելով՝ հանգեցրել են այլ արդյունքի. ա) հոգնանիշ թեքությունների առատության, որոնց գործառությունը պայմանավորված է ձևային և իմաստային որոշակի գործոններով. բ) հոգնանիշների բաղադրյալ կազմության գերակշռության, որը պատճառաբանվում է դարերի ընթացքում որոշ թեքությունների կենսունակազրկմամբ և դրա հետևանքով նոր թեքությունների հետ կցորդվելու անհրաժեշտությամբ, օր.՝ տի + ք = դիք, ան + ք = անք, վի + ներ = վընիր, վի + տի + ք = վըդիք և այլն:

Հին հայերենի ք հոգնակերտը իբրև այդպիսին բարբառում դուրս է եկել գործառությունից՝ իր հոգնանշության արժեքը պահ-

պանելով մի քանի բաղադրյալ կազմութիւնների մեջ՝ դիֆ, վրդիֆ, անֆ, ունֆ, ինֆ, վրդանֆ:

Գրաբարում քիչ գործածական, սահմանափակ քանակութեամբ հիմքեր ընդգրկող եւր և նեւր հոգնանիշները, իրենց գործառութեան ոլորտը լայնացնելով, հասել են մեծ ընդհանրության՝ եւր > իւր, նեւր > նիր՝ փոխարինելով ք-ին:

Վի հոգնակերտը, որ խոր հնութեան հետքեր է կրում, իբրև հոգնանիշ բարբառում կորցնելով կենսունակութիւնը՝ բաղադրվել է առավել կենսունակ նիր, նի թեքութիւնների հետ՝ վրնիր, վրնի (-ս, թ, ն):

Տի և անի թեքութիւնները գործառութեան՝ գրաբարից տարբեր ոլորտներ են ընդգրկում բարբառում. առաջինը ք-ով բաղադրվելով՝ դիֆ, հանդես է գալիս ազգակցական հարաբերութիւնների արտահայտող հիմքերի հետ, երկրորդը՝ նի (-ս, ք, ն) ձևով կազմում է ստացական հատկացյալի հոգնակին: Գրաբարում դրանք արտահայտում էին հավաքականութեան իմաստ, ինչպես՝ մանկտի, ոսկրոտի, նամականի, ազատանի, որը բարբառում խիստ երկրորդական արտահայտութիւն ունի:

Մարդ բառի հոգնակիի գրաբարյան կազմութիւնը պահպանվել է նույնութեամբ՝ մարքիգ, իսկ կին բառի այլ-ով հոգնակին անհետացել է, քանի որ բառը զրնիգ ձևն ունի բարբառում՝ նոր հոգնակերտով՝ զրնգդիֆ:

Ք. Հին հայերենի վեց հոլովներից բարբառում առկա են չորսը. սեռականն ու տրականը մեկ հոլովաձևով են հանդես գալիս (ինչպես և գրաբարում). եզակի հայցականը, կորցնելով զ նախդիրը, բոլոր դեպքերում նույնացել է ուղղականին:

Հոլովման բնույթը պարզվել է (սա հայերենի համար ընդհանուր երևույթ է), անհետացել է խառը տիպի հոլովումը:

Ամբողջովին փոխվել է հոգնակի հոլովման բնույթը, վերացել են սեռական-տրական-բացառականի ց, հայցականի ս, գործիականի ք վերջավորութիւնները, և հոգնակի հոլովումը ընդունել է եզակիի հոլովանիշ թեքութիւնները (ընդհանուր առմամբ):

Սեռական-տրականի թեքութիւններից ի-ն և ու-ն ձեռք են բերել գործառութեան առավել լայն ոլորտ, քանի որ գրաբարում այլ թեքութիւններով թեքվող բազմաթիվ բառեր բարբառում ստանում են ի հոլովանիշը. հոգնակի տրականի համար ընդհանուր ձևով արմատացել է ու հոլովանիշը, և ոյ > ու հնչյունափոխութեամբ հին հայերենի ո արտաքին թեքման բառերը անցել են ու-ի տակ:

(Նշենք նաև, որ գրաբարի ու հոլովման ենթարկվող բառերի մեծ մասը քարթառում շարունակում է թեքվել ու-ով):

Ա(յ) (արտաքին թեքման) հոլովիչը բարբառում հանդես է գալիս գործածության խիստ նեղ ոլորտով՝ իգ-ով հանգող գրնիգ, անխիգ, էրիգ հիմքերի հետ (գրաբարում իկ ածանցով կազմված գոյականները ենթարկվում էին ան հոլովման՝ աղջկան, Սաթենկան, նույնիսկ մարդիկ-մարդկան):

Տեղանունները և սրբերի անձնանունները նույնպես թեքվում են ա հոլովանիշով:

Ա (ներքին թեքման) հոլովիչը միանալով գրաբարում և վերջահանգ ունեցող բառերի ն-ի հետ (որը ուղիղ ձևում չի պահպանվել բարբառում), ձևավորել է ան թեքույթը (հայերենի համար ընդհանուր)՝ մուկն-մկան > մուգ-մըգան:

Գրաբարի սեռ.— տրականում հազվադեպ հանդիպող ոչ վերջավորությունը, ընդլայնելով գործածության ոլորտը, բարբառում ուղ ձևով իրացնում է ազգակցական հարաբերություններ արտահայտող հիմքերի հոլովումը (թէնուշ, քուրուշ, ընթնվօրուշ, սգէս-րուշ և այլն):

Ի տարբերություն գրաբարի, բարբառում (ընդհանրապես հայերենում) ձևավորվել է վա հոլովանիշը՝ գործածության որոշակի ոլորտով:

Գառուն, աշուն, շուն, տուն, եղբայր, օր բառերը տրականում նույնությամբ պահպանում են իրենց գրաբարյան հոլովաձևը (քնարնան, անշնան, շան, դան, անխօր, անուր):

Հոգնակի տրականի ց հոլովանիշի հետքերը պահպանվել են՝ ա) մի շարք ձևով անեզական, բայց իմա-տով եզակի բառերի հոլովման մեջ (գրաբարյան իմ-եաց հոլովման ենթարկվող և ք ածանց ունեցող), օր.՝ գրբ.—բաղանիք-բաղանեաց > բրբ. փաղ-նիք-փաղնից, գր.—խելք-խելաց > բրբ.—խիլք-խելաց.

բ) մարդիկ-մարդոց բառի տրական հոլովում՝ մարթիգ-մարթուց.

գ) դիմ հոգնանիշ ունեցող գոյականների տրականում՝ գըն-գդիք-գընգդուց, քուրվրդիք-քուրվրդուց.

դ) անբ, ռնբ, ենբ հոգնանիշ ունեցող հավաքական գոյականների տրականում՝ սգէսրանք-սգէսրանց:

Բացառական հոլովը կոյրցրել է ի նախդիրը:

Բարբառում պահպանվել է գրաբարյան տրականաձև բացառականը, որը կազմվում էր ի նախորդով և տրական հոլովաձևով, օր.՝ տր. ծառոյ—բաց. ի ծառոյ, բարբառ՝ տր. էքու—բցու. էքուն (պարտադիր հոգով): Ժամանակի ընթացքում նախորդի կոնստյան պատճառով հարկ է զգացվել տարբերակման մի այլ միջոցի, որը բարբառում հանդիսանում է պարտադիր հոգով գործառնելը: Տրականաձև բացառականը լայն ընդգրկում է ունեցել բարբառում, սակայն հիմա ունի տարբեր զուգաձևեր:

Ի տարբերություն հին հայերենի, բացառականը բարբառում երևան է հանում մասնիկավոր վերլուծական կառուցվածք (մէնէ բառ-մասնիկի առաջացման մասին կիսովի «Դերանուններ» բաժնում):

Գործիական հոլովի բ, վ, ւ վերջավորություններից բարբառում արմատացել է վ-ն՝ նախորդող օ ձայնավորով, մյուսները, ինչպես և տրականաձև գործիականը (ծովու, զարդու) վերացել են. այսպիսով, ընդհանրացել է (նաև ամբողջ հայերենում) ո(յ) հոլովման պատկանող գոյականների գործիականի վերջավորությունը՝ տր. ծառոյ—գործ. ծառով: Երբեմն եզակի գործիականում գտնում ենք գրաբարի հոգնակիի օֆ (աֆ) վերջավորությամբ օրինակներ՝ եզակի իմաստով, ինչպես՝ բաբոք, մօրվօք, ցէռօք, դէղօք. սրանք հնաբանություններ են:

Գ. Գրաբարի ն, ս, դ հոդերը, որ հիմնականում ցուցական իմաստ են արտահայտել, բարբառում իմաստային երկու տարբերակներով են հանդես գալիս՝ որոշչային և ստացական:

Բաղաձայնահանգ բառերի համար բարբառներում առաջանում է ձայնավոր հոդը՝ հետևյալ կերպ¹¹. նախ՝ արտասանության դյուրության միտումով ն հոդը բաղաձայնահանգ բառերի վերջում տկտում է չարտասանվել. ն հոդի և նախորդ բաղաձայնի միջև լավոր գաղտնավանկ ը-ն շարունակում է արտասանվել՝ տունընտուն(ը), և ձավորվում է իբրև հոդ: Ձայնավոր հոդը բարբառներում զանազան տարբերակներով է իրացվում՝ ը, է, ու, ա և այլն: Տիգրանակերտում այն է է: Ենթադրվում է¹², որ է հոդը ձևավորվել է քրդերենի ազդեցությամբ: Հնարավոր է, քանի որ Տիգրանակերտը շրջապատված է եղել քրդական գյուղերով, և հայերը տիրապետել են քրդերենին:

11 Ա. Ղաբիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 113—114:

12 Տիգրան Մկուռն, Ամիտայի արձագանգներ, էջ 428:

Ստացական հատկացյալի նի հոգնակերտը (գրաբար՝ անի) միջին հայերենում լայն տարածում ունեցող նի-ի շարունակությունն է, որի գործառության ոլորտը սահմանափակվել է մեկ ուղղությամբ: Այս հատկանիշով բարբառը խիստ հարուս է Պոլսի բարբառին և արևմտահայ գրական լեզվին:

Ստացական ս, դ հոգերի ի հենարանը առկա է Տիգրանակերտի, Մուշի, Վանի, Եդեսիայի, Քեսաբի, Սվեդիայի, Զեյթունի¹³ բարբառներում, ըստ որում Մուշում, Վանում այն ունի միայն հտադաս գործածություն՝ ախպէրսի, պէրանսի, Եդ., Քէս., Սվ., Զեյթ. բարբառներում միայն նախադաս՝ մա՛րիս, քուօ՛յրիս, բ՛իյօ՛նիս, դօ՛նիս, դո՛ւնիթ, իսկ Տիգ.-ում ունի և՛ հտադաս, և՛ նախադաս գործածություն՝ դո՛ւնսի-դո՛ւնիս, որով Տիգր.-ը միջին դիրք է գրավում երկկողմանի հարեանների նկատմամբ՝ հարելով և՛ մեկին, և՛ մյուսին:

Նախադաս ի-ն մեր կարծիքով փոխարինում է ը գաղտնավանկին՝ տուն(ը)ս, մայր(ը)ս, և ը-ի՝ իբրև լիահունչ ձայնավոր արտասանվելու միտումի արգասիքն է:

Նտադաս ի-ի ծագումը Վանի բարբառի համար Հ. Աճառյանը բացատրում է հետևյալ կերպ. Վանի բարբառում ստացական հոգերի (ընդհանրապես հոգերի) և նախորդող բաղաձայնի միջև գաղտնավանկ ձայնավորը չի արտասանվում, օր.՝ նէրս, րս կապակցության միջև ձայնավորը չի հնչում, ուստի ի-ն ավելանում է երբեմն «բաղաձայնների խճողումը մեղմելու համար»¹⁴:

Հ. Աճառյանի այս տեսակետը կարելի է ընդհանրացնել մյուս բարբառների համար: Սակայն Մուշում և Տիգրանակերտում ի-ն ավելանում է նաև ձայնավորահանգ բառերի դեպքում, որոնցում բաղաձայնների խճողման վտանգը բացառված է՝ հօքթի՛սի, վրո՛ւթի, վրո՛ւսի և այլն: Այստեղ գործ ունենք համաբանության երեվույթի հետ: Որ ի-ն, իրոք, համաբանությամբ է անցել բաղաձայնահանգ բառերից ձայնավորահանգների վրա, լավագույն ձևով ապացուցվում է այն հանգամանքով, որ միայն ս և դ հոգերն են ընդունում հտադաս ի-ն, քանի որ բաղաձայնահանգ բառերի համար ընդհանուր առմամբ ն հոգի գործառությունը բացառվում է, օր.՝ Տիգր. դո՛ւնսի, դո՛ւնթի, դո՛ւնէ (հոգը ձայնավոր է): Երևույթը նույնությամբ անցել է ձայնավորահանգ բառերին, չնայած նրան-

13 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն:

14 Հ. Աճառյան, Վանի բարբառը, Երևան, 1953, էջ 154:

ցում և, դ-ի հետ գործառում է նաև և հողը, օր.՝ վրրա՛սի, վրրա՛-
թի, վրրա՛ն: Թերևս այս հարցում որոշ դեր ունի և այն հանգա-
մանքը, որ և հողի մեջ ստացականության իմաստի դրսևորումը
աղոտ է:

Բարբառային որոշ միավորների համար կարելի է նշել ետա-
դաս ի-ի առաջացման մի այլ հնարավոր ուղի՝ ձայնավորի լիա-
հնչության միտումով և, դ հոգերին նախադաս գործածվող ի-ի
գրափոխությանը հոգի հետ, օր.՝ դո՛ւնիս, բա՛բիս-դո՛ւնսի, բա՛բ-
սի-իս/սի, իղ/ղի: Տիգրանակերտի բարբառում գուգահեռաբար գոր-
ծող երկու երևույթները (ի-ի թե՛ նախադաս, թե՛ ետադաս կիրա-
ռություն) պետք է պատճառաբանել այն միջակա դիրքով, որը
բարբառս գրավում է Կիլիկիա—Անտիոք—Եդեսիա և Մուշ—Վան
բարբառային միավորումների միջև, և պետք է համարել տարբեր
երևույթներ դրսևորող բարբառների լեզվական տարրերի ներթա-
փանցման, համադրման արգասիք:

ԱՄԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Որակական ածականների բաղդատական աստիճանը բարբա-
ռում ունի վերլուծական և շարահյուսական (նկարագրական) կա-
ռուցվածքներ:

Վերլուծական կառուցվածքի արտահայտությունն է դահա
(մկբ. թրք. փոխ.) + ածականի դրական աստիճան, օր.՝ դահա
մինձ—Յէս դահա մինձ իմ (ավելի մեծ): Դահա աղգիգ—Ընի դահա
աղգիգ է (ավելի գեղեցիկ):

Շարահյուսական կառուցվածք ունի հետևյալ տարբերակները.

ա) Համեմատելի առարկան դրվում է բացառական հոլովա-
ծեով՝ էս օդան մէգէլ օդաէն մինձ է: էս դրդա՛սի էն դրդիս մէնէ
մինձ է:

բ) Համեմատելի առարկան վրա կապով կապակցություն է՝
էս դրդա՛սի էն դրդիս վրա՛ն մինձ է:

Վերլուծական և շարահյուսական կառուցվածքների համա-
դրում՝ էս օդան մէգէլ օդաէն դահա մինձ է: էս օդան մէգէլ օդաի
վրա՛ն դահա մինձ է:

Գերադրական աստիճանը նույնպես ունի հիմնականում վեր-
լուծական կառուցվածք. կազմվում է ամեն դերանվան բացառա-

կան հոլովածեղով և ածականի դրական աստիճանով՝ էս ղըղանսի ըմմընէն մինձն է: էս օղան ըմմընէն մինձն է:

Ածականները փոխանվանական կիրառութեան դեպքում թեքվում են անվանական հոլովման հիմունքներով և տրական հոլովում ստանում են ի հոլովանիշ, օր.՝ գամմիր, գամմըրի, գամմըրէն, գամմըրօվ, գամմըրնիր, գամմըրնէրու, գամմըրնէրէն, գամմըրնէրօվ:

ԹՎԱԿԱՆ

Բարբառի բացարձակ ֆանակական թվականներն են. միավորներ՝ մէգ, էրգու, իրէք, շուրս, հինգ, վից, յօթթէ, ութթէ, իննէ, դասսէ. վերջին չորսը պարտադիր կարգով հանդես են գալիս հոգով. տասնավորներ՝ ղըսնըմէգ, ղըսվէրգուք, ղըսվիրէք, ղըսնըշուրս, ղըսնըհինգ, ղըսնըվից, ղըսնըյօթթէ, ղըսնութթէ, ղըսն(ը)իննէ, քըսան, էրսուն, քառսուն, իսսուն, վացցուն, յէթմիշ, սաքսան, դօխսան, հանիր, հըզզան:

Դասսէ թվականը միավորներին միանում է հնչյունափոխված արմատի երկու տարբերակներով՝ ղըսնը, որի ն մասնիկը պատմականորեն պատճառաբանվում է տասն ձևով, և ղըսվ, որի վ մասնիկը և շաղկապի բաղաձայն տարրն է՝ տասներկու, տասներեք: Ի տարբերություն այլ բարբառների, որոնցում արմատի վ-ով տարբերակը կցվում է բոլոր ձայնավորով սկսվող միավորներին (օր.՝ տըսնէվութ, տըսնէվին), Տիգր.-ում այդ երևույթը օրինաչափության չի վերածվել, և ղըսվ ձևը միայն էրգու, իրէք միավորներին հետ է հանդես գալիս:

Երկու թվականը տասնավորների մեջ գործառում է գրաբարյան ձևով՝ ք-ով՝ էրգուք:

Դըսն(ը)իննէ թվականի մեջ ը-ն թույլ է հնչում: Տասնավորներից երեքը՝ յէթմիշ, սաքսան, դօխսան (70, 80, 90), փոխ են առնված թուրքերենից:

Բաշխական թվականները կազմվում են հիմնականում բացարձակ քանակականների կրկնութեամբ, որոնց հետ երբեմն հարադրվում է ճանդ (հատ) բառը՝ մէգ-մէգ (հանգ), էրգու-էրգու կամ էրգու հանգ-էրգու հանգ. սակավ գործածական են անգան ածանցով կազմված բաշխականները՝ էրգուքնանգան, դասնանգան:

Դասական թվականներ բարբառը չունի: Դասականի իմաստը արտահայտվում է էռշի (առաջին), օքքանջա (միջին, միջակ),

սօճի (վերջին) բառերով և շարահյուսական զանազան կապակցությունների օգնությամբ, օր.՝ միջնակի նախորդը անվանվում է օրթանջաի դահա բրգդիգէ. «Քանի՞ երորդ ամուսինն է» արտահայտությունը թարգմանվում է՝ «Քանի՞ խիղճմ մամթն ի» և այլն:

Թվականները կարող են հոլովվել անվանական հոլովմամբ հիմունքներով, ի հոլովանիշով՝ մէգ, մէգի, մէգէն, մէգով, էրգու, էրգութի, էրգութէն, էրգութօւ:

ԴԵՐԱՆՈՒՆ

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԵՍԱԿՆԵՐԸ

Տիրանակերտի բարբառում դերանունները լինում են անձնական, ցուցական, հարցական-հարաբերական, որոշյալ, անորոշ, փոխադարձ, ժխտական:

Անձնական դերանուններն են՝ յէս, թուն, ինք, մինք, թուք, իրանք:

Ցուցական դերանունները բարբառում խմբավորվում են դերանվանական ս և ն արմատների շուրջը: Քանի որ բարբառը չունի դ արմատով դերանուններ, ուստի ն արմատով դերանունները արտահայտում են նաև ընդհանուր հայերենի դ արմատով դերանունների իմաստը:

էս—(այս)

ըսի||ըսսիգի (սա)

հօս (այստեղ)

սանց (այսպես, այսպիսի)

էսթէն (այս կողմ)

էսրիդ (այստեղ)

էսդըդր (այսքան)

էսշէշիդ (այս կերպ)

հօսդիդ||հօսդըդիդ (այստեղ)

էն (այդ, այն)

ընի||ընիգի (դա, նա)

հօն (այնտեղ)

նանց (այդպես, այնպես, այդպիսի, այնպիսի)

էնթէն (այդ կողմ, այն կողմ)

էնդիդ (այդտեղ, այնտեղ)

էնդըդր (այդքան, այնքան)

էնշէշիդ (այդ կերպ, այն կերպ)

հօնդիդ||հօնդըդիդ (այդտեղ, այնտեղ)

Այս շարքերից դուրս է մնում մէգէլ/մէգալ (մյուս) դերանունը:

Հարցական-հարաբերական դերանուններն են՝ վօվ (ով), վօվիր (ովքեր), ինչ, ինչիր, վօր մի (որը), վօր մէգ(է), յէփ (երբ),

յուր (ուր), քանի (քանի, ինչքան), էր (ինչու), ինչդրդր (ինչքան), ինչխըս (ինչպես, ինչպիսի)։

Ուրոշյալ դերանուններն են՝ ըմմըն/ըմմուն (ամեն, ամենքը, բոլորը), հարքնշ(է) (յուրաքանչյուրը, յուրաքանչյուր ոք, ամեն մեկը)։

Անորոշ դերանուններն են՝ մէգ(է) (մեկը), ուրիշ, ֆլան(է) (ինչ-որ մեկը, ում, այսինչը), քիմի (որը, ինչ-որ մեկը)։

Փոխադարձ դերանունն է՝ մէգմէգու/մէգըգմէգու/մէգմէգի։

Ժխտական դերանուններն են՝ հէշ (ոչինչ), հէշ մէգ(է) (ոչ մեկը), հէշ փան։

Գերանունների կազմությունը

Բարբառի պարզ դերանուններն են՝

Յէս, թուն, ինք, էս, էն, ըսի, ընի, հօս, հօն և այլն։

Ածանցավոր են՝ ըսսիգի, ընիգի (էս+իգ, էն+իգ), բարդ ածանցավոր՝ հօսդդիգ (հօսդիդ+իգ), հօնդդիգ (հօնդիդ+իգ) դերանունները։

Բաղադրյալ դերանուններից կցական են՝ էսթէն, էնթէն (էս, էն+դեհ) (կողմ)՝ և որոշիչ հոգի քարացմամբ և հ-ի անկմամբ), էսդիդ, էնդիդ (էս, էն+դիդ (տեղ), հօսդիդ, հօնդիդ (հօս, հօն+դիդ (տեղ), մէգէլ/մէգալ (մէգ+էլ, ալ (այլ)։

Էս, էն, (ինչ) դերանուններով բարդվածները կրում են երկու բառային շեշտ առաջին և վերջին ձայնավորների վրա, ըստ որում ավելի ուժգին է առաջին շեշտը։ Հարադիր են՝ վօր մի, վօր մէգ(է), կրկնավոր-կցական՝ մէգմէգու/մէգըգմէգու դերանունները։ Դերանունների մի մասը փոխառյալ է կամ բաղադրված է փոխառյալ բառով։

Փոխառյալ են՝ պարզ՝ հանքնշ, հէշ (պարսկերենից՝ թուրքերենի միջնորդությամբ՝ herkes, hiç), քիմի (թուրքերենից՝ kim), ֆլան (արաբերենից՝ fulan) դերանունները։

Փոխառյալ բառով բաղադրված դերանուններ են՝ կցական՝ էսդըդր, էնդըդր, ինչդըդր, էսէշիդ, էնէշիդ, որոնցում առկա են թուրքերեն kadar (չափ), çesit (տեսակ, կերպ) բառերը, ինչ-խըս, որի խըս (խաս) բաղադրիչը արաբական ծագում ունի, հարադիր՝ հեշ մէգէ, հէշ փան, որոնց հէշ (hiç) բաղադրիչը պարսկական փոխառություն է։

ԴԵՐԱՆՈՆՆԵՐԻ թՎԻ կարգը

ԹՎԻ կարգի արտահայտությունը բարբառում ունի ձևա-իմաստային և ձևաբանական դրսևորում: Ըստ ձևա-իմաստային արտահայտության դերանունները բաժանվում են հետևյալ խմբերի.

1) ԹՎԻ կարգի լիակատար (ձևի և իմաստի առումով) դրսևորում ունեցող դերանուններ. դրանք են՝ անձնական—յէս, թուն, ինք. ցուցական—ըսի, ընի, մէգէլ, սանց, նանց, էսթէն, էնթէն, էսչէշիդ, էնչէշիդ. հարց.—հարաբերական—վօվ, ինչ, քանի. անորոշ — ուրիշ, ֆըլան:

2) ԹՎԻ կարգի միայն իմաստային արտահայտություն ունեցող դերանուններ. սրանք երկու ենթախումբ են կազմում՝ եզակի ձև և իմաստ ունեցող, անհոգնական դերանուններ՝ ըսսիգի, ընիգի, վօր մի, վօր մէգ(է), մէգ(է), քիմի, հէչ մէգ(է), հափաշ(է). եզակի ձև, հոգնակի իմաստ ունեցող դերանուններ՝ որոշյալ՝ ըմմըն, փոխադարձ՝ մէզմէզու:

3) ԹՎԻ կարգի արտահայտության նկատմամբ չեզոքություն ունեցող դերանուններ. ունենալով մակբայական և ածականական կիրառություն՝ սրանք թե՛ ձևով (եզակի), թե՛ իմաստով անտարբեր են թՎԻ կարգի հանդեպ՝ էս, էն, հօս, հօն, էսդիդ, էնդիդ, էսդըզըր, էնդըզըր, հօսդիդ, հօնդիդ, հօսըզդիդ, հօնըզդիդ. լէփ, լուր, էր, ինչըզըր, ինչխըս, հէչ, հէչ փան:

Հոգնակիի ձևաբանական արտահայտությունը բարբառում կատարվում է ք, իր, նիր թվանիշ թեքությունների միջոցով, ըստ որում ք-ով կազմություններ ունեն միայն անձնական և ցուցական դերանունները (հինգ բառաձև)՝ յէս, թուն, ինք, ըսի, ընի: Սրանց հիմքակազմությունը շունի միօրինակություն: Եզակիի համեմատությամբ այս դերանունների հոգնակիում ունենում ենք՝ տարահիմքություն ուղիղ և քեֆ հոլովաձևերում՝ յէս-մին-ք, իմ-միր, ընձի-մըզի, յէսի-մէզի:

Տարահիմքություն միայն թեք հոլովաձևերում՝ թուն-թու-ք, քու-ցիր, քըզի-ցըզի, քեզի-ցէզի:

Հիմքակազմություն եզակիի թեք հոլովաձևով կամ նրա հիմքով՝ իրան-իրան-ք, ըսուր-ըսուն-ք, ընուր-ընուն-ք. վերջին երկուսը ունեն մասնիկավոր հիմքեր:

Մյուս դերանունների հոգնակիացումը կատարվում է անվանական սկզբունքներով: Հոգնակին կազմվում է եզակի ուղղականի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ հիմքով և միավանկների

համար իր, բազմաժանկների համար նիր թեքույթներով՝ վօվ-վօվիր, ինչ-ինչիր, սանց-սանցիր, նանց-նանցիր, քանի-քանի(ը)-նիր, էսթէն-էսթէնիր, էնթէն-էնթէնիր (սրանց վերջին բաղադրիչն է ստանում իր վերջավորություն), ուրիշ-ուրիշ(ը)շնիր, ֆըլան-ֆըլաննիր, մէգէլ-մէգէլնիր, էսչէշիդ-էսչէշըդնիր, էնչէշիդ-էնչէշըդնիր:

Դերանունների հոլովի կարգը

Դերանունների մի մասը բարբառում չի թեքվում. դրանք են՝ էս, էն, էր, ինչխըս, վօր մի, հօգըղիգ, քիմի, հէչ: Սրանց մի մասը ունենալով ածականական կամ մակբայական կիրառություն՝ փոխանվանաբար չի գործածվում: Մի երկուսն էլ փոխառյալ լինելով՝ թեք ձևեր չունեն, չնայած բացառված չէ փոխառյալ դերանունների հոլովումը:

Թեքվող դերանունները հոլովվում են կամ անվանական հոլովման հիմունքներով, կամ մասնակի դերանվանական հոլովմամբ: Ինչ խոսք, գերիշխող է անվանական հոլովումը:

Անվանական հոլովում—կրիվ հոլովվող դերանուններն են՝ ինք, ըսի, ընի դերանունների հոգնակները՝ իրանք, ըսսունք, ընունք, մէգէլ, ուրիշ, մէգ(է), ֆըլան(է), ինչ, վօր մէգ(է), էսղըդըր, էնղըդըր, ինչղըդըր, էսչէշիդ, էնչէշիդ, քանի, ըմմըն, հանրանչ, սանց, նանց, հէչ փան: Իրանք, ըսսունք, ընունք դերանունները ունեն առաջինը՝ հինգ, մյուսները՝ չորսական հոլովաձև. տրական հոլովում սրանց հատուկ է ֆ/ց հերթագայություն: Տրական, վերջինների նաև ուղղական հոլովում այս դերանունները զուգորդվում են որոշիչ հոդի դեր կատարող անձայնավորի հետ՝ իրանցան, ըսսունքան, ընունքան և այլն: Այս հոդը գործածվում է այն դեպքում, երբ խոսվում է խոսողին ու խոսակցին փոխադարձաբար ծանոթ առարկայի կամ անձի մասին: Ա հոդ կարող են ստանալ միայն նշված դերանունները և վերջին երկուսի եզակի տրականը՝ ըսսուր(ան), ընուր(ան):

Իրանք-ը, իբրև անձնական դերանուն, ունի նաև հայցական հոլովաձև, որը կազմվում է ուղղականից՝ ի վերջավորությամբ: Այս ի-ն բարբառի անձնական դերանունների հայցականի ընդհանուր հոլովանիշն է: Բացառականը ունի մասնիկավոր հիմքակազմություն, ըստ որում զուգահեռաբար գործառում են երկու մասնիկ՝ ն և մ. հիոք է հանդիսանում տրական հոլովաձևը: Մ-ով կազմությունների համար բնորոշ է կրկնակի որոշիչ հոդի առկայու-

թյունը. այսպես 1) տրական հոլ. + ն (մասնիկ) + էն (բաց. -ի վերջ-
յուն). 2) տրական հոլ. + մ + էն + է (հոդ), օրինակ՝ իրանցմէն//
իրանցմէնէ:

Գործիական հոլովը նույնպես ունի մասնիկավոր հիմքակազ-
մություն, սակայն սրանում գերիշխողը մ մասնիկն է: Կազմու-
թյունն է՝ տրական հոլ. + մ(ն) + օվ + է հոդ, հոդի կիրառությունը
ազատ է:

Ամբողջականացնելով՝ կունենանք նշված դերանունների հո-
լովման հետևյալ հարացույցը:

Ու. իրանք	ըստունք(ւն)	ընունք(ւն)
Տ. իրանց(ւն)	ըստունց(ւն)	ընունց(ւն)
Հ. իրանքի	ըստունցնէն//	ընունցնէն//
Բ. իրանցնէն//իրանցմէնէ	//ըստունցմէնէ	ընունցմէնէ
Գ. իրանցնօվ(է)//իրանցմօվ(է)	ըստունցմօվ(է)	ընունցմօվ(է)

Տրական հոլովում ի հոլովանիշով թեքվում են (փոխանվանա-
կան կիրառության դեպքում) մէգէլ, ուրիշ, ֆըլան, էսղըզըր, էնղը-
զըր, ինչղըզըր, էսչէշիդ, էնչէշիդ, քանի, հարքանշ, սանց, նանց,
հէշ փան դերանունները:

Սրանք բոլորն էլ ունեն չորսական հոլովածև, որոնք կազմ-
վում են անվանական հոլովման ընդհանուր հիմունքներով: Սրանց
հոլովման հարացույցը հետևյալն է.

Ու. մէգէլ(է)	ուրիշ(է)	ֆըլանէ	էսղըզըր(է)
Տ. մէգէլի(ն)	ուրիշի//ուրըշի(ն)	ֆըլանի(ն)	էսղըզըրի(ն)
Բ. մէգէլէն	ուրիշէն	ֆլանէն	էսղըզըրէն
Գ. մէգէլօվ(է)	ուրիշօվ(է)	ֆլանօվ(է)	էսղըզըրօվ(է)

(նույն կերպ են հոլովվում էնղըզըր և ինչղըզըր դերանունները):

Ու. էսչէշիդ(է)	քանի	հարքանշ(է)
Տ. էսչէշըդի(ն)	քանիի(ն)	հարքանշի(ն)
Բ. էսչէշիդէն	քանիէն	հարքանշէն
Գ. էսչէշիդօվ(է)	քանիօվ	հարքանշօվ (քիշ-գործ.)

սանց, նանց(է)
սանցի, նանցի(ն)
սանցէն, նանցէն
սանցօվ, նանցօվ(է)

Ու. հէշ փան(է)	մէգէլնիր(է)	ուրիշնիր(է)
Տ. հէշ փանի(ն)	մէգէլնէրու(ն)	ուրիշնէրու(ն)
Բ. հէշ փանէն	մէգէլնէրէն	ուրիշնէրէն
Գ. հէշ փանօվ(է)	մէգէլնէրօվ(է)	ուրիշնէրօվ(է)

Ֆըլաննիր(է)
 Ֆըլաննէրու(ն)
 Ֆըլաննէրէն
 Ֆըլաննէրօվ(է)

Ու. էսշէշըղնիր(է)	քանընիր(է)	սանցիր, նանցիր(է)
Տ. էսշէշիղնէրու(ն)	քանինէրու(ն)	սանցէրու, նանցէրու(ն)
Բ. էսշէշիղնէրէն	քանինէրէն	սանցէրէն, նանցէրէն
Գ. էսշէշիղնէրօվ(է)	քանինէրօվ(է)	սանցէրօվ, նանցէրօվ(է)

Տրական հոլովում ու հոլովանիշ են ստանում ինչ, մէգ, վօր մէգ, ըմմըն դերանունները: Սրանցից մէգ և վօր մէգ դերանունների բացառականը ունի երեք կազմություն. եթե խոսքը իրի է վերաբերում, ապա բացառականը պարզ կազմություն ունի՝ հիմք + վերջավորություն, մէգէն, վօր մէգէն, իսկ եթե անձի մասին է, ապա ունի կամ վերլուծական՝ մէգու մընէն, վօր մէգու մընէն, կամ մասնիկավոր հիմքով, համադրական կազմություն՝ մէգումէնէ, վօր մէգումէնէ: Սրանց հոլովման հարացույցն է.

Ու. ինչ(է)	ըմմըն(-է, իս, իթ)
Տ. ինչու(ն)	ըմմընու(-ն, սի, թի)
Բ. ինչէն	ըմմընէն(սի, թի)
Գ. ինչօվ	ըմմընօվ(է, սի, թի)

մէգ(է)
 մէգու(ն)
 մէգէն||մէգու մընէն, մէգումէնէ
 մէգօվ (հազվադեպ կիրառություն)

վօր մէգ(է)
 վօր մէգու(ն)
 վօր մէգէն||վօր մէգու մընէն||
 ||վօր մէգումէնէ
 վօր մէգօվ (է)

Ու. ինչիւր (է) — մյուսները շունեն հոգնակի
 Տ. ինչէրոզն)
 Բ. ինչէրէն
 Գ. ինչէրօզ(է)

Դերանունների մի մասի հոլովումը թերի է, պակասում է կամ գործածական չէ այս կամ այն հոլովածու, այսպես՝ հօս, հօն, յուր դերանունները ունեն միայն ուղղական և բացառական հոլովածուներ.

Ու. հօս հօն յուր
 Բ. հօսցեն հօնցէն յուրցէն:

Սրանց բացառականի հիմքը մասնիկավոր է: Այս ց մասնիկը կապվում է բարբառի անվանական հոլովմանը հատուկ տրական հոլովի անց, ց վերջավորությանը (հմմտ. քօվ-քօվանց, փանդիք-փանդից, խիլք-խէլանց): Ենթադրելի է, որ այս դերանունները երբեք են ունեցել են տրական հոլովածու ց հոլովանիշով, որոնք գործածության փոքր հաճախականության պատճառով մոռացվել են: Տրականի հիմքով կազմվել է բացառականը՝ հօսցէն, հօնցէն, յուրցէն:

Հօսդիդ, հօնդիդ դերանունները ունեն միայն ուղղական և տրական հոլովածուներ, վերջինս կազմվում է անց վերջավորությամբ՝

Ու. հօսդիդ հօնդիդ
 Տ. հօսդդանց հօնդդանց:

Բացառական շունեն, որովհետև նույն իմաստով կան հօսցէն, հօնցէն հոլովածուները: (Այս դերանունները՝ հօս, հօսդիդ, իրենց թերի հոլովածուներով լրացնում են միմյանց պակասը): Սրանցում հոլովվում է դիդ (տեղ) գոյականը՝ հնչյունափոխված հիմքով:

Էսթէն, էնթէն, էսդիդ, էնդիդ, յէփ դերանունները շունեն գործիական հոլովածու: Առաջին երկուսը տրականում ունենում են ու հոլովանիշ, որը ենթադրել է տալիս գործածությունից դուրս եկած էնթի, էսթի ձևերի երբեմնի գոյություն, որոնց հորովումը յուրացվել է մյուսների կողմից: Բացառականը տրականածու է և ունի երկու հիմքակազմություն. 1) տրականի հիմք՝ էսթ, էնթ, 2) նախկին ուղղականի հիմք՝ էսթի, էնթի: Սրանց հոգնակին՝ էսթէնիւր, էնթէնիւր, քիչ է գործածական և չի հոլովվում:

Ու. էսթէն, էնթէն

Տ. էսթու(ն), էնթու(ն)

Բ. էսթուն||էսթիուն, էնթուն||էնթիուն

Էսդիդ, էնդիդ դերանունների տրականը ստանում է *ան* հոլովանիշ, բացառականի կազմությունն է՝ տրականն իբրև հիմք + էն հոլովանիշ:

Ու. էսդիդ էնդիդ

Տ. էսդէդանց էնդէդանց

Բ. էսդէդանցէն էնդէդանցէն

Յէփ դերանունը հոլովվում է ժամանակ ցույց տվող գոյականների նման, տրականում ստանում է *վան* հոլովանիշ, բացառականը տրականաձև է:

Ու. յէփ

Տ. յէփվան(ն)

Բ. յէփվան(է)

Փոխադարձ մէզմէջու դերանունը շունի ուղղական հոլով, տրականում ստանում է ու կամ ի հոլովանիշը, բացառականն ունի վերլուծական կազմություն. հազվադեպ գործածություն ունի գործիականը:

Տ. մէզմէջու||մէզմէջի

Բ. մէզմէջու մէնէ՛ (մընէ՛ն)

Գ. մէզմէջով

Այսպիսով՝ ա) լրիվ կամ քերի հոլովում ունեցող դերանունների տրական հոլովում գործառում են *ֆ/ց* հերթագայությունը և ու վերջավորությունը՝ հոգնակի հոլովման հարացույցում և ի, ու, *անց*, *վան* հոլովանիշ վերջավորությունները՝ եզակիի հարացույցում:

բ) Բացառական և գործիական հոլովները ունենում են պարզ կամ մասնիկավոր հիմքակազմություն (ն, մ մասնիկներով): Վերջինով դերանունների այս հոլովաձևերը տարբերվում են անունների նույն հոլովներից, որոնք մասնիկավոր հիմք ստվորաբար չեն ունենում: Իբրև պարզ հիմք գործառում են ուղղական հոլովաձևերը, իսկ իբրև մասնիկավոր հիմք՝ տրական հոլովաձևերը:

գ) Բացառական հոլովաձևի կրկնակի որոշիչ է հոգի գոյությունը պայմանավորված է հիմքի մեջ մ մասնիկի կամ մէն հընչունախմբի առկայությամբ (ըսսունցմէ՛նէ), որի ն հոգը ալլևա չի գիտակցվում իբրև այդպիսին, մթագնված է, ուստի անհրաժեշտություն է առաջացել նոր՝ է հոգի գործառության:

Դերանվանական հոլովում

Տիգրանակերտի բարբառում դերանվանական հոլովման կառուցվածքային առանձնահատկությունները ավանդական են, քանի որ առնչվում են գրաբարի (ընդհանուր հայերենի) դերանվանական հոլովման համակարգին: Ինչ խոսք, որ գուտ դերանվանական հոլովում բարբառը չունի: Այն երևան է գալիս միայն ուղղական, սեռական և տրական հոլովներում: Բոլոր դեպքերում, սկսած հայցական հոլովից (մասամբ նաև տրականից), մուտք են գործում անվանական հոլովման կառուցվածքային տարրերը:

Դերանվանական հոլովման են ենթարկվում հետևյալ դերանունները, անձնական՝ յէս, թուն, ինֆ, մինֆ, թուֆ, ցուցական՝ քսի, քնի, հարց.—հարաբերական՝ վօվ:

Նշված անձնական դերանունները ի տարբերություն անվանական հոլովման ունեն վեցական հոլովածև՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական: Դերանվանական հոլովման առանձնահատկությունները հանդես են գալիս առաջին երեք հոլովներում:

Յէս, թուն, թուֆ դերանունների սեռականը ամբողջովին տարահիմք է՝ յէս-իմ, թուն-քու¹⁵, թուք-ցիր, իսկ մյուսներինը՝ մասամբ՝ ինք-իր, մինք-միր:

Տրական հոլովը կազմությամբ ներկայանում է իբրև դերանվանական և անվանական հոլովումների առանձնահատկությունների միաձուլում՝ ընձի, քրզի, իրան, մրզի, ցրզի¹⁶: Այս հոլովածեկերը տարրալուծելիս՝ ստանում ենք ընձ, քրզ, իր, մրզ, ցրզ հիմքերը, որոնցից միայն իր-ն է համընկնում սեռական հոլովածեկին, մյուսները տարբեր հիմքեր են, և ի ու ան վերջավորությունները, որոնցից ի-ն գրեթե ընդհանուր է: Ան վերջավորությունը և իրան ձևը առնչվում են հին հայերենի իրեան հոլովածեկին, իսկ ի հոլովանիշը, որ հատուկ է հիմնականում արևմտյան խմբի բարբառներին և գրական լեզվին, առնչվում է անվանական հոլովման

15 Փոխանվանական կիրառության համար քու դերանունը ունի քումե (թոնր) ձևը, որը կապվում է գրաբարի քո ստացականի տրական քում հոլովածեկի հետ:

16 Գործածական են նաև մասնիկավոր հոլովածեկեր՝ մրզիզի, քրզիզի, ցրզիզի և այլն:

տրականի ի վերջավորությանը¹⁷։ Այսպիսով՝ տրական հոլովում հիմքակազմությունը ավանդական է՝ դերանվանական, սակայն որոշակի և ընդհանուր վերջավորության ի հայտ գալը պայմանավորված է անվանական հոլովման առանձնահատկությունների ներթափանցումով։

Հայցական հոլովի կազմությունը բարբառում ինքնին մի հետաքրքիր, գրեթե հզակի երևույթ է հայերենի բարբառների պատմության մեջ։

Յէսի, ֆէզի, ինֆի//ընֆի, մէզի, ցէզի (հիշենք նաև իրանֆի)։ Տարրալուծելիս՝ ատանում ենք յէս, ֆէզ, ինֆ (ընֆ), մէզ, ցէզ հիմքերը և ի ընդհանուր վերջավորությունը։ Հիմքակազմությունը միօրինակ չէ։ Իբրև հիմք երևան են գալիս կամ ուղղական հոլովաձևերը՝ յէս, ինք, կամ տրականի անհնչյունափոխ հիմքերը՝ ֆէզ (ֆըզ), մէզ (մըզ), ցէզ (ցըզ)։ Թե ինչու են այս հիմքերը չհնչյունափոխված, պետք է բացատրել այն երկրորդական շեշտով, որ կրում են հիմքի ձայնավորները. այդ շեշտը երբեմն այնքան ուժգին է, որ դժվար է լինում որոշել, թե ո՞ր ձայնավորն է առավել շեշտվածը՝ հիմքայինը, թե՞ հոլովանիշը։ Հայցականի հիմքի ձայնավորների անհնչյունափոխությունը պայմանավորված է նաև այն միտոսով, որ տարբերակում մտցվի միևնույն հիմքով ու վերջավորությամբ կազմված երկու հոլովաձևերի միջև՝ տր. ֆըզի, հայց. ֆէզի։ Եզակի երրորդ դեմքի ինֆի հայցականը ունի նաև ընֆի հնչյունափոխված հիմքով զուգաձևը, քանի որ այստեղ տրականի և հայցականի տարբեր հիմքերի հետևանքով շփոթության վտանգ չկա (իրան-ինֆի)¹⁸։

Բացառականի համար բարբառը ունի երկու հիմքակազմություն.

տրականահիմֆ բացառական, որ նաև մասնիկավոր է, կազմությունն է՝ տրականի հիմֆ + ն + է + հոդ՝ ընծնէն//ընծնէ՛սի (զուգորդվում է կամ ն, կամ ս/սի հոդի հետ), քըզնէն, իրնէն, մըզնէն, ցըզնէն։

Սեռականահիմֆ բացառական — սրանում գործառում է մ մասնիկը, կազմությունն է՝ սեռ. հոլովաձև + մ + էն + հոդ՝ իմմէ՛ն-

17 Հ. Անադյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 2, Երևան, 1954, էջ 73։

18 Ինչպես տրականի, հայցականի համար էլ գործածական են մասնիկավոր հոլովաձևեր՝ քէզիզի, մէզիզի, ինքըզի և այլն։

սի, քումէ՛նթի, միրմէ՛նէ, ցիրմէ՛նէ: Առաջին երկու օրինակներում հանդես են գալիս համապատասխան ստացական հոդեր՝ ս, ք, իրենց մշտական ի հենարանով, վերջին երկուսում՝ է հոդը: Սրանց նախորդող ն-ն (էն) կորցրել է հոդի արժեքը:

Եզակի երրորդ դեմքի դերանվան բացառականը վերլուծական կազմութիւն ունի՝ իր մընէն. սեռական հոլովածէին հարադրվում է մընէն մասնիկը:

Սեռականահիմք բացառականի այս ձևերը բարբառում երբե-վիցե ստացականի իմաստ են ունեցել, ապա սկսել են գործառել նաև իբրև անձնական դերանուններ՝ ամբողջովին չկորցնելով ստացականի նշանակութիւնը, այնպես որ իմմէ՛նսի նշանակում է ինձնից և իմից, ինչպես նաև ընձնէն, քըզնէն կարող են գործած-վել երկու իմաստով էլ:

Գործիական հոլովը ունի միօրինակ, մասնիկավոր կազմու-թիւն՝ տրականի հիմք + ն + օվ + հոդ՝ ընձնօվ(սի), քըզնօվ, իր-նօվ(է), մըզնօվ, ցըզնօվ:

Անձնական դերանունների հոլովման ամբողջական նախադասւոյցներն են՝

Ե զ ա կ ի

Ու. յէս	թուն	ինք
Ս. իմ(է)	քու (քումէ)	իր
Տ. ընձի//ընձիգի	քըզի//քըզիգի	իրան
Հ. յէսի	քէզի//քէզիգի	ինքի//ընքի//ինքըգի
Բ. ընձնէն//իմմէ՛նսի	քըզնէն//քումէ՛նթի	իրնէն//իր մընէ՛ն
Գ. ընձնօվ(սի)	քըզնօվ	իրնօվ(է)

Ն ո գ ն ա կ ի

Ու. մինք	թուք
Ս. միր	ցիր
Տ. մըզի//մըզըգի	ցըզի//ցըզըգի
Հ. մէզի//մէզիգի	ցէզի//ցէզիգի
Բ. մըզնէն//միրմէ՛նէ	ցըզնէն//ցիրմէ՛նէ
Գ. մըզնօվ	ցըզնօվ

Յուցական դերանուններից դերանվանական հոլովման հետքեր են կրում ըսի, ընի դերանունները, որոնք ունեն չորսական հոլովածև: Դերանվանական հոլովման յուրահատկությունները երևան են գալիս տրական հոլովում. որոշիչ հոդի դեր է կատարում $\ddot{u}$ ձայնավորը: Բացառականն ունի հետևյալ կազմությունը. տրական հոլովածև + ն(մ) + էն + է (հոդ ունեն միայն մ մասնիկով ձևերը): Գործիականն ունի երկու հիմքակազմություն. ուղղականի հիմք + օվ + է (պարտադիր չէ)՝ ըսօվ, ընօվ(է). գործիական հոլովածև (հնչյունադիմում՝ ըսօվ > ըսուվ) + օվ + է (կրկնակի վերջավորություն)՝ ըսուվօվ, ընուվօվ(է):

Հոլովման հարացույցն է՝

Ու. ըսի	ընի
Տ. ըսուր(ւն)	ընուր(ւն)
Բ. ըսուրնէն//ըսուրմէ՛նէ	ընուրնէն//ընուրմէ՛նէ
Գ. ըսօվ//ըսուվօ՛վ(է)	ընօվ//ընուվօ՛վ(է)

Դերանվանական հոլովման տարրեր է պարունակում նաև հարց.-հարաբերական վօվ դերանունը, որի հոլովման հարացույցն է՝

Ու. վօվ	վօվիր
Տ. վօր	վօվէրու
Հ. վօվի	—
Բ. վօր մընէ՛ն//վօրմէ՛ն	վօվէրէն (քիչ գործածական)
Գ. վօվօվ//վօրմօվ	վօվէրօվ ձևեր են)

Ուղղականի համեմատությամբ եզակի տրականում առկա է վ/ւ հերթագայություն, հիմքերը միևնույնն են: Հայցականի համար հիմք է ծառայում ուղղականը՝ վօվ, իսկ իբրև վերջավորություն՝ նույն ի-ն, ինչ անձնական դերանունների հայցական հոլովում. փաստորեն այս ի-ն անձնանիչ դերանունների հայցականի վերջավորությունն է բարբառում: Բացառականն ունի երկու կազմություն միևնույն տրական հիմքով. առաջինը՝ վերլուծական, երկրորդը՝ համադրական, գործիականը երկու հիմնային կազմություն ունի. ուղղական + օվ և տրական + մ + օվ:

**ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՇՈՒՐՋԸ**

(Պատմական ակնարկ)

**Դերանունների պատմական փոփոխությունները և
կազմավորումը**

Անձնական դերանունները հին հայերենի դերանունների համեմատությամբ ունեն որոշ հնչյունական տարբերություններ, դրանք են՝

Յէ հնչումը եւ դերանվան մեջ. ն-ի հավելումը և ե>ի հնչյունափոխությունը մինք դերանվան մեջ: Դ>ք հնչումը և ն-ի հավելումը թուն դերանվան մեջ. ն-ի կորուստը ինք (<ինքն) դերանվան մեջ. իրանք (<իրեանք) դերանվան եա>ն հնչյունափոխությունը, որ օրինաչափ չէ այս բարբառի համար, քանի որ եա-ն բարբառում սովորաբար հնչյունափոխվում է ի-ի (եա>է>ի):

Ցուցական դերանուններից՝ էս, էն-ը համապատասխանում են հին հայերենի այս, այն դերանուններին:

Ըսի, ընի դերանունների ծագումը Հ. Աճառյանը կապում է կ-ով հանգող դերանուններին՝ ըսիկ, էսիկ, ասիկ և այլն, որոնցից կ-ի անկմամբ առաջացել են ձայնավորահանգ ձևերը:

Ըսի, ընի դերանուններին զուգահեռ կիրառվող ըսսիգի, ընի-գի (ասիկ, ասիկա) դերանունների իկ(կ) մասնիկը Հ. Աճառյանը կապում է գրաբարի այս, այդ, այն ցուցականների երկար (մասնիկավոր) հոլովաձևերի-հետ՝ այսորիկ, այսմիկ և այլն, սակայն բարբառների կ-ով բառաձևերը համարում է հտգրաբարյան գոյացումներ¹⁹: Սրանց տրական հոլովաձևերը՝ ըսուր (ասոր), նա բխեցնում է գրաբարի այսւ հոլովաձևից՝ ո, ու ձայնավորը համարելով ուշ շրջանի հավելում՝ բարեհնչունության նպատակով²⁰: Սակայն այսւ-ի կողքին առկա այսորիկ ձևը տարակույս չի թողնում, որ բարբառային ասուր, իսուր, ըսուր հոլովաձևերը իրենց ու (ուր) հոլովիչով առնչվում են իրեն: Այսպիսով՝ ըսի/ըսսիգի-ըսուր տիպի հոլովումը ներկայանում է բարբառում իբրև գրաբարի այս, այդ, այն ցուցականների մասնիկավոր հոլովաձևերի ավանդ: Գրաբարը

19 Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 195:

20 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 2, էջ 246:

չունի մասնիկավոր ցուցականների եզակի ուղղականը և հայցականը, արդի բարբառները ունեն մասնիկավոր ուղիղ ձև (եզակի), սակայն թեք հոլովածներում կորցրել են մասնիկը, Կարելի է եզրակացնել, որ բարբառները պահպանել են հին հայերենում և գուցե ավելի վաղ գոյություն ունեցած *այսիկ, *այդիկ, *այնիկ ցուցականները, որոնց եզակի թեք հոլովածները և հոգնակին ամբողջությամբ ավանդված են գրաբարում, սակայն իրենք կանոնական չեն եղել և չեն գործածվել: Տիգրանակերտի բարբառում պարզ և մասնիկավոր ցուցականների կիրառության սահմանադատվածությունը բացատրվում է գրաբարյան սա, դա, նա շարքի բացակայությամբ, որի դերանվանական իմաստը բարբառում արտահայտվում է ըսի//ըսսիգի, ընի//ընիգի դերանուններով, իսկ որոշ չափին կիրառությունը բաժին է ընկնում էս, էն պարզ ցուցականներին:

Բարբառի ըսսիգի, ընիգի դերանունները Աճառյանը բխեցնում է ասիկ, աճիկ ձևերից՝ ա > ը հնչյունափոխությամբ, իսկ վերջահանգ ի ձայնավորը համարում է այն նույն ի հենարանը, որ բարբառում ուղեկցում է ստացական հոդերին²¹ (դունթի-տունդ): Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ ի հենարանը բարբառում գործառում է միայն ստացական հոդերի առկայությամբ, դժվարանում ենք կապ գտնել նրա և դերանվանական ի վերջահանգի միջև, մանավանդ որ ստացականի ի հենարանը չի շեշտվում, իսկ դերանվանական ի վերջահանգը շեշտակիր է: Մեզ թվում է, որ այս ի-ի բացատրությունը պետք է որոնել ըսսիգի, ընիգի ցուցականների և անձնական դերանունների տրական, հայցական մասնիկավոր հոլովածների՝ մըզըզի, ֆէզիգի, ինֆըզի կապի մեջ:

Ըսի, ընի ցուցականների հոգնակիները՝ ըստունք, ընունք հանգում են գրաբարի այսոքիկ, այնոքիկ հոգնակիներին հետևյալ ուղիով. ըստունք, ընունք < աստոնք, անոնք (արևմտ. գր. լեզու) < այսոք, այնոք (միջ. հայ.) < այսոքիկ, այնոքիկ (գր.):

Հօս, հօն դերանունները ավանդված են միջին հայերենից. Աճառյանը սրանք համարել է անստուգաբանի: Սրանցում առկա ս, դ, ն դերանվանական արմատական հնչյունները անուրանալի փաստ են այս դերանունների բնիկ, հայկական ծագման հավաս-

21 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 1, էջ 199—200:

տիւթյան համար: Սրանց ծագումը այժմ բխեցվում է յայս, յայն նախորդով հայցական ձևերից՝ այ > օ հնչյունափոխությամբ (հմմտ. պայման > պօման, պայծառ > պօծառ միջ. հայերենում)²²:

Սանց, նանց դերանունները (հմմտ. արևելահայ բարբառների էսէնց, էնէնց ձևերին) բաղադրված են միջին հայերենի այնց, էնց, հայնց, հանց, հէնց նուրանիշ բառերով (վերջիններս այն դերանվան գրաբարյան հոգնակի սեռական-տրականի քարացած հոլովաձևեր են²³): Բարբառներում հանց, հենց դերանվան իմաստի աստիճանական աղոտացման պատճառով կարիք է զգացվել ցուցականների հավելադրման, որոնք նպաստել են իմաստի ուժգնացած դրսևորմանը՝ այս, այդ, այն + հանց, հէնց: Տիգրանակերտի բարբառի սանց, նանց դերանունների համար ենթադրելի են *էսանց, *էնանց նախաձևեր, որոնցից է > ը հնչյունափոխությամբ՝ ըսանց, ընանց, ապա ը-ի անկմամբ՝ սանց, նանց:

ԹՎԻ և ՏՈՒՎԻ ԿԱՐԳԻ շՈՐՀՐ

Դերանունների Բ-ական ձևեր (մինք, թուք, իրանք և այլն) շարունակում է պահպանել հոգնակիի հին հայերենի ավանդույթները՝ ընդհանուր առմամբ, սակայն դերանունների հոգնակիացման վրա անվանականը իր ուժեղ կնիքն է դրել:

Անձնական դերանունների տրական հոլովի ի վերջավորութիւնը (ընձի, քրդի) նորագոյացում է դերանվանական հոլովման համակարգում, որը ամենայն հավանականությամբ կատարվել է հոլովական իմաստի առավել ընդգծման, արտահայտման պահանջով:

Անձնական դերանունների հայցական հոլովաձևի համար (առավել կայուն և ընդհանուր ձևով, քան տրականի) բարբառը հաստատել է ի հոլովանիշ վերջավորութիւնը և սահմանել հիմքերի ու վերջավորության զուգորդումների իրեն հատուկ կարգ, որը բարբառի ինքնատիպ արտահայտութիւններից մեկն է: Կորցնելով հին հայերենի հայցականի զ տարբերակիչ նախդիրը՝ բարբառը տարբերակման այլ միջոցներ է ընտրել՝ ձգտելով տրական և հայցական հոլովների ձևական տարբերակման պահպանմանը:

22 Մ. Մուրադյան, Բառագիտություն, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», էջ 249:

23 Նույն տեղում, էջ 249:

Անձնական դերանունների տրականահիմք բացառականի բըզ-
նէն, իրնէն, բնձնէն, մըզնէն, ցըզնէն ձևերը առնչվում են միջին
հայերենի ի ֆէզնէ, ի մէզնէ, ի ձէզնէ²⁴ հոլովաձևերին, որոնք անց-
ման օղակ են հանդիսացել բարբառի այս ձևերի առաջացման հա-
մար: Սրանցում առկա և մասնիկը կապվում է գրաբարի անձնա-
կան դերանունների բացառական հոլովաձևերին՝ յիճնէ, ի ֆէն,
ի մէնջ, ի ձէնջ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ միջին հայե-
րենում եզակի 2-րդ դեմքի դերանունը ուներ ի ֆէնէ (գրաբար
ի ֆէն + նոր հոլովանիշ է) և ի ֆէզնէ զուգահեռ ձևերը: Վերջինում
փոխված է միայն հիմքը, և մասնիկը առաջին ձևից համաբանու-
թյամբ անցել է նաև երկրորդին: Նույն ուղին պետք է ենթադրել և
մյուս դեմքերի համար՝ ի մէզնէ < ի մէնէ < ի մէնջ, ի ձէզնէ < ի
ձէնէ < ի ձէնջ:

Անձնական դերանունների սեռականահիմք բացառականը՝
իմմէ՛նսի, քումէ՛նթի, միրմէ՛նէ, ցիրմէ՛նէ, կապվում է հին հա-
յերենի ստացական դերանունների հոլովման համակարգին. հա-
մեմատել՝ Տիգ. բարբառ՝ իմմէ՛ն + սի — գրաբար՝ յիմմէ, միրմէ՛ն +
է — ի մերմէ, քումէ՛ն + թի — ի քումէ, ցիրմէ՛ն + է — ի ձերմէ, իր
մընէ՛ն — յիրմէ:

Միրմէ՛նէ, իմմէ՛նսի և այլ ձևերում հանդես եկող մէն հնչյու-
նախումբը միջին օղակ է վերլուծական բացառականի մէնէ (մը-
նէն) մասնիկի առաջացման համար: Մէ՛ն(է) ձևում է-ն դեռևս չի
կորցրել հոլովանիշի արժեքը, բայց նրան հաջորդող և հողը այլևս
չի գիտակցվում իբրև հող, ուստի կարիք է զգացվել երկրորդ՝ է
հոդի գործառույթյան: Այս վիճակից մինչև մէնէ՛ (մընէ՛ն) մաս-
նիկի ձևավորումը մի քայլ է. է հոլովանիշի մթագնում և վերջին է
հոդի ձևավորում իբրև հոլովանիշ, ուստի և նոր՝ և հոդի գործա-
ռույթյան անհրաժեշտություն. այս բոլորը արտահայտվում է շեշ-
տի տեղափոխությամբ նախորդ է-ից՝ վերջինի վրա՝ մէ՛նէ-մէնէ՛(ն)
մընէ՛(ն): Մէնէ՛ (մընէ՛ն) մասնիկի գործառույթյունը համաբա-
նությամբ դերանուններից տարածվել է նաև անձնանիշ (մասամբ
կենդանանիշ) գոյականների բացառականի կազմության վրա:

Հարց.-հարաբերական վով դերանվան տրական հոլովի վօր
(ում) ձևը համապատասխանում է հին հայերենի ոյր հոլովաձևին:

24 Հ. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 2, էջ 246:

Բայակազմություն

Ինչպես հայերենի բոլոր գրականություններում, Տիգրանակերտի բարբառում նույնպես բայերն ունեն բաղադրյալ²⁵ կազմություն: Բայական բաղադրությունները լինում են համադրական և հարադրական բնույթի: Համադրական կազմությունները ընդհանուր առմամբ ունեն երկու տիպի կառուցվածք՝ անբայածանց և բայածանցավոր: Անորոշ ձևում սրանց հատուկ են իլ և իլ/ալ վերջավորություններ: Անբայածանց կազմություններում այս վերջավորություններին իբրև հիմք կարող է նախորդել բայարմատ (ուղ-իլ, գնդ-իլ), անվանական արմատ կամ բաղադրություն (գնդարմ-իլ, բնդ-իլ, անփափեղն-իլ), փոխառյալ արմատ (ֆլեք-իլ, բըշ-իլ, թնդ-իլ), կրկնավոր արմատ (փրսփրս-իլ, չրփչրփ-իլ, գրգրգրալ, հըլհըլ-իլ, փրփր-իլ): Անբայածանց կազմությունները ամբողջապես բայական ելակետային կամ սկզբնական բուն ձևեր են:

Բարբառը միավանկ բայեր չունի. գալ, տալ, լալ, կամ բայերը ունեն ի նախահավելված և երկվանկանի են՝ իգալ, իդալ, իլալ, իգնալ:

Բայածանցավոր կազմությունների կառուցվածքն է՝ արմատ (պարզ կամ բաղադրված) + բայածանց + բայական վերջավորություն: Տիգրանակերտի բարբառում գործածվում են հետևյալ բայածանցները՝ ն և ձայնավոր + ն (ան, էն, ըն), ցրն և ձայնավոր + ցրն (բցրն, անցրն), վ (ըվ), օդ, ըդ, դը, գըդ, ըրդ, ք, ո: Սրանցից ն, ան, էն, ըն-ը բայական բաղադրության (մշտական) ածանցներ են, և դրանք պարունակող բայածանցները ելակետային կամ սկզբնական բուն ձևեր են, օրինակ՝ հանքնիլ, փանխիլ, գըբնալ, թրոնալ, խըլանալ, ուշանալ, հանքնալ, ունէնալ, հանգընալ, անդընալ և այլն: Մյուս բայածանցները ածանցող են, այսինքն՝ բայական բուն և հարաբերական սկզբնաձևերից ածանցում, կազմում են նոր բայեր, օրինակ՝ սիրիլ-սիրցընիլ, փանխիլ-փանցընիլ, հանգընալ-հանգըցընիլ, գնդարմ-գնդարմացիլ, փանցընցընիլ-փանցընցընիլ, սիրցընիլ-սիրցընիլ, չըրիլ-չըրօդիլ, գըռվիլ-գըռվըդիլ, մանգըրիլ-մանգըրդիլ-մանգըրդըլիլ:

Նշված ածանցներից սաստկական իմաստ արտահայտող և հատուկենտ օրինակներում հանդիպող գըդ, ըրդ, ք, ո ածանցները

²⁵ Տե՛ս Ա. Արամյան, Բայը ժամանակակից հայերենում, հատ. 1, Երեւան, 1962:

գրեթե մթազնված են և չեն գիտակցվում իբրև աշխարհին. որոշ վերապահութամբ ենք դրանք մտքերի բայածանցների շարքը, մանավանդ որ բարբառը շունի դրանք կրող բառերի անածանց ձևերը, օր.՝ օրըջգըղալ, ջանգըրդիլ, լըղջըրթիլ, թէփուիլ և այլն: Սրանք բարբառի սահմաններում բուն սկզբնաձևեր են, քանի որ այդ ածանցները բայական բաղադրության ածանցներ են:

Ածանցավոր կազմությունն ունեցող բայաձևերից անորոշի իլ վերջավորության հետ են զուգորդվում ն, ցըն (ըցըն//անցըն), վ և օդ, ըդ, դը, ըդդ, ք, ո ածանցների պարունակողները. անորոշի ան/ալ վերջավորության հետ զուգորդվում են ն, ան, էն, ըն, գըդ ածանցների ունեցողները: (Ն ածանցով հիմքերը կարող են զուգորդվել և՛ իլ և՛ ան/ալ վերջավորությունների հետ):

Ածանցող ցըն և ըցըն/ըցն//անցն բայածանցներով բայերի կազմության համար սկզբնաձև են հանդիսանում՝

ա) պարզ (անբայածանց) բայերը՝ անորոշի հիմքով, օրինակ՝ անդալ-անդընիլ, գարթալ-գարթանիլ, խըմիլ-խըմցընիլ, փըրթիլ-փըրցընիլ (թ-ի սղումով), գայնիլ-գայնըցնիլ և այլն:

բ) ն, ըն, ան, էն ածանցներով բայերը՝ ն/ցըն, ըն/ըցն//ըցըն, ան/անցն, էն/ըցն ածանցների հերթազայություններով՝ թըռնալ-թըռցընիլ, իմնալ-իմցընիլ, թուլնալ-թուլցընիլ, գօրնիլ-գօրցընիլ, գարջընալ-գարջըցընիլ, հասգընալ-հասգըցնիլ, գըշգանալ-գըշգանցնիլ, հարփէնալ-հարփըցընիլ, ուշանալ-ուշանցնիլ և այլն:

Ածանցող վ(ըվ) բայածանցով բայերի կազմության մեջ իբրև սկզբնաձև հանդես են գալիս ներգործական սեռի՝

ա) անորոշում իլ վերջավորությունն ունեցող պարզ և ն (մասամբ), օդ, ըդ, դը, ըդդ ածանցներով բայերը՝ անորոշի հիմքով, օրինակ՝ հաքնիլ-հաքընվիլ, առնիլ-առնըվիլ, օլըրիլ-օլըրվիլ, փըրթիլ-փըրթվիլ, թուրիլ-թուրվիլ, գըրգիլ-գըրգըվիլ, բըւիլ-բըւըվիլ, մանդըրդիլ-մանդըրդըվիլ, փըշըրդիլ-փըշըրդըվիլ, մըրօդիլ-մըրօդվիլ:

Ն ածանցով անորոշում ան/ալ վերջավորությունն ունեցող մի շարք բայեր դարձյալ անորոշի հիմքով են կազմում կրավորական բայ, օր.՝ դըսնալ-դէսնըվիլ, քըննալ-քըդնըվիլ (սրանք նախկին ել վերջավորությամբ բայեր են):

բ) Անորոշում ան/ալ վերջավորությունն ունեցող պարզ և ն, ան, ըն ածանցներով բայերը՝ անցյալ կատարյալի հիմքով՝ գարթալ-գարթանցվիլ, անդալ-անդընցվիլ, մօռնալ-մօռցըվիլ, իմնալ-իմցըվիլ,

հասգրնակ-հասգրցվիլ և այլն, նաև՝ թընիլ-թըրվիլ, դանիլ-դանվիլ (իլ վերջավորությամբ):

գ) Յրն, ըցրն//ըցն//անցն ածանցներով բայերը՝ ն/վ հերթագայությամբ, օր.՝ փանցրըցնիլ-փանցրըցվիլ, փանցըցնիլ-փանցըցվիլ, թրոցըցնիլ-թրոցըցվիլ, փրցըցնիլ-փրցըցվիլ և այլն:

Հարադրական կազմությունները բարբառում առատ են և շատ գործածական: Իբրև հարադրության բայական մաս գործառում են էնիլ, էղնակ, առնիլ, իդակ և այլ բայեր: Հարադրության ոչ բայական մասում հանդես են գալիս ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ բառեր, օր.՝ անգանջ էնիլ, գանջ էնիլ, բանաբ գանգիլ, բազար էնիլ, ռազի էղնակ, բանանիշ էնիլ, թիքսըմիշ էղնակ և այլն:

Իդակ բայի և անորոշ ձևով դրված մի այլ բայի հարադրությամբ կազմվում են պատճառական խմաստով բայեր՝ շինիլ իդակ (շինել տալ), քըրիլ իդակ (գրել տալ) և այլն:

Հիմնականություն

Քարբառը թե՛ անդեմ, թե՛ դիմավոր բայերի կազմության մեջ երևան է հանում բայական երեք հիմք, որոնցից երկուսը բուն հիմքեր են, իսկ երրորդը ձևավորված է դերբայական վերջավորությամբ:

Բուն հիմքերն են անորոշի և անցյալ կատարյալի կամ կատարյալի հիմքերը: Կազմությամբ սրանք լինում են պարզ կամ արմատական և բաղադրյալ: Բաղադրյալ հիմքերի կառուցվածքն է բայարմատ + հիմնածանց: Հիմնածանցները կամ համընկնում են բայածանցների հետ, կամ չեն համընկնում:

Անորոշի հիմքը պարզ է համարվում այն դեպքում, երբ զուրկ է բայածանցներից, ինչպես՝ հեվ-ակ, խօս-ակ, փրլփրլ-ակ, գողրիլ, սըղ-իլ և այլն:

Անորոշի բաղադրյալ հիմքում գործառում են բայածանցները, նաև իբրև հիմքածանց. քանի որ բայածանցների մասին խոսվել է նախորդ ենթաբաժնում, այստեղ կբավարարվենք միայն բաղադրյալ հիմքերի օրինակներով՝ դըսն-ակ, ուշան-ակ, ունէն-ակ, մօդգըն-ակ, գէրցըն-իլ, իշըցն-իլ, մօդգըցըն-իլ, թըփօդ-իլ, գանդըդ-իլ, թէփո-իլ, անըլվ-իլ, հասգըցվ-իլ, փըշըրդըվ-իլ, հանքըցվ-իլ:

Կատարյալի հիմքով կազմված կրավորական (վ-ական) բայերի անորոշի հիմքում փաստորեն վ բայածանցին նախորդում է կատարյալի հիմքածանցը, իսկ բազմաստիկական և պատճառա-

կան բայերից կազմված կրավորական բայերի անորոշի հիմքը կրկնածանց է՝ օդ+վ, դր+վ, ցրն+վ=ցրվ:

Կատարյալի հիմքը արմատական է այն դեպքում, երբ համընկնում է բայարմատի հետ. արմատական է ն ածանց ունեցող բայերի մի մասի կատարյալի հիմքը, որից ն ածանցը դուրս է ընկնում, օր.՝ հնքնիլ-հնք, անցնիլ-անց, առնիլ-առ, գորնիլ-գոր, փանխիլ-փանխ, էղնալ-էղ, իշնալ-իշ, դըսնալ-դէս և այլն:

Կատարյալի հիմքում երբեմն վերականգնվում են այն ձայնավորները կամ բաղաձայնները, որոնք անորոշի հիմքում հնչյունափոխված կերպարանք ունեն, օր.՝ դըսնալ-դէս (դիս), իշնալ-իշ, մըննալ-մըդ, քըննալ-քըդ, խննալ-խնն:

Կատարյալի բաղադրյալ հիմքը լինում է բուն հիմքածանցավոր և հերթագայական: Բուն հիմքածանցավոր հիմքը ունի վերջադրական կազմություն՝ անորոշի հիմք+հիմքածանց: Հիմքածանցն է ց-ն, որին կարող են նախորդել նաև/ա, է (շեշտի տակ՝ ի) լծորդ ձայնավորները: Այսպիսի հիմք ունեն նաև/ա և է (շեշտի տակ՝ ի) լծորդության պարզ և բազմապատկական ածանցներ ունեցող բայերը (վերջինների միայն ներգործական սեռ ունեցողները), օրինակ՝ քըրիլ-քըրէց (քըրից), թօղիլ-թօղէց (թօղից), անթէղիլ-անթէղէց (անթէղից), մընալ-մընաց, օռնալ-օռնաց, խօսալ-խօսաց, էրէրալ-էրէրաց, խնդալ-խնդց, ժածալ-ժածց (վերջինները առանց լծորդ ձայնավորի), գողըրդիլ-գողըրդէց(-ից) և այլն:

Հերթագայական հիմքը բնորոշվում է բայածանցների և կատարյալի հիմքածանցների հերթագայություններով, ըստ որում, այս ընթացքում լծորդ ձայնավորները մեծ մասամբ անփոփոխ են մնում: Առկա են հետևյալ հերթագայությունները.

ա) ն/ց — կատարյալի հիմքում այսպիսի հերթագայություն ունեն նաև/ա լծորդության ն, ան, էն, ըն ածանցներով բայերը, օրինակ՝ քօղնալ-քօղց, թուլնալ-թուլց, իմնալ-իմց, ամըննալ-ամընց, վըլննալ-վըլնց, հարփէնալ-հարփէց, ցանգանալ-ցանգաց, քրիձէնալ-քրիձէց, փանալ-փաց, լըննալ-լըց (լից), քիճնալ-քիճց (դ-ի վերականգնմամբ):

բ) րն/ուց — այսպիսի հերթագայություն ունեն կատարյալի հիմքում պատճառական ցրն, բցրն/բցն/նցն ածանցներ ունեցող բայերը. սրանցում բայածանց ց-ի և հիմքածանց ց-ի արանքում ի հայտ է գալիս ու ձայնավոր (գր.՝ ոյ>ու, սիրեցոյց>սիրցուց). օր.՝ հնքընիլ-հնքըուց, փըրցընիլ-փըրցուց, իմցընիլ-իմցուց, բառըրցընիլ-բառըրցուց և այլն:

դ) Ն/Ր — կատարյալի հիմքում նման հերթագայություն ունեն մի քանի անկանոն բայեր՝ դանիլ-դանր, էնիլ-էր, թընիլ-թըր (այլ օրինակների չենք հանդիպել)։

Կատարյալին հատուկ է նաև տարահիմքությունը։ Տարահիմք բայերը շատ չեն բարբառում, հանդիպած օրինակներն են՝ ուղիլ— ուղ-գէր (գի՛ր), իդիլ—իդ-դըվ//դըվէց (հը՛ դո՛ւր), իքիլ—իք-էգ, էրթիլ—էրթ-քից//քընից//քըն (առաջին ձևում ն-ն ընկել է)։

Երրորդ հիմք բայի անորոշ ձևն է, որն անվանվում է դեր-բայական հիմք և միայն անդեմ բայեր է կազմում։ Տիգրանակերտի բարբառում այս հիմքով կազմվում է ընթացակցական դերբայը՝ խօսարէն, գրովրդէլէն, ուղէլէն, հէվիլեն և այլն։ Անորոշի -իլ վերջավորությունը շեշտազուկվելով՝ լինում է էլ։ Այսպիսով՝ երրորդ հիմքի գործառությունը խիստ սահմանափակ ոլորտ է ընդգրկում։

Բարբառում ոչ բոլոր բայերն են եռահիմք։ Բայերի մի մասը ձևաբանական մակարդակում չի տարբերակում անորոշի և կատարյալի հիմքերը, դրանք հանդես են գալիս միևնույն՝ անորոշի հիմքի ձևով. այստեղ առկա է քերականական համանունություն՝ բայական երկու հիմքերի միջև։ Այդ բայերն են ի լծորդության չեզոք սեռի պարզ բայերը՝ նըսդիլ, հօդիլ, հիւլնիլ, անբիլ, բանիլ (անց. կատարյալը՝ նըսդ-ան հօդ-անլ, հիւլն-ա, անբ-ան, բան-ա), ի լծորդության կրավորական (վ-ակազմ) բայերը՝ սիովիլ, անանիլ, խըզգըվիլ (սիով-ան, անանիլ-ան, խըզգըվ-անլ), չեզոք սեռի բազմապատկական ածանց ունեցող բայերը՝ գըովըդիլ (գըովըդ-ան)։

Սեռի կարգը

Սեռի կարգը հատուկ է հայերենի բային ընդհանրապես։ Տիգրանակերտի բարբառում ևս բայերը ունեն սեռի իմաստա-ձևային արտահայտություն, որը իրացվում է ներգործական, կրավորական և չեզոք սեռերի միջոցով։ Քանի որ նշված սեռերը իմաստային որևէ նորություն չեն պարունակում բարբառում, ուստի կծանրանանք դրանց արտահայտման բարբառին հատուկ միջոցների նկարագրության վրա։ Այդ միջոցները հիմնականում ձևաբանական են և երկու ընդհանուր կետ են ներկայացնում. ա) սեռի ածանցակազմական արտահայտություն և բ) սեռի վերջամասնիկավոր արտահայտություն։

Ա) Սեռածանցն է վ-ն, որը ի հակադրություն Խեղդործական սեռի բայերի, կազմում է կրավորական և չեզոք սեռի բայեր: Կարելի է ասել, որ վ սեռածանցը բարբառում դադարել է զուտ կրավորանիշ լինելուց, և նրանով օժտված բայերի մեծ մասը գործածվում է նաև (և ավելի հաճախ) չեզոքության իմաստով: Հաճախ կրավորական ածանց ունեցող բայը բաղմիմաստ է լինում, որով և պայմանավորվում են նրա տարբեր սեռային առումները, օր.²⁶ օլլըրվիլ—նշանակում է 1) զբոսնել, ման գալ (չեզոք սեռ) և 2) ոլորվել (կրավոր. սեռ), անգնդվիլ — 1) ծննդաբերել (չեզոք), 2) ազատվել (կրավ.), գնդվիլ — 1) բաժանվել, առանձնանալ (չեզոք) և 2) անջատվել (մի բան մի բանից), քըմվիլ — 1) սըրտնեղվել, վատ զգալ (չեզոք) և 2) քամվել (կրավ.), թուրվիլ — 1) հարդարվել, կռվել, կազդուրվել (չեզոք) և 2) ուղղվել, հարթվել (կր.), առնըվիլ — 1) վերավորվել, նեղանալ (չեզոք) և 2) առնըվել, վերցվել (կրավ.), թըրվիլ — 1) դրվել (կրավ.) և 2) համառել, մերժել մի բան (չեզոք):

Չեզոք սեռի իմաստ են արտահայտում նաև անդրադարձ և փոխադարձ գործողություն ցույց տվող բայերը՝ հանքընվիլ, վլանցվիլ, բանքընվիլ, անձընվիլ, փըզվիլ (զգվառվել), փըթվիլ (փաթաթվել), սանդըրվիլ, դեսնըվիլ (միմյանց տեսնել, հանդիպել) և այլն:

Կրավորական ածանց²⁶ ունեցող մի շարք բայեր բարբառում չունեն համապատասխան անածանց ձևերը և հանդիսանում են բայական բուն սկզբնաձևեր: Դրանք հեղհեղուկ են իրենց արտահայտած սեռային իմաստներով, քանի որ մինչև անգամ ներգործական սեռի իմաստ էլ են դրսևորում, դրանցից են էրվիլ—այլնլ և այրվել (ներգ. և կրավ.), թանբըլվիլ—թավալվել (չեզոք), ղըլլըխվիլ—սահել (չեզոք), ցօղվիլ—ողողել (ներգ.), նէղվիլ—վերավորվել, նեղանալ (չեզոք), բըլլըվիլ—փարվել, փաթաթվել, կպչել ամուր (չեզոք), անլէյվիլ—անհամանալ, անալիանալ (չեզոք) և այլն:

Որոշ վերապահություններ կարելի է սեռածանցներ համարել նաև պատճառական ցըն, բցըն//ըցն//անցըն ածանցները, քանի որ դրանք ի վիճակի են չեզոք սեռի բայերը վերածելու ներգործականի, ինչպես օրինակ՝ անղիլ (արթնանալ)-անղըցընիլ (արթնացնել), իշնանլիշըցնիլ, գանջընանլ—գանջըցընիլ, փըրթիլ-փըրցընիլ և այլն:

²⁶ Կրավորական բայերի կառուցվածքը ներկայացված է «Բայականություն» ենթաբաժնում:

Պատճառական փրցրենիլ (պոկել, սկսել), ժամցրենիլ (շար-
ժել), վերցրենիլ, հանցրենիլ, քարցրենիլ (փսխել, ետ տալ) բայերը
իրենց արտահայտած իմաստներով բավական հեռու են պատճա-
ռականությունից: Սրանցից առաջին չորսը ներգործական սեռի
բայեր են, հինգերորդը՝ չեղոք սեռի: Առաջին երկուսի անաժանց
ձևերը՝ փրքիլ (պոկվել) և ժամալ (շարժվել), չեղոք, հազվադեպ՝
կրավորական իմաստ դրսևորող բայեր են:

Բ) Սեռի վերջամասնիկավոր արտահայտությունը իրագործ-
վում է դիմանիշ և դերբայական վերջավորությունների միջոցով:

Դիմանիշ վերջավորություններով սեռերի տարբերակումը պայ-
մանավորված է բայի լծորդությամբ: Անորոշ ձևում իլ վեր-
ջավորություն ունեցող բայերը խոնարհման ընթացքում երևան են
հանում երկու լծորդություն՝ է և ի: Է լծորդությունը առկա է առհ-
մանական ներկա, ըղձական և հարկադրական ապառնի ժամա-
նակաձևերի եզակի 3-րդ դեմքում և եզակի հրամայականում, օր.
քրիլ-գրքրէ, քրէ, մըն քրէ, քրէ՛: Այս նույն ձևերում ի լծոր-
դության բայերը է-ի փոխարեն ունեն ի՝ նըսդիլ-գընըսդի, նըսդի,
մըն նըսդի, նըսդի՛: Հարցն այն է, որ Տիգրանակերտի բարբառում
օրինաչափորեն անորոշում իլ ունեցող ներգործական սեռի բա-
յերը է լծորդության են պատկանում, իսկ չեղոք և կրավորական
սեռի բայերը՝ ի լծորդության. եթե ներգործական սեռի բայերը
ներկայի 3-րդ դեմքում լինում են գըստէ, գըգըդրէ, գըսիրէ, գըս-
բընէ, գըփըրգէ, գըփէրէ, գըփըրթէ, գըհանէ, գօլըրէ, գըհսգը-
ցընէ, գէրէրցընէ, գէոսցընէ, գըփնիսցընէ և այլն, ապա չեղոք և
կրավորական սեռի բայերը լինում են գաբրի, գանցնի, գըհօդի,
գընգնի, գընըսդի, գըգըմլըդի, գըմէոնի, գըհալնի, գըլօքի, գըցնա-
քի, գըփըջի, գըբըզզի (սառչում է), գըչըրօդի, գօլըմլի, գըքըմլի
(բացառություն է վազգիլ բայը, որը չեղոք սեռի լինելով՝ խո-
նարհվում է է լծորդով՝ գըվազգէ, վազգէ և այլն):

Հաճախ ներգործական սեռի բայերը չեղոք կամ կրավորական
իմաստ արտահայտելու համար ի վերջավորությամբ զուգաձև են
ունենում, օրինակ՝ գըգըդրէ (կտրում է), գըգըդրի (կտրվում է),
գըփըլէ (փլում է), գըփըլի (փլվում է), գալրէ (ալվերում է), գալ-
րի (ալվերվում է), գըհալէ (հալում է), գըհալի (հալվում է, հալ-
չում է) և այլն:

Սեռային տարբերությունները դրսևորվում են նաև անցյալ
կատարյալի դիմանիշ վերջավորություններով: Չեղոք սեռի (պարզ
և բազմապատկական) և կրավորական սեռի ի լծորդության բա-

յերը ունենում են ն, նր, նվ, ննք, նք, նն վերջավորութուններ, օր.՝ հնվնն, հնվննր, հնվննալ, օլլրվն, օլլրվնր, օլլրվնալ և այլն, իսկ է լծորդության ներգործական սեռի բայերը՝ ի, իր, Ø, ինք, իք, ին՝ սիրէցի, սիրէցիր, սիրից, փախցուցի, փախցուցիր, փախցուց և այլն: Սեռերի ձևաբանական տարբերակման հարցում հատկանշական է նաև չեզոք (պարզ և բազմապատկական) և կրավորական սեռի բայերի հիմնականությունը՝ անորոշի և կատարյալի հիմքերի նույնականությունը, ի հակադրութուն ներգործական սեռի բայերի:

Ներգործական սեռի որոշ բայեր հաճախ չեզոք և կրավորական իմաստներ արտահայտելու համար եզակի 3-րդ դեմքում ունենում են նվ վերջավորությամբ զուգաձև, օր.՝ գողից (կոտորեց)||գողնալ (կոտորեց), թափից (թափեց)||թափնալ (թափեց), նվրից (ավերեց)||նվրնալ (ավերեց), հնլից (հալեց)||հնլնալ (հալեց), փրշրից/փրշրնալ (փրշրեց), մրբողից/մրբողնալ (մրտալեց), զրգոգողից/զրգոգողնալ (կեղտոտալեց): Երբեմն ներգործական սեռի բայը միևնույն ձևով էլ կարող է արտահայտել նաև կրավորական իմաստ, օր.՝ բըշիլ — սկսել և սկսվել, նվրիլ — ավերել և ավերվել (չունեն վ-ակազմ ձևեր):

Դերբայական սեռանիշ վերջամասնիկներն են հարակատար դերբայի ուզ և մի քանի օրինակներում երևան եկող, ոչ տարածված ման վերջավորութունները: Սրանցից առաջինը գործառում է և՛ չեզոք, և՛ ներգործական բայերի հետ, բայց միայն ներգործական սեռի բայերից կազմում է կրավորական բայեր (չեզոքները մնում են չեզոք), իսկ ման-ը միայն ներգործական բայերի հետ է գործառում՝ վերածելով դրանք կրավորականի, օրինակ՝ էրվուզ (վառված), գախուզ (կախված), փօցուզ (փորձված), փրլուզ (փրված), էփուզ (եփված), շարուզ (շարված), քրգման (զգված), նիշանման (նշանված), վառման (վառված), նըխշման (նախշված), դաբգրման (տապալկված), շարման (շարված):

(Ման-ով ձևերը միայն որոշային և մակբայական կիրառություն ունեն, իսկ ուզ-ով ձևերը լինում են նաև ստորոգելիական վերադիր):

Այսպիսով՝ ա) բարբառի բայական համակարգում առկա են երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք: Խոնարհման հարացույցներում ձևաբանորեն ներգործական սեռին հակադրված են կրավորական և չեզոք սեռերի բայերը. վերջիններս միմյանց միայն իմաստով են հակադրվում և հանդես են գալիս ձևաբանական

նույն արտահայտություններով. կարելի է մինչև իսկ համարձակ ասել, որ կրավորական և չեզոք սեռերի միջև տարբերակվածությունը շատ թույլ արտահայտություն ունի բարբառում, այն էլ միայն շարահյուսական մակարդակում՝ իմաստով, ձևաբանական մակարդակում դրանք նույնացած են և միասին հակադրվում են ներգործական սեռին:

բ) Վ-ակազմ ձևերում չեզոքության իմաստը գերիշխում է, կրավորականը նահանջում, սակայն դերբայական կազմություններում առավել ցայտուն է արտահայտված կրավորական իմաստը:

գ) Է և Ի լծորդ ձայնավորները և անցյալ կատարյալի դիմանիշ վերջավորությունների երկու խմբերը որոշ վերապահություններ կարելի է անվանել նաև սեռանիշ:

դ) Սեռանիշություն կարելի է համարել նաև հիմքակազմության այն առանձնահատկությունը, որ չեզոք (պարզ և բաղմապատկական) և կրավորական սեռի բայերը ձևով չեն տարբերակում անորոշի և կատարյալի հիմքերը:

ԲԱՅԻ ԱՆԴԵՄ ՈՒ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐԸ

Անդեմ բայեր

Բարբառը ունի բայի չորս անդեմ ձևեր՝ անորոշ, հարակատար, ենթակայական և ընթացակցական²⁷, և մեկ հիմքային դերբայական ձև՝ վաղակատար: Չորս անդեմ ձևերը խոսքի մեջ ունեն անկախ գործածություն. դրանցից առաջին երեքը բնորոշվում են անվանական հատկանիշներով և կարող են թեքվել փոխանվանաբար, իսկ չորրորդը չթեքվող է, քանի որ ծագմամբ ինքնին թեքված ձև է: Վաղակատարը հիմքի²⁸ դեր է կատարում խոնարհման վերլուծական ձևերի մեջ՝ ստանալով օժանդակ անկախ «վերջավորություններ»՝ հանձին իմ (<եմ) բայի խոնարհված ձևերի:

Ա ն ո Ր Ո Շ

Բայի անորոշ ձևը բարբառում ունի իլ և ան/ալ վերջամասնիկներ, որոնց նախորդում է անորոշի հիմքը²⁹: Իլ վերջավորու-

27 Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:

28 ՏԵՄ Գ. Զանուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 265: Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971, էջ 58:

29 ՏԵՄ սույն աշխատության «Բայակազմություն» և «Հիմքակազմություն» ենթաբաժինները:

թյուն ունեն դիմավոր ձևերում ի և է լծորդ ձայնավորներ ունեցող բայերը. սրանց անորոշի վերջավորությունները նույնացել են շեշտի տակ ե>ի հնչյունափոխության հետևանքով: Այս դեպքում ուրեմն անորոշի վերջավորության ի լծորդը ամբողջապես չի համընկնում դիմավոր ձևերում առկա լծորդ ձայնավորներին, օր.[՝] քրիլ, նըսդիլ, մանիլ, փըրթիլ, ընգընիլ, էրվիլ, թըռցընիլ, գըռվըդիլ, գըղըրդիլ և այլն: Այլ/ալ վերջավորություն ունեն դիմավոր ձևերում ան/ա լծորդ ձայնավոր ունեցող բայերը, օրինակ՝ խննալ, խօսնալ, մըննալ, մօռնալ, իշնալ, իմնալ, փնարընալ, հնարփէնալ, մօղգընալ, հիյլալ, հէվալ և այլն: Բայի անորոշ ձևը փոխանվանաբար կիրառվելիս տրական հոլովում ստանում է ու հոլովանիշ. կարող է գուգորդվել որոշիչ և ստացական հոգերի հետ, հոգնակիություն չունի: Ի վերջավորություն ունեցող բայերը թեք հոլովաձևերում ունենում են ի>է հնչյունափոխություն, օրինակ՝

Ու. խննալ	մանիլ
Տ. խննալու	մանէլու
Բ. խննալէն	մանէլէն
Գ. խննալով	մանէլով

Բայի անորոշ ձևը նախադասության մեջ գործառում է իբրև ենթակա, վերադիր, հատկացուցիչ, խնդիր և պարագա, օրինակ՝ ենթ.— Իր ինչ էղնալէ գըհնարգըդի: Ուղ. խնդիր— Յէս խննալէ մօռցիր իմ: Վերադիր— Ըսի խննալ է: Հատկացուցիչ— Խօսնալու անդին չունիմ: Նպատ. պարագա— Գէրթնալ լօգնալու: Ձևի պարագա— Խօսնալով գէրթէր: Պատճ. պարագա— Չիս խօնջէննալ շաղ խօսնալէն: Ժամ. պարագա— Չայէ (գետը) բըզզէլուն իմ էղիր:

Հ ա ր ա կ ա տ ա ր

Բայի հարակատար ձևը բարբառում ձևավորվում է ան/աձ, ուզ և երբեմն ման (ըման) վերջամասնիկներով: Սրանց նախորդում են անորոշի և կատարյալի հիմքերը:

Հարակատարը անորոշի հիմքով են կազմում ի և է լծորդության պարզ, կրավորական և բազմապատկական ածանցներով բայերը, օրինակ՝ շնրիլ-շնր-ան/շնր-ուզ/շնր-ման, էփիլ-էփ-ան/էփ-ուզ, էրվիլ-էրվ-ուզ, շնրվիլ-շնրվ-ան/շնրվ-ուզ, մըրոդիլ-մըրօդ-ան/մըսդիլ-նըսդ-ան/նըսդ-ուզ, նըխշիլ-նըխշ-ան/նըխշ-ուզ/նըխշ-ըման, գնիլ-գնի-ուզ/գնի-ան և այլն: Հարակատարը կատար-

յալի հիմքով են կազմում ան/ա լծորդության պարզ, և, ան, էն, ըն ածանցներով և պատճառական բայերը, օրինակ՝ թընիլ-թըր-ան, էրթալ-քանց-ան, իդալ-դըվ-ան/դըվ-ուզ, խանալ-խանց-ան, մըն-նալ-մըդ-ան, ընգընիլ-ընգ-ուզ, քինալ-քիդց-ան, դըսնալ-դէս-ան, առնիլ-առ-ան, փախցընիլ-փախցուց-ան, քընցընիլ-քընցուց-ան. բացառություններ են՝ վըլանալ-վըլան + էլ + ուզ, սա ունի լվացվե-լիլ-վանալիլ իմաստը և կազմված է ուղղակի ածորոշ ձևով՝ ան > է հնչյունափոխությամբ. կա նաև դրա կանոնավոր զուգաձևը՝ վըլանց-ուզ/վըլանց-ան: Քըխնէնալ-քըխց-ան, հանրփէնալ-հանրփ-ան, որոնց հիմքը արմատական է, առանց հիմքածանցի. հարակատարի այս ձևերը այս բայերի ածանցավոր և երբեմնի անածանց ձևերի համարդրության արդյունքն են (արբենալ/արբել): Ան վերջամասնիկով կազմվում են ներգործական, չեզոք և հազվադեպ կրավորական սեռի բայեր, ըստ որում վերջինները անպատճառ վ ածանցով:

Ուզ վերջամասնիկով կազմվում են չեզոք և կրավորական սեռի բայեր առանց վ ածանցի³⁰ ներգործական սեռի բայերից, օր.՝ նըսդիլ-նըսդուզ, քըննիլ-քըննուզ, թըշիլ (ապշել)-թըշուզ, անդիլ (արթնանալ)-անդուզ. չեզոք սեռի բայերը սեռային փոփոխության չեն ենթարկվում, բայց՝ էփիլ-էփան (եփած)—ներգործ. սեռ.— էփուզ (եփված)—կրավ. սեռ, շարիլ-շարան (շարած)—ներգ. ս.— շարուզ (շարված)—կրավ. սեռ: Ոչ բոլոր բայերն են, որ կարող են ունենալ ան-ով և ուզ-ով զուգաձևեր: Ուզ-ով հարակատար են կազմում ընդհանրապես չեզոք սեռի բայերը և այն ներգործական սեռի բայերը, որոնք վիճակային, ոչ ակտիվ գործողության իմաստ են արտահայտում: Իսկ ան-ով հարակատար կազմում են ակտիվ գործողություն ցույց տվող բայերը, օր.՝ հանքան, քանան, գէրան, ձէձան, ուզան, բիլլան, էզան, մըդան, քիդան, ցէթան, էդան, խըման, հանան, վանան, իքան, քանան և այլն, սրանց ուզ-ով ձևերը գործածական չեն: Պատճառական բայերը նույնպես իբրև ակտիվ գործողության բայեր, ուզ-ով հարակատար չեն կազմում, այլ միայն ան-ով: Վիճակ ցույց տվող հանրփան, ձառվան, քըխան և օղորման բառերը բացառություն են. ըստ երևույթի սրանց մոտ անվանականի տարրը ավելի ուժեղ է բայականից (օր.՝ ձառվան—նշանակում է ծառով, օղորման՝ հանգուցյալ):

Ման (ըման) վերջամասնիկով ընդամենը մի քանի բայաձև է հանդիպել մեր նյութերի մեջ: Պետք է ենթադրել, որ դրանք բար-

30 Վ ածանցով բայերից՝ հազվադեպ (էրվուզ, փըզվուզ):

բառին շատ հարազատ ձևեր չեն և ըստ երևույթին մնացուկային են կամ բարբառային խառնուրդի արդյունք։ Ման մասնիկը զուգորդվում է միայն անորոշի հիմքին և կազմում կրավորական իմաստով բայեր, օր.՝ քրդիլ-քրդ-ման (գզված), նըշանիլ-նիշան-ման (նշանված), վառիլ-վառ-ման (վառված), նըխշիլ-նըխշ-ըման (նախշված), դմբգիլ-դմբգ-ըման (տապակված), շարիլ-շար-ման (շարված)։ Այս բայերը ունեն նաև մյուս մասնիկներով զուգաձևեր՝ վառած, նըշանած, նըխշած // նըխշուգ, դմբգած // դմբգըված և այլն։

Հարակատարը փոխանվանական կիրառության դեպքում եզ. տրականում ստանում է ի հոլովանիշ, հոգնակի տրականում՝ ու, ստանում է հոդեր, օրինակ՝

Ու. հարփած(է)	հարփածներ(է)
Տ. հարփըծի(ն)	հարփըծնէրու(ն)
Բ. հարփըծէն	հարփ(ը)ծնէրէն
Գ. հարփըծօլ	հարփածնէրօլ

Հարակատարը նախադասության մեջ գործառում է իբրև եկ-թակա, որոշիչ, հատկացուցիչ, վերադիր, խնդիր և պարագա, օր.՝ ենթակա—Գանթի հիդէ մըղանէ հօքքու հիդէ գէլլա։ Որոշիչ—Փըքան-ծիս թիլէ փիլ։ Բըզուգ բօսդան (սառած վարունգ), քըզման փամ-բըգիգ, դարգըման ցուգ, փօրցուգ թան, բնգուգ փէրնին փանրիվ չիգա։ Հատկաց.—Քըխցըծի փուրէ, օղօրմանի անունն է, և այլն։ Վերադիր—քըննուգ էնք, արթընցուցիր։ Զարէ (ճաշը) էրվուգ է, և այլն։ Խնդիր—Նըխշանծք իմ հանքիր։ Պարագա—Քըխցան սիր-դիս քըմվան։ Նըսղան զըծան։ Զըքանիլէ գըմընէն վառման և այլն։

Գրավոր նյութերի մեջ մեզ հանդիպել են ան-ւ-լ հարակատարի ժամանակային ձևերի կազմության մի քանի օրինակներ, ինչպես՝ Շարան ին քէդին թանձըրգիգ փանրցիր։ Զուգին ին քըրան։ Մէձան ին՝ վաղակատարի իմաստով։ Մեր կարծիքով սրանք կամ մնացուկային ձևեր են, կամ արևմտահայ գրական լեզվի երևույթ-ների ներթափանցման արդյունք։

Ե ն թ ա կ ա յ ա կ ա ն

Ենթակայականը ունի օղ վերջամասնիկ, որին նախորդում են կամ անորոշի, կամ կատարյալի հիմքերը։ Անորոշի հիմքով են կազմում ի և է լծորդության պարզ, կրավորական, բազմապատ-

կական, պատճառական բայերը և ն ածանցով բայերի մի մասը (ի կամ ան լծորդության), օրինակ՝ ուզ-օղ, վազզ-օղ, ձախ-օղ, հանվն-օղ, էղն-օղ, դրսն-օղ, ընգըն-օղ, առն-օղ, հանքն-օղ, իշն-օղ, քըրվ-օղ, օլըրվ-օղ, էրվ-օղ, գըղըրդ-օղ, մանդըրդ-օղ, թըռցըն-օղ, գէրցըն-օղ և այլն:

Ենթակայականը կատարյալի հիմքով են կազմում ան լծորդության պարզ և ն, ան, էն, ըն ածանցներ ունեցող բայերը՝ հիյ-յաց-օղ, մընաց-օղ, խօսաց-օղ, խանց-օղ, էգ-օղ, մօոց-օղ, իմց-օղ, քիդց-օղ և այլն: Բացառություններ են՝ իդան բայի անորոշի հիմքով զուգաձևը՝ իդօղ/դըվօղ, վըլանան բայի վըլան-օղ անորոշի հիմքով ձևը (նշանակում է փսաշի):

Ենթակայականը հորովվում է տրականում ի հորովանիշով, ունի հոգնակի և ստանում է հոդեր, օր.

Ու. ուզօղ(է, սի, թի)	ուզօղնիր(է, սի, թի)
Տ. ուզօղի(ն)	ուզօղնէրու(ն)
Բ. ուզօղէն	ուզօղնէրէն
Գ. ուզօղօվ (քիշ գործ.)	ուզօղնէրօվ

Նախադասության մեջ գործառում է իբրև ենթակա, հատկացուցիչ, որոշիչ, վերադիր և այլն, օրինակ՝ ենթ.— Թէգ վազզօղէ չի հանսի, վերադիր— Ըսի գաւթացօղ է: Հատկ.— Ուզօղի մէգ էրիսէ սիվ, չիդօղի էրգու էրիսէ: Որոշ.— Ձախօղ մանրթէ, վազզօղ անշիգէ և այլն:

Ը ն թ ա ց ա կ ց ա կ ա ն

Ընթացակցականը ունի էն վերջամասնիկ, որին հիմք է ծառայում անորոշ ձևը: Ձևով այն նույնն է անորոշի բացառական հորովաձևի հետ (նրանից էլ առաջացել է), սակայն արտահայտում է անորոշի գործիական հորովաձևի իմաստ, օրինակ՝ էշէ զըռզըռալէն գիքան (զըռզըռալօվ): Գըռվըդէլէն գանցնի (զըռվըդէլօվ): Խօսանլէն գէրթէր (խօսանլօվ): Վազզէլէն էգանվ (վազզէլօվ): Անորոշի իլ վերջավորությունը շեշտադրկվելով՝ վերածվում է էլ-ի: Ընթացակցականը չի թեքվում և նախադասության մեջ գործառում է իբրև ձևի պարագա: Ներգործական սեռի բայերից ընթացակցական հազվադեպ է կազմվում:

Վ աղ ա կ ա տ ա ր դ ե ր բ ա յ

Վաղակատար հիմքային դերբայը բարբառում ձևավորվում է իւր վերջամասնիկով և անորոշի վասմ կատարյալի հիմքով: Վաղակատարի հիմքակազմութունը նույնն է հարակատարի հետ, ուստի չկրկնելու համար բերում ենք միայն օրինակներ: Անորոշի հիմքով՝ քըր-իր, գնիս-իր, փօր-իր, խըմ-իր, հնքվ-իր, գնրթըրվ-իր, դըն-գըվ-իր, խօսդըգօղ-իր, գըղդօղ-իր, թըփօղ-իր, հնվն-իր, թըշշ-իր և այլն:

Կատարյալի հիմքով՝ ընգ-իր, առ-իր, անց-իր, գօր-իր, մը-նանց-իր, խօսանց-իր, խնդց-իր, էգ-իր, դըվ-իր, փառց-իր, թարց-իր, իշ-իր, էղ-իր, մօռց-իր, անշըց-իր, թըռցուց-իր, ըսբըդցուց-իր, քօղցուց-իր և այլն: Վաղակատարը կազմում է սահմանական եղանակի վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակաձևերը՝ օժանդակ բայի հետ միասին:

* * *

Բայի անդեմ ձևերի ժխտականը կազմվում է չ նախամասնիկի օգնությամբ. այն կցվում է բայաձևին՝ ակզբից, օրինակ՝ անորոշ— ուղիլ-չուղիլ, էրթնլ-չէրթնլ. հարակատար—էգանձ-չէգանձ, ուգանձ-չուգանձ, դըվանձ-չըղըվանձ. ենթակայական՝ էղնօղ-չէղնօղ, դըվօղ-չըղ-դըվօղ, ուգօղ-չուգօղ. քնթացակցականի ժխտական ձևերի մենք չենք հանդիպել և կարծում ենք, որ այդպիսի ձևեր չկան էլ, որովհետև ընթացակցականը արտահայտում է գործողությանը ընթացակից մի այլ գործողության կատարման գաղափար, ուստի պահանջում է բայի հաստատական ձև:

ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Եղանակի կառուց

Տիգրանակերտի բարբառի խոնարհման համակարգում, արտահայտության պլանում միմյանց հակադրվում են չորս եղանակաձև՝ ըղձական, սահմանական, հարկադրական և հրամայական: Առաջին երեքի համար տարբերակիչ հատկանիշ է եղանականիշ նախամասնիկի առկայությունը կամ բացակայությունը, այսպես՝ ըղձական եղանակը զուրկ է նախամասնիկից, նրա եղանակային իմաստը որոշվում է ամբողջ բայաձևով (հիմքակազմությամբ, լծորդ ձայնավորների առկայությամբ և դիմանիշ վերջավորություն-

ներով)։ Սահմանական եղանակը (որոշ վերապահություններ) ըղձականին հակադրվում է միայն զր եղանականիշ նախամասնիկի առկայությամբ երկու ժամանակաձևում, որոնք վառուցվածքով նույնանում են ըղձականին, Հարկադրական եղանակը ըղձականին և զր-ով կառուցվող սահմանականին հակադրվում է մըն եղանականիշ նախամասնիկի առկայությամբ, որը իմաստով համապատասխանում է պիտի եղանակիչին (ինքնուրույն գործածություն բնավ չունի), օրինակ՝

ըղձական	սահմանական	հարկադրական
քըրիմ	գըքըրիմ	մըն քըրիմ
մըննմ	գըմըննմ (գէրթնմ)	մըն մըննմ

Հրամայական եղանակաձևը այս երեքին հակադրվում է իր ուրույն հատկանիշներով՝ կապված դեմքի կարգի պակասավոր արտահայտման (միայն երկրորդ դեմքի առկայություն) և ժամանակի կարգի արտահայտման ոչ ցայտուն եղանակի հետ, գումարած սրանց՝ շեշտի առավել ուժգին արտաբերումը և, ինչ խոսք, հատուկ դիմանիշ վերջավորությունների առկայությունը։

քըրէ՛, մընն՛, նըսդի՛, փնխցո՛ւ, դի՛ս, ա՛ռ

քըրէցէ՛ք, մըննցէ՛ք, նըսդէ՛ք, փնխցուցէ՛ք, դէտէ՛ք, առէ՛ք և այլն։

Բովանդակության պլանում եթե ըղձականը արտահայտում է գործողության կատարման իղձի, ցանկության գաղափար, հրամայականը՝ գործողության կատարման հրաման, հորդոր և այլն, ապա սահմանականը իր զր նախամասնիկով կազմված ժամանակաձևերով արտահայտում է ոչ միայն խոսելու պահին և նրանից առաջ ստույգ ընթացքի մեջ գտնվող, այլև պայմանով կատարվելիք, կամ պայմանով հաստատապես կատարվելիք գործողության գաղափար։ Այսինքն՝ զր-ով ժամանակաձևերը ոչ միայն սահմանական, այլև պայմանական են։ Զեաբանական մակարդակում եղանակային այս երկու իմաստները միասնաբար են հանդես գալիս. միայն շարահյուսական մակարդակում (կոնտեքստում) է հնարավոր դրանք տարբերակել միմյանցից, այսպես օրինակ՝

Յէս դուն գէրթնմ (Ես տուն եմ գնում) — սահմանական։

Թուն հիդիս իքնս իսէ, յէս լէ գէրթնմ (Եթե դու հետս գաս, ես էլ կգնամ) — պայմանական։

Հարկադրական եղանակի մըն եղանականիշով կազմված ժամանակաձևերը արտահայտում են ոչ միայն ստիպողաբար, ան-

հրաժեշտաբար կամ հարկադրաբար, այլ (ավելի հաճախ) նաև ստույգ, հաստատապես կատարելի գործողության զաղափար. այսինքն՝ դրանք ոչ միայն հարկադրականի, այլ նաև սահմանական ապառնիի ձևեր են, օրինակ՝ էս ֆընջանէ իլլն մըն խըմիս (Այս բաժակը անպայման պիտի խմես) — հարկադրական:

— Յէ՛փ մըն էրթնն (Ե՛րբ ես գնալու) — սահմանական ապառնի:

— Վնդէ (Վաղը):

Ինչպես տեսնում ենք, այս տարբեր խմատները նույնպես շարահյուսական մակարդակում են տարբերակվում:

Այսպիսով՝ եղանակի կարգը բարբառում բնորոշվում է ֆեռականական բազմիմաստությամբ (բովանդակությամբ պլանում):

Նշված չորս եղանակները ժամանակաձևերի քանակի տեսակետից միօրինակ չեն, այսպես՝ ըղձականն ու հարկադրականը ունեն երկուական ժամանակաձև, ըստ որում հարկադրականը երկու ժամանակաձևով արտահայտում է չորս խմաստ, չնայած դրանք ընդհանուր բնույթով մոտ են միմյանց (ապառնի են): Սահմանականն ունի համադրական կառուցվածքի երեք և վերլուծական կառուցվածքի երկու ժամանակաձևեր՝ ընդամենը հինգը՝ չնայած զբոլ կազմված ժամանակաձևերը երեք խմաստ են արտահայտում՝ միմյանց հակադիր (ներկա, անկատար և ապառնի):

Հրամայականի ժամանակաձևի մասին դժվար է խոսել, քանի որ այն ո՛չ որոշակի ապառնի է, ո՛չ ներկա, այլ պարզապես հրամայական:

Այսպիսով՝ ըղձականն ունի ապառնի և անցյալի ապառնի, հարկադրականը նույնպես՝ ապառնի և անցյալի ապառնի, սահմանականը՝ ներկա, անկատար, անցյալ կատարյալ, վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակաձևեր, — ընդամենը՝ ինը, եթե այս թվին գումարենք նաև հրամայականը և ապա բոլորի ժխտական ձևերը, բարբառում կունենանք բոլոր փղանակների համար քսան ժամանակաձև, որից չորսը՝ վերլուծական կառուցվածքի:

Ժամանակի կարգը

Ժամանակի կարգը (ինչպես և թվի ու դեմքի կարգերը) բարբառում արտահայտվում է վերջավորությունների միջոցով (ժամանակա-թվա-դիմանիշ)³¹: Ըղձական, սահմանական և հարկա-

31 Գ. Զահալյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 219:

դրական եղանակների համադրական ժամանակաձևերի վերջավորությունները կազմում են երեք խումբ. դրանք են՝

Առաջին խումբ

1-ին ենթախումբ

իմ ինք
իս էք
է(ի) ին

2-րդ ենթախումբ

ւմ ւնք
ւս ւք
ւն ւն

Երկրորդ խումբ

էնք էնք
իր իք
էր էն

— բոլորի համար ընդհանուր

Երրորդ խումբ

1-ին ենթախումբ

ի ինք
իր իք
Օ ին

2-րդ ենթախումբ

ւն ւնք
ւր ւք
ւմ ւն

Այն թորոգով կազմված հոգնակիի ձևերը 1-ին և 3-րդ խմբերում համանունություն են ներկայացնում՝ ւնք, ւք, ւն: Համանունություն է նաև 2-րդ և 3-րդ խմբերի եզակի 2-րդ դեմքի իր վերջավորությունը:

Առաջին խմբի ժամանականիշ վերջավորություններին նախորդում է բոլոր բայերի անորոշի հիմքը՝ ըղձականի դեպքում առանց նախամասնիկի, սահմանականի դեպքում՝ գր(գ), հարկադրականի դեպքում՝ մըն նախամասնիկներով, օր. ըղձ.՝ քըր-իմ, նըսդ-իմ, խանդ-ւմ, վառվ-իմ, մօռն-ամ, փանխն-իմ, ունէն-ւմ, քընցըն-իմ, գօղըրդ-իմ և այլն³²:

Սահմ.՝ գըքըրիմ, գընըսդիմ, գըխանդւմ, գըվառվիմ, գըմօռնամ, գըփանխիմ, գունէնւմ, գըքընցընիմ, գըգօղըրդիմ և այլն, հարկ.՝ մըն քըրիմ, մըն նըսդիմ, մըն խանդւմ, մըն վառվիմ, մըն մօռնամ, մըն փանխիմ, մըն ունէնւմ, մըն քընցընիմ, մըն գօղըրդիմ և այլն:

³² Քին-ւմ, ուն-իմ, իգ-ւմ բայերը այս ձևով սահմանական են և ոչ ըղձական:

1-ին խմբի եզակի 3-րդ դեմքում է, ի լծորդների գործառու-
թյունը պայմանավորված է բայասեռի տարբերությամբ. է ունե-
նում են ներգործական սեռի բայերը (բացառությամբ և ածանցով
բայերի՝ հանքիմ, հանքնի), իսկ ի՝ կրավորական և շեղոք սեռի բա-
յերը. ան լծորդը շեղոք դիրք է գրավում՝ սեռերի նկատմամբ: (Այս
նույն վերջավորությունները՝ է լծորդով հատուկ են նաև իմ (էմ)
էական բային՝ իմ, իս, է, ինք, էք, ին):

Բովանդակության պլանում վերջավորությունների այս խում-
բը բաղմարժեք է. ըղձականի և հարկադրականի դեպքում ալն
արտահայտում է ապառնի գործողության գաղափար՝ եղանակա-
վորված՝ ըղձական ապառնի, հարկադրական ապառնի և սահմա-
նական ապառնի: Գր(գ)-ով սահմանականի դեպքում՝ ժամանա-
կային հակադիր իմաստներ՝ ներկա (խոսելու պահին ընթացքի մեջ
գտնվող) և ապառնի՝ պայմանական եղանակավորումով: Համե-
նայն դեպս գերիշխողը ապառնի գործողության գաղափարն է,
ուստի կարելի է այս խումբը կոչել ապառնիի և ներկայի խումբ:

Երկրորդ խմբի վերջավորություններին նույնպես նախորդում է
անորոշի հիմքը՝ քրեէնք, խանդէնք, վառվէնք, մօռնէնք, փանխէնք,
քընցընէնք, քինէնք և այլն: Բոլոր լծորդություններին պատկանող
բայերի համար այս վերջավորությունները իրենց է, ի լծորդներով
ընդհանուր են:

(Այս վերջավորությունները ունի նաև էական բայը իր անց-
յալ ժամանակաձևերում՝ էնք, իք, էք, էնք, իք, էն):

Վերջավորությունների այս խումբը նույնպես բաղմիմաստ է.
առաջին հերթին այն արտահայտում է անցյալ ժամանակի գաղա-
փար՝ եղանակավորված. ըղձականի դեպքում՝ անցյալ ժամանակա-
կետում գործողության կատարման ցանկություն, հարկադրականի
դեպքում՝ անցյալ ժամանակակետում անհրաժեշտաբար կատարելի
(հարկադր. անց. ապառնի) և ստույգ, հաստատապես կատարելի
գործողություն (սահմանական անցյալի ապառնի), գր-ով սահ-
մանականի դեպքում՝ անցյալ ժամանակակետում ընթացքի մեջ
գտնվող, անկատար (սահմ. անց. անկատար) և պայմանով կամ
հաստատապես կատարելի գործողություն (պայմանական անցյա-
լի ապառնի): Այսպիսով՝ գերիշխողը անցյալ ժամանակի արտա-
հայտությունն է, ուստի այս խումբը կարելի է անվանել անցյալի
ապառնիի և անցյալ անկատարի խումբ: Սա հակադրվում է առա-
ջին խմբին հիմնականում անցյալ-ոչ անցյալ հատկանիշով:

Երրորդ խմբի ժամանականիշ վերջավորությունները երկու

ենթախումբ են կազմում, Այս խմբում ձևաբանական կարևոր նշանակություն են ստանում բայերի սեռային և հիմքային տարբերությունները, որոնք առնչված են միմյանց: Այսպես, առաջին ենթախմբի (ի-ի խումբ) վերջավորություններ կարող են ստանալ է լծորդության ներգործական սեռի և ան լծորդության պարզ բայերը՝ միօրինակ հիմքակազմությամբ՝ կատարյալի հիմքով, օրինակ՝ քրէց-ի, քօճէց-ի, քընցուց-ի, գօղըրդէց-ի, գանթաց-ի, գըլանց-ի (կուլ տվի). բացառություն են ան լծորդության պարզ խանալ, ժանալ, անալ բայերը, որոնք ստանում են երկրորդ ենթախմբի վերջավորություններ՝ խանղց-ան, ժանղց-ան, անղց-ան:

Այս բայերի եզակի Յ-րդ դեմքը մյուսներին հակադրվում է գրո(Ø) վերջավորությամբ, և հիմքածանցի է լծորդ շեշտվելով՝ հնչյունափոխվում է ի-ի, օր.՝ քօճէցի, քօճէցիր, քօճից:

Երկրորդ ենթախմբի վերջավորություններին (ան-ի խումբ) կարող են նախորդել մի դեպքում անորոշի, մյուս դեպքում կատարյալի հիմքերը: Անորոշի հիմք են ունենում ի լծորդության շեղոք և կրավորական սեռի բայերը, օրինակ՝ նըսդ-ան, հանվն-ան, փանն-ան (աշխատեցի), փըդ-ան, հօդ-ան, գանրըր-ան, բանգս-ան, քընն-ան, բառգ-ա, օլըրվ-ան, վառվ-ա, գըլօրվ-ան, վըլանցվ-ան, բանրըրվ-ան և այլն:

Կատարյալի հիմք են ունենում ն, ան, էն, ըն ածանց ունեցող բայերը՝ անկախ սեռից և լծորդությունից, օր.՝ ընդ-ան, անց-ա, իշ-ան, գօր-ան, փանխ-ան, թըռ-ա, մօռց-ա, իմց-ան, հանրիէց-ան, գանրըրց-ան, ուշանց-ան և այլն: Կատարյալի հիմք են դրսևորում նաև տարահիմք բայերը՝ էգ-ան, գէր-ան, քանց-ի, դըրվ-ի:

Բովանդակության պլանում այս երկու ենթախմբերի վերջավորությունները արտահայտում են ժամանակային մեկ միասնական իմաստ, այն է՝ անցյալում ստույգ, հաստատ կատարված, ավարտված գործողություն, այսինքն՝ այս վերջավորությունները սահմանականի անցյալ կատարյալ ժամանակաձևն են ձևավորում: Այս ժամանակը սահմանական եղանակի ներսում հակադրվում է անցյալ անկատարին՝ կատարյալություն- ոչ կատարյալություն (անկատարություն) հատկանիշով: Կատարյալության ժամանակային գաղափարը արտահայտվում է ոչ միայն վերջավորությունների, այլ նաև կատարյալի հիմքի ից (էց) ածանցի միջոցով, քանի որ եզակի Յ-րդ դեմքում բայը զուրկ է վերջավորությունից (Ø), և կատարյալության իմաստը այնուամենայնիվ առկա է:

Սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակա-
տար ժամանակաձևերը ունեն վերլուծական կառուցվածք. կազ-
մըվում են վաղակատար դերբայով և օժանդակ բայի խոնարհված
ձևերով, օր.՝ քըրիր իմ, նըսդիր իմ, քընցուցիր իմ, գա՛րթա՛ցիր իմ
և քըրիր էնք, նըսդիր էնք, քընցուցիր էնք, գա՛րթա՛ցիր էնք:

Ժամանականիշ վերջավորությունների աղյուսակ

Խմբեր ըստ վերջա- վորությունների	Գեմքեր	1-ին ենթախումբ		2-րդ ենթախումբ	
		եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
Ապառնիի և ներկայի	I	իմ	ինք	ա՛մ/ամ	ա՛նք/անք
	II	իս	էք	ա՛ս/աս	ա՛ք/աք
	III	է(ի)	ին	ա՛/ա	ա՛ն/ան
Անց. ապառնիի և անկատարի	I	էնք	էնք	—	—
	II	իւր	իք	—	—
	III	էր	էն	—	—
Անցյալ կատա- րյալի	I	ի	ինք	ա՛/ա	ա՛նք/անք
	II	իւր	իք	ա՛ր/ար	ա՛ք/աք
	III	Ø	ին	ա՛վ/ավ	ա՛ն/ան

Դեմքի և թվի կարգը

Ռարբառի թվադիմանիշ վերջավորություններն են՝
1-ին խումբ—մ, ս, Ø, նք, ք, ն. 2-րդ խումբ—նք, ր, ր, նք, ք, ն.
3-րդ խումբ—ի, իր, Ø, Ø, ր, վ, նք, ք, ն. 4-րդ խումբ—է՛, ի՛, ա՛,
ո՛ւ, ր, օ՛, Ø, (է՛)ք, (ա՛)ք: Սրանցում առաջին հայացքից աչքի են
ընկնում քերականական համանունությունները և համանիշություն-
ները: Առաջին երեք խմբերում կրկնվող հոգնադիմանիշ նք, ք, ն-ն
համանուն և համանիշ են. 2-րդ, 3-րդ, 4-րդ խմբերում հանդիպող
ք-ն (2-րդ խմբում եզակի 2-րդ և 3-րդ դեմքերում, 3-րդ խմբում՝
2-րդ դեմքում, 4-րդ խմբում՝ նույաբս 2-րդ դեմքում) ներկայաց-
նում է համանիշություն՝ ձևավորելով եզակի 2-րդ դեմքը: 4-րդ
խմբի հոգնաթվանիշ ք-ն համանիշ է մյուս խմբերի հոգնակի 2-րդ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՅԵՐԻ ՀԻՄՔԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Բայաձևեր		Ի լծորդության չեզոք (պարզ և բազմապատկ.) և կրավորական ածանցով բայեր		Է լծորդության ներգործական սեւի պարզ և բազմապատկական ածանցով բայեր		Ս/ա լծորդության պարզ բայեր		Պատճառական ածանցով և Ը ածանցով մի շարք բայեր		Ն, ան, էն, րն ածանցներով բայեր		Բայերի բնական
բայանիմքեր		անորոշի	կատարյալի	անորոշի	կատարյալի	անորոշի	կատարյալի	անորոշի	կատարյալի	անորոշի	կատարյալի	զերբայական
Անդեմ ձևեր, զերբայական հիմք	անորոշ	+	—	+	—	+	—	+	—	+	—	—
	հարակատար	+	—	+	—	—	+	—	+	—	+	—
	ենթակայական	+	—	+	—	—	+	+	—	—	+	—
	ընթացակցական	—	—	—	—	—	—	—	—	—	—	+
	վաղակատար	+	—	+	—	—	+	—	+	—	+	—
Եղանակային ձևեր	ըղձական զր-ով սահմանական հարկադրական		+	—	+	—	+	—	+	—	—	—
			+	—	+	—	+	—	+	—	—	—
	սահմանական անց. կատարյալ		+	—	—	+	—	+	—	—	+	—
	հրամ. (զրական)	հզակի հոգնակի	+	—	+	—	+	—	+	—	+	—
	+	—	+	—	+	—	+	—	+	—	+	—
	արգելական հրամայական	հզակի հոգնակի	+	—	+	—	+	—	+	—	—	—
		+	—	+	—	+	—	+	—	+	—	—

դեմքի Բ-ին: Համանուններ են նաև 2-րդ խմբի 1-ին դեմքի նԲ՝ վերջավորությունները, որոնք տարբեր թվային արժեքներ ունեն: Օ՝ վերջավորությունը համանիշություն է ներկայացնում մեկ դեպքում՝ 1-ին խմբի և 3-րդ խմբի եզակի 3-րդ դեմքում, ընդհանրապես այն բազմարժեք է, որովհետև մի դեպքում ձևավորում է եզակի 3-րդ դեմքը (քըրէ-, նըսդի-), մի դեպքում՝ 1-ին (նըսդաւ-, վառվա-), մի դեպքում էլ՝ 2-րդ դեմքը (դի՛ս-, փի՛ր-, ա՛ռ-): Այսպիսով՝ խմբավորելով բուն դիմանիշ վերջավորությունները՝ կատանանք. 1-ին դեմք—մ, նք, ի, Օ, նք, 2-րդ դեմք—ս, ր, իր, է՛, ի՛, ան՛, ո՛ւ, օ՛, Օ, ք, 3-րդ դեմք—Օ, ր, վ, ն:

Այժմ անդրադառնանք խմբերից յուրաքանչյուրին:

1-ին խումբ

քորձիմ քորձինք

քորձիս քորձէք

քորձէ քորձին

Խոնարհման հարացույցում վերջավորությունների ուղղահայաց շարքերը ներկայացնում են միմյանց հակադրվող դիմանիշ վերջավորությունները (մ-ս-Օ, նԲ-Բ-ն), իսկ հորիզոնական շարքերը՝ միմյանց հակադրվող թվանիշ վերջավորությունները (մ-նԲ, ս-Բ, Օ-ն):

2-րդ խումբ

քորձէնք քորձէնք

քորձիր քորձիք

քորձէր քորձէն

Ուղղահայաց շարքում տարարժեք, բայց համանուն են 2-րդ և 3-րդ դեմքերի Բ-երը: Ըստ երևույթին, նրանց հակադրության հարցում կարևոր նշանակություն է ստանում նախորդող լծորդ ձայնավորների տարբերությունը: Հորիզոնական շարքում ունենք թվանիշ նԲ-նԲ, Բ-Բ և Բ-ն գույգերը: Առաջին դեմքի վերջավորությունները համանուն և համանիշ են դեմքի կարգում՝ իբրև 1-ին դեմքի ցուցիչներ, սակայն տարարժեք են թվի կարգում՝ իբրև տարբեր թվերի ձևավորողներ: Զևաբանական մակարդակում նրանց տարբերությունը չեզոքացված է, այն իրագործվում է միայն շարահյուսական մակարդակում՝ Յէս քորձէնք (ես գործեի): Մինք քորձէնք (Մենք գործեինք):

3-րդ խումբ

քորձէցի	քորձէցինք	նըսդան	նըսդանք
քորձէցիր	քորձէցիք	նըսդար	նըսդարք
քորձից	քորձէցին	նըսդանվ	նըսդան

Թվի կարգը արտահայտվում է ի-նք, իր-ք, Օ-ն և Օ-նք, ր-ք, վ-ն հակադիր զույգերով, որոնցում Օ-ն տարարժեք է: Թվանիշ ր-ք և իր-ք զույգերը համանիշ են 2-րդ խմբի ր-ք (2-րդ դեմք) զույգին:

4-րդ խումբ (հրամայական)

է՛, ի՛, ան՛, ո՛ւ, ր, օ՛, Օ, (է՛)ք, (ան՛)ք վերջավորությունները ձևավորում են հրամայական եղանակի դեմքի և Թվի կարգերը: Դրական խոնարհման հարացույցում այս վերջավորություններին կարող են նախորդել.

ա) է-ին՝ է լծորդության ներգործական սեռի բայերի (հանած պատճառականը) անորոշի հիմքը՝ քըր-է՛, հան-է՛, գողըրդ-է՛, մանդըրդ-է՛, խըմ-է՛ և այլն:

բ) Ի-ին՝ ի լծորդության չեզոք և կրավորական սեռի բայերի հիմքը (անորոշի)՝ նըսդ-ի՛, փան-ի՛, քընն-ի՛, բառգ-ի՛, օլըրվ-ի՛, վառվ-ի՛, վըլանցվ-ի՛. ն, ան, էն, ըն ածանցներով բայերի կատարյալի հիմքը՝ փանխ-ի՛, ընգ-ի՛, իշ-ի՛, մօռց-ի՛, փառց-ի՛, թարց-ի՛, ունեց-ի՛, ուշանց-ի՛, ինչպես նաև խանդանլ, ժանտանլ, անդանլ բայերի կատարյալի հիմքը (ն ածանցով բայերի նման)՝ խանդց-ի՛, ժանտց-ի՛, անդց-ի՛:

գ) Ա/ա-ին՝ ան/ա լծորդության պարզ բայերի անորոշի հիմքը՝ մըն-ան՛, գարթ-ան՛, հէվ-ան՛, հիյյ-ան՛:

դ) Ու-ին՝ պատճառական ցըն, բցըն//բցըն//անցն ածանցներով բայերի կատարյալի հիմքը՝ ուց հիմքածանցի անկումով, օր.՝ կատ. հիմք՝ քընցուց, փանխցուց, փանցըրցուց, հրամ.՝ քընց-ո՛ւ, փանխց-ո՛ւ, փանցըրց-ո՛ւ, սիրց-ո՛ւ, գանջըրց-ո՛ւ:

ե) Բ-ին՝ իդանլ բայի կատարյալի հիմքի ու-ով տարբերակը (բաղաձայնից առաջ՝ ու, ձայնավորից առաջ՝ վ-դու||դըվ), դո՛ւ+ր (միակ օրինակը):

զ) օ-ին՝ իքանլ բայի կատարյալի հիմքը՝ էգ-էգ+օ՛ (միակ օրինակը):

է) Օ-ին՝ մի շարք բայերի կատարյալի հիմքը՝ դան՛ր, փի՛ր, լի՛ց, գի՛ր, թի՛ր, ա՛ռ, փա՛ց, դի՛ս:

ը) (է')Ք հոգնանիշ ընդհանուր վերջավորությանը կարող են նախորդել անորոշի և կատարյալի հիմքեր. նշված կետերից բացառությամբ բ)-ի առաջին մասի, որի հոգնակին անորոշի հիմքով է, մյուս բոլոր կետերի բայերը երևան են հանում կատարյալի հիմք, օր.՝ անորոշի հիմքով՝ նըսդ-էք, փան-էք, օլըրվ-էք, վըլացվ-էք և այլն; կատարյալի հիմքով՝ քըրէց-էք, գողըրդէց-էք, փախ-էք, մօոց-էք, ուշաց-էք, մընաց-էք, հիյաց-էք, խանց-էք, քընցուց-էք, փախցուց-էք, դըվ-էք, էգ-էք, դար-էք, փէրէց-էք, լըց-էք, գէր-էք, առ-էք, փաց-էք, դէս-էք և այլն:

թ) (ւ)Ք հոգնակերտի գործառությունը դրական խոնարհման հարացույցում բացառված է:

Ժխտական խոնարհման մեջ այս վերջավորություններից գործառում են միայն ի, ան և (է)ք, (ւ)ք-ը: Արգելական հրամայականի կառուցվածքը միահիմք է, միայն անորոշի հիմքն է գործառում, ըստ որում ի վերջավորությանը նախորդում է է և ի լծորդության բոլոր բայերի անորոշի հիմքը, ինչպես՝ մի՛ քըր-ի, մի՛ գողըրդ-ի, մի՛ նըսդի, մի՛ վառվի, մի՛ փախնի, մի՛ թըռնի, մի՛ քընցընի, մի՛ փախցընի, մի՛ դանի, մի՛ փէրի, մի՛ ուղի, մի՛ թընի, մի՛ առնի և այլն:

Ա/ա վերջավորությանը նախորդում է ան լծորդության բոլոր բայերի անորոշի հիմքը՝ մի՛ մըն-ան, մի՛ գարթ-ան, մի՛ մօռնա, մի՛ փառնա, մի՛ ուշանան, մէլլան, մի՛ մնան (մի՛ էլլան, մի՛ իման), մի՛ լան (մի՛ իլան), մի՛ դան (մի՛ իդան), մի՛ քան (մի՛ իքան), մի՛ փանա, մի՛ դըսնա և այլն:

(է)Ք հոգնանիշին նախորդում է ի, է լծորդության բոլոր բայերի անորոշի հիմքը՝ մի՛ քըր-էք, մի՛ գողըրդէք, մի՛ նըսդէք, մի՛ վառվէք, մի՛ փախնէք, մի՛ թըռնէք, մի՛ քընցընէք, մի՛ փախցընէք, մի՛ դանէք, մի՛ փէրէք, մի՛ ուղէք, մի՛ թընէք, մի՛ առնէք և այլն:

(ւ)Ք հոգնանիշին նախորդում է ան լծորդության բոլոր բայերի անորոշի հիմքը՝ մի՛ մընանք, մի՛ գարթանք, մի՛ մօռնաք, մի՛ փառնաք, մի՛ ուշանանք, մէլլանք, մի՛ մընանք, մի՛ իլանք, մի՛ իդանք, մի՛ իքանք, մի՛ փանաք, մի՛ դըսնաք և այլն:

Ի դեպ նշենք, որ հրամայականի է, ի', ան՝ վերջավորությամբ դրական ձևերը համանուններ են ըղծական ապառնու եզակի 3-րդ դեմքի բայաձևերի հետ, օր.՝ ըղծական՝ քըրէ, գարթան, մընան, նըսդի, փանի, հրամայական՝ քըրէ', գարթան', մընան', նըսդի', փան-նի': Սրանք տարբերակվում են շարահյուսական մակարդակում:

Դիմա- քեր	Թվադիմանիշ վերջա- վորություններ	Թվային գույգերի արժեքները		Բազմարժեքայնություն դեպքում հանդիպում է
	եզակի-հոգնակի	միարժեք	բազ- մարժեք	
I	$d \longleftrightarrow նք$ $նք \longleftrightarrow նք$ $ի \longleftrightarrow նք$ $\emptyset \longleftrightarrow նք$	$+$ $+$ $+$ $+$	$-$ $-$ $-$ $-$	
II	$ս \longleftrightarrow ք$ $ր \longleftrightarrow ք$ $իր \longleftrightarrow ք$ $է' \longleftrightarrow ք$ $ի' \longleftrightarrow ք$ $ա' \longleftrightarrow ք$ $ս' \longleftrightarrow ք$ $օ' \longleftrightarrow ք$ $\emptyset \longleftrightarrow ք$	$+$ $-$ $+$ $+$ $+$ $+$ $+$ $+$ $+$	$-$ $+$ $-$ $-$ $-$ $-$ $-$ $-$ $-$	2-րդ և 3-րդ խմբերում
III	$\emptyset \longleftrightarrow ն$ $ր \longleftrightarrow ն$ $վ \longleftrightarrow ն$	$-$ $+$ $+$	$+$ $-$ $-$	1-ին և 3-րդ խմբերում

Ժխտական խոնարհում

Ժխտական խոնարհման կառուցվածքը բնորոշվում է նախա-
մասնիկավորումով: Ժխտական նախամասնիկներն են շ(շը)-ն և
նրա արգելական տարբերակը՝ մի'-ն: Սրանցից առաջինը անան-
ջատ է բայաձևից, 2-րդը՝ անջատ: Մի'-ն մշտապես հրամայական
շեշտ է կրում. ձայնավորով սկսվող կարճ բայերից առաջ հաճախ
կորցնելով ձայնավոր տարրը՝ վանկ է կազմում բայաձևի ձայնա-
վորի հետ, ինչպես՝ մէ'լլի, մի'լլի (մի' իլլի): Չ(չը)-ն կարող է
շեշտ կրել իր գաղտնավանկի վրա, կարող է և չկրել, նայած գոր-
ծառության, որը լինում է հետևյալ կերպ:

Եղանականիշ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերում չ
(չը)-ն գործառում է բայաձևից անանջատ. դրանք են՝ բղձականի
երկու ժամանակաձևերը և սահմանականի անցյալ կատարյալը.
ըստ որում ձայնավորով սկսվող բայերին նախորդելիս՝ չ-ն վանկ է
կազմում հաջորդ ձայնավորի հետ. օրինակներ՝

չբբբրիմ	չբբբրենք	չերթնամ	չերթենք
չբբբրիս	չբբբրիր	չերթնաս	չերթիր
չբբբրէ...	չբբբրէր...	չերթնամ...	չերթէր...
չբբբրէցի	չէլն	չընըսդն	չրփնխցուցի չըվառվա
չբբբրէցիր	չէլնր	չընըսդնր	չրփնխցուցիր չըվառվար
չբբբրից...	չէլնվ...	չընըսդնվ...	չրփնխցուց... չըվառվավ...

Այս կիրառութեան դեպքում չը-ն չի շեշտվում, բայց քանի որ պահանջում է իր շեշտը:

Եղանականիշ նախամասնիկ ունեցող ժամանակաձևերի ժրխտականը տարբեր կառուցվածքներ է ներկայացնում, այսպես՝

ա) մըն մասնիկով կազմված հարկադրական եղանակի ժամանակաձևերի ժխտականը կազմվում է մասնիկի սկզբից չը ժրխտականի կցումով: Եթե բայաձևը ձայնավորով է սկսվում, ապա մըն մասնիկի ը ձայնավորը սղվում է, և ն-ն վանկ է կազմում հաջորդ ձայնավորի հետ: Այս գործառութեան ժամանակ շեշտվում է չը ժխտականը, օր.՝

չը՛մըն փերիմ	չը՛մն իլնմ	չը՛մն իլենք
չը՛մըն փերիս	չը՛մն իլնս	չը՛մն իլիր
չը՛մըն փերէ...	չը՛մն իլն...	չը՛մն իլէր...

Ձայնավորով ձևերը արտասանվում են չը՛մ-նիլնմ, չը՛մ-նիլնս, չը՛մ-նիլն:

բ) Գը մասնիկով կազմված սահմանականի ներկա և անցյալի անկատար ժամանակաձևերի ժխտականը ունի յուրօրինակ կառուցվածք. դրական ձևերը կորցնում են զը մասնիկը և բայաձևերին նախադաս դրվում են օժանդակ բայի ժխտական խոնարհման շեշտված բայաձևերը, որոնք շ-ով են կազմված, ըստ որում եզակի Յ-րդ դեմքի է-ն չ-ից հետո հնչյունափոխվում է ի-ի: Բայաձևի եզակի երկրորդ դեմքի ս վերջավորութունը երբեմն բաց է թողնվում և բայաձևը նույնանում է Յ-րդ դեմքին: Եթե բայաձևը ձայնավորով սկսվող բառ է, եզակի Յ-րդ դեմքում չ ժխտականը անմիջապես բայաձևին է կցվում և շեշտը տեղափոխվում է առաջին վանկի ձայնավորի վրա, օրինակ՝

չի՛մ գնրննմ	չի՛նք գնրննք
չի՛ս գնրնն(ս)	չէ՛ք գնրննք
չի՛ գնրնն	չի՛ն գնրնն

չի՛մ էլլնմ	չի՛նք էլլնք	չի՛նք էնէնք	չի՛նք էնէնք
չի՛ս էլլն(ս)	չէ՛ք էլլնք	չի՛ր էնիր	չի՛ք էնիր
չէ՛լլն	չի՛ն էլլն	չէ՛ր էնէր	չէ՛ն էնէն

Ներկայի եզակի 3-րդ դեմքի չէ՛լլան տիպի ձևը արտաքուստ համանուն է թվում ըղձական ապառնու եզակի 3-րդ դեմքի նման ձևին, սակայն դրանք տարբեր են շեշտի տեղով, ըղձականում այն վերջնավանկի վրա է. համեմատել՝ չէ՛լլա՛ (չե՛լնի) և չէ՛լլա՛ (չի ել-նում):

Սահմանական եղանակի վերլուծական կառուցվածքի վաղա-կատար և անցյալի վաղակատար ժամանակաձևերի ժխտականը նույնպես յուրօրինակ կազմութուն ունի: Դրական խոնարհման ձևերին նախադաս դրվում են օժանդակ բայի ժխտական խոնարհ-ման բայաձևերը, ստացվում է օժանդակ բայի կրկնություն՝ նա-խադաս՝ ժխտական ձևով և հտադաս՝ դրական ձևով: Այս դեպքում նախադաս օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքում չ-ին հաջորդելիս է-ն չի հնչյունափոխվում ի-ի: Եզակի և հոգնակի 3-րդ դեմքում հտադաս է-ն, էր-ը և էն-ը հաճախ բաց են թողնվում, օրինակ՝

չի՛մ դէսիր իմ	չի՛նք դէսիր ինք	չէ՛նք էղիր էնք	չէ՛նք էղիր էնք
չի՛ս դէսիր իս	չէ՛ք դէսիր էք	չի՛ր էղիր իր	չի՛ք էղիր իք
չէ՛ դէսիր (է)	չի՛ն դէսիր ին	չէ՛ր էղիր (էր)	չէ՛ն էղիր (էն)

Այսպիսով՝ սահմանական եղանակի չորս ժամանակաձևերը բնորոշվում են կրկնակի դիմանիշ վերջավորությունների առկա-յությամբ. ըստ որում միտում է զգացվում դրանցից մեկի կրճատ-ման. այդ միտումը դրսևորվում է ներկայի եզակի 2-րդ դեմքի -ս-ի հաճախակի բաց թողնման և վաղակատարի եզակի, անցյա-լի վաղակատարի եզակի և հոգնակի 3-րդ դեմքում օժանդակ բայի հտադաս ձևի բաց թողնման մեջ:

Անկանոն բայեր

Անկանոն պետք է համարել այն բայերը, որոնք ունեն միև-նույն հիմքի տարբերակներ (դըվ||դըվից) կամ խախտում են հիմ-քակազմության օրինաչափությունները և խոնարհման կարգը, կամ անմիօրինակություն են ցուցաբերում լծորդ ձայնավորի գոր-ծառության հարցում: Տարահիմքությունը անկանոնություն չէ բարբառի համար, քանի որ այն հիմքակազմության մի ձև է. թե-կուզ և հնավանդ (արխաիկ) բնույթ է կրում. այն հատուկ է եղել հայոց լեզվի բոլոր փուլերին: Արմատական հրամայականը (եզա-կիի Յ վերջավորությամբ) նույնպես անկանոնություն չէ, քանի որ

մի շարք օրինակներ է ընդգրկում և նույնպես հատուկ է եղել հայոց լեզվի բոլոր շրջաններին իր հնավանդ բնույթով: Այն պարզապես եզակի հրամայականի կազմության մի ձևն է: Տիգրանակերտի բարբառում անկանոն դիտված բայերն են՝ խնդալ, ժածալ, անդալ, ուղիլ, իղալ, իքալ, էրթալ, ըսսիլ, էնիլ, թընիլ, փանալ, քողնիլ, վըլանալ:

Խնդալ, ժածալ, անդալ բայերի կատարյալի հիմքածանցը լծորդ ձայնավոր չունի, և հիմքը նման է և ածանցով բայերի հիմքին. դրանց անցյալ կատարյալի և հրամայականի կազմությունները նույնպես և ածանցով բայերի նման են. կատարյալի հիմք՝ խնդց, ժածց, անդց, անցյալ կատարյալ՝ խնդցա, ժածցա, անդցա և այլն (փոխանակ՝ խնդացի, անդացի, ժածացի կանոնավոր ձևերի), հրամայականը՝ խնդցի՛, ժածցի՛, անդցի՛ (խնդա՛, անդա՛, ժածա՛ կանոնավոր ձևերի փոխարեն):

Ուղիլ-կատարյալի հիմքը՝ գէր: Ներգործական սեռի պարզ բայ լինելով՝ անցյալ կատարյալում ունի չեզոք բայերի վերջավորություններ՝ ա, առ, ալ և այլն: Հրամայականի թե՛ եզակին, թե՛ հոգնակին կազմում է կատարյալի հիմքով՝ գէրա, գէրառ, գէրավ և այլն, գէ՛ր, գէրէ՛ք:

Իղալ- կատարյալի հիմքը տարբերակ ունի՝ դըվ||դըվից (դըվէց): Առաջինով կազմում է վաղակատարը, հարակատարը, ենթակայականը (սա կրկնահիմք կազմություն ունի՝ իղօղ||դըվօղ) և էզակի հրամայականը՝ ր վերջավորությամբ՝ դու (յըվ և դու ձևերը կատարյալի հիմքի դիրքային տարբերակներն են, առաջինը հանդիպում է ձայնավորից առաջ, երկրորդը՝ բաղաձայնից): Իրվից հիմքով կազմում է անցյալ կատարյալը՝ դըվէցի, դըվէցիր, դըվից և այլն:

Իֆալ- կատարյալի հիմքը՝ էգ, անցյալ կատարյալում ունենում է ա, առ, ալ խմբի վերջավորություններ (ի, իռ, Օ-ի փոխարեն)՝ էգա, էգառ, էգավ, հրամայականը օ անսովոր վերջավորություն ունի՝ էգօ՝ (հավանաբար՝ եկուռ ձևից՝ էգու>էգօ հնչյունափոխությամբ):

Էրթալ- կատարյալի հիմքը՝ ֆաց||ֆըն (այս բայի խոնարհման հարացույցը Էրթալ և զնալ բայերի խոնարհման հարացույցների համադրության արդյունքն է): Քըն տարբերակը երևան է գալիս անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքում և հրամայականի եզակիում՝ քացի, քացիր, քընաց, քացինք, քացիք, քացին, քընա՛, քացէ՛ք, այսինքն՝ այն դեպքում, երբ բայաձևին սպառնում է մեկվանկանի լինելու վտանգը՝ ֆաց:

Ըսսիլ- անցյալ կատարյալը ունի անորոշի հիմքով տարբերակ. եզակի Յ-րդ դեմքում երևան է գալիս ն լծորդը՝ է-ի փոխարեն, օր.՝ ըսսէցի, ըսսէցիր, ըսսաց, ըսսէցինք, ըսսէցիք, ըսսէցին և ըսսի, ըսսիր, ըսսաց (Յ-րդ դեմքը նույնն է):

Էնիլ- կատարյալի հիմքն է՝ էր||էրէց. առաջինով կազմվում են հարակատարը, վաղակատարը՝ էրած||էրուզ, էրիւ, և եզակի հրամայականը՝ էրէ՛. 2-րդով կազմվում են անցյալ կատարյալը և հրամայականի հոգնակին. կատարյալի եզակի Յ-րդ դեմքում լծորդն է ն-ն (է-ի փոխարեն), օր.՝ էրէցի, էրէցիր, էրաց, էրէցինք, էրէցիք, էրէցին. հր.՝ էրէցէ՛ք:

Թընիլ- կատարյալի հիմքը տարբերակով է՝ թըր||թըրէց. թըր-ով կազմվում են հարակատարը, վաղակատարը և եզակի հրամայականը՝ արմատական ձայնավորի վերականգնումով՝ թըրած||թըրուզ, թըրիր, թի՛ր: Մյուսով կազմվում են անցյալ կատարյալը և հրամայականի հոգնակին՝ թըրէցի, թըրէցիր, թըրից, թըրէցինք, թըրէցիք, թըրէցին, թըրէցէ՛ք:

Թօղնիլ- կատարյալում ունի թօղ||թօղէց հիմքը՝ վաղակատար՝ թօղիր, հարակատար՝ թօղած, հրամայական՝ թօ՛ղ, թօղէ՛ք, անցյալ կատարյալ՝ թօղէցի, թօղէցիր, թօղից և այլն:

Փանալ- կատարյալի հիմքը ունի փաց||փացէց տարբերակները. փաց-ով կազմվում են հարակատար, վաղակատար, ենթակայականը՝ փացած, փացիր, փացօղ, եզակի հրամայականը՝ փա՛ց. մյուսով կազմվում է անցյալ կատարյալը՝ փացէցի, փացէցիր, փացից և այլն, հոգնակի հրամայականը՝ փացէցէ՛ք:

Վըլննալ- անցյալ կատարյալում ստանում է ի, իւ խմբի վերջավորություններ՝ ն, նա, նվ-ի փոխարեն՝ վըլնցի, վըլնցիւ, վըլնց և այլն: Անկանոն է նաև եզակի հրամայականը՝ վըլն՝ կազմված բայարմատով: Մյուս ձևերը՝ վըլնցիր, վըլնցուզ, կանոնավոր են, ունի նաև անորոշի հիմքով կազմված անկանոն ձևեր՝ վըլննօղ (քիսաչի) և վըլննէլուզ (լվանալիք): Այս բայի խոնարհման հարացույցը խառնված է լվալ բայի խոնարհման հարացույցին:

Պակասավոր բայեր

Պակասավոր են իմ(էմ) էսկան բայը, իզամ (կամ), ունիմ և փննամ (գիտեմ) բայերը: Առաջինը ունի միայն սահմանական ներկա և անցյալ ժամանակաձևեր: Մյուսները՝ դարձյալ սահմանա-

կան ներկա և անցյալ՝ առանց զր նախամասնիկի. իգամ, իգաս, իգա՞, իգանք, իգաք, իգան և իգենք, իգիր, իգէր, իգէնք, իգիք, իգէն, ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին, ունէնք, ունիր, ունէր, ունէնք, ունիք, ունէն, քինամ, քինաս, քինա և այլն: Վերջինիս մյուս ձևերը լրիվ են (քիղցն, քիղցար, քիղցնվ և այլն):

ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՐԱՅՈՒՅՑՆԵՐԸ

1) Է լծորդության ներգործական սեռի պարզ բայերի խոնարհման հարացույցը՝ ձախիլ (ծախել) բայի օրինակով. անորոշի հիմք՝ ձախ, կատարյալի հիմք՝ ձախից (ձախէց):

Անդեմ ձևեր-անորոշ-ձախիլ, հարակատար-ձախնաձ-ուգ, ենթակայական-ձախօղ, ընթաց. ձախէլէն, վաղակատար-ձախիր.

Դիմավոր ձևեր

Ըղձական եղանակ

ապառնի

անցյալի ապառնի

ձախիմ ձախինք

ձախէնք ձախէնք

ձախիս ձախէք

ձախիր ձախիք

ձախէ ձախին

ձախէր ձախէն

Հարկադրական եղանակ

ապառնի

անցյալի ապառնի

մըն ձախիմ

մըն ձախինք

մըն ձախէնք

մըն ձախէնք

մըն ձախիս

մըն ձախէք

մըն ձախիր

մըն ձախիք

մըն ձախէ

մըն ձախին

մըն ձախէր

մըն ձախէն

Սահմանական եղանակ

ներկա

անկատար

գրձախիմ գրձախինք

գրձախէնք գրձախէնք

գրձախիս գրձախէք

գրձախիր գրձախիք

գրձախէ գրձախին

գրձախէր գրձախէն

անցյալ կատարյալ

վաղակատար

ձախէցի ձախէցինք

ձախիր իմ ձախիր ինք

ձախէցիր ձախէցիք

ձախիր իս ձախիր էք

ձախից ձախէցին

ձախիր է ձախիր ին

անցյալի վաղակատար

Հրամայական եղանակ

ձախիր էնք ձախիր էնք
 ձախիր իր ձախիր իք
 ձախիր էր ձախիր էն

ձախէ՛-ձախէցէ՛ք

Այս նույն ձևով են խոնարհվում նաև ներգործական սեռի է լծորդության բազմապատկական ածանցով բայերը՝ գողորդիլ, ջանգորդիլ, խըզդիլ, մանդորդիլ, գըզորդիլ և այլն:

2) Ի լծորդության չեզոք սեռի պարզ բայերի և կրավորական բայերի խոնարհման հարացույցը՝ փանիլ (աշխատել) և օլբրվիլ (ոլորվել, զբոսնել) բայերի օրինակով.

Հիմֆեր-անորոշի՝ փան, օլբրվ, կատարյալի՝ նույնը

Անդեմ ձևեր-անորոշ-փանիլ, օլբրվիլ, հարակատար-փաննաձ, օլբրվնաձ, ենթակայական-փաննօղ, օլբրվօղ, վաղակատար-փանիր, օլբրվիր, ընթաց.-փաննէլէն, օլբրվէլէն:

Ըղծական եղանակ

ապառնի

անցյալի ապառնի

փանիմ փանինք
 փանիս փանէք
 փանի փանին

օլբրվիմ օլբրվինք
 օլբրվիս օլբրվէք
 օլբրվի օլբրվին

փանէնք փաննէք
 փանիր փանիք
 փանէր փաննէն

օլբրվէնք օլբրվնէք
 օլբրվիր օլբրվիք
 օլբրվէր օլբրվնէն

Հարկադրական եղանակ

ապառնի

անցյալի ապառնի

մըն փանիմ, օլբրվիմ մըն փաննէք, օլբրվէնք, փաննէք, օլբրվէնք
 մըն փանիս, օլբրվիս մըն փանիր, օլբրվիր, փանիք, օլբրվիք
 մըն փանի, օլբրվի... մըն փանէր, օլբրվէր, փաննէն, օլբրվէն

Սահմանական եղանակ

ներկա

անց. անկատար

գըփանիմ գօլբրվիմ
 գըփանիս գօլբրվիս
 գըփանի... գօլբրվի...

գըփաննէք գօլբրվէնք
 գըփանիր գօլբրվիր
 գըփանէր... գօլբրվէր...

անց. կատարյալ

վաղակատար

փանն փաննք	օլըրվն օլըրվնք	փանիր, օլըրվիր իմ ինք
փաննր փաննք	օլըրվնր օլըրվնք	փանիր, օլըրվիր իս էք
փաննվ փաննն	օլըրվնվ օլըրվնն	փանիր, օլըրվիր է ին

անց. վաղակատար

Հրամայական

փանիր, օլըրվիր էնք էնք	փանի՛ր-փանէ՛ք
փանիր, օլըրվիր իր իք	
փանիր, օլըրվիր էր էն	օլըրվի՛ր-օլըրվէ՛ք

3) Այլ լծորդության պարզ բայերի խոնարհման հարացույցը՝ մընալ բայի օրինակով.

Հիմքեր-անորոշի՝ մըն, կատարյալի՝ մընաց.

Անդեմ ձևեր-անորոշ-մընալ, հարակատար-մընացնալ՝ մընացուգ, ենթակայական-մընացող, վաղակատար-մընացիր (ընթաց. գործածական չէ):

Ըղծական եղանակ

ապառնի

անց. ապառնի

մընամ մընանք	մընէնք մընէնք
մընաս մընաք	մընիր մընիք
մընա մընան	մընէր մընէն

Հարկադրական եղանակ

ապառնի

անց. ապառնի

մըն մընամ մընանք	մըն մընէնք մընէնք
մըն մընաս մընաք	մըն մընիր մընիք
մըն մընա մընան	մըն մընէր մընէն

Սահմանական եղանակ

ներկա

անկատար

գըմընամ գըմընանք	գըմընէնք գըմընէնք
գըմընաս գըմընաք	գըմընիր գըմընիք
գըմընա գըմընան	գըմընէր գըմընէն

անց. կատարյալ	վաղակատար	անց. վաղակատար
մընացի մընացինք	մընացիր իմ, ինք	մընացիր էնք, էնք
մընացիր մընացիք	մընացիր իս, էք	մընացիր իր իք
մընաց մընացին	մընացիր է, ին	մընացիր էր էն

Հրամայական-մընաց-մընացե՛ք

Այս նույն ձևով են խոնարհվում նաև լծորդության բազմապատկական բայերը (Հատուկենտ)-օրըջգըռնի, խօօլդալ, փր-
ռընգդալ, թըփըլդալ.

4) Պատճառական ածանցով բայերի խոնարհման հարացույցը՝ փանցընիլ բայի օրինակով.

Բայանիմֆեռ-անորոշի՝ փանցըն, կատարյալի՝ փանցուց:

Անդեմ ձևեր-անորոշ-փանցընիլ, հարակատար-փանցուցած, ենթակայական-փանցընող, վաղակատար-փանցուցիր, ընթացակց.-չունի

Ըղձական եղանակ

ապառնի

անց. ապառնի

փանցընիմ փանցընինք	փանցընէնք փանցընէնք
փանցընիս փանցընէք	փանցընիր փանցընիք
փանցընէ փանցընին	փանցընէր փանցընէն

Հարկադրական եղանակ

ապառնի

անց. ապառնի

մըն փանցընիմ	մըն փանցընէնք փանցընէնք
մըն փանցընիս	մըն փանցընիր փանցընիք
մըն փանցընէ...	մըն փանցընէր փանցընէն

Սահմանական եղանակ

ներկա

անկատար

գըփանցընիմ գըփանցընինք	գըփանցընէնք
գըփանցընիս գըփանցընէք	գըփանցընիր
գըփանցընէ գըփանցընին	գըփանցընէր...

անց. կատարյալ

վաղակատար

անց. վաղակատար

փանխցուցի փանխցուցինք փանխցուցիր իմ ինք փանխցուցիր էնք էնք
փանխցուցիր փանխցուցիք փանխցուցիր իս էք փանխցուցիր իր իք
փանխցուց փանխցուցին փանխցուցիր է ին փանխցուցիր էր էն

Հրամայական -փանխցո՛ւ -փանխցուցէ՛ք

5) ն, ան, էն, ըն ածանցներով բայերի խոնարհման հարա-
ցույցը՝ անցնիլ (չեզոք սեռ), իմնալ և ուշանալ բայերի օրինակով.
բայաճիմֆեր-անորոշի-անցն, իմն, ուշան. կատարյալի-անց, իմց,
ուշաց:

Անդեմ ձևեր—անորոշ-անցնիլ, իմնալ, ուշանալ. հարակա-
տար-անցած||անցուգ, իմցած, ուշացած, ենթակայական- անցնող,
իմցող, ուշացող, վաղակատար- անցիր, իմցիր, ուշացիր. ընթա-
ցակցական-չունեն:

Ըղծական եղանակ

ապառնի

անցնիմ անցնինք	իմնամ իմնանք	ուշանամ ուշանանք
անցնիս անցնէք	իմնաս իմնաք	ուշանաս ուշանաք
անցնի անցնին	իմնա իմնան	ուշանա ուշանան

անց. ապառնի

անցնէնք անցնէնք	իմնէնք իմնէնք	ուշանէնք ուշանէնք
անցնիր անցնիք	իմնիր իմնիք	ուշանիր ուշանիք
անցնէր անցնէն	իմնէր իմնէն	ուշանէր ուշանէն

Հարկադրական եղանակ

ապառնի

մըն անցնիմ	մըն իմնամ	մըն ուշանամ
մըն անցնիս	մըն իմնաս	մըն ուշանաս
մըն անցնի...	մըն իմնա...	մըն ուշանա...

անց. ապառնի

մըն անցնէնք	մըն իմնէնք	մըն ուշանէնք
մըն անցնիր	մըն իմնիր	մըն ուշանիր
մըն անցնէր...	մըն իմնէր...	մըն ուշանէր...

Սահմանական եղանակ

ներկա

զանցնիմ	զանցնինք	զիմնամ	զիմնանք	զուշանամ
զանցնիս	զանցնէք	զիմնաս	զիմնաք	զուշանաս
զանցնի	զանցնին	զիմնա՛	զիմնան	զուշանա՛...

անց. անկատար

զանցնէնք	զանցնէնք	զիմնէնք	զուշանէնք
զանցնիր	զանցնիք	զիմնիր	զուշանիր
զանցնէր	զանցնէն	զիմնէր...	զուշանէր...

անց. կատարյալ

անցա	անցանք	իմցա՛	իմցանք	ուշացա՛	ուշացանք
անցար	անցաք	իմցար	իմցաք	ուշացար	ուշացաք
անցա՛վ	անցան	իմցա՛վ	իմցան	ուշացա՛վ	ուշացան

վաղակատար

անց. վաղակատար

անցիր, իմցիր, ուշացիր	իմ ինք անցիր, իմցիր, ուշացիր	էնք էնք
անցիր, իմցիր ուշացիր	իս էք—	— — — — իր իք
անցիր, իմցիր ուշացիր	է ին—	— — — — էր էն

Հրամայական եղանակ—անցի՛-անցէ՛ք

իմցի՛-իմցէ՛ք

ուշացի՛-ուշացէ՛ք

Ժխտական խոնարհման հարացույցը

Անդեմ ձևեր—չրձախիլ, չրձախսձ, չրձախօղ

Ըղծական եղանակ

ապառնի

անց. ապառնի

չրձախիմ չրձախինք
չրձախիս չրձախէք
չրձախէ չրձախին

չրձախէնք չրձախէնք
չրձախիր չրձախիք
չրձախէր չրձախէն

Հարկադրական եղանակ

ապառնի

չը՛մըն ձախիմ
չը՛մըն ձախիս
չը՛մըն ձախէ...

անց. ապառնի

չը՛մըն ձախէնք
չը՛մըն ձախիր
չը՛մըն ձախէր...

Սահմանական եղանակ

ներկա

չիմ ձախիմ չինք ձախինք
չիս ձախի(ս) չէք ձախէք
չի ձախէ չին ձախին

անց. անկատար

չէնք ձախէնք չէնք ձախէնք
չիր ձախիր չիք ձախիր
չէր ձախէր չէն ձախէն

անց. կատարյալ

չըձախէցի չըձախէցինք
չըձախէցիր չըձախէցիք
չըձախից չըձախէցին

վաղակատար

չի՛մ ձախիր իմ չի՛նք ձախիր ինք
չի՛ս ձախիր իս չէ՛ք ձախիր էք
չէ՛ ձախիր(է) չի՛ն ձախիր ին

անց. վաղակատար

չէնք ձախիր էնք չէնք ձախիր էնք
չիր ձախիր իր չիք ձախիր իք
չէր ձախիր (էր) չէն ձախիր (էն)

Արգելական հրամայական

մի՛ ձախի—մի՛ ձախէք	մի՛ թըփըլդա—մի՛ թըփըլդաք
մի՛ գողըրդի—մի՛ գողըրդէք	մի՛ փախցընի—մի՛ փախցընէք
մի՛ փանի—մի՛ փանէք	մի՛ անցնի—մի՛ անցնէք
մի՛ օլըրվի—մի՛ օլըրվէք	մի՛ մնա—մի՛ մնաք
մի՛ գըռվըրդի—մի՛ գըռվըրդէք	մի՛ ուշանա—մի՛ ուշանաք
մի՛ մընա—մի՛ մընաք	

Բոլոր մյուս բայերը խոնարհվում են այս ձևով, այսինքն՝
Ժխտականի կազմութունը միօրինակ է բոլոր բայերի համար:

(պատմական ակնարկ)

Բ ա յ ա կ ա զ մ ո թ յ ու ն

Լծորդությունների փոփոխությունները

Գրաբարի բայերի չորս լծորդություններից՝ ա, ե, ի, ու, բարբառում առկա են երեքը՝ ա||ա, է, ի: Բայերը մեծ մասամբ հարադատ են մնացել գրաբարի ձևերին՝ լծորդությունները նույնությամբ պահպանելով, սակայն կան նաև զգալի տարբերություններ, որոնք բացատրվում են ոչ միայն բարբառի հնչյունափոխական կամ այլ յուրահատկություններով, այլև դեռևս հին հայերենում վկայված լծորդությունների բազմաթիվ զուգահեռներով, որոնց ամենամեծ մասը այն ժամանակվա բարբառային երևույթների՝ գրական լեզվի մեջ ներթափանցման արդյունքը եղած պիտի լինեն, մի մասն էլ բայերի ածանցավոր և անածանց ձևերի տարբերակման արգասիքն էր, և դժվար է ասել, թե դրանցից որոնք են առկա ինչ հին ձևերը, որոնք՝ ուշ գոյացումներ: Բերենք լծորդությունների փոխանցման օրինակներ.

Ե- ա||ա-տեսանել-դրանալ, ճանաչել-ջանչնալ, մտանել-մըննալ, ելանել-էլլալ, փայլել-փէլլալ, քայլել-քէլլալ, թքել||թքանել-թրքքալ, կլանել||կլընուլ-գըլլալ, հոտոտել-հօնթըթալ, յօրանջել-օրըզգըղալ, ամաշել-ամաշընալ, գտանել-քըննալ, իջանել-իշնալ, կակազել-գըզգըղալ, հաջել-հաշալ, կարել-գարնալ, կարճել-գարջընալ և այլն:

Ի- ա||ա-խօսիմ-խօսալ, թռչիմ-թըռնալ, հեծանիմ-հէծնալ, եղանիմ-էղնալ, երեիմ-էրէվնալ, ծիծաղիմ-ծըծղալ, ցաւիմ-ցաւալ, ծարաւիմ-ծարվընալ || ձառվընալ, հայիմ-հիյալ, պառաւիմ-բառվընալ, կանաչիմ-գանչընալ, կարօտիմ-գարօղնալ, խօնջիմ-խօնջէնալ և այլն:

Ու- ա||ա-թռնուլ-թըռնալ, թքնուլ-թըքքալ, ընուլ-ըլլալ, երդնուլ-էրթըմնալ, քաղցնուլ-քըխձէնալ, յաւելուլ-էվէլնալ:

Ու-է-արգելուլ-արքէլի, լիզուլ-լըզիլ, թօղուլ-թօղիլ, առնուլ-առնիլ (գարքէլէ, գըլըզէ, գըթօղէ, գառնէ):

Է-ի-անցանել-անցնիլ (գանցնի):

Ածանցների ձևափոխությունները և փոխանցումները

Հին հայերենին հատուկ է եղել բայերի ածանցավոր և անածանց ձևերի զուգահեռ գոյություն. բարբառում գտնում ենք միա-

կողմանի երևույթ. կամ պարզ ձևերի դիմաց ածանցավոր ձևերի առկայություն, կամ՝ հակառակը. հազվադեպ են պատահում միևնույն բայի երկու զուգաձևերը, օր.՝ սրղիլ||սուղնալ, իշխիլ||իշխընալ:

Պարզ ձևերի դիմաց՝ ածանցավոր ձևեր. այս երևույթը մեծ մասամբ ուղեկցվում է նաև լծորդությունների փոխանցումով, օրինակ՝ կարկատել-գանգրնիլ, երեխի-էրէվնալ, յօրանջիլ-օրըջըրդալ, ամաշիլ-ամշընալ, ծարաւիմ-ծարվընալ, կարճել-գանջընալ, կարել-գանրնալ, պառաւիմ-բառվընալ, կանաշիմ-գանշընալ, կարօտիմ-գանրօնալ, խօնջիմ-խօնջէնալ, յաւելուլ—էվէլնալ և այլն:

Ածանցավոր ձևերի դիմաց՝ պարզ ձևեր. ծնանիմ-ծընիլ, ուռչիմ-ուռիլ, սպանանել-սըընիլ, ստեղծանել-ըսդէղծիլ, փլանիմ-փըլիլ, կլանել||կլնուլ-գըլլալ, խրտնուլ||խրտշիլ-խըրդիլ, մուրանալ-մուրալ և այլն: Դժվար է ասել, թե նշված ձևերից որոնք են ավելի հինը, նախորդողը:

Ածանցների ձևափոխությունները պատմականորեն ավելի հեշտ են բացատրվում և ընդհանուր առմամբ ուղղագիծ են, այսպես՝ հին հայերենի սոսկածանցները՝ և, աճ, եճ, չ, նչ, աչ, աճչ, բարբառում ներկայանում են հետևյալ դրույթյամբ:

Ն-ն հիմնանկանում մնացել է անփոփոխ, ինչպես՝ բառնալ-փառնալ, դառնալ-թառնալ, դնել-թընիլ և այլն:

Աճ, եճ ածանցների լծորդ ձայնավորները քիչ օրինակներում են պահպանվել՝ խըլանալ, ուրանալ, ցանգանալ, վըլանալ, վանխէնալ, հանրփէնալ, ունէնալ. դրանք մեծ մասամբ սղվել են՝ ձևավորելով և ածանցը, կամ հնչյունափոխվել ը-ի՝ ըն, որում ը-ն պատմականորեն համընկնում է կամ ա-ին (կամ ե-ին)՝ մոռանալ-մօռնալ, չորանալ-չօրնալ, վերանալ-վէրնալ, պագանել-բանքնիլ, հասկանալ-հանգընալ, բարականալ-փանգընալ և այլն:

Չ, նչ, աճչ ածանցով բայերը ածանցափոխ են եղել. ավանդված օրինակներում դրանց համապատասխանում է և-ն. օրինակ՝ թուշիմ-թըռնալ (շնայած ավանդված են նաև թոնուլ և թոնիլ ձևեր, որոնցից կարելի է բխեցնել բարբառի թրոնալ ձևը), փախշիմ-փանխիլ, *կաշիլ-գըբնալ, կորնշիլ-գօրնիլ. ճանաչել-ջանշնալ բառում շ-ն դադարել է իբրև ածանց գիտակցվելուց, գործուն է և ածանցը (*ճանաչանալ): Մի շարք բայերի անորոշ ձևում ածանցը առնմանվել է նախորդող բաղաձայնի կողմից, կամ հակառակը, ինքն է առնմանել: Կատարյալի հիմքով խոնարհված ձևերում դրանք վերականգնվում են՝ ելանել-էլլալ, լնուլ-ըլլալ, մտանել-

մըննալ, գտանել-քըննալ, գիտենալ-քինալ (տ-ի անկում), հիւանդանալ-հիվըննալ, կարկատանել-գանդըննիլ և այլն:

Պատճառական ուցան ածանցի դիմաց բարբառում առկա է ցըն||ըցըն ||ըցն||նցն ածանցը (վերջին տարբերակը հազվադեպ է հանդիպում). սրանցում ու և ա ձայնավորները կամ սղվել են, կամ ը-ով փոխարինվել. ի տարբերություն հին հայերենի, որում պատճառական բայերը կազմվում են կատարյալի հիմքով, բարբառում դրանք կազմվում են ընդհանրապես անորոշի հիմքով, հմմտ.՝ սիրեցուցանել և սիրցընիլ, խաղացուցանել և խնչցընիլ և այլն:

Կրավորական վ ածանցը գրաբարում ավանդված չէ, բայց նախադրյալներ եղել են նրա ձևավորման և տարածման համար, ուստի և վ ածանցի գոյությունը ընդհանուր երևույթ է ողջ հայերենի համար:

Հիմնականություն

Անորոշի հիմքը բարբառում գրաբարի համեմատությամբ ունի վ-ով ձևերի առավելություն (սիրվիլ, սիրցըվիլ):

Կատարյալի հիմքը գրաբարի համեմատությամբ բարբառում ներկայացնում է հետևյալ դրությունը:

-Եմ,-իմ,-ենամ վերջացող բայերը գրաբարում կատարյալի հիմքում ունեն եաց հիմքածանցը: Բարբառում (և ընդհանրապես հայերենում) այն վերածվել է եց-ի՝ եա>է հնչյունափոխությամբ՝ եաց>եց>(էց): Բարբառում իմ (ի լծորդություն) ունեցող բայերը կորցրել են կատարյալի նիմֆածանցը, և նրանց կատարյալի ու անորոշի հիմքերը արտահայտության պլանում միևնույն ձևով են հանդես գալիս, իբրև համանուններ, հմմտ. գրաբ. սիրեաց, բարբառ՝ սիրէց, բայց՝ հաւանեաց-հնավն-նալ:

-Ամ,-անամ ավարտվող բայերը գրաբարում ունեն աց հիմքածանցը, բարբառում նույնպես, օր.՝ գրաբ. մնալ-մնաց, բարբ. մընալ-մընաց, զարմանալ-զարմաց, զարմանալ-զարմաց:

Այն բայերը, որոնք բարբառում կորցրել են բայածանցի լծորդ ձայնավորը, ունեն ց հիմքածանց առանց ձայնավորի, օր.՝ իմանալ-իմաց, բրբ. իմնալ-իմց, մօռնալ-մօռց և այլն:

Գրաբարում անեմ, անիմ, չիմ, նում, ում վերջացող բայերը կատարյալում ունեն արմատական հիմք՝ հասանեմ-հաս, բուսանիմ-բուս, փախչիմ-փախ, թողում-թող և այլն: Բարբառում այս բայերը հիմնականում ավարտվում են նիմ||ննալ և իլ-ով: Առաջինները ունեն նույնպես արմատական հիմք՝ թըռնամ-թըռն, փախ-

նիմ-փիմ, գօրնիմ-գօր, հնքնիմ -հնք և այլն: Իլ-ով ավարտվող-ները համապատասխան լծորդ ունեցող բայերի օրինակով են կազմում կատարյալի հիմքը:

Պատճառական բայերը գրաբարում ունեն ոչ հիմքածանցը, որը ոչ>ու հնչյունափոխությամբ բարբառում տվել է ոչ>ուց, հմմտ. գրաբ. սիրեցուց, բարբ. սիրցուց, որտեղ առաջին ց-ն սիրել բայի կատարյալի հիմքածանցն է, իսկ երկրորդը՝ պատճառականի հիմքածանցն է: Գրաբարում կատարյալի արմատական հիմք ունեցող բայերը պատճառականի հիմքում ունենում էին միայն մեկ՝ պատճ. հիմքածանցի ց, օր.՝ փախուցանել, կատարյալի հիմք՝ փախուց: Բարբառում անխտիր բոլոր բայերը, նաև արմատական հիմք ունեցողները պատճառականի կատարյալի հիմքում ունեն երկու ց, օր.՝ փախցուց, հասցուց, գէրցուց և այլն: Այստեղ գործել է ցոյական հիմքերի համաբանությունը, որով արմատական հիմք ունեցող բայերը նույնպես պատճառականի կատարյալի հիմքում ցոյականություն են ցուցաբերում՝ փախցուց՝ փախուց-ի փոխարեն:

Գերբայական հիմք գրաբարն էլ ուներ, որով կազմում էր ապառնի դերբայը՝ ոց վերջավորությամբ՝ գրել-ոց: Բարբառը այս ձևը չունի:

Բայի անդեմ ձևեր

Գրաբարի չորս անդեմ ձևերի դիմաց բարբառը ունի հինգը, բարբառում բացակայում է ապառնի դերբայը, սակայն ավելացել են հարակատար և ընթացակցական դերբայները:

Անորոշ դերբայի հինգ՝ ալ, ել, իլ, ուլ, ոլ վերջավորություններից բարբառում առկա են երկուսը՝ ալ||ալ և իլ:

Անշյալ դերբայի եալ վերջավորության դիմաց բարբառը ունի իր՝ եա>ե>ի և լ>ր հնչյունափոխություններով՝ գրեալ-քըրիր, տեսեալ-դէսիր: Լ>ր հնչյունափոխությունը, որ հատուկ է արևմտյան խմբակցության բարբառներին, մեր կարծիքով տեղի է ունեցել էական (օժանդակ) եմ բայի անցյալ ժամանակի եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի ր վերջավորության առնամանությամբ, այսպես՝ նախապես այդ դեմքերում լ-ն սկսել է արտասանվել ր, ապա համաբանությամբ ր-ով ձևը ընդհանրացել է, օր.՝ գրել էիր (իր), գրել էր, խոսել էիր (իր), խոսել էր, բարբառում՝ քըրիր իր, քըրիր էր, դէսիր իր, դէսիր էր:

Անցյալ դերբայի գրաբարի հիմքակազմությունը նույնությամբ առկա է վաղակատար ձևում, օր.[՝] գրեալ-քըրիր, մնացեալ-մըննցիր, զարմացեալ-զարմացիր, տեսեալ-դէսիր, զարմացուցեալ-զարմացուցիր. միայն գրաբարի չ, և ածանց ունեցող մի շարք բայերի վաղակատարը բարբառում կազմվում է ոչ թե պատճառականի ձևից (ինչպես գրաբարում՝ փախուցեալ, թուուցեալ), այլ բուն բայաձևի կատարյալի հիմքով՝ փախիր, թըրիր:

Բարբառում, ինչպես ընդհանրապես հայերենում, ձևավորված է նաև հաճախաբար, որի իմաստը գրաբարում արտահայտվում էր անցյալ դերբայով: Հարակատարի ուզ վերջավորությունը համանուն է ուկ բառակազմական ածանցին և նրանից էլ ծագել է, ինչպես ան վերջավորությունը (ու)ած(ք) բառակազմական ածանցից: Ման դերբայական վերջավորությունը Հ. Աճառյանը կապում է ում վերջացող գոյականի տրականի ման վերջույթին՝ ուսում- ուսման:

Ենթակայական դերբայը իր ող(օղ) վերջավորությամբ և հիմքակազմությամբ նույնն է բարբառում և գրաբարում, օր.[՝] գրող, մոռացող, տեսնող, փախչող, բրբռ.[՝] քըրօղ, մօռցօղ, դէսնօղ, փախնօղ և այլն:

Ընթացակցականը ուշ գոյացում է՝ անորոշի բացառական հոլովաձևից, գրաբարը չունի այդպիսի դերբայական ձև:

Սեռի կարգը

Բայական սեռի կարգը հին հայերենում արտահայտվում էր լծորդ ձայնավորների և ժամանակա-քվա-դիմանիշ վերջավորությունների միջոցով, այսպես՝ սիրեմ-ներգործ. սեռ, սիրիմ-կրավորական սեռ. աղացի, սիրեցի, օծի, հեղի-ներգ. սեռ, աղացայ, սիրեցայ, օծայ, հեղայ-կրավոր. սեռ³³: Ի լծորդության բայերը միևնույն ձևով (վերջավորություններով) կարող էին արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ (հասարակ, ընդհանուր ձևեր): Ընդհանուր էր նաև անցյալ անկատարը, սեռերն այստեղ ձևով չէին տարբերակվում. դերբայները նույնպես հասարակ (ընդհանուր) բայաձևեր էին սեռերի հարցում: Տիգրանակերտի բարբառում, չնայած վ կրավորանիշ մասնիկի առկայությանը,

³³ Գրաբարի վերաբերյալ նյութերը քաղել ենք Մ. Արեղյանի «Գրաբարի քերականություն» աշխատությունից (Երևան, 1936):

շատ բան կա պահպանված հին հայերենի սեռի կարգի արտահայտությունից: Միայն թե այստեղ ավելի կանոնավորված և ուղղագիծ երևույթների ենք հանդիպում, ձևաբանական մակարդակում միմյանց հակադրված ենք տեսնում ներգործական և չեզոք-կրավորական սեռերը: Հակադրության միջոցները գրեթե նույնն են հին հայերենի հետ՝ լծող ձայնավորներ՝ է և ի, և անցյալ կատարյալի երկու խմբի վերջավորություններ:

Կանոնավորվածությունը նրանով է արտահայտվում, որ ընդհանրապես (բացի և ածանցով բայերից) բայերի է լծորդությունը ներգործական սեռի ցուցիչն է, իսկ ի լծորդությունը՝ չեզոք և կրավորական սեռերի (և ածանցով այն բայերը, որոնք անորոշում ունեն իլ վերջավորություն, անկախ սեռային պատկանելությունից՝ ի լծորդության են պատկանում): Այն լծորդության բայերը նույնպես չեզոք դիրք են գրավում սեռերի այսպիսի արտահայտության նրկատմամբ: Սեռերի՝ լծորդություններով և դիմանիշ վերջավորություններով արտահայտվելու հատկանիշը ընդհանրապես լավ է պահպանված արևմտյան խմբակցության բարբառների մի մասում, գրական լեզվում և ժառանգվել է միջին հայերենի միջնորդությամբ:

Բայի դիմավոր ձևեր

Եղանակ- Գրաբարի բայը ուներ երեք եղանակաձև՝ սահմանական, ստորադասական և հրամայական, որով արտահայտում էր հինգ եղանակային իմաստ, այսպես՝ սահմանականը (ներկան և անկատարը) արտահայտում էին սահմանական ներկայի և անկատարի, ըղձական ապառն և անցյալի, պայմանական ապառնու և անցյալի իմաստներ: Ստորադասականը արտահայտում էր սահմանական, ըղձական, պայմանական և հարկադրական ապառնու իմաստներ: Հրամայականը՝ սահմանականի, պայմանականի, հարկադրականի, ըղձականի երանգներով հրամայական իմաստներ: Մի խոսքով՝ գրաբարում բայի եղանակը բնորոշվում էր քերականական բազմիմաստությամբ (բովանդակության պլանով):

Տիրանակերտի բարբառում (ինչպես և արևմտյան խմբակցության կր-ով ներկա ունեցող բարբառների մեծ մասում) բայը ունի չորս եղանակաձև: Գր և մըն նախամասնիկների միջոցով ձևաբանորեն տարբերակվել են սահմանական, ըղձական և հարկադրական եղանակները, բայց քանի որ վերացել է ստորադասական եղանակաձևը և սահմանականի ոց հանգող դերբայով կազմ-

ված վերլուծական ապառնին (գրելոց հմ-գրելու հմ), ուստի սահմանական ապառնու իմաստը արտահայտվում է հարկադրականի միջոցով. և քանի որ ձևով չեն սահմանազատվել նաև սահմանականն ու պայմանականը, հետևաբար քերականական բաղմիմաստությունը եղանակի կարգում կիսով չափ պահպանվել է: Համեմատաբար պարզվել է հրամայական եղանակի արտահայտությունը, վերացել են հրամայականի այսպես կոչված ապառնի ձևերը և մնացել է միայն բուն (ներկա) հրամայականը: Հարկադրականի մըն մասնիկը Անառյանը համարում է անծանոթ մասնիկ³⁴. առաջին հայացքից, իրոք, այն շատ հեռու է թվում պիտի-ից: Բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ պիտի մասնիկը բարբառներում ամենաշատ ձևափոխված մասնիկներից մեկն է, կարելի է նրանից բխեցնել և մըն ձևը. այսպես. նախ պիտի-ից առաջանում է բըդ ձևը. առենք՝ բըդ էրթնմ, բըդ դննիմ, բըդ դըսնամ: Բաղաձայնով սկսվող բայերից առաջ արտասանության դժվարություն է առաջանում, հարթության պակաս, և բարբառում արտաբերման դյուրության միտումով դ>ն-ի՝ բըդ>բըն, առենք՝ բըն էրթնմ, բըն դննիմ, բըն դըսնամ (արտասանությունը զգալիորեն դյուրանում է): Ապա տեղի է ունեցել վերջին քայլը՝ բ-ի մասնակի առնմանումը ն-ի կողմից, որով բ-ն հնչյունափոխվել է մ-ի՝ առաջացնելով մըն մասնիկը: Շատ հնարավոր է նաև, որ մըն մասնիկը իրոք անծանոթ, հին մնացուկային մի ձև լինի, այնպես որ պիտի>բըդ>բըն>մըն ուղեգծով բացատրությունը սոսկ ենթադրության արժեք ունի: (Ի դեպ, Քեսաբի բարբառում պիտի մասնիկը ունի բըր||մըր զուգաձևերը):

Ժամանակա-քվա-դիմանիշ վերջավորություններ

առաջին խումբ

1-ին ենթախումբ

գրաբար-բարբառ

հմ>իմ

հս>իս

է>է

հմք>ինք

էք>էք

հն>ին

2-րդ ենթախումբ

գրաբար-բարբառ

իմ>իմ

իս>իս

ի>ի

իմք>ինք

իք>էք

ին>ին

3-րդ ենթախումբ

գրաբար-բարբառ

ամ>ամ/ամ

աս>աս/աս

այ>այ/այ

ամք>անք/անք

այք>աք/աք

ան>ան/ան

34 Հ. Անառյան, Հայ բարբառագիտություն, էջ 163:

1-ին ենթախումբ, բարբառի հնչյունական օրինաչափությունների համաձայն $ե > ի - ի շեշտի տակ, իսկ է - ն չի հնչյունափոխվում$: Հոգնակի 1-ին դեմքի մ դիմանիշը հնչյունափոխվել է $ն - ի$ ՝ $եմք > ինք$ (նաև $իմք > ինք$, $ամք > անք$ (անք)):

2-րդ ենթախումբ. հոգնակի 2-րդ դեմքում ընդհանրացել է 1-ին ենթախմբի 2-րդ դեմքի ձևը՝ էք, որպեսզի չնույնանա 2-րդ խմբի իք վերջավորության հետ (տե՛ս քիչ ներքևում):

3-րդ ենթախումբ. եղակի 3-րդ դեմքի և հոգնակի 2-րդ դեմքի յ կիսաձայնը դուրս է բնկել: Ա ձայնավորը հանդես է գալիս քմայնացումով, քիչ դեպքերում՝ առանց քմայնացման:

Երկրորդ խումբ

գրաբար-բարբառ

$էի > էնք$	$էաք > էնք$
$էիր > իր$	$էիք > իք$
$էր > էր$	$էին > էն$

Գրաբարի այս խմբի մյուս ենթախմբերը՝ $այի, այիր, այր, այաք, այիք, ային$ և $ուի, ուիր, ոյր, ուաք, ուիք, ուին$, չեն ավանդված բարբառում. բոլոր լծորդությունների բայերի համար ընդհանրացել են գրաբարի է և ի լծորդությունների բայերի վերջավորությունները: Հոգնակի 1-ին դեմքի էաք ձևը նախ հնչյունափոխվել է էիք ձևի, ապա 2-րդ դեմքի հետ չնույնանալու համար ավելացել է ն՝ էինք, և լծորդ ձայնավորներից 2-րդը՝ ի-ն, սղվել է՝ առաջացնելով էնք ձևը, որը ընդհանրացել է նաև եղակի 1-ին դեմքի համար՝ գործածությունից վանելով էի ձևը: Եղակի և հոգնակի 2-րդ դեմքի ձևերից սղվել է է-ն՝ 1-ին լծորդը: Հոգնակի 3-րդ դեմքի ձևից սղվել է 2-րդ լծորդը՝ ի-ն, այսպիսով 2-րդ խմբի վերջավորությունները դարձել են միալծորդ:

Երրորդ խումբ

1-ին ենթախումբ	2-րդ ենթախումբ
գր.-բարբառ	գր.-բարբառ
$ի > ի$	$այ > ան ա$
$իր > իր$	$ար > ար ար$
$Ø > Ø$	$աւ > ավ ավ$
$աք > ինք$	$աք > անք անք$
$իք էք > իք$	$աիք արուք > արք արք$
$ին > ին$	$ան > ան ան$

Առաջին ենթախումբ. եզակի 2-րդ դեմքում առկա է $b > h$ հըն-
չյունափոխություն: Հոգնակի 1-ին դեմքում ավելացել է $\bar{u}$ (ընդհա-
նուր՝ բոլոր հոգնակի 1-ին դեմքերի համար). ա ձայնավորը մյուս
դեմքերի ի-ի համաբանությամբ հնչյունափոխվել է ի-ի: Հոգնակի
2-րդ դեմքի էջ տարբերակը չի պահպանված:

Երկրորդ ենթախումբ. եզակի 1-ին դեմքի և հոգնակի 2-րդ
դեմքի վերջավորությունների յ կիսաձայնը դուրս է ընկել. հոգնա-
կի 2-րդ դեմքի արևմտաբերակը վերացել է: Ընդհանուր առ-
մամբ կատարյալի վերջավորությունները հարազատությամբ պահ-
պանվել են:

չորրորդ խումբ-հրամայական

Ներգործածև խոնարհում

գրաբար— $\acute{u}$, $\acute{h}$, $\acute{a}$, $\emptyset$ (արմատ), $\acute{E}$ ք

բարբառ— $\acute{u}'$ || $\acute{u}$, $\acute{E}$ $\acute{h}$ ւ, $\emptyset$ (արմատ), $\acute{E}$ ք

Օր.՝ գրաբար—մնա՛, սիրեա՛, փախո՛, բե՛ր, մնացէ՛ք, սիրէ-
ցէ՛ք, փախուցէ՛ք, բէրէ՛ք:

բարբառ—մընա՛, սիրէ՛, փախցո՛ւ, փի՛ր, մընացէ՛ք, սիրէցէ՛ք,
փախցուցէ՛ք, փէրէցէ՛ք:

Հրամայականի ներգործածև խոնարհման գրաբարի վերջավո-
րությունները հարազատությամբ պահպանվել են բարբառում՝
եա>է, ա>ա և պատճառականի ո>ու օրինաչափ հնչյունափո-
խություններով:

Կրավորածև և խառն խոնարհում

գրաբար—ի՛ր	եա՛ց	ա՛յք արո՛ւք,	եա՛յք երո՛ւք
բարբառ—ի՛	—	է՛ք —	է՛ք —

օրինակ՝ գր.—զարմացի՛ր, փախի՛ր, հաւանեա՛ց
բարբառ — զարմացի՛, փախի՛, հաւնի՛

գր.—զարմացա՛յք||արո՛ւք, փախեա՛յք||երո՛ւք, հաւանեցա՛յք||արո՛ւք
բբբ.—զարմացէ՛ք, փախէ՛ք, հաւնէ՛ք:

Գրաբարի հրամայականի կրավորածև և խառն խոնարհման
վերջավորությունները թե՛ եզակիում, թե՛ հոգնակիում բարբա-
ռում համեմատաբար պարզվել են ու ձգտել միօրինակության:

Վերացել է չեզոք սեռի ի լծորդության բայերի եզակի եաց վերջավորութիւնը, ընդհանրացել է եզակիի համար ի՝ ր-ի ան-կումով, հոգնակիի համար եայք>էք վերջավորութիւնը: Հոգնակի գուգաձևերը նույնպես վերացել են:

Արգելական հրամայական

օրինակներ

գր.—ար	եր իր	ուր	մի՛ կարդար—մի՛ գնիր
այք	էք իք	ուք	մի՛ կարդայք—մի՛ գնիր
քր.—ն ա	ի ի	—	մի՛ գրեր—մի՛ քրի
նք աք	էք էք	—	մի՛ գրէք—մի՛ քրէք
			մի՛ հաւանիր—մի՛ հնչնի
			մի՛ հաւանիք—մի՛ հնչնէք

Ա լծորդության բայերի արգելականի եզակիի ար (նաև եր, իր) վերջավորութիւնից դուրս է ընկել ր-ն, ա-ն էլ մասամբ հնչու-նափոխվել է ն-ի: Հոգնակիից սղվել է յ կիսաձայնը: Է լծորդու-թյան բայերի եզակիի եր վերջավորութիւնը հնչունափոխվել է ի-ի հետևյալ ուղիով՝ եր>ե>ի, որով նույնացել են է և ի լծոր-դութիւնների եզակիի ձևերը՝ ի: Ի լծորդության բայերի հոգնակիում ընդհանրացել է է լծորդության բայերի էք վերջավորութիւնը, այս-պիսով՝ է և ի լծորդութիւնների բայերի համար արգելականի վեր-ջավորութիւնները նույնական են դարձել բարբառում:

Ժխտական խոնարհում

Գրաբարում ժխտական խոնարհումը իրագործվում էր ոչ, մի՛ և երբեմն էլ չ մասնիկների միջոցով, որոնցից միայն չ-ն էր կցա-կան:

Ոչ-ի հետքերն անգամ պահպանված չեն բարբառում, չ մասնիկի գործածութիւնը ընդհանրացել է և մանավանդ եղա-նակիչներ ունեցող ու վերլուծական կառուցվածքի ժամանակաձևե-րի հետ բարբառին յուրահատուկ կառուցվածքներ է առաջացրել: Մի՛ արգելական մասնիկի գործառութիւնը սահմանափակվել է միայն արգելական հրամայականի ոլորտով (գրաբարում այն կա-րող էր գործածվել և՛ անորոշ դերբայի, և՛ ապառնի ժամանակների հետ՝ մի՛ կալ, մի՛ լինիցիս):

Մակբայների տեսակները ըստ իմաստի

Տիգրանակերտի բարբառում գործածական մակբայները (բնիկ և փոխառյալ) ենթարկվում են հետևյալ իմաստային խմբավորմանը՝ ժամանակի, տեղի, ձևի, չափի, ընդհանրական մակբայներ:

Ժամանակի մակբայներն են՝ ըսսօր, գըննըխմանց||գըննըխքմանց (առավոտյան), հըմման, մըզլօր, վանդէ, ցուն—ցըմէննօցուն, օր վըր (այն օրից ի վեր), քըշէրնէց, թէն, զանգըվան-զանդիգ, հէրու, օլուր օրէ (հաջորդ օրը), գէսքըշէրուն, քըշէրօվ, վանդուց, շադունց, ուշ, սօնա (հետո), արթուխ, գըթթան (արդեն), անջան (շտապ), դայմա (միշտ), անթամսի (առաջմ), բաշգի (երբեմն), բաշգի-բաշգի (երբեմն-երբեմն), հան (դեռ), անդին-անդին (ժամանակ առ ժամանակ), վարհասըլի (վերջապես) և այլն:

Տեղի մակբայներն են՝ թանվան (դեպի ցած), թանվի (դեպի վեր), քովանց-քով (կողք-կողքի), թանդութան, դուքնէ-դուքան, բանդուվէր, փէրնէ-փէրան, վէրէնուվան, փօլուր—փօլուր (շուրջ բոլորը), դէնդրէ-դէնի (տանիքից տանիք), նիրս, թուրս, խօռու (հեռու), օրթալըղ (մեջտեղ), վիւր, վան, ցան, խօռօվանց (հեռվից), էրէվանց, էրէվանց, փօլուր (շուրջը), զան (հտ), էրիվ(է) և այլն:

Ձևի մակբայներն են՝ ժիր, ուշիգ (կամաց), սըրըմօլ (հակառակ շրջված), մէգդիղ, բարաբար (միասին), մընգուգ, մըննագ, թէզ (արագ), անան-թանվան (հապշտապ), անփէղ-ցըրփէղ, անխէն-ցանխէն (վայրիվերո), անանթի (հապճեպ, հենց այնպես), գըրիգ (զուրկ, գրկված), զօռօվ, թուլընգի (թուլլ, անփույթ կեցվածքով), լընգըր-լընգըր (կաղալով), խօթ-խօթ (խեթ), անանթուխան (կտոր-կտոր), ցանանվէր (վայրիվերո), ջաշ-ջաշ, ջօղուն-ջօղուն (ծիգ տալով բառերը), բիրդան (միանգամից, անմիջապես), հաֆհաֆը (հանկարծակի), օքուր-օքուր (հոնգուր-հոնգուր), խօշուր-խօշուր, մանգըր-մանգըր, թէզ-թէզ, բըդիգ-բըդիգ (կաթ-կաթ), քուլան-քուլան, համա (անմիջապես), քօղդուգ, ըսգուլ (գաղտնորեն), ըղուրթմանց (ճշմարտապես), խօնի (վշտագին), քըսսէ-քըսսէ||քըսդէ-քըսդէ (կրծ-ծիաբար, խնայողաբար), սադա (ամբողջապես), քիաննաի (վիրավորող, խոցող), նաշառի (ստիպված), մախսուս (դիտմամբ) և այլն:

Չափի մակբայները թվով սահմանափակ են, դրանք են՝ էվիլ, հէրիք, էփփէի (բավական, բավականաչափ), խիղ, ժում (անգամ), քիչ մի, փըրթում մի, հէչ, հանդ-հանդ, գաննա (կրկին, նորից), խանիս (ամբողջովին) և այլն:

Ընդհանրական մակբայները նույնպես քիչ են՝ էռաչ, գործածվում է տեղի և ժամանակի իմաստով, դաճա գործածվում է ավելի (չափի) և այլևս (ժամանակի) իմաստներով:

Կազմությամբ նշված մակբայները պարզ են, բարդ և ածանցավոր: Մակբայակերտ ածանցներ բարբառը գրեթե չունի. կարելի է նշել միայն մանց||անց ածանցը, որով կազմվում են ընդամենը մի քանի մակբայներ՝ գըննըխմանց, ըղուրթմանց, խօռվանց, էռչէվանց, էղէվանց: Այս ածանցը ունի բացառական հոլովի աղոտ իմաստ, քարացած հոլովանիշ է՝ վերածված ածանցի:

Քերականական քարացած ձևերից կազմված մակբայներ են՝ տրական հոլովաձևերից՝ ցուն-ցըմէոնօցուն, քըշէրնէց, զանգըվանգանդիգ, քովանց-քով, օդանց (ոտքի), գէսքըշէրուն. բացառական հոլովաձևերից՝ վանդուց, շադունց, դուքնէ-դուքան, փէրնէ-փէրան, դէնդրէ-դէնիր, անխէն-ցանխէն, վէրէնուվար. գործիականից՝ քըշէրով, զօռով:

ԿԱՊ

Կապերը բարբառում ըստ տեղի լինում են նախադրություններ և հտադրություններ, ըստ կազմավորվածության՝ իսկական, անիսկական և կապական բառեր:

Նախադրությունները իսկական կապեր են. դրանք են՝ քընց, հանրգի, թէյգի: Նախդիրներ բարբառը չունի:

Նտադրությունները քանակով գերակշռում են. դրանցից իսկական կապեր են՝ համար||մար, զանդ, հիդ, քիմի, գօրան. անիսկական կապեր են՝ մէչ, քով, շափ, դանգէ, վըրան, թիմանց, թէմ, փօլուր, էռաչ, սօնա և այլն:

Կապական բառեր են՝ անդին, թուրս, նիրս, խօռու, վիր, վար, էդիվէ և այլն:

Կազմությամբ կապերը հիմնականում պարզ են. բարդ են հանրգի, թէյգի կապերը: Սրանք կազմված են զի շաղկապով, հանժամանակի իմաստ արտահայտող արմատով (որը առանձին չի գործածվում բարբառում) և թուրքերենից փոխառյալ քէ (մինչև) բառով: Քընց կապը, որը իբրև պարզ է գիտակցվում, առաջացել է

քանզի ձեռքի՝ հնչյունի բարդացմամբ: Թիմաց անիսկ. կապը քերականական ծագում ունի՝ գրաբարյան հոգնակի սեռականի հոլովածն է:

Կապերի հոլովառությունը

Ուղղական հոլովով խնդիր են պահանջում՝ քնն (քնն էրգուքուր), քիմի (չաչ քիմի, իրգըմարթ քիմի), հարգի, թէյզի (հարգի լուս, թէյզի էրգինքէ) կապերը:

Տրական հոլովով խնդիր են ընդունում՝ համարմար (թըխմըրի մար, քըզի մար), հիդ (գամթի հիդէ), գորն (ցըզի գորն), մէչ (փընիս մէչէ), քով (գըրմագի քովէ), չափ (մըզի չափ), դագէ (փէշի դագէ), վըրն (փարցի վըրն), թիմաց (մէգմէգու թիմաց), թէմ (նըշաննի թէմէ), փօլուր (ընուր փօլուրէ), էռաչ (դան էռաչէ), էդիվէ (յէզան էդիվէ): Անձնական 1-ին և 2-րդ դեմքի դերանունների հետ գործածվելիս այս կապերի մի մասը պահանջում է սեռական հոլովով խնդիր՝ իմ վըրնսի, քու դագիթի, իմ թիմացիս, քու թէմիթ, իմ քովիս, քու քովիթ և այլն:

Աղին կապական բառը երկու հոլովառություն ունի, տրական՝ խօսանլու անդին, և ուղղական՝ ըմմըն անդին, էն անդին:

Բացառական հոլովով խնդիր են պահանջում՝ զանգ (քըզնէն զանգ), թուրս, նիրս, խօռու, վիր, վար կապական բառերը (դանէն, քանիքէն թուրս, նիրս, խօռու, թըռնէն վիր, բանգէն վար և այլն):

Ի դեպ՝ ֆիմի, ֆընց, գօրն կապերի խնդիրը միշտ դրվում է անորոշ առումով:

Անիսկական կապերը կարող են հոլովվել, երբ գործածվում են նյութական իմաստով. դրանցից մէչ կապը հոլովվում է տրականում ու հոլովանիշով՝ միշու, միշուն, միշով: Դանգ, վըրն, թէմ, քով-տրականում ստանում են անցու-անց հոլովանիշ՝ դըգանցու, վըրանցու, թէմանցու, քովանց: Կարող են և ի հոլովանիշով թեքվել՝ դըգի, վըրանի և այլն: Սրանց հատուկ է հոգառությունը, իբրև կապ էլ գործածվելիս կարող են զուգորդվել որոշիչ և ստացական հոգերի հետ:

ՇԱՂԿԱՊ

Շաղկապները երկու տեսակ են՝ համադասական և ստորադասական: Համադասական շաղկապները բարբառում լինում են ա)

միավորիչ՝ իլան (և, ու), համլէ (նաև), համ... համ, նամ... նամ (ոչ... ոչ), օրինակ՝ Լուսիգն իլան Սօփիգէ թօղ խաղան: Էգօ՝ ընծի բնք մի դուր, համ խընծուր է, համ վնրթ է: Նամ թօռ իգան, նամ շըբնք իգան (ոչ դուռ կա, ոչ լուսամուտ): բ) Ներհակա-կան՝ շէվըրշէ (եթե ոչ), ֆանգաթ (սակայն), համա (բայց), օր.՝ էս ձառու մէշէ փնամ մի իգան, շէվըրշէ է՞ր սանց գհասդընա: Ֆանգաթ էն ֆընշանէ յէս գհասդ գանդ շիմ առնիմ: Համա անշիգէ վնր շի՛շ-նամ (բայց աղջիկը...): գ) Տրոհական՝ յամ... յամ (կամ-կամ), շէնէ (թէ՞), օր.՝ Գընգդուց խօսքերէ յամ անշըգան վըրն է, յամ դըղի: Յօ-րի՞ն է, շէնէ քանի է:

Ստորադասական շաղկապներն են՝ ա) մեկնական՝ քի (որ, քի), վօր՝վըր (որ), սա հնաբանություն է, խոսակցական լեզվում չի գործածվում, օր.՝ Քըշիր չէ էղիր, քի չըլուան: Իմ Գիգօյին ի՞նչն էր բանաս, վօր չին քըրին ֆիդաի: Թուն վր յէսի չըմն առ-նիր, ինչու՞ հալղուն իմցուցիր: բ) Ժամանակի՝ թնրզի||թէյզի (մինչև), յէփ քի (երբ որ), օրինակ՝ քնրզի թուրքին իր ինչ էղնալէ հասարցընէ, փօսդէ շուգան գէլլան: Յէփ քի գրգանդին օսգրէն գա-վուրման, մէշէ գըթընին խընծուրն ու հայվան: գ) Պայմանի՝ ան-գան, իսան (եթե), օր.՝ Ագան շէլլան, խանթրիս գըմընան: Մանգօվ փա-ռա շըթնփից իսան, էն անդին: Երբեմն այս շաղկապները միաժա-մանակ են հանդես գալիս՝ Ագան յէսի գուզիս իսան, մըն խըմիս: դ) Պատճառի՝ չունքում (որովհետև), օր.՝ Ըսունցմէն հանդ-հանդ մըն խըմինք, չունքում թիդ է: ե) Համեմատության՝ քընց (քան), քինան քի (կարծես թե), օր.՝ Փուրիս մօդ է, քընց քուրիս: Հըզզանր գանժէ, քընց էփուզ հանց: Քինան քի, սըրդիս շան մի գանքիր ին: զ) Մակարեական՝ էլան իսան (եթե այդպես է, ուրեմն), օր.՝ Է՛, ձանշուզ, էլան իսան մէզի մըն խըմցընիս:

Կազմությամբ շաղկապները լինում են պարզ և բաղադրյալ: Բաղադրյալ են՝ համլէ (համ+լէ), շէվըրշէ՝ (շէ+վէրշը կամ շէ+վօր+լէ), շէնէ (շէ+նէ), թնրզի, կազմված է հանրի և թէյզի կապերի համադրմամբ: Հարադիր բարդություններ են՝ յէփ քի, էլան իսան (թրք. էլան-այդպես, իսան-եթե, բառացի՝ եթե այդպես է): Շաղկապների մեծ մասը փոխառյալ է թուրքերենից և արաբերե-նից՝ անգան, իլան, համ... համ, նամ... նամ, յամ... յամ, իսան, քի, չունքում, էլան իսան, ֆանգաթ և այլն: Շաղկապներից քնրզի||թէյզի և քընց շաղկապական կիրառության են անցել կապերից, և նրանց խոսքի մասային իմաստները տարբերակվում են շարահյուսական մակարդակում:

Տիգրանակերտի բարբառում առավել գործածական եղանակավորող բառերը ըստ իրենց արտահայտած իմաստի խմբավորվում են հետևյալ կերպ:

Հաստատական եղանակավորող բառեր—ըղուրթ (իրոք, իսկապես), դբբի||դբբի (իսկ և իսկ, ճիշտ), հն(այո), յա(հապա՝ հաստատական իմաստով), իլլի||իլլի (անպատճառ), վալլաի||բիլլաի (անպայման) և այլն: Օրինակներ՝ Ըղուրթ, ինք թող ըսսէ: Դըսնաս, գըլմընի դբբի հարսնըբի: Մէզի գըխնփիս, հն՞: Յա՛, էս փօթօլօ բաբաին էր: Իլլա մըն խըմիս: Իլլաի մըն ըսսիս: Վալլաի, գուզիմ, բիլլաի գուզիմ, Փէթլէմինց Բուբօն հըմմա հօս գուզիմ:

Ցուցական եղանակավորող բառերն են՝ հա(ահա), ըշդա(ահա), օր.՝ հա՛, էգանվ: Ըշդա, ըսի է քախքի իմնջան:

